1218

12004

48/1K

HISTORY

OF

ANCIENT INDIA,

FROM THE

EARLIEST AGES TO THE INVASION OF THE MAHOMEDANS:

COMPILED FROM THE BEST AUTHORITIES.

BY THE

REV. MESROP DAVID TALIATIN, A. M.

Deacon of the Armenian Church.

CALCUTTA:

BISHOP'S COLLEGE PRESS.

MDCCCXLI.

9(54) 1269

758-262
P-18

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԻՆ

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ

ՑԱՆՑԻՐԱՏԱԿ ԴԱՐՈՒՑ ԱՆՏԻ՝ ՑՑԱՐՁԱԿՈՒՄՆ

ՄԱՀՄԵՏԱԿԱՆԱՑ

Ըստ Ա. Անդրելոյ

ՄԱՏԵՆԱԳՐԱՑ ԱՑԼ, ԵՒ ԱՑԼ, ԱԶԳԱՑ

ՆՈՒԻՐԵԱՑ

Ի ՊԱՏԻՒ ՀԱՅՈՑ ԱԶԳԻՆ

ՄԵՍՐՈՎԲ ԴԱՒԹԵԱՆ ԹԱՂԻԴԵԱՆՑ Վ. Ա.

Տարկաւագ Ս. Էջմիածնի։

———000———

Ի ՏՊԱՐԱՆ

ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԻՆ

ԿԱԼԿԷԹԱ

1841.

2340
39

ԱՐԳՈՒՅՑ ԱՍՊԵՏԻ

ՅԱՐՈՒԹԻՒՆԻ ԱԲԳԱՐԵԱՆ

ԹԱՐԵԿԱՄՈՒՏ

Ի ՆԵՂՈՒԹԵԱՆ

ՈՐՈՑ ՏՈՒՆ

ՀԻՒՐԱՄԵԾԱՐ ԱՍՊՆԶԱՐԱՆ

ԵՒ ՈՐԴԻՔ

Նախօգնական Տպագրութեան

ԶԱՅՍ ՄԱՏԵԱՆ

ԻՆՔՆԱՂԱՆ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆ

Դոյզն Արգասիք

ՅԱՐՈՒՅԱՆԷ ՅԱՐԳԱՆՕՔ

ԱՐՁԱՆ ՅԻՇԱՏԱԿԻ

ԱՆՄԱՀ

ԵՐԷԽՏԵԱՅ ՁԵՐՈՅ

Ամենախոնարհ Ծառայ Ձեր

Մ. Դ. ԹԱՂԻԴԵԱՆՑ



ԳԱՌԱՋԱԲԱՆ։

Ուշաբէհ Հնդկաց Ճամբուդիպ, կամ Բհրաթ-վարսա կոչեցեալ յեւրոց բնակչաց, սահմանի յարեւմտից Պարսիւք. յարեւելից գօտեօք լերանցն որ սկսեալ ի Բրմհուպուտրայ հատանին ցըստաուրածս գլխոյն Նիգրայիս ի հիւսիսոյ Սկիւթօք. իսկ ի հարաւոյ Ովկիանոսիս։ Եւ յինքն գրաւեալ զտարածութիւն երկրի համաչափ համօրէն Եւրոպիայ ի քաց առեալ զՌուսաստան։

Պատմութիւն այսր լայնատարած մասին Ասիոյ վերաբերի յերիս միջոցս, ի Հին, ի Միջին, և ի Նոր։ Հին կամ Հնդկային միջոց պատմութիւնն զորմէ են բանքս, սկսանի յանյիշատակ հնութենէ դարուց, ուր սկայքն պայազատեցին և հրեշքն ուրուականք։ Ուստի և ըստ չափ անցեալ հաւատարիմ պատմութիւն յառաստելս գերթողութեան խարխափի, ցերեւել իսլամաց յերերս Ինդոսի։ Միջին կամ Մահմետական միջոց սկսանի ի յաղթութենէ անտի Մահմուդայ Ղազնացւոյ. և յինքն Ճառադայթեալ զփառս Մողալ միապետութեան երկարատև հարստութեամբ իբանէ ցպատերազմն Պալասեայ ի Քաւթուա գաւառի Բանկալայ, յամի Տեառն 1757։ Իսկ Նոր կամ Քրիստոնէականն անուանեալ միջոց, որ հիմն եդ միաՀեծան տերութեան Ընդդիւցուց յարեւելեան Հնդկաստան սկսեալ ի պատերազմն Պալասեայ իբանէ ցաւուրս այս։

Իւրաքանչիւրոց աստի ուրոյն հատոր յօրինեցաւ ի հայ լեզու։ Այլ որովհետև նիւթ առաջիկայ հատորոյս յառաստելս դիւցազանութեան և ի կեղծիս բանաստեղծիցն և եթե ապաստան, չատ աչխատ արար զբազմութիւն բանիցուն և ներհուն հեղինակաց. և չեւ յերազ յոՀ և ի պայման հաւատարիմ պատմութեան, բազմօք տառապեցոյց զՀեղինակն լընդերկար դեգերանս գրոց այլ և այլ Եզգաց։ Յորս կարծիք հակառակք կարծեաց, և անցք հակառակ անցից յոգիս ապաստան արարին զնա։

Զառաջին՝ ի ձեռս առ իւր Վարդապետ Թարգմանչի Հիմն։ զոր և Թարգմանեաց՝ ի հայ բազում նեղութեամբ։ Բայց այնպի՛ սի անուանք Թագաւորացն յիշատակելոց՝ ի նմանէ համաձայնեին անուանց Պարանաց հնդկաց և սի՛ սանգ անցք անցից։ վասնորոյ Թողեալ զայն՝ ի ձեռս առ իւր զԹարգմանութիւն Մահաբհարատի գրոց։ և զնա ևս հայացուցեալ՝ եգիտ զի քերթողական շռայլաբանութիւնք նորա։ և աստուածոցն անմահից յարաբս մահկացուաց միրմանի՛ սանդր քան զբնական կարգն շահատակութիւնք վրիպեցուցանէին զնա՝ ի նպատակէ անտի իւրոյ գրութեան։ ելիք և զայն կիսակատար։ Տեսեալ ապա զերիս քառածալ հատորս Յակոբայ Միլլայ ինդացւոյ յանձն իւր։ անտուստ յուսացեալ քաղել զստոյգ պատմութիւն հնդկաց։ Բայց և նա զանց արարեալ զբուն հնոց զուցացն առնոյր զարդեան զԹէս։ զկրօն։ զսովորոյթ։ զձև։ զտարազ։ զբարս։ և զվարս։ և հանէր զնոսա մտօք՝ ի հնութիւնս յաւիտեանց։ կարծիքական վերադիտողութեամբ իւրով ընդդէմ զբովանդակ երբս առաջին հատորոյն առանց սի՛ նչ պատմելոյ։ Ի վերջոյ հասանէ նմա վերծանել զհամառօտ պատմուն՝ ի հնդկաստանի։ Մարչմինայ Անգղիացւոյ՝ ի լոյս ընծայեալ։ Սա թէպէտև զառաջինն՝ ի ձև պատմութեան ձուլեաց զարբաս նախահաղց հնդկաց։ բայց և այնպէս պուրանական գրուածոց միայն ուշ եդեալ բազմաց պղտորեաց զանցս և զժամանակ նոցա։ Զոր յանձնաբակի և եթէ կալեալ առաջնորդ ինքեան՝ ի սրբագրութիւն առաջին աշխատանաց դիպաւ ինն՝ ի ձեռս եթեր և Վարդապետն Թարգմանեալ՝ ի լեզու Անգղիական։ և կրկնեալ՝ ի նմա եգիտ ինչ ինչ այնքան կարեւորագոյն և պիտանի իւրումն ձեռնարկութեան։ մինչ համարձակի ուրախութեամբ սրտի զհայերէնս այս առաւել ճոխ և ճշմարտապատում համարել։ քան զոր գրեցան մինչ ցարդ պատմութիւնք Հնդկաց։

Հայերէն առընթեր կայր նմա ժողովածոյ Ղեռագիր Թովմասայ Խոջամանեան նոր Զուրայեցւոյ։ որ ունի յիշատակագիր օրինակ զայս։ "Որպէ՛ս։ կամ ուստի՛ գիրքս Թարգմանեց։ Թիվն 1768։ Դամայ 15։ ի Թագաւորանիստ քաղաքս Էլաբաղ։ ի ժամանակի Շահ Ալէմին։ որ և էր Թագաւորիս մեծ Դիւանն խաղսու էր անդ։ Որոյ անունն էր Բաջայ Սեիդբաբ։ և միւսինն

ռաջոյ Դրիքան • որք էին ինձ քաջիկամք։ Մեծի ազաչանօք և փափագանօք խնդրեցի սոցանէ ; ընկալայ ; և 'ի մէջ 12 աւուրց թարգմանեցի մի ըստ միոջէ 'ի Գարսիացւոց գրեանցէ տաքուն՝ 'ի քարբառս մեր։ Այր եղև ավարտ Դամայ 26 ուսն։ " Բաց 'ի թարգմանութենէ ասահ ժամանակակից գոլով սա և Գորգին Խանին և Քաջացն Հայկազունեաց սուս գուրթ վիպագրէ զանցս ժամանակին։ Հաւաքեալ և բաղում ինչ 'ի լրոց՝ առնէ զՀեռագիր իւր կրսկակ ինն մանրավաճառի ; լի զանազան տեղեկութեամբ 'ի պարծանս Հայրենեաց իւրոց։

Ուրգաթէ՝ արտունութիւն նուիրակացն Ամենոց Հայաստանեայց 'ի հաւաքել իւրեանց համաչխարհական Ծանօթութիւս Ազգաց և լեզուաց ; առաւել է քան զոր պանծալ կարեն թէ ունիցին ; մեծամեծ թագաւորութիւնք աշխարհ։ Ցան և ցիր սփռուն Ազգին ընդ երեսս համատարած հողագնոցս և հոգեւորական պետոյիցն ինամ՝ զոր տանին նոքա նուիրակունս արձակելով յամէ ուրեք ; բառնայ 'ի նոցանէ զամենայն զնուութ և զխոչ այսք գրութեան։ Ա.յն ինչ գեր չէ ոտք եւրոպականաց կոխեալ 'ի հնդիկս ; կարէին նուիրակունք նոցա տանել յօրագրութիւնս իւրեանց զԵՀիսն հանգամանս գրեց տրս ; Ծխէց • կրօնից • կենցաղավարութեանց ; և որոց 'ի կարգին։ Ա.յլ տարաբաղտապէս ոչ ինչ արժանի յիշատակաց քաղեցին և բաքձին 'ի զոլութիւն բանասիրաց։ Ա'չ • ոչ իւեք բնաւ յանդգնի մեղադրել գնոսա վասն այսորիկ ; այլ խոնարհութեամբ աղերս արկանէ ; զի այսուհետև գուն գործեսցեն ազգասիրաբար յօրագրութիւնս իւրեանց յերդուլ զպատուական ճանապարհաց իւրեանց ; զհանգամանս աշխարհին ; զբերս ; զբարս և զենաւորութիւնս այլ և այլ ժողովրդոց ; որոց դէպ լեցին յընթացս չորաքայութեան իւրեանց։ Որով շատիզ ընդարձակ բանան ամենայն հեղինակաց յասպարէզ համաչխարհական Ծանօթութեանց։

Երկոքին հատորք գործոյս առաւել հաւաստապատումք և ընտրելագոյնք պահեցան յարդոլութեան առ 'ի Վերուստ • իսկ առարիկայս ; սոսկ քաղուած առասպելաց և խրթնութեանց՝ զառարինն առ 'ի լոյս վերծանելեաց ընծայեցաւ։ Թէպէտև չարութեան հիւանդութիւն հեղինակին ոչ համարձակեցուցանէ զնա ասել՝ թէ որպէս յուսայր՝ գործն կատարեցաւ։

Ստորագրութիւն եղև տպագրութիւնն։ և յայսմ վայրի գոհուշխ մատուցանել Իւրաքանչիւր Ազգասիրաց բնակելոց 'ի Կալկաթա։ և մանաւանդ Պարոն Գրիգորի Մ։ Յովսեփեանց 'ի Բումբայի։ որ արդարև ազգային ջերմեռանդութեամբ ըանացաւ պատկել զտորագրութիւն տեղւոյն անդր քան զակնկալութիւն հեղինակին։ Բայց այնպէս միւս քաղաքք Հնդկաստանի ոչ ժամանեցին հանգանակել զտուրս իւրեանց։ այսր։ և դատն որք փոխանակ տրոց տարապարտ տրտունջ մատուցին նմա՝ հարկեցաւ նախատեսս հոգողութեամբ խուզել 'ի վաստակաբեկ քաղուածոց անտ՝ զայնպիսի նկատողութիւնս կարծեաց առ կարծիս։ որ զարդքն համաբերին պատմութեան 'ի մէջ ամենայն լեզուաց։ Եթարթ իբրև առելոքդ և զտակ անուանս թագաւորաց այս կամ այն հարստութեան։ որք առանց գործոց և թուոց գրաւէին զտեղին։ Բայպաւեաց զրաքումս 'ի Ծանօթութենէ։ և զրաքմագրոյս 'ի նոցանէ եղեալ մինչ 'ի սպառ։ Իսկ արդ՝ յոչ ինչ այնքան ցաւեցեալ նի։ քան ընդ սաստիկ հանառոտուն գործոյն մատուցանել Բանասիրաց ազգի իւրում զիւր դունաքեայ աշխատութիւն։ որ թէ և խակաւութ և անտառայն։ սակայն երեխայրեք գոլով յիւրում տեսակի խրախոյս քառնայ յընդունելութիւն նորատեր գմաց։

———ooo———

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԻՆ

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ

ԳԻՐՔ ԱՌԱՋՆԵՐՈՐԴ.

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Ժամանակագրութիւն Հնդկաց:

Հնդիկք բնաւանեն զժամանակն ի չորս ընդարձակ յաւիտեանս կամ դարս, տալով իւրաքանչիւրոց ի նոցանէ զանհեթեթ առատութիւնս ամաց: Զառաջինն կոչեն Սուատիա յուգ, կամ* Ժուկ. և տան նմա տարիս միոյ միլիոնի և երկերիւր իննսուն և վեց հազարաց: Առաստղեղն զմարդկանէ դարուս՝ քան և մի կանգնոց բարձրութիւն հասակի, հարիւր հազար ամաց երկարութիւն կենաց. և զանլուր քաջութիւն գործոց: Զերկրորդն կոչեն Տրեթա յուգ, կամ Ժուկ. միլիոնի միոյ և երկերեւր իննսուն և

* Ժուկ յաշխարհիկ բարբառս մեր զնոյն բան նշանակէ. յասելն մեր Ժուկ ֆանֆուկ »

վեց հազար ամաց: Զմարդիկ դարուս հաւասարեալ առաքինոցն, տասնապատիկ պակասեալս համարին ի պանծալի վարուց նոցա. և զկիսանն հասուցանեն ցտասն հազարս ամաց: Զերորդն՝ կոչեն Դուապուրա յուգ, կամ Ժուկ. ուղիղ հարիւր վաթսուն և չորս հազար ամաց: Կարճին կեանք մարդոսրերոյ դարուս ցհազար ամ. և վարք նոցա առաւել ևս յոռեգոյն քան զառաքինոցն՝ զերդծանին: Իսկ զչորորդն՝ Կալի յուգ, կամ Ժուկ. երեսնից և երկուց հազարաց ամաց: Յորոց հինգ հազարն արդէն իսկ անցեալ դնեն, և զմարդկանէ դարուս ասեն թէ. իցեն վատք, դժնդակք, ինքնապաստանք, անապարծք, զուրկք գլխովին ի վարուց բանականաց. ընկղմեալք ի պագշոտ ցանկութիւն մարմնոյ. պղերգունք կենօք և ծոյլք. որք իւրեանց տկարութեամբ չափելով զսխրալի արարս նախնեաց. գնոսա յաւէտ յաստուածանմահ խոստովանին՝ քան ի մարդիկ մահացուք:

Զորեքին դարքս այսոքիկ միահաղոյն առեալ՝ կացուցանեն զթիւ 4,320,000. ամաց: Այլ խնստակացն ոչ շատացեալ այսոքիւք, տակաւին յաւելուն և զայլ նոր դար ցնորական՝ Կլպա անուանեալ. որ ասեն պարունակէ զհազար դարս, իւրաքանչիւր

հաւասարաչափ թուոյ ամաց չորից վերոյ գրեալ դարուցդ միահաղոյն առելոց:

Զ. ԵՐՄԵՆԵԱՄ արդարև, թէ ընդէ՞ր ազգ, որ ոչ ծանեաւ զԱմենակալն յօրէնդիր իւր, և մրրկեալ երևակայութեամբ միայն ստեղծ Գարս հիմնելոյ ի միտս ժողովրդոց զիւր դողդոջուն իրաւունս, սահիցի միշտ յայսօրինակ վրիպանս ծաղրալիս: Հարց ցիմաստունս որդւոց արևելից. և տես թէ զինչ ստուգագոյն ունիցին պատմել քեզ զչափազանց աւելորդութեանց անտի՝ առաջին երից դարուցն, եթէ ոչ գտնացին ցնորս պայազատութեան աստուածոց իւրեանց և ուրուտկանաց: Զի պատմեսանք Գիւթեան քերթողքն հանդիսացան, և ժամանակագիրք՝ ախտարք ազգին առհասարակք: Քերթողք զերկական վէպս ի ցնորս փոխեցին, և ախտարք զշրջան երկնային մարմնոց՝ յարարս մահկանացուաց: Որք միանգամ խոտորեցան յուղիղ շաւղաց անտի մարդկային վարուց, և օրէնք անձանց արարին կալ հակառակ օրինաց, փոյթ ի ձեռս առին զտարապայման զայս Հնդիկ չափազանցութիւն, ոչ առ ի հաստատել ինչ սովին, որով ոչ կարէն, այլ զի՝ ցնորեալ մտօք զհեղինակութիւն վեր ի վայր տապալեսցեն զգրոց սրբոց. և զաստուած մերժեսցեն ի դատապարտութենէ

իւրեանց: Բայց եթէ սոքին գլխովին անհիմունք իցեն, և կատարեալ մտաց անընդունակք, յայտ անտուստ է, զի ոչ միայն Հնդիկք, այլ և բազումք ի խուժադուժ ազգաց առաքնոց, իրական անցիցն տգիտագոյնք, սիրեցին սուգանել զսկզբունս իւրեանց ի խորս անՏուութեան: Ամենացիք Ցագոյն զինքեանս դնէին քան զարեգակն: Արկածացիք՝ նախնագոյն քան զլուսին: Լակեդոմնացիք կոչէին զանձինս՝ արեգակունս երկրի: Ճենք՝ բիւր բիւրաւոր ամաք ծերագոյն զինքեանս խոստովանին գոլ քան զամենայն ազգինս աշխարհի: Իսկ Բրմայք կամ Փեկուացիք, ոչ միայն յանհաւատալիս հանեն զՏուութիւն ծագման իւրեանց, այլ և տան միւսմ ի թագաւորաց իւրեանց պայազատել զՏն ըստ թուոյ ամաց հաւասարելոց շրթից անձրևաց, որ զամս երիս յորդ հոսիցի ի մակերևոյթ համօրէն հողագնտոյ: Զորս համամատեալ ընդ իրական դիպաց Տի, գտանեմք յերեկեան յօդածոյս և եթէ:

Աւտարաց նոցա և Բրահմանաց էր այս գործ, որք պիտակ քահանայութեամբ յինքեանս կորզել կամելով զհաւատ ժողովրդեան, քանացան մեծ և տհաւոր կացուցանել յաչս նոցա զամենայն: Բայց դու միայն ՇԷ ժամանակագրութիւնն մի զարմանար. վասն

գի մասն է սա այնր անճառնի և անհետեթեթ դրութեան, որոյ ամենայն մասունք հաւասարապէս են տարապայմանք: Օրինակ իմն, թիւ ասաց կենաց մարդկան. հազիւ ձգի ցհարիւր ամ. բայց բրահմանիկ ՅԾաբանութիւն հասուցանէ զայն ցտասն հազարս ամաց: Զարմ միոյ անհատի հազիւ սերի ցտասն շառաւիղս, այլ պատմաբանք նոցա տան Սագերայ արքայի իւրեանց վաթսուն հազարս որդւոց, ծնեալս ի դէմ, մնեալս ի կովկիթի, և ածիւնացիալս ի մահ՝ անիծիւք գիտի ուրուք: Բնութիւն շնորհեաց մարդկան զերկուս բաղուկս, և մի դէմ. քերթողք Հնդկաց պարգևեցին սկայից քսան բազուկս, և տասն դէմս: Եւրոպացիք աչալուրջ խուզողութեամբ շրջապատեցին բազում անգամ զՀողագնտով մերով, գտին զնա գնտակ բոլորակ, և շրջանակ եդին նմա՝ փոքր ինչ աւելի քան զքսան հազարս մղոնաց. այլ Շաստրայք Հնդկաց առաւելուն ի քանակ նորա քառասնապատիկ աւելի քան զոր է: Ըստ ճշգրիտ գննութեան չափաբերաց մերումն դարու, բարձրաբերձք ի լերանց երկրի հազիւ ամբառնան մղոնս հինգ. այլ քաղցրացան քերթողք Հնդկաց հասուցանել զլեառն Սոմերու անդր քան զվեցհարիւր հազար մղոն ի բարձրութիւն: Զոր և ամենե-

բան վայր բնակութեան համարեալ արեգականն և լուսնի, տեղագրեն զնա չորիւք հրաշակերտ անտառօք գեղապարեալ: Յորոց առնուանք են՝ Շամունշ բանու, Անպա- ծաղ-ի՛ծին: Բ հուդրասալ բանու, Անպա- գեղեցիկ Սալ ծառոց: Պանդուկու բանու, Անպա- ուղիգոյն. և Նանդունու բանու, Անպա- Զուարճութիւն: Զորմէ՝ ի դրամ ինչ եռանկիւն, գտեալ յայսմ ամի ի Ղանդահար, գրի զայս ձև օրինակի, "Բնակութիւն երկուց տերանց աշխարհի, (արեգական և լուսնի,) է հարիւր հազար յոճոնա." 800,000, մղոն: Արդ՝ եթէ ի վերայ երկրի, որոյ տրամագիծ հազիւ հասանի ցութն հազար մղոնաչափ, կալ կարիցէ Սամերու վեց հարիւր հազար մղոնաց բարձրութեամբ. և հարիւր և քսան և չորս հազարաց խորութեամբ իւրով՝ ուրեմն և ժամանակք ընծայեալք չորից Ցուգից՝ կալ կարեն. իսկ եթէ չափ լերինդ տարապայման իցէ, ընդէ՞ր ոչ ապա և չափ ժամանակացդ, զոր Պուրանքն հաստատիցեն:

Տնկեարն ճշմարտութիւն ի խորս անստուգութեան թաղեալ երևի, եթէ ի բաց մերժեսցուք շնորհուկս քերթողաց: Քառեակ դարքդ ոչ այլ ինչ են, եթէ ոչ սահմանեալ միջոցք պատմութեան: Թէպէտև ի պատճառս անբաւութեան ֆութեան,

անկարելի ումք թուլցի գտանել զուղիղ որոշմունս և զԹիւ ամաց նոցա : Բենթլի Անգղիացի, որ զուսումն ժամանակագրութեան Հնդկաց անձին յատկացոյց, Համարի զչափազանցութիւն զայս առ ի յետնոց ներմուծեալ. և ՇՇ քմանց կրճատելով՝ ստուգաբանէ զԱստտիա յուգ սկսանիլ ի ԸրՀեղեղէ, ցամն 1528. յառաջ քան զՔրիստոս, իբրև 1860. ամաք : Տրետա Յուգ՝ սկսանել անտուստ, և տևել ցինն Հարիւրերորդ առաջներորդ ամն, 627. ամաք : Դուապուրա յուգ սկսանել յիննարիւրերորդ առաջներորդ ամէն, և տևել ցերկերիւր հինսուն և ինն՝ 600, ամաք : Իսկ Կալի յուգ սկսեալ անտի շարունակել ցաւուրս մեր՝ իբրև 2129. ամաք : Թէ այսպէս և թէ այնպէս, չէ պարտ ինձ առատանալ կամ կծծանալ ի ժամանակ Հնդկաց առաւել քան զայլոց ազգաց. մանաւանդ՝ յորժամ ի չափազանցութիւն նոցա ոչ գտանեմք ինչ արժանի Հաւատալեաց պատմիլ բան : Եթէ իցեն խեշերանք ինչ Հաւաստեաց՝ յայս վերջին դար կամ յեղանակ վերածին, որպիսիք են թագաւորութիւն Իկսուակուայ, Սագերայ, Ռամայ, և Յուդիշտրայ : Արդարև զարմանալոյ արժանի, զի Ցոդիկք իմաստութեամբ Հռչակեալ ի Սուրբ գիրս, մինչև զՍողոմոն բաղդատել «որ-

գ.ոցն արևելից.» և այնքան մշակեալ և յարդարեալ լեզուս գրեալ ի միջօրեայս պարծանաց, չունիցին ինչ ճշմարտապատում յարարս նախահարց իւրեանց: Բայց բարհմանաց է զառանցանքս, որք վասն զանձինս և եթէ սքանչելիս ընծայելոյ յաչս դիւրահաւան ամբոխին, և ի նոցանէ զաստուածականն ընդունելոյ զպաշտօն, գքաջ արարս նախնեաց կամ անյիշատակ արարին, և կամ ի սուտակ յաստուածութիւն ամբարձեալ՝ առասպելօք պղտորեցին. զի գործ, իբրև մարդկան աստուածազարմից՝ զիւրեանց արարս միայն հանցեն յերեւան:

Թէպէտեւ չտայ ինձ ամիրսի նպատակ գործոյս՝ մանրաբանել աստանօր, և զանգոյս ի գոյութիւն բանին վերածել, սակայն և այսպէս հար և անցի առնելով՝ զորով միանգամ ի լոյս անդր առաջնորդել խոստանան, քանացայց պարգել իմովսան զևրթնութիւնս առասպելաց: Բուդդութիւն, զորմէ առաջիկայ ինձ խօսել լիով ի հետագայ պրականին, հիմն դնէ հաւատոց՝ զառ ի վերուսան յայտնութիւն: Քանզի յապականիլ գործոց մահկանացուաց, էապէս անմահութեան երևեալ ի մարդկային կերպի, զոր Բուդանուանեն՝ ազատէ զնոսա ի գերութենէ մեղաց, և օրէնս եդեալ առողջարարս կենաց՝

և վարուց նոցա, մեռանի մարմնով վայելել յանդգրաւ անմահութեան: Ի յայտնութենէ միոյ բուդայ ցերևիլ միւսոյն, կրկին միջոցք ժամանակի յանդիման լինին. առաջին կոչի Բուդհանպարս, որ ձգի ի յայտնութենէ բուդայ՝ ցքառնալ աղանդոյն քարոզելոյ ի նմանէ: Այս դար՝ յորում կենցաղևմք, է բուդհանտարտն գովատանոյ, այլ աղանդ նախատահմանեալ է տևել տարիս 5000. յորոց անցեալ են մինչ ցարդ, (g1840. թուական փրկչին,) ամք 2384, և մնան 2616: Երկրորդն անուանի Աբուդհարպարս, և նշանակէ զմիջոց ժամանակին, որ ձգի ի բարձմանէ աղանդոյ միոյ բուդայ՝ ցգալուստ միւսոյն և վերանորոգութիւն հաւատոց նորա:

Բանրեհանր կերդեռքս որոշ միջոցք ժամանակի սահմանեցան գաղտնի խորհրդաբանութեանց, յորս հիմնին հաւատ բուդդեանց և անցք պատմութեան նախքան զյայտնութիւն գովատանոյ. իսկ Հնդիկք ընդ հակառակն՝ չունին որոշ չափ միջոցի, որով զբազումս յեւրոպացւոց մոլորեցուցին համարել զՓութիւն գրուածոց իւրեանց, իբրև յերեկեան բաղայս առեղծանելեաց: Խաիր ի մէջ բուդդեան և Ցոդիկ ժամանակագրութեան այս է. զի գաղտնիք նոցա, (Ցոդկաց.) այնքան մերձաւոր ժամանակաւ ձուլեցան

մինչ չթողուլ նշմարանս հաւատարմութեան, յոր ի ծագել լուսոյ քանին՝ ակներև լինին առականք զառանցանաց: Մանաւանդ հեղինակացն այնոցիկ, որք ծաղկեցան առ ժամանակաւ, կամ փոքու ինն զկնի մակեդոնական յաղթութեանն: Իսկ բուդդեանց առասպելաբանութիւնք դադարեցան իբրև 688. ամաւք նախ քան զքրիստոս, յորժամ Սիդատան ընկալաւ գբուդդութիւն յանձն գովտամայ:

Որ ինչ անցք՝ պատմին յառաջ քան զգովտամ, հիմնին ի յայտնութիւնս տուեալս ի նմանէ. և քան զՅոդինին անցանեն առասպելօք և խրթնութեամբք: Իբրև հինգ հարիւր ամաւք զկնի նորա յաջորդեցան ամք հրաշից ի դաւանողս վարդապետութեան այնորիկ: Վերջին յաշակերտաց նորա ի սեղան, որ աստուածազգեցիկն համարէր գոլ Սալադէին թերօ, ազգակից էր վատագամնեայ, որ թագաւորեաց ի 104, ամէն ցամն 17. նախագոյն թուականի Տեառն մերոյ:

Արդ՝ գովտամ բուդ՝ սկսաւ զքարոզութիւն իւր 588, ամաւք յառաջ քան զՔրիստոս, ի Ցոգետասանեարորդ ամի թագաւորութեան Բիմբասարայ ինքնակալին Սաղադայ: Եւ մեռաւ ի 543. ամի Ն. Ք. յութներորդ ամին Աջատասատայ որդւոյ բիմբասարայ, և յայտնութիւնք ի նմանէ՝ որք բանացի քարո-

զեցան ՝ի Հարց յորդիս աւանդեալք յընթացըս ջրից դարուց, ցվախճան հրաշից բուդդայական աղանդոյ, հաւաքեալ յերրեակ գիրս Պիտակ անուանեալս, պահին իբրև սրբազան պատգամք օրինաց:

Վ. Ն. Վ. Ն. Ն. Ի յետ մահուն Բուդդայ յաւուրս քրմապետութեան Մահակասպայ, ծագեցաւ հերձուած ՝ի մէջ հետեւողաց նորա յաղագս հարազատութեան գրոց այսոցիկ, ուստի ժողով գումարեցաւ ՝ի Ռաճագահան մայրաքաղաք Աջիտասատայ հինգարիւր յիսուն և երեք ամաք Ն. Ք. ուր մերժեցին ըզհերձիս, հաստատեցին զգիրս, և արարին մեկնութիւնս ՝ի վերայ՝ Ատակաթա կոչեցեալ:

Ն. Ք. ջրեքարիւր քառասներեք. իբրև հարիւր ամաք զկնի, յաւուրս Թագաւորութեան Կալասոկայ և քրմապետութեան սաբակամեայ, երկրորդ ժողով գումարեցաւ ՝ի Վասալի, զհերձուած բառնալ քրմացն Վաջիացւոց՝ բնակելոց ՝ի քաղաքին. ուր վերստին հաստատեցաւ հարազատութիւն Պիտակաց, և գրեցան Ատակաթայք ինչ՝ որք պատմեն զանցից յաջորդեալ դարուց:

Ն. Ք. երեքարիւր ինն՝ յաւուրս Դամասոկայ միահեծան ինքնակալին, և ՝ի քրմապետութեան Մոգալիպոտատիսեայ՝ երորդ ժողով գումարեցաւ ՝ի Պատալիպուտրա. և իբ-

ըև երկու ամօք զկնի Սահինդօ որդի դամասոկայ չօքաւ 'ի Սելան՝ տարածել անդանօր զաղանդն բուդդայ։ Որում աշակերտեցաւ Դեւանանպիատիս արքայ կղզւոյն, և զբազումս յիւրայոցն քրմացուցեալ՝ կառոյց յոլով տաճարանի, յորս երեւելին էր ՍահավիրաՁն Անարատպուրայ *։ Սահինդօ եմոյծ անդ-

* Է մ 'ի հաշակաւոր և հինաւուրց քաղաքաց աշխարհի համարեալ Անուրատպուրա Պտղոմայ։ Անկանի 'ի գաւառն Նովերակալաւ լիսուն և երեք մղոնօք յարեւելից հարաւոյ Աբրիպոնի. և իննսուն և երկու մղոնօք 'ի հիւսիսոյ Կանդեայ, 'ի սելան կղզի։ Զոր կառոյց Անորաթա Սակիա Կումարաք, մի 'ի վեց իշխանաց անտի՝ որք յեզերաց Մալաբարայ եկալ բռնացան կղզւոյն յաւուրս Պանդուասայ արքայի. որ թագաւորէր անդ սկսեալ 'ի վեցերորդէ ցսկիզբն հինգերորդ դարուն Ն. Ք։ Պանդուկ յետ նորա թագաւորեալ ցմէջն չորրորդ դարու, և արաբեալ զԱնարաթպուրա նիստ արքայութեան իւրոյ, բազմօք շքեղացոյց զնա։ Յաւարնուսն ամի թագաւորութեան դեւանանպիատիսայ, 'ի վախճան չորրորդ դարուն, Դամասոկա ինքնակալն Դամբադիպայ, առաքէ զորդի իւր զմահինդօ, և զդուստր իւր Սանգամիտա, տարածել զբուդդութիւն 'ի սելան։ Յաւուրս Անսելայ արքայի, իբրև 214 ամօք Ն. Ք. զօրավար ոմն մալաբարայ Եալալա ձայնեալ, անց 'ի ծովեզերացն Կորոմանդելայ յայս կղզի։ տիրեաց նմա, և զԱնարատպուրա կացոյց մայրաքաղաք յաղթութեանց իւրոց։ Սա գալով նախապաշարեալ ոմն յերկրագուս Սիպ չաստուածոյ, յարոյց հալածանս մեծ 'ի վերայ բուդդեանց, և եկաց մեծափառ շքեղութեամբ ցամբառնալ Դոտոգայմանայ յանԹոռն Դուհոմեայ, որ մարտ եդեալ ընդ բռնաւորին՝ սպան զնա. և վերստին հաստատեաց զՀաւատն բուդդայ։ Կոփեաց տաճարս 'ի ժայռս լերանց. և կալան Սինգալէ զանարաթպուրա, ցամն 104, ուր եօթն մալաբարք 'ի Կորոմանդելայ կրկին եկին 'ի Սելան, և հալածական արարեալ զարքայն

զպիտակս և զստկաթայս բանայլ քարոզուԹ, որք կացին Նոյնպէս ցամն եօԹանասուն Նախ քան զՔրիստոս. և առ Թագաւորութեամբ Վատագամինեայ՝ զառաջինն ի գիր յեղան. պիտակք ի պալէականն բարբառ, և ատաստկաԹայք ի սինգալին: Քանզի գրի այսպէս ի մատեանսի՝ "ԹԷ ամենիմատ առաջնորդք

Վալագամբու՝ ընդ հարկաւ արարին զքաղաք Նորա։ Հինգ ի Նոցանէ կալան զայն ցամն չորեքտասաներորդ։ մինչև ոգի առեալ արքայն ընկեցին, վերստին յաղԹեաց Նոցա։ Յաջորդք վալագամբուայ մի զմիմանաքք ելանէին ի չինուԹիւն տաճարաց։ և ի շուք քաղաքիս այսմիկ։ Ցամն Տեառն 275, և ի Թագաւորութեան Մահասենայ կրկին վերաբերսաւ ժանտախտ հեր-ձուածոց, և արքայ ինքնին ընկղմեալ ի խոհերս Վիտուլական մոլորութեանց՝ ոչ միայն խորտակեաց զհրաշակերտս ի տաճարաց զոր Նախնիքն կառուցին, այլ և ակօս վարեաց ի Նոսա։ Յաջորդք սորա կալան զտէրուԹիւն Ինարատպուրայ ցամ տեառն 432։ յորժամ մալաբարք վերստին առին, և պահեցին զայն ցամն 452։ Ինչուհետև Սիգիրիզալա եկաց մայրաքաղաք Նոր վերոկալաւայ։ և Ինարատպուրա լքաւ, և Թաղեցաւ յաւերս իւր, ի մէջն ուռիներորդ դարուն։

Այս քաղաք գԹգ Պաղմիրա սեւանայ՝ յաւեր իւր անգամ բարձրաբարբառ քարոզէ զմեծարարութիւն Նախնի բնակչաց իւրոց։ որք ըստ Նոքասայ ասել, "ոչ խնայեցին ի վաստակ և ի վիշտ, կուրել տաճարս ի ժայռս, և ճարտարել լերինս ահագինս ի պատիւ աստուածոց իւրեանց։ Որպէս Թէ ծնեալ իսկ էին փորել զքարինս, և կանգնել լերինս։" Ի մէջ աւերակաց սորա հրաշալի են արդարև մնացորդք Լ՞ԷՔ Մ՞ԷՔ Պ՞ԷՔ, կառուցեալ ի վերայ 1600, վիմատաշ սեանց, մեծասան ոտնաչափ բարձրութեամբ, և երկոքումբք քառակուսի։ Որոց քառասունք ի մի շար, կացուցանէին զմի կողմն քառանկիւնի դրից Նորա։ ամբառնալ ի վերայ չինուած հզօր ինենկարգեան բարձրութեամբ։

մեզ բանիւ աւանդեցին զսոսին. իսկ արդ հայեցեալ յապականիլ վարուց մարդկան՝ ի գիրս դրոշմեցին. զի մշանջենաւորեսցի հաւատն՝ դարուց ի դարս անապական։" Իսկ Բուդդաղոսոն առ թագաւորութեամբ Պահանամայ, որ ընդ մէջ անկանի 182. և 110. ամաց Ն. Ք. թարգմանեաց և զատակաթայս ի սինգալեան բարբառոյ յոճ պալէական։ Յորոց հասկանալ պարտ է, զի նախկին միջոց պատմութեանն յառաստելս խարխափի։ Երկրորդն՝ ճառէ. զքսան և չորից Բուդդաց երևելոց յընթացս վերջնոյ երկոտասաներորդ հոգեփոխիկ վերածնութեանց նոցա։ Իսկ երրորդն՝ սկսեալ ի 443. ամէն Ն. Ք. շարունակէ ցաւուրս Բուդդաղոսոնայ, հարիւր մետասան ամաք։ Եւ այսպէս՝ ճրագ լուցեալ ի խաւարի խառնիխուռն շփոթութեանց, հանէ զվերծանուս իւր ընդ շաւիղ լուսաւոր՝ ի գիտութիւն ժամանակացն անցելոց։

———000———

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ.

Արարչութեան Աշխարհի։

ՈՐՔԱՆ դարք են ժամանակացն Հնդկաց, այնքան և նորանոր արարչութիւնք աշխարհի. վասն զի ազգ ազգի վերայ հարստացեալ ի Հնդկաստան, և իւրաքանչիւր ոք զիւրն նախամեծար առնել կամելով զծագումն Ազ-

գի, յանդիման կացուցանել զիւր բրմհա, վիշնու և զսիպ նոր ի նորոյ ստեղծանել զերկինս և զերկիր: Ի սկզբան այսր դարու, զոր պադմակալպիա անուանեն, այսինքն շուշանարարչութիւն, ենջէր վիշնու պարոյած ի վերայ սկզբնական ջուրց լճին կուրկեթայ կամ Տանասարայ, ուր ի պորտոյ անտի նորա վերաբուսաւ ջրշուշան կամ նուենուֆար ծաղիկ, բերելով յինքեան զմանուկ արարչութիւնն բրմհա, որ ի կերպարանս նարայանայ (շրջողն ի վերայ ջրոց.) արար բանիւ իւրով զՇնուկա, զՍունաթա, զՍունդա, և զՍունդկումար, որք ամուրի կեանս սիրելով, և ճգնութեան զհետ գնալով՝ ոչ ածեցին զազգ մարդկան: Առ որ խստամբեր կենաց տուեալ զինքն Բրմհայ ճգնաւորական ժուժկալութեամբ զօգնութիւն զդիցն խնդրէ ի թիկունս իւր, և յետ հաղարամեան մաղթանաց ի յուսոյն վրիպելոյ՝ զեղանի ի հեղեղս արտասուաց. յորոց ծընանին Տիտանք, և ի հեծութեանց նորա ելանէ ռուդրու կամ սիպ. որ կամաւ հօր ըսկսանի զարարչութիւն աշխարհի: Այլ այնքան բուռն զօրութեամբ՝ մինչ երկուցեալ և յինքն առեալ Բրմհայ զայն ստեղծանէ զջուր, զհուր, զօդ, զհող, զերկինս, զհողմունս, զդետս, զծով, լերինս, ծառս, տունկս, բոյսս,

չափմունս ժամանակաց, զիւ, գիշեր, զամիս, զամն, և այլն:

ՀԱՍՏԵ ապա ի շնչոյ իւրմէ՝ զԴակշա, յաչաց իւրոց՝ զմուրուչի և զուտրի. ի գլխոյ՝ զունկիրա, ի կրծոց՝ զԲրիգու, ի սրտէն՝ զդրմու, ի մտացն՝ զսինկլպա, և ի փքոյ որովայնին՝ զՊուլորտիւ, զևթայն շատախօս: Իբրև երեկոյ եղև, զիւրեաւ առեալ Բրմհայ զմարմին խաւարային՝ ստեղծ գքաջս. և ի վաղորդեանի սփածեալ մարմին լուսեղէն արար զոմանս ի դից. իսկ ընդ երեկս՝ զնախահարս ազգի մարդկան: Յետ այսորիկ՝ առ զմարմին ներգործական, և ստեղծ զմարդ և զանասուն: Այլ տեսեալ թէ ոչ ածէր ազգ մարդկան՝ յերկուս ճեղքէ զանձն իւր. յորոց զմին յորինէ կին, ասատու-ռուպա անուն. և զմիւսն յայր՝ սվայամբհու, այսինքն՝ որդի անձնիշխանութեան: Եւ այսպէս ծնանի ուստերս երկուս, և դստերս երիս. յորոց ածին ազգ մարդկան: Առ սովաւ ասի Աստուածոյ խոնարհիլ ի պատարագ ինչ հաճոյական, (Աբելին արդէօք.) և ոչ ինչ այլ արժանի յիշատակի պատմին բանք:

Յետ այսորիկ արտադրէ Բրմհա ի բերանոյ զբրահմանս, զորս և որոշէ ի քահանայս և զլուսացիս Ցոդիկ պաշտաման, ի պահեստ կրօնից՝ և ի տածոյթ մակացութեանց: Ի

բաղկացն՝ զԿշեթրայս, որոց տայ զպայազատութիւն և զպաշտպանութիւն ՝ցին յերեսաց օտար թշնամեաց, զվերակացութիւն քաղաքական օրինաց և կարգաց, զթագաւորութիւն և զինուորութիւն: Ի բարձիցն՝ զԱյշուս, որոց և զինամ վաճառաց և արուեստից որոշէ: Իսկ յոտիցն՝ զՍուդրուս, որոց տայ զմշակութիւն երկրի, և զամենայն տեսակս ստորին ծառայութեանց: Այլ այս կարգ ազգաբաժանութեան յետոյ մուծաւ յարարչութիւն Բրմհայ՝ առ ի կազդոյր բարոյականակն պերճութեան և եթ:

—ooo—

2340
39

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԶՐՔԵՂԵՂ ՀՆԴԿԱՑ:

ՅԵՏ նախաստեղծ մարդոյն յաջորդեցան նահապետք վեց՝ նովին անուամբ, այլ թէ զնրպիսի կեանս վարեցին, կամ ցորչափ կեցին՝ չէ յայտնի: Այլ ըստ աւանդելոյ մեզ պատմագրաց գրոց՝ եօթներորդն ի սվայեամբՀուայ՝ մունու, ստուիրատա կամ ստուունոս ըստ Հեթանոս պատմչաց, գոլով այր արդար՝ զերծաւ ի համաշխարհական հեղեղաց: Զի ապականեցան վարք մարդկան յերեսաց ամենայն երկրի, և մունու ըստ պատուիրանին վիշնուայ եմուտ ի տապանն

բահիդրա կոչեցեալ՝ հանդերձ եօթն արդա-
րովք, զուգովք յամենայն շնչոց կանդանեաց,
և սերմանց բուսականաց։ Ուր վիշնու առ
զկերպարան կիտին մեծի, և կապեաց զբա-
հիդրայն ի թև իւր՝ գալարածով վիշապ օ-
ձին՝ իբրև չուանաւ։ Եւ ահա բացան սա-
հանք երկնից, և ծով արտաքս զեղաւ՝ հե-
ղեղաւ կորուսանել զամենեսեան։ Ուր մացի-
սաւթարա, կամ ձկնեղուութիւն վիշնուայ
զայլանդակ հրէշն խորտակեաց զհիագրիւա.
որոյ ի քուն գտեալ զբրմհա՝ գողացեալ էր
ի մնարիցն զվիտայս. և պատճառ եղեալ
կորստեան որդւոց մարդկան։ Այս հրէշ՝
իշխան ասի դանաւաց, այսինքն է՝ դիւաց.
յորոյ հանեալ ի ձեռաց զվիտայս՝ տայ մու-
նուայ՝ յօրէն յաղգէ յաղգ։

ԻԶԱՆԵ մունու յերկիր մատսիայ, անկէ զայ-
գի, և արբեալ ի գինւոյ՝ ննջէ մերկ։ Քարմա
որդի նորա յայտնէ զայն եղբարց. յուտպիտու
և սարմա ծածկեն զմերկութիւն և ժառանգեն
զօրհնութիւն։ Իջանէ աստուած ի պատա-
րագ մունուայ, և տայ նշան յաւիտենից հաշ-
տութեան։ Կարգաւ որոշէ զբազմանալ սերն-
դոց նորա, և զչուեալ գնալ նոցա ի քուշիդուի-
պա. ՝ի յերկիր քուշայ՝ ի սենսաար։ Բայց ընդ
շինութիւն աշտարակին խառնէ զիւր անտ-
ւօտ առատպել։ Քանզի գրէ, թէ իբրև հաս

անդր բաղմութիւն մարդկանն, Պատմագէ-
ւի շուշանածին գիւղուհին երևեալ նոցա՝ ու-
սոյց զարհեստ գրչութեան և զենուորութե-
յորոյ պատիւ յարուցին ասէ զպատմամանդիրն:
Զի մանդիրա՝ զտաճար, և մատա՝ զուսումն
նշանակէ: Ահա սոյնգունակ ունի ուշադիր
ընթերցողն գտանել իւր խեշերանս ճշմար-
տութեան՝ ի միջոյ խօլական երազածոց, և
ի ծաղկանց թունաւորաց մեղուօրէն մտնա-
սորել զընտիրն և զառողջարարն:

—ooo—

ԳԼՈՒԽ ՉՈՐՈՐԴ

Ծագումն Հնդկաց՝ ըստ ոստոիՀ:

Թէ ուստո՞ի, կամ զիարդ՞ ծագումն
Ազգիս այսորիկ նախնականի, և անծանօթ
մնացելոյ նաև՝ ի քաջագիտացն Հելլենա-
ցւոց և յայլոց՝ անմարթ է ճշդիւ ի սահ-
մանս ածել: Ոմանք ի քուշայ գնեն զնոսա,
այլ անհիմն զրուցիւք: Այլք՝ ըստ Եւսեբեայ
և Սամուէլի երիցու մերում, ի սեմայ ծննդա-
բանելով՝ իջուցանեն ցեբեր, այսպէս շարա-
կարգելով զազգահամանն: "Եւ որդիք Ե-
բերայ Փաղէկ. և ի նմանէ կարգի ազգն
Աբրահամու: Եւ Յեկտան, և Յեկտանայ
լինին որդիք երկոտասանք, առաջինն Ել-
մոդատ, և ի նմանէ Հնդիկք:" Ապա

թուելով զերկոտասան ազգս ի Յեկտանայ՝ յարէ զկնի։ «Ամենեքին սոքա որդիք Յեկտանայ, եղբօր Փաղեկայ. և բնակութիւն սոցա ի Մասեաց մինչև գալ ի Սփերայ լեառն արևելից։ Եւ յայլսուր ասի. թէ բնակութիւն ամենայն որդւոցն Սեմայ ի Բակտրոնէ մինչև յՈՒինոկորոն, որ մեկնէ ընդ Ասորիս և ընդ Եգիպտացիս և ընդ Ծովն կարմիր. ի բերանոյ Ծովուն՝ որ է յանդիման Ասինայ, այսինքն աշխարհին Հնդկաց։»

Ի՝սկ եթէ հայեսցուք ի գիրս Հնդկաց գտանել զսկիզբն նոցա, անկանիմք ի տարտարոս տարակուսի։ Քանզի՝ խնդիր կարեւորագոյն է. թէ արդեօք որք տակաւին խոստովանին զհաւատ վիտայից իցեն՞ նախնի բնակիչք Հնդկաստանի, թէ ոչ։ Ամենայն ճշգրիտ պատմութիւնք ազգաց անտարակոյս հաստատեն նախնի գաղթականաց աշխարհիս զեղուլ այսր յարևմտից ինդոսի. որում համաձայն ընթանան և՛ ամենայն ցեղիկ յիշատակագրութիւնք։ Ուրեմն մնայ մեզ հաւանական ընծայել թէ բուն նախնի բնակիչք չեն՝ որք արդ Հնդիկք անուանին։ Այլ ցեղք ինչ խժիցն՝ որ զանանական կեանս վարեն ի լուին անտառս ներքուդայ գետոյ, ի սոհան, ի մահանդի, և ի լերինս սուրգուլայ և Ղօտա-նագպուրայ՝ իցեն բնիկք

աշխարհիս: Որք ի բարբառս արդի Հնդ-
կաց կոչին Բիլք, Գովանդք, Մինեկք, Կո-
լէք, և Զուարք: Խօսին զլեզու օտար ի
սանսկրիտ ոճոյ. և պաշտեն հաւատս հա-
կառակ Հնդկին: Քանզի յանարուեստ և
յանպատասպար դարս առաջինն՝ կելով սոցա
անհոգաբար ի պարարտութիւն ամենաբեր
անտառացն Ասիայ, և ի մեղկացուցիչ յա-
բեգունիս մշտամառն ջերմութեան՝ զար-
հուրեալ յարշաւանաց անտի յաղթականացն
հետ զհետէ ի վերայ յարձակելոց՝ խոյս
եռուն յանխաբ վայրս անտառաց. և ի
ծերպս լերանց ծակամուտ եղեալ՝ կացին
մնացին մինչև ցայսօր ժամանակի: Իսկ
Հնդիկք, թէ և ոչ բուն բնակիչք՝ եղեն
առաջինք ի տիրապետողս նորա: Ի նա-
նիր վաստակեցան ոչք գուն գործեցին
գտանել զստոյգ ժամանակ յարձակմանց
սոցա. զի յանչիշատակ դարուց հետէ հոր-
դան տուեալ յարևմտից ինդոսի, զբռամբ
նուաճեցին զնա:

Ցնցոյ դար ասի թագաւորել Դիոնիսի ի
վերայ եգիպտոսի. որ յետ զվայրագասուն
բարս իւրոյ ժողովրդեան յընկերութիւն հա-
մարելոյ՝ և օրէնս քաղաքականս կարգելոյ ի
վերայ՝ յանձն առնէ զնոսա կնոջ իւրում Ի-
սիսայ ընդ հերմեան եռամեծաւ. և զբա-

ժողով լեալ յամենայն կողմանց՝ զօրավար կարգէ նոցա զարնոբիոս և մասեդոնն։ Առ-նու և զապողն ընդ իւր և պան, զգտակս ի-մաստասիրութեան և երաժշտութեան. ըզ-տրիպտղամէոս և զմարոնն՝ զուսուցիչս երկրա-գործութեան և մշակութեան։ Զպարեցիկ և զերգեցիկ կանայս, զայծեմարդս, որք թուին գոլ մինչկատակք ծաղածանակ տարա-զու, և զայլ անհամար որեալ՝ խաղայ նոքօք յեղեմովպիա, յարաբիա, և ընդ պարս ան-ցեալ՝ մտանէ ի Ցոգկաստան։ Իսկ նաթուռ-դէս արքայ Ցոգկաց և ամենայն դևթայք նո-րա ընդ նորա՝ լուեալ թէ յարուցեալ գայ դա-յոնաշհուդայ, խոյս ետուն ի կիրճս լերանց։ Իսկ խառնաղանձ ամբոխն ի զէն խուճապեալ յորպիսիս Ցարել կարէր նորակիրթ հանճար նոցա և յեղակարծ զարհուրանք՝ փութով ի պարտութիւն մատնեցաւ։ Եւ յաղթականի՝ այսօրինակ հասարակահնամ բարութեամբ պատկերոյ, որոյ ընդ յառաջ երթայցեն զօրք նուաճել զբռնութիւն. յաջմէ խմաստունք՝ հրահանգել զբարս. ընդ ահեկէ դաս գե-ղուհեաց՝ յամոքել զսիրտ. և ի վերջոյ ար-հեստաւորք ի տաշել զկոպտութիւն. որ իցէ ազգ, որ ոչն Ցաղանդիցի։ Այսպիսի յաղթա-նակաւ և նորասքանչ զարմանօք պաշարեալ ժողովրդեան՝ երկրպագին նմա իբրև դից ու-

բուք, և քրմուհիք ի ձայն բարձր աղաղակեցին, «ահա Բաքի. ահա յաղթութիւն:» Մնայ անդ զամս երիս, և առ Ցդիկ գետով ընիսա քաղաք շինէ: Դիոնէսուպոլիս՝ որ արդ նագար ի Հայագան, հիմնադիր իւր զնա ունի. և Ովգ ի բՀար՝ յարևելս բանկալայ, յառաջին օրէնսդիր: Որ ի դարձին յեգիպտոս՝ յեղբօրէն ի տիւփոնէ մեռանի:

Զայս ամենայն Համառօտէ քեզ Եւսեբի: «Դիոնէսիոս ի Ցդիկս զօրաժողով եղև, և ընիսա քաղաք շինեաց առ Ցդիկ գետով: Եւ որ կամիցի ի մօտոյ տեսանել զդիոնէսիոսի գերեզմանն ի դեղփիս առ խակինայ առ ոսկին ապողոնի: Քանզի յիգի կերպարանս Հանեալ է . . . որ էր զօրավար, վասն իգախառնութեան զօրացն՝ որք ընդ նմա էին: Քանզի ընդ արուս և՝ զէգս վարէր ի պատերազմ, որպէս փիղոքորոս յերկրորդումն պատմէ:» Զայս ցուցանէ և արձանն գտեալ ի վերջին ժամանակս՝ այսպիսի իմն մակագրով: «Հայր իմ սատուռն էր կրտսեր աստուածոց. իսկ ես ոսիրիս, որ անՀամար զօրք խաղացի ցիսորին անապատս Ցդկաց, մինչև յակուռնս իսարայ. բարիս առնելով բնակչաց ամենայն երկրի:»

Ցնոցունել ժամանակաց՝ այլ ազինք և այլ լեզուք զեղան աստանօր, որք մի զմիով երևալ՝

ի Հարկի ստրկութեան զիրեարս կացուցանէ-
ին: Բրահմանք ի բուն իւրեանց գրեն
զքաշմիր՝ յանուանէ առեալ կաշխապայ, որ
առաջնորդեաց նոցա յարևելս աշխարհին:
Կոզմաս, որ յամի Տեառն 535. և 547. ճա-
նապարհ արար ի Ցոդիկս, յիշատակէ ազգ
ինչ՝ սպիտակ քան զբուն բնակիչս երկրին,
Հոննիս կոչեցեալ. որք բռնաբարեալ զա-
ռևմտեան Ցոդկաստան՝ չարաչար կեղեքէին
ասէ զբնակիչս նորա: Եւ զինչ զարմանք ի-
ցեն. եթէ առ նովին ժամանակաւ, յորում
խուժք հիւսիսի լցին զեւրոպէ արեան ճապա-
ղեօք. անցեալ և՝ այսր՝ հաստատեալ իցեն
զմիապետական զայն իշխանութիւն: Ասիէ.
զի հինդք ըստ հին եգիպտացւոց՝ զազգն ի
քառեակ դասս վերածին. որոց եթէ լեալ
էր նոցա մի ազգ և լեզու, չէր Ցարբ այնքան
սաստիկ խոիր գնել ի միջի՝ մինչև ոչ ինչ ի-
ւիք հաղորդել դասուն ընդ դասու:

Եկն յաղթականացս կալան զառաջինն՝
զհիւսիս Ցոդկաստանի. և ապա սակաւ առ
սակաւ տարածեցին զսահման իւրեանց մինչ
ցեզերս ներքուդեան գետոյ՝ որ ի Դաքան:
Կարծեացս ապացոյց առնում զօրէնս մունուայ
յորում սահման հատանի թագաւորութեան
Ցոդկաց՝ սոսկ հիւսիսի մասն նորա. հատաստ-
ուածեան համարեալ տաճար դից և դիւցա-

զանց նոցա : Եւ զՀամատարած զայն մնացորդ աշխարհին՝ որոշէ նա ի բնակութիւն Արի-քաց, այսինքն բնակաց երկրին՝ որք տակաւին բնական օրինօք վարէին զկենցաղս զայս. Թափուրք ի հանճարոյ և ճարտարութենէ սրուեստիցն առ հասարակ : Զորեքին երևելի և հոյակապ ուխտատեղիքն, Հռչակեալք յամենայն ժուկս նոցա՝ անկանին յայսմ բաժնի. Թէպէտ զարդիս և՝ հարաւային ցամաքակղզին ոչ ինչ նուազ քան զնա, պարծի սրբութեամբք իւրոց տաճարաց :

Աթոռ Թագաւորութեան Հնդկաց ընդդարս յոլովս անկանէր ի գաւառակողմանս գանգէսի գետոյ, որք յանցանել ժամանակաց հատուածեալ ի մեծ տիեզերականութենէ անտի հիւսիսի, հաստատեցաւ անդանօր ի Զանդրագուպտայ մինչև ի Վիկրամադիտիա : Տաղ Անգղիացի գրիչ պատմութեան Ռաքպուտաց, աւանդէ ի ռաքաստանի իւրում, թէ ազգ ինչ նոր Ակնիկուլա կամ Հրեղէն կոչեցեալ, իբրև 2000. ամաք յառաջ քան զայս ընդ բռամբ նուաճեաց իւր գվերինն Հնդկաստան, և անցեալ ընդ ներբուդա գետ՝ նորոյ հարստութեան հիմն հաստեաց ի հարաւ : Քանզի այս մասն Հնդկաստանի, որ այժմ հանրածանօթ անուանակոչութեամբ Դաքան ճանաչի, ան-

ծանօթ իմն էր Հնդկաց առ ժամանակօք մահաբերաթի և ռամայան գրոց: Անտառ կապկաց համարեալ, անապատ արքոց, և վայր անվրդով աղատութեան ռակշասաց, կամ ճիւաղաց. որոց ապա մարդացեալ՝ ընկալան ասին զՓիդիկ դաւանութիւն, և յաւելան յազգ նոցա:

Աճլ. Ի մէջ ամենայն գաղթականաց, կամ լաւ ևս ասել կամեցեալ, յաղթականաց Հնդկաստանի՝ երևելի հանդիսացան յոյժ՝ երկոքին հարատութիւնքն Արեգական և լուսնին: Քանզի Հնդիկք զեօթներորդն ի սուայեամբուայ զմունու, անուանեն վայվեվատա, որ այսինքն է՝ որդի Արեգական: Եւ պնդեն ըստ Սանքոնիաթոնի փիւնիկ պատմչի, թէ դուստր նորա իլա, տուաւ ի կնութիւն բուդայ որդւոյ Զանդրայ կամ Հինդրայ, (այսինքն Լուսնի,) որդւոյ Ատրայ որդւոյն բրմայ: Ուստի ելին նահապետութիւնք Հնդկաց, Սուրաջքնք և Զանդրաքնք. այսինքն Արևորդիք և Լուսնորդիք: Ուստի և ազգն անուանեցաւ Հինդու, որ է՝ Լուսնազարմ: Զայս այսպէս եդեալ թողում յիշել զվրիպակ նախնեաց, որք միահաղոյն աւանդեցին առնուլ Հնդկաց զանուն իւրեանց ի Հնդիկ, կամ յինդոս գետոյ: Քանզի որպէս գետն, նոյնպէս և երկիր նոցա

առին զանուանս յազգէն. և ոչ թէ ազգն ի նոցանէ: Այլ ինձ զի՞ փոյթ զայսմանէ:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Արիւորդիքն Արուեստ, Բիւրքիր, Իմաստասէր, Ոգեմատեան և ցեղբարս նորա:

ԳԻՏԵԼ արժան է. զի որպէս ի վերս անգր ծանուցի՝ մանուկ Հայոյ բազմաց էր անուն. որպէս փարաւօնն առ Ցովք եգիպտացւոց: Այլ գործ իւրաքանչիւրոց նոցա այնքան էր իրեարս շփոթին՝ մինչ ի խուզել պատմաբանին խեշերանս ստուգութեան յարարս սուրբ, յաջորդեալ տեսանել զնա նոցին անուամբ և գործով: Արուեստ՝ որ զփչելոյ կամ զաստուածազգեացն նշանակէ. համարի ոք զծայրն յայտ առնել ազգի մարդկան: Զի և՛ մակդիր բազմաց ի նոցանէ՝ սվայեամբ հու կամ որդին անձիշխանութեան՝ սեպհական ձիրք իմն էր առաջին մարդոյն: Զկնի նորա եկին այլ մանուք. որոց ոմանք առանձնական կեանս սիրելով, և ոմանք ճգնութեանց ըզհետ պնտելով՝ որդիք հարց յաջորդեցան, մինչև ի մանուս վայվեսվատա. անուանեալ որդին արեգական: Որոյ ծնունդն և գործք

այնքան միգապատեալ նսեմանան խրթնութեամբք առասպելաց՝ մինչ պատաղումն անՏարին արկանել զնոքօք, որոց ի խնդիր ելանիցեն գտանել զով կամ զկարդ նորա։

ՅԵՏ մունուայ արևորդւոյ առաջին թագաւորեաց Բհարիթ. յորմէ առեալ պուրանաց կոչէն զաշխարՏ Բհարաթ-վարսա։ Յաղագս ընդարձակութեան իշխանութեան սորա՝ որպէս և՝ ամաց կենացն՝ Տգիկք շատ շուայլացան և անգղեացիք կարի ճիշդ գտան։ Իսկ ինձ կամք եղև զմէջն ընտրել զերկաքաչիւրոց. և մակաբերել աստանօր՝ թէ ինքնակալ պետութիւն Բհարիթայ, որպէս առաջին ի Տգկաստան՝ նոյնպէս և՝ ընդարձակագոյն եղև քան զքաղմաց հետագայ հարստուեց։ Վասն զի Բհարաթ-խունտ, որ այն է՝ մասն Բհարիթայ՝ պարունակէր ի Տուումն ոչ նուազ քան զտասն կալուածս թագաւորութեանց։ Որոց առաջին էր Սարասուատի՝ Փանջապաւ հանդերձ։ Երկրորդ՝ Ղանոջ. Դիլեաւ, Ագրայիւ, Շրինագարաւ և Ոկդաւ հանդերձ։ Երրորդ՝ Թիրքութ. որ տարածէր ի Կասեայ մինչև ի Գնթակ։ Չորրորդ՝ Ղուր կամ Բանկալ՝ Բհարաւ հանդերձ։ Հինգերորդ՝ Գուզարա, մասամբ Խանտիշայ և Մալուայի։ Վեցերորդ՝ Ռեթկալ կամ Ռրիսսա։ Եօթներորդ՝ Մահարատա, կամ աշխարհ մահրատայից։

Ուիթերսորդ՝ Տոյլանգա, կամ Կորոմանդել. որ ընդ մէջ անկանի Գոտավրի և Կիշանայ գետոց: Ինեերորդ՝ Կռնատա, ի վերուստ կրճիցն Նիլգարեան լերանց՝ առ Մայսուրաւ: Տասներորդ՝ Դրաւիրա կամ Ճն Թամուլաց:

ԻԿՍՍՒԵԿՈՒ նահապետ արևորդեաց պայազատեալ գիշխանութիւն՝ խաղայ յարևելս, և հաստատէ զաթոռն յայովգիա. որ այժմ աւոդ կամ ովդ լսի, և նշանակէ՝ աղատ ի պատերազմաց: Սա վասիստայ աշակերտեալ միանձին ուսանի զամենայն հանճար պատշաճ թագաւորի, և սպառէ զուակշասայս ի սահմանաց անտի տէրութեան իւրոյ: Յաւուր միում զմտաւ ածեալ նորա զՀայր իւր վայվեսվատա, և զոր անցին գնացին յաշխարՀն երանելեաց՝ երկրպագանել անդ վիմանեան բագնին վիշնուայ՝ անձկայր անձուկ մեծ և՝ ինքնին հաղորդ լինիլ պաշտամանն: Ուստի՝ խորՀէր պահօք և աղօթիւք յերկիր իջուցանել զայն, զոր յայտ առնէր ուսուցչի իւրում, և նա տայր նմա զուրթնտառեանն Հմայ: Դիք զարՀուրեալք յայնմանէ՝ առաքեն զմանմանթա ի փորձութիւն և յաղարտ ճգնութեան նորա. որ եկն եՀար ի սիրտ՝ զմի ի նեռից իւրոց. այլ որդին արեգական անսասան եկաց: Եկն և՝ Ինդուա խորտակել զարդիւնս ճգնութեան նորա. այլ իկսուակու Հմայիքն

իջուցեալ զչարկա, որ է զէն վիշնուայ՝ հա-
լածական առնէ զաստուածն հաստատու-
թեան։ Յայնժամ վիմանա հեծեալ ի Գա-
ռուդն Բրմհայ՝ իջանէ յայսմդիա *. և ուսու-
ցանէ իկսուակուայ զսրբութիւն դիցն պաշ-
տամանց։ Անդ ի կղզեակ ինչ գետոյն, ուր
զառաջինն երևեցաւ այս բագին՝ կառոյց տա-
ճար հոյակապ. յորում երկրպագին իկսուա-
կու և ծնունդքիւր՝ յընթացս մահա յուգին։
Իսկ յաւուրս ռամայ փոխադրեցաւ ասի, ի
Սրի-ռանգա, յափն Կավարի գետոյ։ Այլ ի
ժուժալ կարիցէ առաստպելին. Կավարի գե-
տոյ փոխադրիլ ի հարանիկ, ի խանդ մտա-
նել փառաց գանգիսի. և դից բերել զետե-
ղել զվիմանա յափն նորա՝ համապատիւ առ-
նել զնա ընդ նախանձորդին։ Իսկ Թիկայն
գիրք պալեացւոց, յանկերպարան ձուլոյ աս-
տի խառնիխուռն անրջոց՝ պարզէ հանէ գոգ-
ջիր, ի ճշգրիտ կերպարան հաւատարիմ պատ-
մութեան։ Քանզի գրէ, " երիցագոյն որ-
դւոց Ոկակայ, (իկսուակուայ,) էր Ոկակա-

* Կոչի և Ռամուդիա-պուրի կամ Ֆէզաբատ։ Ալամգիր արքայն մողոլաց անուանեաց Ալոտարնագար, ի սակս ախտարաց զՀետ երթալոյ բնակչաց նորա։ Ընկանի յարևելս Դելլեայ, և յարևմտաս հիւսիսոյ Տիբեթեան լերանց։ Գաւառք են նորա Ռաւոդ, Խէրաբադ, Լակնապուր, Գոբոկպուր, և Բահրաշ, ուր Բուդիանք բաշձեալ բերեն ի լերանցն ոսկի, մուշկ, ջաղվար, արծուի, և մինա կամ սուհկա թռչուն մարդախօս։

մոխոն։ և մասն Հարստութեան թագաւորաց
ցՍոստոդան Հայրն գովտամայ՝ որք իշխեցին
ի Կապիլա՝ Ոկակեան կոչէր։ Էին սորա կա-
նայք հինգ։ Հաթա, Խիթա, Ճատու, Պա-
լինի և Վիսակ, և իւրաքանչիւրոց ի նոցանէ
հինգ հինգարիւրք նաժշտաց։ Տիկին տիկ-
նաց նորա յետ ծնանելոյ ուստերս չորս, զՌ-
կակամոխոն, զԿարականդուն, զՀաթինեկ,
և զՆեպուր։ և դստերս հինգ՝ զՊիա, զԱ-
պիա, զԱնանդա, զԱնանդա և Վիճիտա-
մինա՝ մեռանի։ Իսկ արևորդին փոխան ամ-
բարձեալ նմին դժխոյ մանկամարդ՝ ծնանի ի
նմանէ զՅադու։ որոյ ի կատարիլ ութնօրէից
մատուցաւ արքայի խոնձարրապատ յոսկի-
հուրն սաւանի։ Ընդ որ զուարճացեալ հօրն
խոստանայ մօր նորա կատարել զոր միանգամ
և խնդրիցէ նա։ Իսկ նորա ի խորհուրդ
մտեալ ընդ արենառուս, աղերսէ զարքայ
զորդին դնել ի ժառանգ արքայութեան։
Յայնժամ ցասուցեալ Ոկակայ կշտամբէ
զնա յասելն, «Ձգտիս արհամարհդ, կորու-
սանել զորդիս իմ։» Այլ ի պահուն լուռ
եղեալ կացեալ՝ դիպաւորջ պատահեցուցանէ
զարքայն, և բաղում շողոքորթութեամբ
իւրով՝ ասէ։ «Անպատեհ է տէր Արքայ,
խօսիլ քեզ զսուտ։» և սմին զհետ կցեալ
զքնքշութիւն՝ պարաւանդէ զուշ և զուրուշն

'ի կամն իւր: Յայնժամ զառաջեաւ կոչէ նա զորդիս իւր, և այսպէս մերկանայ նոցա զցաւագին զիւր խորհուրդ: «Զաւակունք իմ, յանակնկալ պահու հայեցեալ յեղբայր ձեր Յաղու՝ յանզգոյշս խոստացայ կատարել զնոյնիսկ մեր նորա: Արդ զոր նայն ինդրէ վասն որդւոյ իւրոյ՝ է թագաւորութիւնս այս: Առէք որքան և կամիք ձեզ փիղս 'ի փըղոց անտի, զերիվարս և կառս հանդերձ զօրօք արքունի՝ և մեկնեցարուք. մինչև վերստին կոչեցից զձեզ 'ի ժառանգութիւն ձեր:» Յայնժամ արտասուս յաչս իւրեանց յոգոց հանեն և ասեն. «խանդակաթ հայր. շնորհեա՛ մեզ թողութիւն ամենայն յանցանաց մերոց, զոր գործեալ իցեմք.» և ընկալեալ զօրհնութիւն նորա և զպալատականացն ամենեցուն՝ իբրև 'ի չու անկանէին, յարուցեալ և Ցոգեսին քերց զհետ ընթացան նոցա: Ամբոխ մեծ՝ որ յուսայր դարձի և աթոռակալութեան նոցա յետ արքայի՝ չոգաւ զհետ նոցա: Յաւուր այնմիկ գնացին յոճնա մի: Յերկրորդումն՝ երկու. յերորդումն՝ երեք: Որ գնայր և առաւելայր թիւ ժողովրդեանն յոյժ յոյժ: Անդ խորին արքայորդիքն և ասեն. «ա՛հա բազմանայ թիւ մարդկանդ զմեզ, եթէ յարձակիցուք սոքօք 'ի վերայ թագաւորաց փոքրկանց, և կալցուք զնոսա 'ի ծառա-

յութիւն, ոչ պատկանի մեզ: Զի զինչ՞ օգտիցեմք չուառուութեամբ օտարաց: (Ամաչեսցեն արդարև իշխանք հաւատացելոց, որոց փառամոլութիւն միայն՝ յիրաւունս համարի գազանային անգթութեանց:) "Յարուսցուք մեզ քաղաք յանապատիս Ճամբուդիպայ *. և կանգնեսցուք ի նմա զանուն պարծանաց մերոց:" Ընդ որ հաւան ամենեցուն լեալ՝ ջուեն ի Հիմավանտ, ի լեառն Հիմալու. ընտրել անդ զտեղի շինութեան քաղաքին:

"Զայսու ժամանակաւ Բուդդիսատոն որ ծնաւ յաւագ տոհմէ, և կոչեցաւ կապիլոն բրահման, թողեալ զտուն հօր իւրոյ, և մտեալ ի կարգ քահանայութեան իսեան սղանդոյ՝ բնակեցաւ յերկրին հիմավանտայ, ի տերևաշէն հղին՝ որ պատասալա առ երի աւազանին՝ յանտառին սալեաց: Սոյն սա լցեալ ձրիւք ընտրելոյ զբարին ի չարէն, քննէր զսիրտ երկրի ուրթաուն կանգնոց խո-

* Ճամբուդիպ ըստ Հնդիկ աշխարհագրութեան նշանակէ երկիր ծանուցեալ. և քաղաքն կառուցեալ անդ նախ կոչեցաւ Կապիլա, յանուանէ Բրահմանին՝ որ զտեղին նշանեաց. կոչեցաւ և Պատալիպուրա, այս է՝ քաղաք վարսագեղ. և Պուփհուպուրա, քաղաք Ծաղկային. Ընկաներ ի նահանգին Մազադոյ, որ ընդ իւրև գրաւեր զԲհար և զանբնակայս նորա. Եթե մահմետական յաղթութեանն կոչեցաւ Ալիմաբատ, այլ հաւաբակօրէն Փաթանա կոչի. և յինքն պարունակէ զՏիրհուդ, զՉիաուն, զՀաճիպուր, զՈրդասզար, զՇահաբատ, և զՊարուաքաղ կամ Մունկէր, որ ունի ջերմուկ յորդաբուղխ:

բուվթեամբ, և զվերնոլորտ երկնից նովին չափու բարձրութեամբ: Եւ անդ ի վայրին, յորում սեղ դալարի, թուփք և պատուտակք ընդ բուսանիլ իւրեանց ի հակամետ դիմէին կոյս. և առիւծունք և վագերք որսական գազանօքն, որք զհետ պնդէին եղանց և վարազուց. և կատուք և վիշապունք ի խնդիր ելեալ միանց և գորտանց, անընդունակք էին չարիս առնելոյ. և կամ հալածեալքն ի նոցանէ միայն բառաչիւք ահ արկանել կարէին եկամուտ չարին, անդր հասեալ և հաճեցեալ Կապիլա իսեան՝ կառոյց իւր պանանասալա, զլսրճիթն տերևաշէն:"

" Ցաւոր միում ի գալ արքաղնէ ինն ի խրճիթ նորա յորոն դրից .քաղաքին՝ մարգարէացաւ և ասաց: Քաղաք կառուցեալ ի տեղւոջ այսր պանանասալայ՝ կացցէ երևելի մայրաքաղաք ի համբրէն ճամբուդիպ: Ի մէջ մարդկանն՝ որք աստ ծնանիցին, մին հարիւրոց հաւասար յայլ քաղաքս ծնելոց: Աստ յարուսջիք ձեզ քաղաք, և ապարանս արքունիս ի տեղւոջ տերևաշէն խրճիս այսորիկ երկնահանգէտ պայծառակերտ կառուսջիք: Աստ չանդալոնն չակավատի եղիցի. այսինքն ստրուկն տիրոջ երկրի անուանեսցի "Ասեն ցնա արքայազունք. տէր՝ և քեզ պահեսցուք

աստանօր զտեղի բնակութեան։ " " Ոչ. այլ շինեսջիք ասէ զքաղաքդ, և անուն կարդասջիք դմին՝ Կոպիլա. և խղկի ինչ յանկեան ուրեք շատ եղեցի ինձ։ "

Խորհեցան նաև՛ աւագանին. զի եթէ որդւոց արքայի զարգացեալ էր ընդ Հարբ իւրեանց՝ խորհէր արդեօք նա զամուսնութենէ նոցա։ Այլ արդ՝ զի սնան ընդ մեօք, մեզ անկ է զարժանն խորիլ։ Եւ այսպէս մատեան առ նոսա և մերկացան ղծածուկս գաղտնեաց։ " Ձեն աստ ասեն դստերք թագաւորաց մեզ բարձու զուգակշիռք. և ոչ ուստերք նոցա հաւասարք քերց մերոց յարեան։ Եթէ անբաղդոյդ ամուսնութեամբ յօդիցի ոք ընդ ումեք, ծնունդք նորա, է որ 'ի հօր՝ է որ 'ի մօր կողմանէ՝ անարգադինք եղեցին արատոնն՝ որ ընդակից է ծննդեան նոցա։ Վասն այսորիկ՝ պակ ամուսնութեան կապեսցուք զքերց մերոց։ Եւ եղև իբրև զերեց 'ի քերցն յերիցուէն եղբարց մայրացեալ տեսին, յայնժամ և՛ չորեքին եղբարք ամուսնացան ընդ չորեսին քերց իւրեանց. հասարակաց ունելով զնոսա 'ի միջի իւրեանց։ " Իրազեկ եղև հայր նոցա՝ և զուարճացեալ յանձն իւր, այսօրինակ բարբառեցաւ առ իւրսն։ " Սիրելիք իմ, արդարև Սակիսյք են նոքա։ Բարեկամք իմ, ըստ բուն զօրութեան բառիդ.

անշուշտ Սակիայք (ՅԿարողինքնակալք) են նոքա։ " Ի սոցանէ ցՍոտտոգան ցՀայր գովտամ բուդդայ՝ ամենայն թագաւորք Կապիլայ՝ նովին անուամբ յորջորջեցան. և քաղաք նոցա՝ զի ի տեղւոջն կառուցաւ, ուր բնակէր բրահմանն Կապիլն՝ կոչեցաւ Կապիլանագար։

—ooo—

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ։

Լուսնորդեաց Հարստութիւն ի Բուդդայ՝
և կրօն նորա ընդ վէպայեղ բողոքեալ։

Ի՝ սկ Լուսնորդեաց հարստութիւն սկսաւ ի Բուդդայ՝ որ եկ ոմն թուի լեալ յաշխարհէն սկիւթացւոց, և ստեղնեալ յոստ շառաւիղ յիսուն և վեց՝ ելից զՀամօրէն հիւսիսային Ցոդկաստան։ Բուդ ի կնութիւն առեալ զԻլա զքոյր Իկսուակուայ, որպէս յառաջն ծանուցի, հաստատէ զաթոռն ի Պրագ՝ յարդեւանն ասեմ Ալահապատ։ Այլ թէ որ՞ այս ի քսան և չորից բուդդայ՝ չկարացի ստուգել։ Զի բուդ աղանդապետաց բազմաց է անուն, զորս ոմանք ի մի ձուլեն զԲրմհայ։ Կլեմէս աղէքսանդրացի հաւան ընծայել ջանայ թէ ի մեծ համարման լեալ ի՝ցէ աղանդ

բուդայ առ իւրով ժամանակաւ: Անուն սորա ոչ էր յատուկ Ասիացւոց, այլ գրեա՛թէ իւրաքանչիւր ծանուցեալ մասունք աշխարհի ի վերս հանէին ուրոյն զիւրեանցն բուդ: Եգիպտոսի էր բուդաս ոմն: Կիւրենայ միւս ոմն: Յունաստանի՝ երորդ ոմն: Յաղսանդպատեաց անտի Պանիքեցւոց երևելին անուանէր բուդաս, և երկրորդն՝ մինէս, համանունք բուդայ և Պունուայ Ցոգկայնոց: Իսկ հինգերորդ լուսնորդեացն հարստութեան, զորմէ են բանքս՝ թուի գոլ վերանորոգիչ վիտայական վարդապետութեան մեծին Բրմհայ: Արդ՝ որովհետև հինաւուրց նահապետք գործովք և եթ ճանաչին, և ի գործոց նախամեծարք ի հաւատոյս վերածին՝ ըստացայց փոքր իւիք ծանօթանել աստանօր և՝ զկրօնիցն, որ եկաց նոցա ոչ միայն առիթ անձնական շահուց, այլ և պատճառ անհուն արեան ճապաղեաց: Կրօն վիտայից հաղորդ սաբէական պաշտման, և ծնող զրադեշտական քէշիցն պարսից՝ տարածեցաւ աստ ի ձեռն խմբի ուրուք բրահմանաց: Որ կամ զհետ չոքաւ յաղթական սպայից, կամ մերկիմասատակօրէն շրջեցաւ ի տարածել զայն: Աստուածք յոգնութիւն մահկանացուաց կարդացեալք ի վիտայից՝ անձնաւորութիւնք իմն են

բնական արարածոց. Հրոյ, օդոյ, և արևոյ: Որք ըստ Զանդաւիստայ գրոց՝ օրինակ և յանդիմանութիւնք էին նախկին էակին: Վիտայք ոչ այլ ինչ պարունակեն, քան եթէ զերգս օրհնութեանց, աղօթս, և պատգամս. զոր բանացի քարոզէին քուրմք ի լուր կռապարիշտ խուժանին: Ուստի և կոչէին Արաֆէ, որ թարգմանի՝ լսելի: Առ Քրիշնաւ յեղան սոգբա ի չորս գիրս՝ վիտ կարդացեալս, յորս չերևևին նշանախեցք պաշտամանց Քրիշնայ, և անամենութիւնք գաղտնեղեալսն Լինգայ և Յոնեայ.* եթէ ոչ միայն ի վերջնում պրա-

* Լինգա, իբրև յանդիմանութիւն վերածնող զօրութեան Սիպայ է Առնդամ, և Եոնի, երևեցուցիչ նմին զօրութեան յիգական սերմ՝ Ամիրանա Ինոջ: Զի յա՝ ի սանսկրիտ լեզուի միաւորեալ լի: Զորս այսքանեալ երևակայութեան ցանկա իրացն հնդկաց եդին ի խորհուրդ ահաւոր օրինաց իւրեանց: Եւ պաշտեն, ամաչիմ ասել, զզուգութիւն երկուցդ միանգամայն, իբրև՝ զմահադէվս: Այլ աստ թէպէտև չիք բնաւ սե ի բարոյականութեան յամենի բերման երևակայութեան գերթողաց, սակայն բնաքանութիւն փութով մեկնեսցէ, եթէ ուշով միտ դիցի:—Հնդիկ իմաստակութիւն խառնեալ ընդ չարաչաշ կրօնս իրութիւն յանդիմանն կացուցանէ զնաբայան չրջել ի վերայ ջրոց՝ իբրև առաջին արու և էգիզն բնութեան: Զայս ջուր դնէ չրջապատեալ Թամաս կամ Խաբրա. որ գէտս կամ վիշ՝ յոյն դիցաբանից: Զայս վիշ խաբարպատ Պրակիսի կամ Պրաքիսի կոչեն Հինդք. այսինքն Ամիերդարն Նիսն. և զարուաստուածութիւնն Պրուա; Նախարդ: Յորուստ եղ ասեն Սակատ; կամ զորութիւն յաղթեն: Այլ այս զորութիւն անչարժ և անլոր մնաց մինչև Խուարայ խառնել զկենդանարար իւր ի նա զրիա: Երկոքին սերնդական զորութիւնք միաւորեցան ասեն

կի անդ ՈւԹրու վիտայի, զոր անհարազատ համարին և՝ Ցագէտաք 'ի Ցդկաց։ Ալլ յան ցանել ժամանակաց բաղումք 'ի պատգամացն անկան, և բաղմագոյնք 'ի նորոց փոխանակ մուծան։ — Պուրանտացն պաշտամունք և անմաքուր տանտրայից մնոտի արարողութիւնք զտեղն կալան պատուիրանաց վիտայից։ Ռամ, Գրիշնա, Սիպ, երեք քրօր՝ եգեալ լաք՝ և երեսուն և երեք հազար նորանոր դրօշելովք՝ սպաս հարան առաւել քան զտարերս և երկնային զօրութիւնս։ Թէպէտ և վիտք համարիցին զարդիս 'ի գիրս օրինաց Ցդկաց, սա-

ներգործութեամբ Ամարոլին բրմհայ, ուստի ծնան արարածք։ Իսուարա գոլով նոյնինքն հուր, կամ արեգակ, և Հորոս կամ միթրոս Հնդկաց՝ իւրով բարերաբ ջերմութեամբն կենդանածնէ զամենայն։ Եւ Պրեթհիվի նոյն գոլով որ և կիւբեղ կամ երկիր, գիրկս արիանէ զնովաւ իբրև զերբահար փեսայիւ։ և սաղմնառուրեալ 'ի նմանէ ծնանի զոր ինչ միանգամ տեսանեմքն 'ի նմա, և զոր ինչ օրն տեսանեմք։ Զայսոր ներխառնութենէ երկոցուն ներգործական և արտադրական սկզբանցս ընդ միմեանս՝ վաղուս ևս տանդեցին Եգիպտացիք, այնինչ զանձինս ի վերջին նախանձայուզութիւն մնոտի կրօնասիրութեան տուեալ՝ վէգ մաթն ընդ բաբելացիս և 'ի փորձ եկին զօրութեան իւրաքանչիւր աստուծոցն Հրոյ, և ջրոյ։ Զի Եգիպտոս յիւր Հուր պարծէր, և բաբելն յիւր Ովկիան։ Մինչև 'ի վերջոյ անհնարին սրածութիւն երկոցուն կողմանց ուսոյց նոցա զչափ կրօնիցն։ Դիցաբանութիւն փիւնիկեցւոց՝ յայտնագոյն ևս համանայնի Հնդիկ խնամակութեան, թէ ոչ և անամօթութեանն, որ դնէ զանուամ՝ արարողական զօրութիւն, կամ բրմհայ՝ սկիզբն ամենայնի։ Եւ զՊաթոս, Սէր կամ զՀուր, որ և իսուարա Հնդկաց՝ ծնանիլ 'ի նմանէ։ և խառնելով իւրով ընդ Հոգ, ընդ Ինքն —ջին կամ ընդ Պրեթ-

կայն անիծեալ և անարգեալ է յամենեցունց որ զՀետ գնայ վարդապետութեան նոցա :

ՑԱՌԱՍՊԵԼԱՑ անտի Աքունտա-պուրանի որ զվէճն յարուցանէ ի մէջ Ցոդիկ երորդաց թէ ովք ի նոցանէ մեծ՝ քաղի այս անպատիր ճշմարտութիւն. իբր այն թէ՝ ի զօրանալ վիշեանականաց՝ Կրուտ կորզեաց զայն պատիւ : Եւ ի զօրանալ սիպական քեշին հետևողաց՝ Կալու-բայրովու մերկիմաստակի եղնգեալ ի բաց զմի ի գլխոց նորա՝ ինքն եկաց մահադէվա աշխարհին : Երկրորդ վիտայից եղև աղանդն բուդայ՝ պարզ և հոգևորագոյն քան զՑոդիկն : Եւ թէպէտ աստուածացուցումն սկսեալ և արդեան խոհերք կուապաշտութեան քարոզեալք ի մահաբհարաթ և և ռամայան գրոց սպրդեցան և յայս պաշտօն, սակայն կուռք նոցա շատանան անարիւն պատարագօք, և չեն արիւնախանձ և շաղշակերք որպէս զդիս բրահմանիկ մոլորութեանց : Արդ

հիվի, կենդանածնէ զամենայն։ Եթէ պաշտօն աստարտայ, և գաղբելեացն սակաղմնացուց և այլոց չարակրօն ազգաց ծագումն ունիցին աստուտ, ես ոչ զարմանամ։ Սէր, և Գէոս Աբեստոսի զոյն յայտ առնեն։—Թայց հայեցեալ ի վախճան հակառակութեան արուիգապաշտիցն Հնդկաց եզբակացուցիչ բանիւ. Նոնոսի, թէ պատերազմ տիտանեանցն երկրաածնաց ընդ արամազդայ ծագեցաւ, զի կէսք զարամազդ (զՀուր,) և կէսք զերկիր, (զՋուր) պաշտէին։ Ցեզերան Նեզոսի ոսրիս մեան մեան պատառեցաւ, և յատուանս գանգէսի Խոս, կամ Սոխ։

թէպէտ և յայտնապէս սրհամարհեաց բուդ-
ղդրուածս վիտայից յաղագս պատուիրելոյ նո-
րա զոհել կռոց զշունչ կենդանի, սակայն
տակաւին ևս խոստովանի ի սրբազնիցն Կա-
սեայ իբրև ուղնեերորդ աւաթար մեծին ի
կուռս իւրեանց: « Սեղադիր լինիս ասէ
վիտայից սքանչելիդ դու. յորժամ տեսա-
նես զենմունս կենդանեաց ի զոհ: Կեսա-
վա՛ երևեալ ի կերպարանս բուդայ, միշտ
յաղթող Հրի, ամենատէր տիեզերաց:» Թէ-
պէտ և սոյնօրինակ վերտառութեամբ դրու-
ատիցեն բարհմանք զնա, սակայն զհե-
տևողս նորա առ հերձուածողս ունին: Յա-
ւուրս ռամայ մեծամեծ հալածանս կրեցին
բուդեանք. որով առաւել ևս սփռեցին,
քան թէ զսպեցին զաղանդն իւրեանց: Սե-
լան կղզին, մեծ մասն Դաքանայ, Տիբեթ,
Մահաչին, Ճենաստան և Ճէապօն ամենայն
արևելեօք՝ նմին զհետ ընթացան. պարզ և
անմեղագոյն բնապաշտութեամբ՝ քան զոր
մերկմատակաց էր առասպելեալ բիւրաստ-
ուածութիւն: Արդ՝ կրօն նախնի բնակչաց
հալածեալ ի մարդկանէ թաքեաւ ի խորին
անտառս ներբուդեան գետոյ: Բրմ հայն
պաշտօն՝ տեղի ետ վիշնուական անմաքրու-
թեանց: Բուդական բարմունքն դադարե-
ցան յերևիլ կատաղոյն Սիպայ՝ ամենազօր ա-

պականչին աշխարհի: Ռամ, քրիշնա, Կալի, և Զոյտունիա՝ որ ի նորոյ ամբարձաւ յաթոռ նախագահ դիցն Բանկալայ՝ ընդ անարիւն պատարագաց մարդասէր կռոցն Բուդայ՝ անյագաբար յարձակեցան ի շաղիղս մեռելոսի զոհենուց, Որոց մատչին օր ըստ օրէ ոչ միայն անմեղագոյնք անասնոց՝ այլ և անպարտականք ի մարդկանէ:

—ooo—

ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Արևորդեան՝ Պուրուսուռամ, Սագր, Դշուրաբ, Ռամ, սա որով Ռավան: Իսկ Լուսնորդեան Ցույոդի, Պուրու, Հուսոպ, Սոսուրապոպ, սա որով Շանիրամ, և Ցիագու:

ԶԵՐՄՈՒԹԻՆ յառաջ քան զռամ յարեաւ ըստկայն արևորդեաց՝ Պուրուսուռամ. որ եղծ եբարձ ի միջոյ գրեան թէ զազգ ողջոյն Կըշեթրայիցի, հետևողաց ասեմ կրօնից բուդայ: Եւ հզօրացոյց յոյժ զկողմն բրահմանական դաւանութեան ընդ հիւսիս Ցագկաստանի: Ոյր ի արիտուր երախտեացն նուիրեցին բրահմանք զմանկիրդ Դուրմաուռաբ. (Մարմնեղուրեան Ասպուռածոյ) զոր և՝ զարդիս մատուցանեն մեծամեծ բարերարաց:

Յետ նորա յարեաւ Սագը, ծովային համարեալ Պոսիդոն Ցոգկաց: Սա կազմեաց սահն նաւատորմիղ հզօր, և տարածեաց ՚ի հեռաւոր կղզիս Ցոգկաց ոչ միայն զառ և զտուր ազգին՝ այլ և զհաւատն դաւանեալ ՚ի նմանէ: Այնքան մեծ արար սա յաջողուածս ՚ի ծովու, մինչ յանուն իւր կոչել ազգին զովկիան սագը: Եւ արևելեան կողեաց խոստովանիլ զնա՝ աստուած լուծական տարեր. անշուշտ պահելով տակաւին զպաշտօնն՝ զոր նա սրով և արեամբ դրոշմեաց ՚ի միտս հաւուց և հարց իւրեանց: Ջանացան այն մահմետականք և բարձին ՚ի կղզեաց բազմաց զպաշտօն կռոց, այլ ՚ի Պալեան կղզիս, որ է յանդիման Ջավայ, տակաւին կայ և մնայ այս. և անուն Սագերայ բարձրանայ ՚ի նուագս օրհնութեան՝ յանձեռագործ տաճարքս տեղւոյն: Յաւուրս սորա զօրացեալ կշեթրայից Հալածական առնեն զնա յեզերաց ծովուն ՚ի ծերպս Հիմալեան լերանց: Ուր յարձան պսղի սառուլ Սագերայ՝ որդի նորուն Դշուրաթ յաջորդէ զաթոռն Ռիգայ: Երևելի քաջարարութեանց սորա ապացոյց ունիմք միայն զաստամեղայն կատարել. կամ զհանդէս ձիազոհին, զոր չէր օրէն առանձնակ թագաւորացն հանդիսել, եթէ ոչ՝ արքայից արքայի միայն:

Ի ՍՄԲՆԵ Ծնանի Ռամ Հսկայից Հսկայ, քաջարանց Ցոդկաց յաւէժափայլ պսակ պարծանաց, Վալմիկեայ քերթողահօր դիւցազն գովաբանեալ, և Հարիւրոց հագներգուաց գրգիռ դրուատից: Որ ի մանկական տիոց ամուսնացեալ ընդ Կուժիլայ դստեր Զանոկայ թագաւորին Միթիլայ արևորդւոյ, գրժտութեամբ զոքանչին պարտաւորեցաւ մեկնիլ յանապատ տեղիս կնաւն Կուժիլաւ Հանդերձ և զամս բազումս անցուցանել անդանօր խստակրօն ճգնութեամբ: Զորմէ զՀամբաւ մեծ առեալ արքային * Սինգուլադուիպայ, և

* Է անուն Սէյլան կղզւոյն, որ անկանի յարևմտեան մասից Ծոցոյն Բանկալայ, ընդ հասարակածիւ ընդ մէջ 5°, 50', և 9°, 50'. հիւսիսային լայնութեան: Բաժանի ի հարաւոյ յարևելեան եզերացն Կորոմանդելայ Ծոցիւն Մաննարայ, 140, մղոնօք հեռի ի կոմորեան գլխոյն: Երկայնութիւն նորա 280 մղոն, իսկ լայնութիւն ի 40,նէ 170: Այս կղզի կոչի ի Սինգհալայ Լանկա՝, ի Մալաբարայ Իլանգի՝, ի Շիամայ Դու�՝, ի Սանսկրիտն լանկա՝, որ նշանակէ ՝՝ոչ՝՝: Յավանացւոց կոչի Լանկաբար՝, ի Բրմայից Թէնա՝, կամ Զէնա՝: Ի պատմութիւնս Հնդկաստանի Սինգալադուիպա՝, որ նշանակէ՝ կղզին մարգարիտաց՝, յորմէ կրճատեալ թուի արդի անունդ Սէյլան՝: Զոր արաբացիք Սիլանդիբ հնչեն: Ոմանք ածանցեն զայս անուն ի Սալի կամ ի Զալիա ցեղէն՝, որ ի յետին ժամանակս հաստատեցին անդ զբնակութիւնս իւրեանց, բայց այս անհիմն իմն է, ի պատճառս խստանաց ժամանակին ընդ անուան կղզւոյն, և ընդ ազգին՝, որք բնակեցան ի նմա: Կոչի նաև Հէբէնարա՝, այսինքն երկիր արքայանոց՝: Իսկ, Ցաքարաբիանն կղզւոյ՝, և Տանասարիմ՝, Ալոյ ժողովրդեան՝: Ցոյնք Տրապոբան անուանեն՝, առեալ ի Տրապոբանայ ձայնէ Փիլիպկեցւոց՝, որ նշանակէ Երկիր Պարվայնոյ՝, այսինքն

զգեղոյ կնոջ նորա Հուշակերոյ յաշխարհն Համատարած՝ զանխուլ ի վերայ յարձակի, և շոպեալ զնա ածէ բռնութեամբ ի կղզի իւր։ Իսկ Ռոմայ բորբոքեալ անդիարին սրտմտութեամբ որպէս առիւծ զուգակորոյս՝ զոր ժողովէ, և ի թիկն վարձեալ զանթիւ որեաւ ի մերձակայ սահմանաց, ածատպարէ խրոխտ ինն ահագնութեամբ դէպ ի կղզին Ռավենայ։ Զգէ լիր քարաշար ընդ պարանոց ծովուն, որ անջրպետէր զկղզին ի ցամաքէն Դաքանայ, և ի նմին խաղացուցեալ զզօրս իւր՝ տիրէ համօրէն Տապոռքանու։ Եւ զՌավենն

արդեսն Պոռվոյ, որք երբեմն տիրացան վաճառաց համօրէն կղզոյն։ Այլք ունին զնա գաղտ Ռավեն, որ է կղզի Ռավենայ, արքային վիթխարւոյ, որում յաղթեաց Ռամ։ Սանակրիտ լեզուն կոչէ զնա Տապռ վենա, կամ Անոպոպ ազգին, ուր այլք հաւանականաբար և ըստ Պալի, կամ ալրակրիտ բարբառոյ անուանեն զնա՝ գանգոպանիս, որ նշանակէ զտերեւն սիփաւի ծառոյ, որոյ ըստ իրիւ նմանի կղզեդ։ Բոլորաբար բազմամբ աշխատ լինի ցուցանել, թէ սէյլան իցէ, ովփերն Սողոմոնի, ուստի զոսկին բարձեալ բերէին նմա նաւքն Գիրամայ, այլ զի ոսկեհանք ոչ գտանի յայս կղզի, մնայ մակաբերել թէ ովփերն ի Սովալա անկանէր յաշխարհին հափշտակեալ յԱփրիկէ։ Լերինք են կղզւոյս, ա. միաւոր գօտիք որք ընդ մէջ բաժանեն զնա, որոց բարձրագոյն է գագաթն Ադամնոն, 7150, ոտնաչափ։ բ. Նոնիկի կոչոմենոն, 5500, ոտնաչափ։ գ. Եալան լեռան, 6000, ոտնաչափ։ Երեք են երկելիք գետոց նորա, յորս մարթի է նաւարկել երկայնման նաւաց, ա. Մահավելի գլնգա. բ Կալանի գնգա, և գ. վալավի գնգա։ Ի մէջ նաւահանգստին ապահովագոյնք են տրինկոմալեայն, և Ծայրին գալեայ։ Ունի հանքս երկաթոյ, ծծմբոյ, բորակի, աղի, և ակնն պատուական, որ յանուն կղզւոյն

ստատակեալ՝ առնու զկին իւր, և դառնայ յաթոռ հայրենեաց իւրոց։ Արդարև՝ գործ մեծ յայսպիսի դարու, այլ այնքան նսեմ, մինչ առանկարելիս թուել ումեք խտրել ընդ սուտ և ընդ զորդ։ Քերթողն միով բանիւ շնորհէ նմա գոգջիր զմիապետութիւն Ցոգկաստանի ծայրածայր. թէպէտև Միթիլիա, նիստ յայն ժամ առանձին արքայութեան՝ չորիւք օթիւք երի կայր Ոմգայ. և Կասի հարիւր յիսուն մղոնօք։ Իբրև զմի ի մարմնեզութեանց վիշնուայ աստուածացեալ սա և՝ զերկինս գրաւէ։ Եւ զի՝ չէր փառք աստուածոյն ընդ մահացուին գալ ի գիլ, վասն որոյ և զՌավուն գիմափոխեաց ի դև ինչ, հանգիտակշիռ տանել զնա ընդ ախոյենին։

ՊԱՏՄՈՒ թէ անցոյց Ռամ զզօրս իւր ընդ Դինգուկ-արուենիա, ՝ի յանապատն խոպան Դաքանայ, ուր այժմ Արկաթ, յերերս Կավարի գետոյ. և ի Ցոց համբաւեալ ահաւորագոյն խառնարան ռակշասաց, մուտեաց,

Ճանաչի յաշխարհ ամենայն։ Կատուական, յակինթ, Հիակենթոս, սափիրայ, տոպազ, և անդամանդ։ Ի կենդանեաց Նորա, առաջին և պատուականագոյն է վիզն, ի սակս անխառն պայծառութեան ժանեաց իւրոց։ Ծոց կղզւոյս այնքան առատ է ամենատեսակ ձգամբ, մինչ ի Նաւարկել խմում յամին 1831. գնեցի զնաւակ մի լի նոքօք արժէքիւք ռուփոյ միոյ։ Եղանէ և մարգարիտ ազնիւ յոյժ, թէպէտև ստորին քան Հորմոսին պարսկային Ծոցոյ։

արքոց, և կապկաց։ Կամիմ ասել մարդկան, որք բնապէս ինն վարէին զկենցաղս զայս։ Անցեալ նորա ընդ Կավարի, մտանէ ի Զանասթան. որ էր ցամաքամասն տէրութեան Ռավունայ. առաւել ևս զարգարեալ արուեստիւք և քաղաքականութեամբ՝ քան զբուն զաթոռ ինքնակալութեանն Ռամայ։ Սա զՑայման-նալի, զմի ի զօրավարաց իւրոց թողու ի Թրիշնապոլի. որ զսիպ յարձանին կոփեաց, և հոգ զՏերկոց կալաւ։ Որդի նորա զԿավարի ընդ վեներայ միաւորեաց, ուստի և՝ կոչեցաւ վենչօլան։ Եւ որդի նորա՝ Կարիկաւդաչօլան, զի ընդ կավարին էանց գետ։ Կուգա նաւակավար, որ անցոյց զնա զօրօք հանդերձ՝ ընդ գանգէս, և ըստ հետ չոգաւ բանակի նորա ցկղզին Ռավունայ. հաստատեալ բնակութեամբ անդանօր, սերեցաւ յազգ մեծ. որք կան մինչև ցայսօր Մուկադէր կամ մանկվա կոչեցեալ. կիսոց կրօնիւ մահմետական, և կիսոցն պապական*։

* Սոքա բաժանին յեօթն ցեղս, Պէլնադա, Նալնադա, Գալա, Կոյա, Կալնադա, Մա-գիէլնադա-Պանդիա-Տէր, և Վէլնադա։ Եթէօք ի սոցանէ մեռանի, որդիք նորա հաւասարաբաժին առնեն զստացուածս նորա՝ զոր շահեալ էջե ի կենդանութեան իւրում։ Թայց որք ժառանգութեամբ հասին առնա ի հալց կամ հաւուց, անցանեն առ քեռորդիս նորա, և եթէ չիցեն նոքա՝ անցանեն ցմօրաքեռորդիս ցյորորդ պորան։ Եւ ի պակասիլ սոցա ևս՝ հուսկ ապա անցանեն ցորդիս իւր։

Իսկ ի Լուսնորդեացն Յուլիադի, Թոռն Թոռին Բուդայ՝ ծնանի ուստերս երիս, զՊերու, զՊուրու, և զՅիադու: Որոց առաջին մեռանի անյիշատակ ի Հմբաւոց: Պուրուք բազմացեալ լինուն զերեսս երկրի. յորոց Հուստի, իբրև հինգարիւր եօթանասուն և հինգ ամաք յառաջ քան զպատերազմն մեծ՝ շինեաց զքաղաքն Հուստինափուռ: Յաւուրս որդւոյ սորա, որ վասն մեծամեծ քաջագործութեանց իւրոց՝ անուանեցաւ Սատաւարապատի, այսինքն, փերոզ ոնդրդ մասին արարչութեան, (զոր յունաց պատմաբանք աղաւաղեալ գրեցին՝ Սասուրոբէպէ.,) մեծն Շամիրամ տիկին ասորեստանի զօրաժողով լեալ ի կողմանցն Բաբելացւոց, Ասորւոց, Պարսից, Մարաց, և Տիւրոսի, և Սիդոնի, ի միջագետաց, և ի Կիպրացւոց, գումարտակեաց ի կեդրոն աշխարհին Բակտրիոնի. քառասուն բիւր հետևակաց և հեծելոց, հարիւր հազար գերանդաղէն կառս, և երկերիւր հազար ուղտս: Անսփառութիւն տածիչ հրաշալեաց յարարս մարդկան՝ և նախկին յատկութիւն կնոջ՝ մղեաց զթագուհին մեծագործ որոշել ճարտարապետս յամենայն արուեստաւորաց առի շինելոյ նաւաց և կամրջաց: Եւ զամս երիս անդադար աշխատ արարեալ զբովանդակ զօրս իւր՝ փոխէ զմայր անտառի ի տորմիղ նաւաց: Եւ զի՝

լսէ թէ Հինդք փոյվք զօրանային ի պատե-
բազմ, հրամայէ կարգել զերամակ ուղտուցն
ի նմանութիւն նոցա՝ ծանրաբեռն մեքե-
նայիւք: Եւ ապա ինքնին զօրավարեալ՝ խա-
զացոյց զնոսա յերեսս Ինդոսի, և կամուրջ
լատեայ զնովաւ արկեալ՝ պահս վաթսուն
հազարաց ի վերայ կարգեաց: Եւ մեացոր-
դօքն գրոհ տուեալ ի միջոց աշխարհին, յաւեր
և յապականութիւն ած զրոս առաջոյ գիտ:
Իսկ Սատաւարապատի, որ իշխէր ի Հուստի-
նափուռ՝ հրեշտակախօս լինի առնա հարցա-
նել թէ ով իցէ, ուստի՞ գայ, կամ յո՞վ
երթայ: Որում քաջայանդուգն պատասխա-
նեալ թէ՝ Մակեդոնացի է, արձակէ
զդեսպանսն ի բաց: Եւ իսկոյն ճակատ յար-
դարեալ մարտին ընդ ջուր և ընդ չոր՝ զդիմի
հարկանէ առաջնապահաց՝ զբազումս ի նո-
ցանէ գետամոյն կորուսանէ. և առաւել քան
զառաւելն մեծամտեալ՝ հրամայէ ասպատակ
սփռել յերկիրն առ Ինդոսիս, և հրով և սրով
դատել զբնակիչս նորուն: Յայնժամ արքայ
Ֆոդկաց որ եռայր ի բարկութեան, իբրև սան
առ Ֆոցաւ բորբոքելով՝ առեալ զգունմարտակ
փղաց և զօրաց՝ խաղաց ընդդէմ Շամիրամայ,
որում թէպէտև առնացի արիութեամբ դիմի
հարաւ թագուհին՝ այլ ուղտք ի փղացն ա-
պանեալ, և զօրք ի զօրացն վատթարեալք՝

մատուցին զ յաղթութիւնն՝ տիրողին արարչութեան։ Իսկ Շամիրամ մազապուր ի փախուստ անձապարեալ՝ զկամուրջ ինդոսի եհատ, կասկած զհետամտիցն կրելով. և կոր ի գլուխ յետս կընկեալ ջոքաւ ի Նինուէ, և սպանաւ յորդւոց իւրոց։

Արդ Նինոս թագաւորեաց երկու հազար քառասուն և հինգ ամաւք ն. ք. զամս յիսուն և երկու։ Շամիրամ յետ նորա զամս քառասուն և երկու. ընդ ամենայն՝ իննսուն և չորս։ Որ ի ջուցանէ զնախաքրիստոսեան թիւ ցամն հազար իննարիւր վաթսուն և մի։ Պրասոր Հայրն վիսասյ մեռաւ փոքու յառաջ քան ըզպատերազմն մեծ՝ հազար երեքարիւր իննսուն և մի ամաւք ն. ք. Հուստի շինեաց զՀուստինափուռ հինգարիւր եօթանասուն և հինգ ամաւք յառաջ քան զայն. ընդ ամենայն ամք ռ՚ղզ։ Տուեալ աստուստ զերեսունն յաւուրս Սատաւարապատեայ՝ մնան ամք հազար իննարիւր վաթսուն և մի։

Թէպէտ ոչ անձն շամիրամայ՝ և ոչ անցք մըտանեն յոմ պատմութեան Ֆոդկաստանի՝ սակայն անուն նորա յանգիւ և եթ Ֆոդուացեալ ի համար դասի անհամար չաստուածոց նոցա իբրև զՍ-ֆրամա-դէվէ։ Քանզի բնիկ է ազգին սեպհականել զոր ինչ մեծ և երևելի։ Ի Սատաւարապատեան տանէ ծագեցաւ Յարա-

սունդա ինքնակալն մաղադայ, և Պանդուք։
Իսկ ի Ցիսադուայ Քրիշնա և Բալուդէվ։

—ooo—

ԳԼՈՒԽ ՈՒԹՆԵՐՈՐԴ։

Պրուցցօր, Պրաոսօ, Մուսլոգոնդիա, Վէտա,
Վէտաստա, Վիլէդրա, և Ծինունդ
Դրէսրշուայ և Պանդուայ։

ՆԱԽԱԳՈՅՆ դիպուածոց մեծի պատերազմին, որ անկանի ի վերջին դար Դուապուրա յուգի, Պրուցցօր արքայ Ճոներայ ի Լուսնորդեաց՝ ելանէ աւագանեաւ հանդերձ՝ յրգբօսանս որսոց, և զմտաւ ածեալ զկերպարան գեղոյ թագուհւոյն նկար յանդիման ցնորից իւրոց, ապաժոյժ տարփանօք զձուկն ի Ցումնայ գետ յղացուցանէ։ Զոր յետ տասն ամսոց կարթեալ ձկնորսի ուրուք, (ըստ ճաշակաց հեղինակին մահաբհարաթայ,) գտանէ երկուորեակս ի փոր նորա, և ածէ զառաջեաւ թագաւորին։ Եւ նորա զէգն դարձուցանելով՝ որդեգրէ զարուն ի ժառանգ արքայութեան, որում և զՄիթն անուն պարգևէ, որ է ձուկն ի բարբառն սանսկրիտ։ Իբրև յարբունս կատարելութեան հասանէ առասպելեալս ձրկնածին՝ տուեալ նմա զամենայն երկիրն առ

Սէտլէջ կամ Հիփասիս գետով՝ առաքէ Թագաւորել անդանօր։ Յորմէ և տեղին Մչիվարա կոչեցաւ մինչև ցայսօր ժամանակի։

Իսկ ձկնորսին ածեալ զաղջիկն ի տուն, սնուցանէ ի ձեռն կնոջ իւրոյ։ Եւ որովհետև ի մարմնոյ նորա բուրէր հոտ ձկան, մուչուգոնդհա անուն կարգայ նմա, որ է՝ ձկնահոտ։ Սա ի զարգանալ հասակին վարձեալ զնաւակ՝ ձրի անցուցանէ զմարդիկ յայս և յայնկոյս գետոյն։ Իսկ Պրասսոր կամ Իսռ, որդի Ակիլեայ որդւոյ Բիշուդայ քրմին, որ վասն անտանելի ճգնութեան և խստակրօն վարուցն զաստուածային իմն գոգջիր պատիւ ընդունէր ի խաժամուժ ժողովրդենէ, տեսեալ զերինջն ծովային՝ հարաւ ի գեղն սքանչելի, և հրապուրեաց զնա ի կամս ցանկութեան իւրոյ։ Մուչուգոնդհա զարհուրեալ ի դժնդակ կերպարանաց նորա, եցոյց զհաւանութիւն միանգամայն և զամենն յերթևեկաց։ Յայնժամ գոչեաց Պրասսոր ի ձայն մեծ առ չորեսին հողմունս, և ահա. (ով ծաղրալի դիւրահաւանութեանս,) երկ փոքրիկ սաստիկ յոյժ, և վարեալ ամպս թանձրագինս ի ծովէն մէջէ, վարագուրեաց զտեղին անսերելի խաւարաւ, յառագաստ ուրախութեան տարփածուիս իւրում։ Անդ ընդ մերձիլ առնն ի կոյս. իսկոյն յղանայ և

ծնանի զորդի իւր զանդրանիկ զՎիսաս, որ թարգմանի ներշնչեալ կամ մարգարէ։ Սա ընդ ծնունդն, և իսկոյն զարգանայ ի տիս, սպաս ծնողաց ի տեղւոջն Հարկանէ, և մեկնեալ յանապատ տեղիս աղօթից և ճգնութեանց պարապէ։ Ի Հարկէ. Հօրն գոլով Համանման սրբութեամբ։ Այլ դու տես ինձ. թէ զկարգ փոխանակ ճշմարտութեամբ խոստովան լինելոյ քերթողին՝ ըզգաւոծ, չասացից թէ և զանպարկեշտ ծընունդ անուանակցին իւրոյ ի ձկնորս յաղջկանէն, յայս խորխորատ առասպելաց խոնարհեցաւ։

Սբ. առանց գրոց աշակերտութեան. ի դից իմն գոգցես ազդեցութենէ տեղեկացաւ ասի անցեալ, ներկայ, և ապառնի իրողութեանց։ Եւ զգիրս Բրմհայ, զլանգարեալ և զառեղծեալս Ցութեամբ ժամանակին, վերստին սրբագրեալ ամփոփեաց ի չորեսին գիրս, օգնականութեամբ Պոյլայ, Վոյիամպայունայ, Զոյմինայ, և Սմիտուայ. Հոյակապ արանցն իմաստնոց իւրումն դարու։ Այլ չէ պարտ շփոթել զսա ընդ վիսասայ քերթողին մահաբհարաթի գրոց։

Պրդսոր յետ լցուցանելոյ զախորժակ ըզրշի ցանկութեան իւրոյ, և զվիսաս ի մուչուգոնդհայ ծնանելոյ, յորմէ՝ և իւրով

հպաւորութեամբ զՀոտ ձկանն բառնալոյ, շնորհէ նմա զզօրութիւն մնալոյ յսկզբնական օրէնս կուսութեան, և խոյս տայ յանապատ տեղիս. ուր և մեռանի փոքու իմն յառաջ քան զկալն յուգ. իբրև 1391. ամաք նախ քան զԹուական Փրկչին: Եւ ոչ ոք իմանայ զեղեռն չարագործութեան այսորիկ ըստ մեծի և ըստ փոքու: Վասնորոյ արքայ Սինկ ունի զմուշուգանդհա ի կնութիւն, յորմէ ծնաւմ զԲհարիթ առաջին ինքնակալացն Հնդկաց, զորմէ ի վերս անդր խօսեցայ:

Նոյն յաջորդէ Վիտատա չորեքտասան ծննդովք մինչև ցԿորու: Որ ըստ վկայելոյ Ային Ակպարի գրոցն պարսից՝ եղ զանուն իւր ի վերայ պաշտելի լճին կուրկեթայ ի վերինն Հնդկաստան, որ է ի Սոհէնդ գաւառին յանդիման Տանիսարայ. որովայն երկրի և մայր բրմհայ համարեալ առ Հնդիկս: Որ իբր յուաղան քաւութեան ամենայն մեղաց՝ ելանէ ամ ըստ ամէ աշխարհաժողով բաղմութիւն ուխտաւորաց. և մաքրի ի մեղաց մկրտութեամբ ջուրց նորա:

Իբրեւ ձգեալ տարածէր միահեծան իշխանութիւն լուսնորդեաց ընդ համարէն Հնդկաստան, Արևորդեաց պետութիւն ամփոփէր միայն ի կալուած ինչ երկրի, տարածեալ ի լերանցն ցգանգէս: Ցորս պայծառանայր

յոյժ զայսու ժամանակաւ անուն Յարասունդայ արքային Մաղատայ: Հարստութիւն Կնքշայիցն հաստատէր 'ի Մադուրա, մայրաքաղաք Սուրասենայ. և Պորուացն 'ի Հուստինափուռ. որք բաղխեցին զպատերազմն մեծ, և ածին անհարին հարուածս 'ի վերայ աշխարհին Հնդկաց: Կնքշա 'ի կնութիւն առնոյր իւր զդուստր Յարասունդայ ինքնակալին Մաղատայ, որում հարկս հարկանէին թագաւորք ազգաց, և Յովունքն ամենայն: Քրիշնայ ծագեալ յարենէն Յիսդուայ սպան զԿնքշա, և նստաւ յաթոռ նորա: Յարասունդա 'ի վրէժ արեան փեսայի իւրում խաղաց զօրօք 'ի Մադուրա, և պաշարեաց զայն յամս ութնեւտասան:

Վիզիդիրն, որդի Սանտոնայ որ իշխէր 'ի Հուստինափուռ՝ մեռանի անժառանգ: Ուստի ժողովիալ աւագ նախարարաց դրանն, առին զերկուս անհարազատ դստերս նորա, և զՊանդիա զհարճ պաղատան, և չոգան առ հօրեղբայր նորա առ Վիաս, յարուցանել 'ի նոցանէ ժառանգս արքայութեան: Այլքան զի՝ այլանդակ և դժնդակ էր դիմաք, 'ի տեսիլ ահաւորին սոսկաց դժիսոյն լուսնազանց, որոյ առ դարման տանել երկեղին՝ կափուցին զաչս վարշամակաւ, ուստի և ծնեալն 'ի նմանէ՝ եղև կոյր, Դրիարուշաու անուն:

Երկրորդ դժխոյիցն՝ ի տեսանել զնա համակ գալկացաւ, ուստի և ծնեալն ի նմանէ գոգ քրքմեերանգ երփնեցաւ՝ Պանդուս: Իսկ հարճ պալատան, աներկիւղ յղացեալ և ծնաւ զորդի իւր՝ անուանեալ Պուդուռ:

—000—

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

Թագաւորութիւն Պանդուայ. Նորօրինակ Ծիսանդ Պանդուայ, և Ոլիղէն կօրուայ:

ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆ Թագին անպատշաճ եղեալ Դրիտրուշտուայ վն կուրութեան, և Պուդուռայ վասն ստորին ծննդեանն՝ էանց ի Պանդու: Որ յետ բազմելոյ յաթոռ նախահարց՝ զօրութեամբ բազկին և խոհական հանճարով ձգեաց տարածեաց զգաւազան իշխանութեան իւրոյ անդր քան զԻնդոս. արքուցանելով սրոյն ծարաւոյ զարիւն հակառակամարտիցն ի պատերազմի: Որով զշինջեալն վերստին արփիացոյց զՕՀ նախնեաց իւրոց՝ ի միջօրեայս յաւէժական պարծանաց: Առ սա ի կնութիւն զԱունթի զքոյր Քրիշնայ, յորմէ թէ զիարդ ծնաւ զՊանդուս՝ պատմեցի յառաջիկայդ:

ՔԱՆԶԻ գրի, թէ ելանէր Պանդու յորս երեոց յանտառ ուրեք, հանդիպէր եղջեր-

ուայ առաքաստելոց յօրէնս ամուսնութեան, քարշէր զաղէքն ուժգնակի, և զնեան հարստեալ ի կուրծ արուին, զնա առ տեղեաւն յերկիր տապալէր: Այլ քանզի գէտ էր նա ամենամաքուր՝ երևեալ ի կերպարանս եղջերուի, այն ինչ դեռ շունչ ի բերանին կայր, անէծ զՊանդու, և ասէ. "Զոր ինչ արարեր, զնոյն կրեսցես ի քում անկողնի:" Տես որքան՝ մոլորեցուցանէր զնոսա աղանդն հոգեփոխութեան: Զայս լուեալ Պանդու զահի հարեալ դողայր յանձն իւր, անշուշտ ածեալ զմտաւ, թէ յորժամ ի կին մերձենայցէ՝ մահու մեռանի: Վասն այսորիկ՝ լքեալ նորա այնուհետև զփառս արքայութեան, և ընդ խոնարհ սքեմաւ կրօնից մըտեալ՝ վարէր յանապատ տեղիս առանձնութեամբ անցուցանել զառօրեայս կենաց: Զհետ չոքան նորա և երկոքին կանայք նորա: Արդ՝ թէպտեև կամակար մնօք յանձն առնոյր զայս ամենայն՝ վասն փրկութեան անձին, սակայն և վասն անժառանգ թողլոյ զաթոռ հայրենեաց՝ հանապազօր հաշէր և մաշէր ի խորհուրդս իւր: Ուստի և յաւուր միում բան ի մէջ առեալ՝ ասէ ցԿունթի ցերեց դժխոյից: "Գիտեմ, զի որ անզաւակ մեռանիցի, բաժին մահու է և դժոխոց, և աշխարհի նախատանաց ենթակայ: Բայց

և յարդար օրինացն ուսեալ հաւատամ, թէ կնոջ անորդի յառնէն եղելոյ՝ պարտ է դիմել առ բրահմանս, և ի նոցանէ յարուցանել նմա ժառանգս տան, որպէս մեք զմերն ի Վիասայ ձգեցաք սերունդ: Աղէ գնա՛ դու առ նա, և յղացիր ինձ զաւակ ի նմանէ:" Տե՛ս դու թէ յոր՞ կոպար սարկութեան գրաւեալ էին քուրմք զհաւատս ժողովրդեան: Բայց թագուհին հաւատարիմ, պատասխանէ նմին՝ օրինակ զայս. "Եթէ մահ ևս հասանիցի ինձ առ ի քէն ա՛րքայ, բարեգոյն զայն վարկանիմ. քան զճանաչել ինձ զայր օտար բաց ի քէն: Իսկ առ բանից քոց կատարած՝ իմ իսկ ուսեալ է զմանթրա, որով եթէ կամք իցեն, կարող եղէց իջուցանել առ իս զաներևոյթ ոգիս Ինդեռայ, (երկնից.) և ի նոցանէ ծնանիլ քեզ զաւակունս:" Աստանօր կունթի մերկապարանոց առնէ զկատնակ գնացս իւր ի ծածուկ, և ըստ որում քոյր աստուածոյ, զաստուածազանցն խիզախէ քամել յինքն զզօրութիւն: Զուարճունայ Պանդու ընդ բանս կնոջ իւրոյ, միանգամայն և ի զարմանս ապշութեան անկեալ, փակէ զնա յանքոյթ ի սենեակ ուրեք, ինքնին պահ կացեալ դրան՝ արգելուլ ի նմանէ զմարդկային ել և մուտ: Իսկ Կունթի յղացեալ ի Դերմայ դից արդարու-

թեան, ծնանի զՅուդիշար. և ի Պավանայ դից հողմոց՝ զԲիմ, մանուկ անձնեայ և հակայադիտակն: Որոյ յաւուր ծննդեան եղանէ առիւծ հզօր յանտառէ, և ահագին խիզախմամբ ի վերայ դիմէ. զոր տեսեալ խուժանին խուսին ի փախուստ: Անդ յշտապ տագնապին Կունթեայ անկանի մանուկն ի գրկաց, և զքարի զարկուցեալ՝ ի փշուրս ճարճատէ զնա: Ընդ որ հիացեալ մարդկան ուրերոյ, որ անդր կային, գուշակ հանդիսացան ապագայ զօրութեան նորա: Իսկ յորժամ ծնանէր և զերորդ որդի իւր զԱրջուն՝ զյաղացեալն յինդուայ դից հաստատութեան երկնից, եկն ձայն ահեղ որոտմանց, որ ասէր. "որպէս իշխէ ինդեռ վերնակամար հաստատութեան, նոյնպէս և իշխեսցէ մանուկդ երկրի և ծովու՝ համատարած իշխանութեամբ:" Ծնան և յերկրորդ կնոջէ նորա՝ Նաքուլ և Սահադև երկուորեակք, և ընդառաջին երիցն յարանունաբար կոչեցան Պանդուք, այսինքն Պանդուայ որդիք:

Իսկ Դրիտարուշտու երէց, բայց և ի ծնէ կոյր եղբայր Պանդուայ. ըստորում Վիտայայ որդի յեղբօրդստերէ՝ նորա ի յՈմպիկայ, որ քոյրն էր պանդիայ. և Կորուացն լուս նորդեաց նախահայր, յետ մեկնելոյ պանդուայ յանապատին առանձնութիւն, յինքն

յանկարծ զի յուսամտակ կուսակրաւորութեան Հաւատոյ
սիրեսցուք զքրիստոս։ Եկեալ Ծնանիցին որդիք,
բուսանիցեն զի շուսանեսցք թուսակ, և ըստ սրբոյ
Հարցի գրեսցուք, որք յանուն նոսին հաւատացեալ
եղուսայ, ի Աստուած անուանեցան։ Ցանմնայնի նոսին Հանդիսացաւ Գաւրիլ-
դան, որոյ մարգարէն կարդացեալ քան զերկսին,
անդնեցի Ձեռաք ի զինուց, և ուժոյ բազկաց
նորա, որպէս և քաշուեցան անձինքն ոչ ոք
դատաւ Հանանեանն ի Հանդերձն աշխարհի։

ԳԼԽԻՒ ՏԵՍՆԵՐՈՐԴ

Գրիգոր, Մամ Պանդատոյ և յոգնութիւն Ցու-
դիցոյդ, և Էջմոյն նորա։

ՔԱՐԵԼՈՒ ահաւորաց բազմաց ահեղատատ
թագաւորք, լուանորդեաց Հարստութեան
պատկ պարծանաց, Ցիւդիշարայ մեծի Հզօր
ուժանդակ։ (և եթէ մերկիմատակացն Հա-
ւատացուք Ծաղկահիւս առասպելաց։) Նա-
խանամակսն զօրութեան ատատուածոյ մար-
մնաւորի կերպարան յերկրի, ծնաւ ի սերնդոց
անտի Ցիսդաւայ, ի տանէ Կանայ։ որդի
Պատուդեայ և Դեակեայ։ Առաջին ի թագ ըշ-
նամանց Քրիշնայ Հանդիսացաւ Կանայ, կամ

Պանքշա, որոյ լուեալ ՝ի գուշակաց թէ՝ մանուկ ծնեալ ՝ի տան Ցիտղուայ խորտակելոց էր զզօրութիւն իւր, կենախուզ արար զամենայն արու ծնեալ ՝ի տան Վասուգևայ: Իսկ Քրիշնա ծնեալ ՝ի նմանէ, և գաղտնի գողացեալ ՝ի մէջ հովուաց, մնանի ՝ի նոցանէ: Բազմաթրինակ նկարագրին ՝ի քերթողաց արարք մանկենի տիոց նորա. բայց այնինչ հաս նա յարբունս կատարելութեան իւրոյ, ընդ պէսպէս մեծագործութեանց իւրոց հրաշալի հանդիսացոյց և զոփութիւն իւրոց գնացից ընդ շեղտամեղտ շպետուհեաց՝ որք արածէին զկաշինս իւրեանց առ եզերբք գետոյն Ցումնայ:

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ հատուածոյ ինչ երգոց հուշակելոց յանուն Քրիշնայ, բաւական է ծանօթս տալ վերծանելեաց զամենալից պագշոտութեանց աստուածոյն երևելոյ ՝ի մարմնի: “Զարմանահիւս պսակօք ծաղկանց վայրենեաց. կիսուածելովք զքրքմացան արկանելեօքն, որ սփածանէ զնարա կապուտակ անդամս, հրաշացեալ ծիծաղաւէտ ծնօտիւք, և գնդօք ականջացն պսպղելովք զուարճանայ Հրի՛ ՝ի խնջոյս սիրահար օրիորդաց: Ցորոց մին սեղմէ զնա ՝ի կուրծ կոկոնած, տաղելով զսէր նորա ՝ի նուագս անմահից: Միւս՝ խանդակաթ ակնարկութեան աչաց

նորա, ընդարմանայ մտախոհ ի վերայ շուշանափայլն երեսաց: Նաղէ անդ երորդ ոմն, և ընդ կեղծեօք հծծելոյ ինչ ի լուր նորա թաքնաբար՝ կնքէ շրթամբքն զհամբոյր ի քներակս նորա: Սա կալեալ զարկանելեացն՝ առինքն ձգէ զնա, մատամբացի ցուցանելով նմա զհովանոցն առագաստեալ վարսագեղ վանքաւորեան ծառովք, որ ի ծաղկածին դալարիս եղերաց Յումնայ: Նա՝ ի պար կայթէ զնովաւ, և ծափիւք ձեռացն իւրոց ուսուցանէ ապարանքանացն և սռնակապանաց իւրոց արձագանգել զսիրելին ի Ցիշմունս քաջերաժիշտս: Իսկ նա փարէ զմիով, փարփարէ և զմիւսովն: Գիրգս ածէ սմա, և համբոյր տայ նմա անմահական եռանդեամբ: Հայեաց դու, և ահա Քրիշնա զհետ սնդէ ընդխաբս և եթէ՝ փախուցեալ գեղոյ: Այսպէս զուարճանայ Հրի սիրայրեաց յանուշունս գարնանոյ, ի մէջ կուսան օրիորդաց Վրիջայ: Որք յախուռն դիմեն ի գիրգս նորա, իբրև Ցանկութեան երևելոյ ի մարդկային բնութեան:" Եւ եթէ չիցէ այս բաւական յապացոյց շեղտամեղտ վարուց Սկայիս Արևելեան՝ յաւելում քեզ ասասանօր և զհատուած ինչ թարգմանեալ ի Բագավաթայ գրոց. "Քրիշնայ կալով առ ափն Յումնայ սուլէ զիւր սրինգն հովուական: Անդր

գրոհին առ նա Հովուուհիքն ամենայն անձուկք զմայլարար նուագաց: Քրիշնայ տեսանելով զնսանդ ի խլիրտ սրտից նոցա ցանկութեամբ կրիցն բորբոքելոց՝ ասէ ցնոսա. թէ "Հակառակ ինչ էր օրինաց աշխարհի թողուլ նոցա զտունս իւրեանց, և ի խնդիր ելանել վայելից օտարոտի գրգանաց: Զի խռով արկանէր ի տուն, որ կարծիս տայր առն իւրում, զնսառնակ անկողնոց իւրոց:" Վասնորոյ և խրատ տայր ամենեցուն՝ դառնալ ի տունս իւրեանց: Որում պատասխանի տուեալ ասէ կանանին. "Արդարև՛ եթէ տոփումն մեր լինէր վասն հաճարակ մարդոյ, քրէականս առնէր զմեզ: Բայց այն՝ որ միացուցանէ զմեզ ընդ ծայրագոյն տեառն ամենայն արարածոց, ո՛չ եթէ մեղանչական ինչ է, այլ սուրբ և առաքինի:" Իսկ արք մեր, չունին ինչ իրաւունս քեցելոյ զմեզ յաստուածային փայփայմանց:" Յայնժամ տեսեալ Քրիշնայ զանմեղութիւն սրտից նոցա, մեծաւ ողորմութեամբ զիջաւ ի կամս ամենեցուն. և նորանոր աքանչելեօք երևեցոյց իւրաքանչիւր ումեք այնքան բազմութեան, (եօթնեւտասն հազարացն՝) զինքն գոլ սեպհական կամակատար հաճոյից նորա, անխառն յօտար անկողնոց: Եթէ և՝ այս հատուած չկոյէ բաւական, հարց ցկանանին

Հնդկաց մինչև ցայսօր ժամանակի, և տես ի Ֆրդիկ դիցաբանութեան իմում:

Իսկ Պանդուս, որ ընդ Կունթեայ ամուսնացեալ, պարկեշտասուն քեռ. ասեմ աստուածոյս այսորիկ, ապաժոյժ կրիցն՝ մերձենայ ի կին, և մեռանի ըստ բանից Գիտին երևելոյ ի կերպարանս եղջերուի. զոր նետահար ստակեաց: Ուր ի իարոյկ դագաղացն արկ զինքն կրսեր դժխոյից նորա, ի կեանս և ի մահուն յաղթանակեալ ամուսնական իրաւանց: Իսկ անապատականացն առեալ զՖրդեսին որդիս նորա, հանդերձ Կունթեաւ մարբ նոցա, ածեն ի քաղաքն Հուստինապուռ. յորում իշխեր Դրիտրուշտու կոյր: Այլ ի բնակչաց անտի նորա, կէսք զնոսա ի Պանդուս ընդունին, և կէսք՝ ընդ որս և սխերիմ Թշնամի նոցա Դուրջուդան, ամենևին ոչ: Քանզի ասէին, "Թէ Պանդուայ կապեալ գոլով յանէծս եղջերուաքաղին, զի երբ ի կին մերձենայցէ, մահու մեռանիցի. զիարդ ծնաւ զդոսա:" Այնինչ բան ի բերանս էր նոցա, եկն բարբառ յաներևութիւն, որ ասէր. "Հնդեքին դոքա որդիք են պանդուայ, յղացեալք ի վերին ոգւոց:" Եւ ընդ ձայնին ցողեցին երկինք ծաղկունս ի վերայ մանկանցն, և հրեշտակք երևեալ ի կամար աստեղատան՝ Ֆրէցին ընդ տիեզերս զաւետիս խաղաղութեան:

Աջնուշեցեր Բիշուդէվի հօրաքոյր Պանդուաց առեալ զնոսա ի խնամս իւր՝ կարգեաց ուրոյն դաստիարակս աղատական արուեստից և զինուորական մարզութեանց: Յորս այնքան առաւելան, մինչև թև ածել նոցա զհինաւուրց իմաստնոցք ժամանակին:

Յիրդիշտր գտաւ այր հսնճարաւոր, և առաւելեաց զամենեքումբք յիմաստս գրոց մեհենականաց և կենցաղականացն միանգամայն: Երկայնմտութիւն, անյիշաչարութիւն, ճշմարտասիրութիւն, և բարերարութիւն առ ամենայն մարդիկ՝ ձիրք էին կատարելութեան հոգւոյ նորա: Որ մարդ ծնեալ և մարդկօրէն կեցեալ, բազմաք գերագոյն գտաւ քան զառասպելեալ աստուածս երկրին: Եւ ոչ անմահութիւն իցէ լաւագոյն՝ քան զառաքինութեանն:

Բիմբեց անհամեմատ արիութիւն. որով զհաստարմատ մայրիս իբրև զդիւրաբեկ դալարիս տանեաց արմատաքի խլէր, զփիղս լեռնամարմինս ի մի հարուած աջոյն տապաստ յերկիր կործանէր, և ի մրցմունս ճակատուց մի միայն հանդիսանայր ախոյեան բիւրաւոր զօրաց, և զյաղթանակն առնոյր պարծանաց մարտին: Այլ զամենայն գաղանային համարէի, և անարժան լուսոյ բանին, եթէ չէր դիւցազին այսմիկ յանձին բերեալ ընդ

քաջութեան՝ և զծայրագոյն Ցաւանդութիւն եղբօր իւրում երիցու, և ամենայն ակնարկութեանց նորա կացեալ հլու Ցաւանդ: Ո՞ տայր ամենայն քաջաց զոգին հեղութեան:

ԱՐՋՈՒՆ խոհական, ակն ամենատես ի գլուխս Ցոգեքին Պանդուտաց: Քաջարանց ժամանակին՝ երկնառաք ահարկութիւն. երևելի հանդիսացոյց զարհեստ աղեղնաւորութեան, մինչև զբիւրս նետից ի մի քարշիւն աղեղանն՝ իբրև զկայծակունս ի հրահոսան ամպոց, ցոլացուցանել ի բաց, և ընուլ սասանութեամբ զսիրտս թշնամեաց իւրոց: Սա և ի դիցն ընկալաւ զզօրութիւն, մերթ հսկայօրէն ամբառնալ և մերթ թըզկօրէն կարճանալ, երբեմն յաղթ երևիլ ի մարմնի, և երբեմն աներևան մնալ յաչաց թշնամեաց իւրոց. եղեալ գոգչիր, նոր ոմն Պրոտէոս՝ փոփոխութեամբ կերպարանացն միշտ աշկեար: Եւ չիցէ՞ արդեօք ծայրագոյն խոհականութիւն առնն, որով գիտաց գոլ ամենայն ընդ ամենայնի, հիմն և աւարտ առասպելիս այսորիկ: Երանի՛ երկրին, յորում իշխիցէ թագաւոր խոհեմ:

ԻՍԿ ՆԱՔՈՒ և ՍԱՀԱԴև եղբարք երկուորեակք, զորս արժան է կոչել Կաստոր և Պոլիւքս Հնդկաց, եղեն կիրթք ի փղավարութեան, ձիավարութեան, և կառավարու-

թեան 'ի պատերազմի : Եւ 'ի մարզս զինուորական՝ Վահագունք անպարտելիք : Այսոքիկ Ցոգերքին եղբարք, այնքան սիրով և միաբան կացին ընդ միմեանս. մինչ թուել թէ մի միայն հոգի շնչէր յամենեսին 'ի նոսա. որոց կացուցեալ զՑիւդիշոր յառաջնորդ և իշխան իւրեանց, Ցաղանդեցան նմա մատուս և կենաց իւրեանց : Զայսպիսի բարեկարգ գնացս սոցա տեսեալ Դուրքուդանայ 'ի նախանձ արեան եմուտ ընդ նոսա. և երկնէր հանապազ 'ի սրտի իւրում չարիս կորստեան նոցա : Այլ քանզի Բիմ այր զօրութեան ճանաչէր յամենեսին, երկուցեալ յայսմանի թշնամութեամբ մարտնչել ընդ նմա՝ խորհեցաւ գաղտնի որոգայթ լարել նմին : Ուստի կոչեաց զնա դաւով 'ի զբօսանս որսոց, արքայց դեղ մահու, և պրկեալ զնա կրկին շղթայիւք՝ գետամոյն արար 'ի Գանգէս : Այլ նա դիցն օգնականութեամբ անվնաս ապրեալ՝ մատեաւ կենդանի առ եղբարս իւր :

Դիտորդութիւն, որ ոչ կարէր թաքուցանել 'ի խուժանէն զիրաւունս Պանդուաց առ աթոռն Հաստինափուռայ, և ոչ զորդին ցածուցանել 'ի մախալոյ ընդ նոսա՝ բարուք իմն վարկաւ առաքել զնոսա 'ի Բռնսադա, կեալ անդանօր հասիւք աշխարհին : Այնինչ դեռ նոքա զճանապարհայն էին հանդերձ Կուն-

թեաւ մարք իւրեանց, աճապարեալ Դուրջուդանայ արս փութանակի առաքէ 'ի Բրուսադա. օծանել զապարանսն Նաւթիւ, ձիթով, և ծծմբով. որպէս զի ընդ հասանել անդր Պանդուաց՝ հրձիգ զաւուն արարեալ՝ կենդանւոյն այրեսցեն զնոսա առհասարակ: Իսկ նոցա իրազեկ եղեալ որոգայթից թշնամւոյն, և զմտաւ ևս ածեալ՝ թէ էր Ֆարին ինքեանց խաղաղութեամբ կեալ, ցորչափ հզօրանայր թշնամին 'ի բռնակալութեան իւրում, ընդ ստորերկրեայ անցս գաղտակուղի եղեալ՝ խուսեցան 'ի բաց: Իսկ Բհիլ ոմն 'ի հարճից նոցա այրեցաւ Ֆգեքին որդւովք իւրովք 'ի հրայրեացն ապարանից, ուստի և որոգայթադիր արանցն փութացեալ 'ի Հուստինափուռ, համբաւ զայրեցմանէ տան Պանդուաց՝ յականջս Դուրջուդանայ, և ահա՛ տօն ուրախութեան կատարէ անդանօր՝ զուարճացեալ խորամանկն 'ի Ֆարս նեն-գութեան իւրոյ. և անկասկած կենաց թագաւորեալ՝ անցուցանել յուսայ զայն և՛ որդւոց իւրոց:

ԳԼՈՒԽ ՄԵՏՍԱՍՆԵՐՈՐԴ

Վասարանդէ գնալ Պանդուայ, յաղնութիւն ի Կամպէլ-նագար, կոլ նոցին ի Հուապինափուր, կարգուն Յէրգիշարայ ի Բագատար, Նախանցն Լոր-ջորդանայ. Նահապետութիւնք Իրիշնայ. Խաղաբիութիւնք և Էր-բոսպ Պանդուայ ընդ Կերբուայ. Զու նոցա և դարձ.

Մրցին Մէնծ Պարէրազին:

Անդ էր տեսանել զորդիսն Պանդուայ գալ ի ծպիտ աղքատին կրօնաւորաց, և շրջել վտարանդի ի լերինս, ի դաշտս, և յուխտս աստուածոց իւրեանց ընդ ամս յոլովս. մինչև գալ հասանել նոցա ի Կամպիլնագար, ի քաղաք թագաւորութեանն Ինդոսի, որ անկանէր ի Փանջապ: Յորում իշխէր այլ ոմն հարստութիւն ի ցեղիցն Յիսադուայ լուսնորդուոյ: Սորա էր դստրիկ միամայր, ժամանեալ յարքունս հասակին իւրոյ. այր ազգաւ առնէր արքայ Շոհնսբրա, որ է հանդէս հարանհաւանութեան: Քանզի պատրաստէր խրախճան մեծահաց հանդերձանաց, և ի մեծի հրապարակին կանգնեալ զձող բարձր և ի նմա զձուին ոսկի՝ զերտեղէր առ երի նորա. ասի՝ աղերն հրոր, և անտի զկնք լի

ձիթով, համառօտ մակագրութեամբ. "ՆԷՊՈՂԷՆ ՁԻՍՆ Ի ՁԷՌ:" Ապա պատգամ առաքեալ կոչէր ի հանդէս անդր զՏեռաւոր և զմերձաւոր արքայազունս, և զերիտասարդս իշխանաց և պետութեանց գալ ի նաւակատիս հանդիսին մեծի: Որանօր՝ թէպէտև այր իւրաքանչիւր զփոքր փորձեաց զօրութեան և զարուեստին, սակայն ոչ ոք կարաց շահիլ զյաղթանակ սիրոյն, մինչև յառաջ շահատակեալ Արքունայ, կաթեցոյց ղՅՈՒԴԷՆ Ի ՅԷՌ. և ի միջոյ բիւրաւորաց՝ շահեցաւ զԴրուպատի, զդուստր արքային Փանքապայ ի կնութիւն իւր, միանգամայն և զորեցուն եղբարց իւրոց. զի ամենայն ինչ հասարակաց էր նոցա: Թէպէտև առ յապայն խրատու մօրն իւրեանց Կունթեայ՝ սահմանեցին. զի մէն մի յեղբարցն փոխանակաւ առագաստեսցէ ընդ նմա զաւուրս եօթանասուն: Թագուսցեն ընդ վարագուրաւ կեղծեաց, որքան և կարիցեն հեղինակք Հնդկաց. սակայն և այնպէս՝ նախնաւանդ այս ծէս հարսնահանութեան սեպական իմն գոլով Սկիւթացւոց. յայտ առնէ զլուսնորդեացդ գալուստ յարևմտից Ինդոսի:

ՀԱՄԲԱՒ քաջութեան Պանդուաց հասեալ ի լուր ծերունւոյն Դրիտրուշտայ, մղէ զնա ի խորհուրդ աւագանւոյն մտանել, հրեշ-

տակ խաղաղութեան արձակել առ Պանդուս հրաւիրել ՝ի Հուստինափուռ, դաշն հաշտութեան կռել ընդ նոսա և ընդ որդիս իւր, և պատկեալ զՅիւդիշոր թագաւորական շքքով՝ արձակել զնա ՝ի քաղաքն Ինդրպուրա *, առ Յունայ գետով, որ այժմ կոչի Դիլլի: Որոց հասեալ անդանօր՝ ընդարձակեցին յոյժ զաահման տէրութեան իւրեանց, ստացան գանձս ոսկւոյ և արծաթոյ բազումս, և ճոխացուցին զքաղաք իւրեանց ՝ի հիճուկս փարթամութեան և ճոխութեան ամենայն մերձակայ թագաւորաց: Այլ զի փառասիրութիւնն ախտ դիւցազանց համարեալ, բազում անգամ աղարտէ զճշմարիտ փառս նոցա. ՝ի գալ ամին միւսոյ ելից ամբարտաւանութեամբ զսիրտ Յիւդիշորայ զԱսպամե-

* Հինաւուրց քաղաքս այսր նիստ հզօր ինքնակալութեան Հնդկաց, ՝ի սկզբանէ անուանեալ կոչէր Ինդրպրա, կամ Ինդրէրոպ: Իբրև 3832 յառաջ Հուստի շինեաց զայն, և անուանեաց Հոոպինոոս: Յետ նորա Հանտինկ ռաջա ոմն շինեաց զերրի ՝ի նմա և անուանեաց Հոոնդոոս: Իբրև 2573 ամօք յառաջ Ամմինկ ռաջա կառոյց ամրոց, և յրբաղատեալ պարսպօք անուանեաց յիւր անուն Ամմոոս: Իբրև 2222 ամօք յառաջ Դելու Ամուան տիրեաց նմին, և նորոգեալ անուն կարգաց՝ Դիլլի: 624 ամօք յառաջ Փիրուզ շահ շինեաց զմիջնաբերդն և դարձոյց զնա յիւր անուն Փիրոզպոոս: 223 ամօք Հաջրման արքայ Մողալաց զարդարեալ շքեղացոյց զնա արքունական ապարանօք և հրապարակական շինուածովք, և կոչեաց Հուջնոոս: Յամին 1398 էառ զսա Թամուր լանկ. և յամին 1739. Նադր շահ Պարսից: Ուստի գաւառս մեծամեծս երկոտասան. Ա. զԴիլլի,

դային կատարել. որ էր միս իմն ծէս սեպհական Սկիւթացւոց, Զիաղոհ թարգմանեալ ի Հայս, զոր Արքայիցն արքայ միայն կարէր կատարել. և ոչ այլ ոք: Անդր կոչեցին Պանդուք գրեա՛ թէ զաշխարհ ամենայն. զԹրակաւորս, զկուսակալս, զպետս, զԲրահմանս, զաղքատս, զկաղս, զկուրս, զմեծամեծս, և զփոքրկունս: Զորս յետ զոհիցն քաւութեան յերախանս յերախանս բազմեցուցեալ՝ օգուտեցին առաջի նոցա կերակուր ոսկի և արծաթի անօթովք ընդելուզելովք ակամբք պատուականօք, ուր չորեքին եղբարք արքայի, և երևելի նախարարութիւնք աշխարհին յոտն կացեալ սպաս տանէին նոցա: Սովորոյթ, սեպհական Ասիացւոց. և իմոցս ախորժանաց բազմօք գերազանց, քան զեւ-

Բ. զԹիրաջ, Գ. զԲգաւօն, Դ. զՀիսար, Ե. զՌեվարի, Զ. Սրհանփուռ, Է. զՍմբլմուրադապատ, Ը. զկմուօն, որ է երկիր լեռնային և անտառախիտ. ուստի բարձեալ բերին մուշկ առատ, ջաղաք, Սուհկա թռչուն, և արծուի: Թ. զԻնդրնոլ, որոյ ի վերերորդ վիճակին՝ ի գեղոյն Պերեի և Ընարա, ելանէ պղինձ, լեզակ, և անտիմոն: Ի մեծասաներորդ վիճակին՝ ի գեւոն, որ կոչի Իտաթիրա, նոյնպէս պղինձ և պարլեղ: Իսկ յինն երորդ վիճակին՝ ի գեւոն որ կոչի Ուբդի անթրի, երկաթ բազում յոյժ: Ժ. Թէվաբադ, ԺԱ. Սէնդ. որ է սահմանագլուխ կրօնից Հնդկաց, զի անսի և անդր անցանել արգելեալ է նոցա: և ԺԲ. Սրինագար: Ընկանի յարևմտից Սիպ և Ավոդ նահանգաց, յարևելից՝ Փանջաբայ, ի հիւսիսոյ Ակաբատատայ, և ի հարաւոյ Տիպեդայ:

բոպականացդ՝ ի ծառայս անչափութիւն։ Զի ծառայք են՝ հարկաւոր չարիք։

Այլ Պանդուրացն Ասպամեդա ի նախանձ ատելութեան շարժեաց ոչ միայն զԴուրքուդան զիւրեանց ոխերիմ, որ էր մի ի կոչնականացն, այլ և զՅարասունդա զարքայն մեծ զՄաղատայ։ Որոյ միայնոյ էր զհանդէսն կատարել զայն մեծ և երևելի։ Ուստի յայտնի պատերազմ բացաւ ի մէջ երկոցուն, և Քրիշնա հատուած առեալ ի զօրացն Յիւդիշտրայ ընդ Բիմաւ և Արջունաւ իւրովն նիզակակցօք՝ ընդ ճանապարհ գաղտակուղի յեղակարծուստ յարձակեալ ի Մաղատա՝ պաշարէ զքաղաքն շուրջանակաւ։ Յարասունդա պահակս ի վերայ պարսպացն կարգեաց, և ինքնին քաջութեամբ զդիմի հարեալ Քրիշնայ զաւուրս բազում, թէ և գործ զքաջ արանց շահատակեաց ահաւորագոյն հարուածովք իւրովք, այլ ի վերջոյ վերաւորեալ ի քաջ բազկէն Բիմայ՝ տապաստ յերկիր կործանեցաւ։ Թէպէտև բրահմանք Քրիշնայ և Բալուդևայ Ցիարիցեն ընծայել զայս գործ քաջութեան։ Ամբարձեալ նոցա զՔրիշնա յաթոռ Մաղատայ դառնան ի քաղաք իւրեանց յԻնդրիպրաստ։

Իսկ Դուրքուդանայ տեսեալ թէ յայտնի ոչ ինչ ազդէր փառաց նոցա, խորհեցաւ

գաղտնի դաւանս նեղութեան գնացանէ։ Վասնորոյ հրաւիրեալ զՅիւդիշտր եղբարքդ հանդերձ ի կոչունս ուրախութեան՝ գերեաց գինեաւ զուշ նոցա։ Իրազեկ գոլով և հակամիտութեան նոցա առ նարտ, խաղու կորզեաց ի նոցանէ զփառս և զմեծութիւն, զկին և զամենայն, Տգից մի զկնի միոյ յաղթելով։ Յայնժամ կալեալ Վասասանայ կրսերագունին Կորուսց զվարսիցն Դրապուտեայ. քարշեաց ի հրապարակ անդր, և յաւել մերկացուցանել զնա յամօթ և ի նախատինս Պանդուաց։ Այլ Դրուպուտի յօրէնս էր կանանց, ուստի և սրտի մտօք աղաղակեաց առ Աստուած. և ահա՛ յաներևութից տուան նմա հանդերձանի առ ի ծածկոյթ մերկութեան։ Զորս ի քաց կորզեաց Վասասան, բայց տուան նմա կրկին և երեքկին, մինչև տարժանեալ ժանտին յետս եկաց ի չարեացն. և զարհուրեալ Դուրջուդան գարձոյց զնա ցարս իւր։ Այլ դու տես ինձ ընթերեւոյ. թէ առ սրտ ստորին վիճակ իջուցին զփառս առաքինեաց՝ խաղքն և արբեցութիւնք։ Ի խաւարի կըռասպաշտութեան վարք այպքան բարոյութեամբ լուսաւոր՝ շնորհ մեծ էր գտանել. բայց և այնպէս անկայուն բնութեան մարդկան օրինակ առընթեր կայ ի Պանդուս, որք ի փառաց խնարհեալ՝ և յառակ նշա-

ւակի եղեալ ատելեաց իւրեանց՝ եկին ամենայնիցք 'ի քաղաքէն՝ և զամս երկոտասան վտարանդի շրջեալ յանապատս և յանտառս՝ եկին հասին 'ի սահման Թագաւորութեան Բհարիթայ, և փոխեալ զանուանս իւրեանց՝ գրեցան 'ի զինուորութիւն նմա ցանն երեքտասաներորդ: Ուստի հրաշալեաց եղեն առ Դուրջուդան, շնորհել ինքեանց զհետագայ գաւառսն փոխանակ մեծի Թագաւորութեանն՝ զոր կորուսին: Զկնիալ, զկոնալ, զբոնադա, զսինդ, և զինդրփրատ: Իսկ նա խստիւ պատասխանեալ դեսպանաց նոցա՝ և կասկած եւ առեալ թէ ոչ հանդարտէին, աճապարեաց և ժողովեաց զոր բազում 'ի Թիկունս իւր: Յորս յանուանէ և յականէ յիշատակին Բիկնդամ և Բագադատ որդի Նարոկայ Թագաւորին Կամրուպայ,* ընդ Մադրայ, Սվերանայ, և Կեկայայ, անհամար զօրօք իւրեանց: Ոչ մնայր ինչ այնուհետև Պանդուտցն առնել, եթէ ոչ զմի յերկուց յայսցանէ. կամ աղքատօրէն վտարանդել դատարկութեամբ աստ և անդ, և կամ զանձինս

* Կամրուպ որ և Պրագջիոտիա ձգի յարև ելից 'ի Կարոտոյայ, ուր Թագաւորում Մոսսայ միանայ ընդ Դիկոբասինի գետոյն Ե-շամայ, որ խառնի 'ի Բրամհպուտրաս 'ի հնոց՝ Լուհուտիա Սինգուս կոչեցելոյ։ 'Ի հիւսիսոյ մինչև 'ի Կոնջիգիբի, ցսահմանագլուխ

'ի կշեռ դնել քաջութեամբ թշնամւոյ իւրեանց։ Բազմամեան թափառանքն ընդ Հայմոքէն Ցոդկաստան. ամուսնութիւնն ընդ Դրուպուտեայ դստեր մեծի թագաւորին Վայա-վիրատայ, որ անկանէր առ սահմանաւ Սրինագարատայ, այժմեան ասեմ Լահօռայ. որպէս և քարուցն անուշակութիւն և աղնութիւն շահեալ էր նոցա զսիրտս բազմաց։ Յորոց 'ի թիկունս առեալ զՔրիշնա, և զմերձ յիսուն և վեց թագաւորս Ցիսգուեան սերնդոց՝ կազմեցան 'ի պատերազմն ահագին։ Անդ էր տեսանել առ հասարակ զամենայն իշխանութիւնս աշխարհին, որք 'ի Հիմալեան լերանց տիրէին մինչև 'ի Ծով, գալ յենուլ 'ի մի կամ միս կողմն համակոր-

տեբութեան Սահիլայ. որ գրաւէ զԹօթան։ 'Ի հարաւոյ սահմանի գիտոմն Լանիաւ, որ ելանէ 'ի Բրմհոպուտրայ, և Պոնգանաւ. և ըստայսմ՝ յինքն պարունակէ զՄոյամուսինգ վտակն 'ի հիւսիսոյ Դաքայ քաղաքի Բանկալայ. զՍրիհովթի կամ Սէթ Մունիպուրաւն հանդերձ, մինչ յԱշամ։ Զոր չաստուածուհին հեշտութեան ետ Նարոկայ որդւոյ Բաքահայ և Պրիթիվայ։ Որ թէպէտև անհաւատ ոմն էր, սակայն սիրելի եղեալ յաչս դիցուհւոյն կարգեցաւ վերակացու տաճարին Կամակիայ, Շնաբուցն Հէյդ-Դէնան։ 'Ի չորս տրոհեաց Նարոկ զաշխարհն Կամրուպայ, 'ի Կամ, Սէր. 'ի Ռոանու, Գէզ. 'ի Մոնի և 'ի Յեսնի, յերկոսին այլ պարագայս ցանկութեան, զոր հասարակաց ամօթիածութիւն ոչ թոյլ ետ ինձ թարգմանել 'ի մեզ։ Եւ զարմանք արդարև, զի չաստուած խառնակ սիրոյ գրեցաւ Քրիշնա, և ոստ աստուածուհին հեշտութեան անուանի Քրիշնու։ Որով խորհուրդ յիս մտանէ, թէ Նբ-էգ- իցեն աստուածքն հեթա-

ծան ճակատուն։ Իբրև այսօրինակ պատրաստեցան պնդեցան կողմանքն երկոքին՝ խաղացին գնացին բանակ Հարին յասպարիզին Կորուկշեթրայ, 'ի Տանասար առ լճովն Կուրկեթաւ. զի որ անդր մեռանէր, ազատ 'ի ցաւոց Հոգեփոխութեան ընդ Աստուածոյ միանայր իբրև Հատուածեալ մասն էութեան նորա։ Դուրջուդան բաժանեաց անդ զզօրս յեօթն ճակատս։ Զառաջին ետ Բիկմպամայ առն խրոխտի. զերկրորդն Դրունարքայ սիգին. զերորդն Քերոլունայ. զչորորդն Վասասանայ եղբօր իւրում, զհինգերորդն Սակոնայ. զվեցերորդն Վրիհապալայ. և զեօթներորդն ինքն առ։ Իսկ Բագադատ և այլք 'ի դաշնաւորաց առանձին գնդօք իւ-

նոսայ։ Արձանագիր ինն պնդնէի բրեալ յայսմ ամի 'ի Թեզփուռ, 'ի վիճակին որ կոչի Դրնկ. ընդ այլոց երկարաբանութիւն պարագայից յառաջ բերէ և զայս պատմաբանական հատուած։ Որպէս թէ "Առաջնոյ Բարահայ լեալ ելցէ որդի Նարոկ անուն ծնեալ 'ի Պրիթիվայ, (այսինքն յերկրէ։) Իսկ Նարոկայ որդիք երկու Բագադատ, և Վիբրագատ։ Նարոկ սպանաւ 'ի Քրիշնայ. որ զԹացեալ 'ի լալիւն կնոջ նորա՝ զորդի նորին զԲագադատ կարգեաց 'ի Թագաւոր Պրագիոտիսայ. յորմէ շառաւիղեցաւ ասի Պրալամբա, իշխան Կամրուպայ։ 'Ի Թագուհւոյ նորա, որ կոչէր Չիվանտա՝ ծնաւ Հաբարա. որ կոչեցաւ Վանամալա 'ի Թարայէ կնոջէն իւրմէ։ Յորոց ծագեցաւ ապա Պալեան հարատութիւն քան և վեց Թագաւորաց. զորոց այնցի բաց յանուանց չգտի զայլ յիշատակութիւնս, զանց արարի շարադրել աստանօր։

բեանց զառաջս և զվերջ պահէին բանակին։ Նոյնպէս և Պանդուխն տրոհեցին ի գունդս գունդս զգուպար ամենայն բանակի իւրեանց։ Գնդին արևելեան զօրավարեաց Ցիւդիշար. գնդին հարաւոյ՝ ահաւորն Բիմ. գնդին հիւսիսի՝ խոհականն Արջուն. գնդին արևմտեան՝ նագելին Նաքուլ. կառացն և փղաց՝ սեգն Սահդև. իսկ վերջնապահացն ամենեցուն՝ գիւցազնականն Քրիշնա։ Իբրև այսօրինակ ահեղասաստ կազմութեամբ յիրեարս յարձակէին կողմանքն երկոքեան՝ նախագրաւ շահատակեալ ահագնին Բիմայ գոռաց յորոտ անՏարին, որով երկիր ի հիմանց սասանեցաւ, գազանքն պատերազմականք ի փախուստ խուճապեցան, և գունդք նախաճակատուցն պակուցեալ՝ ընդ կրունկն զեռալ սկսան։ Որոց զհետ մտանէր անպարտելի աբիւթեամբ, և զծանրաշարժն իջուցեալ ի նոսա զլախտ՝ ճապաղիս արեան ի տեղւոջն տարածէր։ Զայն տեսեալ Բիկմպամայ կայծակնաբար փայլատակէր հասանէր ի ճակատ Բիմայ, և զաջոյ թևն բեկեալ՝ զձախումն արկանէր։ Զգէր երկարէր այսպէս գործ պատերազմին ցաւուրս ութ և ատասան. և յաղթութիւն յերկբայութեան պատաղէր, մինչև դէտաին կառուցեալ Բիմայ ցնա ինքն ցԴուրջուդան արծուօրէն խոյանայր, և ի

տէգ նիզակին շամփրեալ զարքայն անպարտելն՝ տապաստ յերկիր կործանէր։ Իսկ Արքունն Հրահոսան * զինուք ի մարտին արձանացեալ՝ զբիւրս ի թշնամեաց կայծակնահար տապախորով դէն թափեալ կացուցանէր։ Եւ զՔաղաղատ զարքայ Կամրուպայ մնան մնան յօշոտէր, որ լայնաշունչեայ գեղարդեամբ իւրով հասեալ բեկանէր զաղեղն Մոդհոբայ որ այն ինքն է՝ Քրիշնայ։ Մինչ այս մինչ այն, և Աբահմանի որդին Արջունայ զԱրիհապալ սատակէր, և զԲիկմպամ զայր խրոխտ առ ի մահ վիրաւորեալ՝ առընթեր նմին դնէր, և զյաղթանակ մարտին դրոշէր փառօք ի վառն Պանդուայ։ Ուր անկան ի կողմանէ Կօրուայ՝ ոգիք մեռասան հարիւր հազարք, իսկ ի Պանդուայ՝ հինգ հարիւր հազարք։ Գործ թէպէտև մեծ ըստ ինքեան, այլ Բրահմանայ առաւել և Հրաշալի ընծայել կամեցեալ՝ զանհաւատալիս իմն ի վերայ ածեն, թէ յորժամ անկանիցին ի պատերազմի ոգիք երկու հազարք, դի մի անգլուխ մեռելոյ երևալ ի գերեզմանի՝ պարէ առ խնդին, իսկ անդ այնքան մեծ կոտորած եղև, մինչ բիւրուց անգլուխ դիոց յառնել ի պարն չարախնդաց։

* Ըստ ամենայն վկայութեանց գիւտ վառօդի ի Հնդկաստան բազմաց յառաջ էր քան զարշաւանս Ալէքսանդրի, որում ի

ԳԼՈՒԽ ԵՐԿՈՏԱՍՍՆԵՐՈՐԴ

Սուգ Ցիւդիշոյ, Խրատ Ռէֆմպամայ, Խորհուրդ Վէտայ. Դատ Վաճառողի և Գնողէն Հալուածոյ. Մահ Ռէֆէնայ, Երբ Պանդուռացն ի Մուլլեան :

Աստ Ցիւդիշոր գոլով այր գթած և գողոր սրտիւ, ոչ գրէր զենդութիւն յաղթութեաբ պատերազմին, այլ սուգ մեծ ի սրտին կրէր՝ յաղագս կորստեան այնքան բազմութեան մարդկանն՝ որք անկան : Քանզի և շատք ի նոցանէ մերձաւորք էին արեան իւրոյ : Ուստի և երկնէր հանապազ ի միտս իւր լքանել զկենցաղոյս, և յանապատի առանձնութեան ապաշխարութեամբ քաւել զմեղս : Զոր իմացեալ Բիկմպամայ սպարապետի զօրացն Կորուսաց ոսկերմի նորա՝ որ խոցեալ Աբահմանեայ ի վերջին շունչ հոգեվարէր, խօսեցաւ առ նա զայս իմն ձև օրինակի և ասէ : «Ընկալ զիմ վերջին խրատ : Որովհետև վանն փառաց պատճառ եղեր կորստեան այնքան բազմութեան մարդ սրերոյ՝ մի՛ զարգիս ընդ կորուստն վհատեալ կորուսաներ և՝ զայն զոր յանձին շահեցար քում. որով ոչ ինչ օգտիցիս

գիմի հարաւ Պորոս սովին հրանութով։ Սալ Հնդիկք ի Մահայինայ ընկալան զայն։

քեզ՝ կամ Հայրենեաց քոց : Լաւ ուրեմն լի-
նիցի քեզ ունիլ զերասան կառավարութեան
աշխարհիս , յանձանձել զմնացորդս ժողովր-
դեան քո . պատել զվէրս նոցա և բժշկել
զբեկեալս սրտիւք , քան մեկուսանալ յանա-
պատ և զաշխարհս անապատ կացուցանել
սրով թշնամեաց : " Զայս ասացեալ՝ փչեաց :

Իսկ Պանդուխ ուշադիր խրատուն բար-
ւոյ թշնամւոյ իւրեանց՝ չոքան առ Ծերունին
Դրիտրուշտու Ի Հաստինափուռ , և անմե-
ղադիր կացուցին զինքեանս վասն սպանման
որդւոց նորա : Յայնժամ վերստին երևեալ
նոցա արքայականն վիսս խորհուրդ մատու-
ցանել նոցա ՀՅՈՒԳՈՅ ՈՒԳԲՆ կատարել . որ էր
հանդէս ընդ հանուր ԿՈՐՈՂՋՆԱՎԷ : Քանզի
օրէն էր յայնժամ Ի մէջ Հնդկաց , զի յորժամ
թագ կապէր արքայիցն արքայ , պատրաստէր
զկառս իւր ամենազարդ հանդերձանօք , և Ի
վերայ կառուցեալ զդրօշն արքունական ,
հանդերձ գնտաւ միով զօրաց , և զօրապե-
տօքն , յածեցուցանէր ընդ ամենայն ոստոս
սահմանակից թագաւորութեանց : Որք
միանգամ ընդ յառաջ երանէին կառացն ար-
քայավայել մեծարանօք և հարկօք աշխահի
իւրեանց՝ ընդունէին զդաշն հաշտութեան
Ի կառավար իշխանէն իբրև Ի գիմաց ինք-
նակալին : Իսկ որ ոչն երանէր՝ շարժէր զզօրս

ի պատերազմ: Սմին իրի՝ Հանդերձեալ Յիս-դիշարայ զկաուս իւր ոսկեղէն սարուք, կարգէ ի վերայ զեղբայր իւր զԱրքուն, և զՎիսա արքայական, որոց շրջեալ ընդ Համարիէն Հնդկաստան, և յամենեցունց ընկալեալ զՏիրապատակութիւն և զՀարկ, դառնան առ արքայ յետ տարւոյ միոյ:

Ի՝սկ Ծերութեամբ Ծնգեան Դրիտուշտու և աղխուիւքն հիւծեալ, որ ընդ այ պատիւ ընդունէր ի Պանդուաց անտի, ելիւք զամենայն զկենցաղոյս, և առեալ ընդ իւր ըզ-Կունթի զմայրն պանդուաց, ջրքաւ յանապատ տեղիս, և մեռաւ օրհասիւ մահուն: Զորմէ ոմանք ասեն թէ առ լճին Տանիսարայ. այլք՝ թէ ի Հարդուար, առ եզերօք գանգէսի. բայց ինձ հաւանական ևս թուի, ընդ Հիմալեան լերինս անցանել նորա ի Սկիւթս Հնդկաց. թեպէտև բրահմանք զնա անտի յերկինս ամբարձեալ առասպելիցեն:

Յետ՝ելոյ պատմել Վիսա և առակս զարմանալիս. զորով կամովին զանց առնէի, եթէ չէր նպատակեալ նորուն ի ցուցանել զկարծիս Ցնագունիցն Հնդկաց զարդարութենէ առաջին դարուց, և զապականութենէ ներկայիս: "Ի վախճանին ասէ Տրէտայ յուգայ և ի գալ Կալոյն, այր ոմն ի Հուսանապուռ գնեաց իւր զկալուած գետնոյ. և

բրեալ եգիտ գանձս ի նմա։ Ուստի չոքաւ առ վաճառողն և ասէ. «Ես գնեցի ի քէն զերկիր. և ի բրելն գտի գանձս ի նմին. արի՛ մեր խաղաղութեամբ։» Իսկ նա պատասխանեաց, «Եթէ իմ էր գանձդ վաղու իսկ ժառանգէի. այլ իմ չիք գանձ, և ես ցքեզ երկիրն վաճառեցի. քոյ է նա՝ և բերք նորա։» Եւ այսպէս վիճեալ ընդ միմեանս զաւուրս ինչ, չոքան առ արքայ Յիւդիշտ. որոյ գիտելով թէ անցանի Տրէտա յուգ, և ի վերայ գայ կալին, խորհուրդ ի միտս անցոյց փորձել զարդարութիւն նորա, և տեսանել. բնական իցէ՞ արդեօք, թէ ժամանակեան։ «Թողէ՛ք ինձ ասէ զվէճդ, մինչև պարապոյ գտեալ դատեցայց զդա։» Եկն դար ապականութեան. և փոխեաց իսկոյն զբարս մարդկան, յայնժամ եկն վաճառող կալուածոյն, և ասէ ցնա, «Ես քեզ գետին վաճառեցի և ոչ գանձ. դարձո՛ այսրէն զիրաւունս իմ։» Եւ որ գնեաց աղաղակէր, թէ «Ես գնեցի զերկիրն և իմ է պտուղ նորա։» Ելին վերստին յերեսս արքայի. որոյ գտտեալ զիրաւունս նոցա. ճնաս բարեաւ ասաց աշխարհի, և ամենայն փառաց նորա։

Զ. ՑՍՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՒ ԳՈՅԺ ՄԱՀՈՒԱՆ ՍՐԻ կուշանայ և Բիլբադալայ հասեալ ի լուր Յիւդիշտրայ, ի թուխս համակեաց զայրն

գաղտարական, վանորոյ տուեալ նորա զԹագաւորութիւնն Պրիկշիտայ, կամ Պրիշկայ որդւոյ Աբահմանայ, որդւոյն Արջունայ. և Թողեալ զինգրփրատ՝ մեկնեցաւ չորեքումբք եղբարբք իւրովք, և Քրիշնաւ, վտարանդեալ յաշխարհէ յաշխարհ: Իջին սոքա ի Հաստինապուռ. և ի Պուրուպ, ՅարՔէլ, ի Բանկալա, ի Դաքան, ի Գուզարա, ի Փանջաբ, և ի Մուլթան. ուր ելաց Յիւդիշտր ի վերայ Արիկուշանայ և Բիլբադալայ նախկին քարեկամացն իւրոց, և չոգաւ անտուստ ի Դուարկա, ի սահման Թագաւորութեանն Քրիշնայ:

ՊԵՏԵՐԲԱԶՄՆ մեծ սպառեալ էր գրեթէ զամենայն զօրութիւն նոցա և աստանդական կենաց ապաստան Թողեալ, յորժամ Բհիլք, ժողովուրդք ինչ խուժադուժ, որ անտառաբնակ կենօք անցուցանէին զառօրեայս իւրեանց Հորդան տուեալ ի Դուարկա * Ճակատ յարդարեցին ընդ Քրիշնա և Պանդուս: Անկաւ նա նեռատհարութեամբ ոտին առ աղբերբն Հուշանի, և Յիւդիշտր Բալուդեւաւ եղբարբ նորա քերեցաւ զԱինդաւ ի լեառն Հիմալա, և անտի ընդ Զաբուլաստան՝ յաշխարհն Սկիւթացւոց:

* Քաղաք եղեալ ի Գուջրաթ. որ ունի տուն 2560. հռչակաւոր է ի նմա սաՃանն կռոց՝ ուր ելանեն ուխտաւորք յամենայն կողմանց աշխարհին.

ՔՐԻՍՏՈՍ իբրև հսկայ Լուսնորդեաց հարստութեան, ընդ անառակ և իգամոլ մեղկութեանն՝ յանձին երևեցոյց և հրաշք քաջութեան: Սա զՅարաստունդա զարքայն Պաղատայ սպան, և զԿալիջուն զարքայ արևմտեան Հնդկաստանի՝ զկնի ութն և տասն ճակատուց, դաւաճանութեամբ կենսախուզ արար: Եւ յամենայն քաղխմունս մեծի պատերազմին զօրավիգն եկաց պանդուաց ցմահ իւր. որ պատահեցաւ նեստահերութիւն ոտին 'ի Բհիլաց: Այլ զի՝ 'ի յետնոց անտի աստուածացուցեալ պաշտեցաւ իբր ութերորդ մարմնառութիւն վիշնուայ, այժմ ըստ Վիմուտրայ պուրանի, և Ջիտայ Բագավատայ ամենայն յաղթութիւն և փառք յերկինս և յերկրի սմա ընծային: Եւ չիք անառակութիւն, որ ոչ կատարիցի 'ի փառս սորուն:

Բանլուդեի հաստատէ զաթոռ իւր 'ի Պատալիպուտրա, զոր նորոգեալ պայծառացոյց յանին Գանգէսի 'ի խառնուրդ Սոհոն գետոյ: Կառոյց և զՊահավելապուր 'ի Կուռնատա, և զԲալիպուր 'ի Բեդէր, առ ժամանակաւն՝ յորում ընկերէր աստանդանացն Պանդուաց ընդ համարէն Հնդկաստան:

ԳԼԽԻ ԻՐԵՎՍՏԱՄԵՆԵՐՈՒԹ

Պրեկեցք, Յանկէ, Ոնէլաք, Խանկէ, Ռանկէնգրա, Ոսրանանգասան:

ՑՈՒՅԳԱՆՈՒ Աբահամնեայ ի մեծի պատերազմին կին նորա յոլի գոլով ծնանի զՊրիկշիտ. որ հասեալ յարքունս կատարելութեան լինի այր անմնեայ և զօրաւոր. և կարգի ի Ցիւդիշարայ յանթոռն Հուստինափուռայ: Հոմուէ զկպատակս իւր իրատամբ և արդարութեամբ: Զամանէ առասպելս կցկցեն մերկիմատակք. որպէս թէ ի զբօսանս որսոց հարուալ զեղջերու, և ի փախչելն զհետ մտեալ, պատահիլ անապատականի ուրուք, և կապել զօձ ի պարանոց նորա: Անէծս յորդւոյ նորա ընդունիլ. "թէ՝ օյնանոր նուռցէս, ոդդեանէ:" Ի ջուրս ապարան կառուցանել յապահովութիւն իւր, այլ ի վերջոյ օձահար վճարել զաստիս ըստ բանի Գիտին մեծի: Զորոմք զանց արարեալ՝ բաւական վարկայ հանել անտուստ զբուն նպատակ ստեղծարանութեանն, թէ՝ որով ոք մեղանչիցէ, նոմին և պատժի: Ամք սորա 126:

ՋԵՆՄԷՋԵՍ որդի Պրիկշիտայ խորհրդով աւագանւոյն ամբառնայ ի գահոյս իշխանութեանն Ինդրիբրատայ: Այս թէ և մանուկ

հատակաւ՝ այլ կատարեալ գոլով մտօք, ապա-
հովեաց զժողովուրդ իւր յոյժ յոյժ: Կա-
ռոյց քաղաքս մեծամեծս և ապարանս բա-
զումս ի տեղիս տեղիս: Յարձակեցաւ պա-
տերազմաւ ի Հիւսիսային Հնդկաստան, և
ընդ բռատրբ նուաճեալ զաղստամբսն առ Ին-
դոսին՝ դարձաւ յաղթանակաւ ի քաղաք իւր
Յունդրիբրաստ: Սա և ընդ վիշապունս պա-
տերազմեալ՝ այրեաց կենդանւոյն զամենայն
տեսակս օձից զորս Թովել կարաց ի դուրս:
Որ է ասել՝ թէ յաղթեաց Տակշակեան կամ
Նագ հարստութեան՝ որ նորոգ զօրանային
ի Մաղատա: Թէպէտ Մարշմէն երազէ նո-
ր՝ոգ յարձակեալ յԱկուԹիոյ ի Ցոգիկս. որք
յայդ անուն ծանուցան ասէ բնակչաց երկրին՝
յաղագս կրելոյ իւրեանց զգրօշ վիշապի ի
վառս իւրեանց: Կատարեաց առ այն սա և
զՀանդէս յաղթանակին, և հրաւիրեաց ան-
գըր զանհամար Բրահմանի, զԹագաւորս,
զիշխանս, և գրեա՛ թէ՝ զամենայն մարդ: Ո-
րոց բաշխեաց պարգևս առատ՝ և արձակեաց:

Գ.Ս.Ց Վնաս յայցելութիւն արքայի. որում
հարցանէ Ջանմէջա թէ՝ "Նախնիք իմ Պան-
դուք, որոց էր գիտել զանցեալն և զապառ-
նին, գիտել զՀոլովումն բաղմին, զունայ-
նութիւն աշխարհի, և զկարճութիւն կենաց,
ընդէ՞ր մեզ ոչ համաշխարհական պատե-

բազմն զայն, զմեծ և զարհուրելի. և զուր ի զուր կորուսին զայնքան բազմութիւն մարդկան։ " Պատասխանեաց գէտն արքայական. " Թէ զոր երկինք վճռեցին՝ անմարթ է՛ր անցանել։ " Ասէ արքայ. " Ի կամս ազատութեան նոցա է՛ր առնել զայդ, կամ ոչ. ընդէ՞ր յետս ոչ ջոքան։ " Պատասխանեաց Վեսս. " Զխորհուրդս Թագաւորի ոչ ոք քննէ. իսկ զԱստուածոյն ով ժպրհիցի։ Այլ վասն բանիցդ այդոցիկ՝ յայտնի լեցի քեզ արքայ. զի անկանելոց ես դու ի մեղս մեծամեծս. տհա՛ յառաջագոյն ասացի զգուշանալ, եթէ կարող ինչ իցես։ Վաճառական ոք բերիցի քեզ էշ գեղեցիկ, յոր չէ՞ պարտ քեզ հայել։ Եթէ հայիցես, չգնել։ Եթէ գնիցես, չհեծուլ ի նա։ Եթէ հեծանիցես՝ վարեալ գքեզ իշոյն հանցէ յանապատ ուրեք. ուր պատահէ քեզ կին մի գեղեցիկ տեսլեամբ յոյժ յոյժ։ Զգոյշ լե՛ր ընայիլ ի նա. եթէ նայիցիս՝ չսիրահարիլ ընդ նմա. եթէ սիրահարիցիս՝ չամուսնանալ. եթէ ամուսնացիս՝ մի՛ ածեր զնա ի տուն քո. և եթէ ածցես՝ մի՛ մտաներ ընդ հրամանաւ նորա։ " Եւ որպէս ասացն կատարեցաւ։ Քանզի տեսեալ արքայի զկինն անհամեմատ գեղեցկութեամբ՝ ոչ միայն ամուսնացաւ, այլ և ածեալ ի տուն իւր՝ կարգեաց զնա դժխոյից դժխոյ, և պարտանդե-

ցաւ ստրուկ ամենայն ակնարկութեանց նորա։ Ապա արար կոչունս խրախութեան բարեմանաց, և բազմութեան անապատաւորաց և աղքատաց, եդ առաջի նոցա սեղան մեծահաց հանդերձանաց։ Իբրև զուարճանայր ի գինւոջ սրբամանէիցն երախան պշարեալ յաւերժահարսին անապատի զիրեաս իւր սնգուրաւ, օծեալ զանձն իւղովք անուշիւք, ոսկեհունն զարդարեալ պաճուճանօք, մարգարտեայ ծամակալօք, և ականակուռ ապարանջանօք և սռնապանօք՝ եւ բազմութեամբ նաժշտաց իւրոց յանդիման բազմականին, և պարզեաց զբաղուկս իւր ի պար նազելի. ընդ որ հիացեալ քրմաց և ամենայն կոչնականացն, թողին զկերակուրն առաջի, և յապուշ կրթեցան ի տես գերողին սրտից։ Զայս տեսեալ արքայի, լցաւ ցասմամբ, և քարշեալ զսուրն մեծ՝ զամենեսին սրախողխող կոտորեաց, "զի ապերախտեալ հացիս տէր, կնոջ իմում ցանկացան։"

Իբրեւ լրջացաւ շուայտացեալն յաւէտ ի գեղոյ քան թէ ի գինւոյ՝ ստրջացաւ յոյժ յարարս իւր, և փակեալ զինքն ի սենեակ ինչ առանձին՝ եւ լաց դառնապես։ Այլ ապաշաւն անագան շահեցաւ նմա ոչ ինչ։ Ցայն ժամ երևեալ կրկին անգամ Վիասայ, յանդիմանեաց զարքայ, և ուսոյց ողորմու-

թեամբ քաւութիւն մեղաց առնել։ Վասն որոյ զմեծ մասն գանձուց յաղքատս սփռեաց, և զԲիշմբայի զաշակերտ Վիատայ ի վարձու կալաւ ընթեռնուլ զՄահաբհարաթ որով սրբեցան ամենայն յանցանք նորա։ Եւ ծանուցին աշխարհի զգիրն զայն իբրև սրբբազան գործի քաւութեան մեղաց։ Ամք կենաց սորա անյայտ, թէպէտև Պարսից պատմագանք հասուցանեն 377։ Սիվակա, և Խմիջայ զամն 80. Ռաջէնտրա զամն 45. յաւուրս սորա միահեծան տէրութիւն Հուստինափուռայ բաժանեցաւ ի բազմագլուխ փոքրիկ իշխանութիւնս։ Արքայն Մաղատայ որ թուի ցայս վայր ընդ Հպատակութեամբ լեալ Լուսնորդեաց Հարստութեան՝ զի ընդ պատերազմաւն մեծաւ՝ զԱւոդ խանարհեալ և Ղանոջ ամբարձեալ փոխանակ տեսաք, առանձինն թագ կապէ յիւրումն բաժնի։ Ի բաց կան յայնժամ և կողմանքն Դաքանայ, թէ և ի վերին երեսս հպատակ ձևանային։ Յետ որոյ զՍարագանդարան կենախուզ արարեալ Պուրուրա-մանթատայ՝ եբարձ ընդ նմա և զՁանդրա-վամսա կամ զԼուսնաղանցն Հարստութիւն յաթոռոյն Ինդրպուրայ, և ինքնին թագաւորեաց ընդ նմա՝ զամն 83։

Արդ Լուսնորդեաց Հարստութեան՝ քառասուն և վեց թագաւորաց մինչև ի Պան-

դուս՝ չիք ամաց ստուգութիւն: Իսկ ի Պան-
դուայ ցԽմիջայ՝ հաշուին ամք՝ 518,

ՔՐԻՇՆԵԱՆ հարստութիւն ուղի թագա-
ւորաց ի Դուարկա՝ տեւեաց ամս 599.

ՊՈՒՐՈՒ-ՄԵՆԹԱՏԵԱՆ հարստութիւն երեք-
տասան թագաւորաց ի Հուստինափուռ՝ եր-
կարեցաւ ամս իբրև 866.

ՈՂԴԵԱՆ թագաւորութիւն ի Սուքարա-
թայ ցԽէմ կալան երկոտասան թագաւորք:
Յաւուրս սորուն ժողովեալ աւագանւոյ դաշն
դնեն ընդ Բեսուրայ սպարապետի զորացն և
խոստանան թագ կապել նմա՝ եթէ դաւով
կորուսցէ զԽէմ: Իսկ նա ի դիպահոլ պատա-
հեցուցեալ զարքայն՝ մխէ զդաշոյն ի կուշտ
նորա՝ և թագաւորէ փոխանակ նորա: Որ
յաղագս յաւէրժայաղի քաջութեանց իւրոց
և արդարակորով կառավարութեանն կոչե-
ցաւ մահառաջա, որ է՝ արքայից արքայ: Էր
սա ի կողմանէ մոր՝ սերունդ աստուածախառն
արեան մեծին Քրիշնայ. որ զառաջին թա-
գաւորեաց Այովդայ: Սա մեծապէս հոգ
կալեալ արուեստից և մակացութեանց, քա-
ղաքական հրահանգօք վայելչացոյց զժողո-
վուրդ իւր: Ասի, թերևս վրիպակաւ. թէ
սա զՀնդիկս բաժանեաց ի քառեակ կարգս,
և տարածեաց զՀամբաւ բարութեանց իւրոց
յաշխարհս ամենայն: Սմա ընծային շինու-

թիւնք մեծամեծ տաճարաց և ապարանից ի տեղիս տեղիս։ Սմա յաջորդէ Բէքրատ ցԲիւրամալ երէքտասան ծննդովք, զոր կէնախուզ արարեալ եղբօր նորա Սերմայի՝ թագաւորեաց Ռվդայ փոխանակ նորա ութուտասան ծննդովք՝ մինչև ցՈվդիդ, 594. ամաք յառաջ քան զՔրիստոս։ Բեսուրբեանն հաստուութիւն Ֆագետասան թագաւորաց մինչև ցԲիւրամալ. որ վասն անառակ արքեցութեանց իւրոց և գաղանային խժութեան բառնի ի կենաց ի Սերմահայ եղբօրէ իւրմէ. որ թագաւորէ ընդ նմա ութուտասան ծննդովք. որոց ամք հաշուին մերձ 998. և ամիսք՝ երկու։

Բնաց զինչ արդեօք ցեղաբանել հասանիցէ ինձ, այնինչ առ սովին ժամանակօք ութեւտասան թագաւորութիւնք հաշուին, և անուանք մայրաքաղաքաց նոցա՝ են

1 Կոստատի. Կոստ, որ կայ յարևմտից Բանկալայ, ի հիւսիսոյ Աշամայ, յարևելից Հարաւոյ Բրմաստանի, և ի հարաւոյ Արաքանայ։ Որոյ մայրաքաղաք է Պանիփուռ, և բնակիչք նորա Պողոլուք՝ ազգ իմն խժիչ։ 2 Այոդապուրա. Աւոդ, տես յերես 33։ 3 Բարանասի. ի Բարա և ի Նասէ գետոց՝ որք խառնին ի Գանգէս։ Գաւառ և քաղաք ի հիւսիսոյ արևելից Ալլահապատայ,

ընդ մէջ Աւոդ և Բհար աշխարհաց: Ունի գաւառս երկոտասան. 1 Իլաբաղ, 2 Համդապատ, 3 Թաուհար, 4 Բէհեդ, որոյ ի հինգերորդ վիճակին՝ ի Բունդուլքան. և ի Ազթիփուռ, որ է երկիր լեռնային և անտախիտ՝ ելանեն արծաթ, ոսկի, պղինձ, երկաթ, ապակի, սաթ, կրուտ, և անդամանդ: Այլ պատուականագոյն գոհարս այս գոյանայ բազում ուրեք ի նահանգին. ի Մաքգուան՝ հասարակն: Ցամնանդպուրի՝ լաւն: Ի Կլինտիուռ, յԻթուայ՝ լաւն: Ի Մանիկփուռ, ի Ռանիփուռ, ի Բանկլա, ի Ճրիապնու, ի Ռայիպանու, ի Հիթուափուռ՝ ազնիւն: Ի Սինկուփուռ, և ի Գանդի՝ զոր յամի Տեառն 1732. եգիտ ռաջայն Ազթսալ: Իսկ ռաջա Բլուանդ յամի Տեառն 1754. եգիտ զայլ հանք պատուական գոհարիս այսորիկ, ի գիւղն Մունդա. և անհետ արար առ երկիւղին: Ելանէ և ի գիւղն որ կոչի Իպն: Գիտելի է. զի երբեակ ազգ անդամանդից ելանեն ի Ցդիկս. առաջին և պատուական տեսակն՝ որ կոչի Բրմնաչաթ՝ և կշռէ մերձ յիսուն կերատ՝ գոյանայ ի Սիվուրփուռ, ի Բավանբրար նահանգի Դաքան ցամաքակղզւոյն: Որ Թանդագին է քան զԵւրոպայն և զԱմերիկային: Երկրորդ տեսակն անուանի Բիշնուչաթ, և գոյանայ ի Հէյտարապատ.

մինչև հարիւր կերատաչափ: Երորդն կոչի Մէսչաթ, և գոյանայ ի Բունդուլքան՝ իբրև հարիւր քսան կերատաչափ: 5 Ճնագար բերթաքաղաք հզօր ի վերայ լերին բարձու, կառուցեալ ի Ցոցն կռապաշտից՝ առ ափն գետոյն Գանգէսի: 6 Զօնփուռ, 7 Ղազիփուռ, 8 Քուռաջնապատ, ուր գոյանայ շատ բոլորակ: 9 Կալինջէր, 10. Կարա, 11. Մանիկփուռ, և 12 Մահմադապատ կամ Բնարիս: Յորում և քաղաքն համանուն աթոռ բրահմանական մակացութեանց, և փափկարար արուեստից, կառուցեալ յափն Գանգիսի՝ հանդիսարան համաշխարհական վաճառականացն Հայոց. որք ջորային ճանապարհաւ գային անդանօր՝ բազմօք յառաջ քան զգիւտ Գլխոյն Բարեյուսոյ: Էր ի նմա տաճար կռոց մեծակառոյց, զոր իբրև դարու միով յառաջ՝ Ովրանկզէպ արքայն Մողալաց կործանեաց. և շինեաց մզկիթ փոխանակ նորա: Անդ կայ վիրապ անդնդային Կաշի անուանեալ, ուր մնաւ ասեն Լաշմի չաստուածուհին գեղեցկութեան ուխտատեղի մեծ ամենայն Հնդկաստանի: 4 Մադուրա, քաղաք ի համանուն գաւառի հարաւային Ցոդկաց. ընդ 17. աստիճանաւ հիւսիսային լայնութեան: 5 Հաթիփուռ, Հաբանէ՞. քաղաք մեծ ի Բիջափուռ. ընդ մէջ 16 և 59 աստիճանաց՝ հիւսիսային լայ-

նութեան: 6 Ինգրպուրա՝ Տէս էջ 71. Եւս քաղաք Ծովեղերեայ յարեւմուտս Սումատրայ կղզւոյն և ի հարաւոյ արեւմտից Բենկոլենայ ընդ 21. և 51. աստիճանօք հիւսիսային լայնութեան: 7 Կամբայ, Կամանիս Պաղամեայ՝ ի Գուջրաթ, յիսուն մղոնօք հեռի յԱհմադապատայ: Ելանեն անդ ակունքն ագեղն և ակատ. իսկ ի ձեռակերտաց կերպասիք ազգի ազգիք՝ և սազարարութիւնք զարմանալիք: 8 Ռաջագահան, նոյն որ և Ռաջմահալ յափն գանգէսի ի քանկալա. ընդ 17. աստիճանաւ հիւսիսային լայնութեան: 9 Կապիլա, 10 Եկաչակհու, 11 Վաջերապատի, 12 Արիթփուռ, 13 Կոստմբի, 14 Կանագոգչա, 15 Ռուջա, 16 Միթիլա: 17 Թակասիլա, և 18 Թամալիտ, Անյայոյ:

—ooo—

ԳԼՈՒԽ ՉՈՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Վալիէէ. Վէտա, և Մահանամա:

Երկոքին մեծամեծ և հինաւուրց դիպուածքն՝ յարձակումն Ռամայ ի Սէրան, և Պաներազին Կուրուկշեթրայ, չքնաղ ընծայեցան ի քնարս քերթողաց, որք ի լեզուս անմահից նուագեցին զարարս մահկանացուաց: Վալմիկի զառաջինն հրաշացոյց յաշխարհի

զիւրն Ռամայան, կամ նահատակութիւնս Ռամայ սկային Արևորդեաց ընդդէմ Ռա-վունայ արքային Տաբռոբանեայ: Որոյ 'ի տրիտուր անմահարար վաստակոց՝ պսակեցին զնա երախտագէտ հայրենակիցք իւր բոլորիւք՝ անթառամ ծաղկանց: Եւ վերակարգեցին զնա 'ի թիւս այնոցիկ, որոց ոչ իշխէ մահուն բռնութիւն: Սա գրեաց ասեն ընդքերթուած իւր բազմօք յառաջ քան զերաց պատահումն: Եւ մարգարէաբար գուշակ հանդերձելոցն հանդիսացաւ դիպուածոց: Բայց այս կարծիք իմն է բաղադրոյ, վասնզի ըստ արուեստին աղթարութեան, զոր նա գրով աւանդեաց՝ բազմօք զկնի Ռամայ թուի շնչել զոգ հասարակաց կենցաղոյս:

Ա. ԻԱՍ, ոչ զարքունական ասեմ գէտ, այլ որ զմահաբերարեն, կամ զպատերազմն մեծ հռչակեաց, եկաց փոքու իմն զկնի Վալմիկեայ, և զկնէ՞ զարմանք իցեն արդեօք, եթէ գովէստ Արևորդեացն 'ի նմանէ՝ վառեալ իցէ զԱ. իաս անմահացուցանել 'ի նուագս երանդեան զքաջ արարս իւրոց Լուսնորդեաց առ բաժանորդ գոլոյ փառաց իւրումն նախանձորդի, որ զաշխարհն ընդ իւրև կալեալ գրաւէր: Գրիչք Անգղեացւոց խաբեալք 'ի մերձաւորութենէ Գիշմանն և եթ՝ շփոթեցին զՅավունս ընդ Ցունացն գաղթեցելոց յԱ-

ղէքսանդրէ 'ի Բակտրիա։ Որով ժամանակագրութիւն Ցոդկաց յաջ և յահեակ խուզելով՝ զսպեցին 'ի թիւն 223. ն. ք։ 'Ի հատուածոյ խմբէ մահաբարութեայ՝ որ զպատերազմն նկարագրէ զԲրիշնայ ընդ Ցավուն ուսուրայ, Արջմէն զՑավուն ուսուրն Ցոյն իմանալով՝ իջուցանէ զՎիաս բազմաք դէնի Աղէքսանդրի։ Ընկալեալ աւանդութիւն է առ Ցոդիկս իւրաքանչիւր դարու ունիլ զիւր Վիաս. վասնորոյ և ես ոչ վիճեմ 'ի մասին այսորիկ։ Նիւթն՝ զոր 'ի գրոց ասի առի, անկատար էր և քերթողական երևակայութեան թողածոյ կրճնք։ 'Ի գրոցն Ռամայանայ և Մահաբարութեայ զառաջինն սկըսաւ կատարշաւութիւն յաշխարհին Ցոդկաց։ Որոց աշակերտեալ Արշակունեաց՝ բարձին 'ի Պարսից և 'ի մերոցն զկրակ՝ և փոխանակ մուծին զպաշտամունս կռոց։

Ասկ Մահանամա քեռի էր Դհատուսենայ որ 'ի մէջն հինգերորդ դարուն՝ թագաւորեաց 'ի Սելան։ Եւ ինքն էր թերեան կամ քահանայապետ մահավիհարային ցմեծի Ուխտին Անարատպուրայ։ Գրեաց սա զմահավանսի համառօտեալ 'ի բառիցս՝ Մահանտանսն-վանսս, Աղգաբանութեան Մէծաց։ Քանզի զմեծացն ճառէ Բուդայ, զակնաւոր աշակերտաց նոցա, զգալստենէ Բուդայ 'ի Սելան,

և զՇոմ ՇԵտիցն, որոց գլուխ եկաց Մահասամանտոն: Ճառէ և զմնցիցն՝ զորս գիտացին և յետնոց աւանդեցին երանելիքն հինաւուրց. Հանդերձ վՇիտ վիպասանութեամբ աննախանձորդ թագաւորաց առաջնոց: Զի գործ սորուն ունի միայն զգաղափար հաւատարիմ պատմութեան, զոր բազմօք լուսաւորագոյն գտի, քան զորս միանգամայն առ ի Ցոց ընթերցայ մատեանս ի վերայ Ցոդկաց: Քանզի կարի ՇիշդՇ ընթանայ ժամանակագրութեամբ. մինչև զամիս և զօրն նշանակել որոշակի: Ուստի և զսա կալայ ինձ յառաջնորդ՝ ցորչափ զնոցն ուղի ընթանայր, զոր և եան ընթանայի: Եւ երանի թէ մահվանային սորա լեալ էր սոսկ պատմութիւն Հնդկաստանեայց, քան եթէ եկեղեցական անցից տեսութիւն կրօնից Բուդայ:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԻՆ

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ.

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Թագաւորութիւն Ռէմֆաստարայ. Ծնունդ և վարք Գովշատայ Ռուզպայ:

Իբրեւ վեցհարիւր երեք ամաք ն. ք. Թագաւորեաց ի Սաղադա Բիմբասար Բհադիսայ որդի, ի Ցիգետասանեւորդի ամի հասակի իւրում. և յերկրորդ ամի Թագաւորութեանն՝ ծնանի վարդապետն աստուածային Գովշատ բուդ ի տանէ սնտի Սոդհոդանայ, որ էր յազգէ Սահասամնատուայ վերագունեն ի զարմն ամենայն Թագաւորութեաց աշխարհին Հնդկաց: Որոյ հասեալ յարբունս իւր՝ եմուտ ի կարգս կրթութեան, զի ընկալցի զծայրագոյն բուդութիւն, և փրկեսցէ զորդիս մարդկան յապականութենէ մեղաց:

Եւ եկեալ ի Սաղադայ ի Բարնասի, քարոզեաց զգերազանցութիւն հաւատոց

իւրոց. և տուեալ զարքեպս (ազատութիւն կրից.) իբրև վաթանից յաշակիրտացն իւրոց՝ առաքեաց զնոսա ի քարոզութիւն. և գնաց ինքն Յերուսաղեմայ, ի գաւառս Հիմալեան լերանց, դարձուցանել ի հաւատ իւր զԱսասպն, և զՀազար Ջատալիանս ի սեբան: Որ էր յանժամ բնակարան Ցեակուաց որ է՝ մարդկան անհաւատից՝ կամ գիւաց, զորս և հրաշիւք հալածեաց ի կղզին Գիրի:

Ի Վեցերորդ ամի բուդութեան իւրոյ՝ լուեալ սորա թէ՝ պատերազմ սաստիկ լինէր ընդ մէջ Աահոդարայ, և Զորդարայ քեռւոյ նորա վասն ականակապն ութոռոյ, չոքաւ ի Նագադիպ. որ էր երկիր Նագեան թագաւորութեան. 500, յոճմնա տարածութեամբ, շրջապատեալ ովկիանոսիւ: Վասն զի Աահոդորայ էր քոյր Կիդաբիկա անուն, զոր տուեալ ի կնութիւն միւս նագայ թագաւորի Կանտվաթամանայ լերին, օժտի աղաղաւ շնորհեալ էր նմա զաթոռն ականակապ ի հանուոյ նորա. որոյ վասն հանդերձէր պատերազմն ահագին: Իսկ գովտամայ հասեալ անդանօր կոչէ զկաւար թանձրամած ի վերայ զօրաց նոցա, յորմէ զահիհարեալ նագաց աղաղակ բառնան. և փրկիչն աշխարհի գթացեալ ի նոսա՝ վերատին կոչէ զլոյս: Որով տեսեալ նոցա զաստուած մարդացեալ՝

երկրպագանեն նմա. և նա քարոզէ նոցա զպատուիրան հաշտութեան: Ուստի համաձայնեալ երկոցուն կողմանց տան նմա զաթոռն ականակապ: Յոր բազմեալ և՛ շնորհեաց քաւութիւն անթիւ բազմութեան, այո՛ և փրկութիւնն ի հաւատոց:

ԳՈՒՑ անդանօր և Մանիակիկոն նագեան արքայ Կալիանայ. և ունկնդիր քարոզութեաց առ ի բուդհայ՝ ընդունի զվիճակ քաւութեան մեղաց: Տայ նագեանց զաթոռն ականակապ, և զծառն զիւր սիրելի զուաքայատա, դառնայ անտուստ ի դրախտն Ջեղուս:

ԶԿՆԻ երից ամաց գայ արքայն Կալիանայ և հայցէ զայցելութիւն գովտամայ ի քաղաք տէրութեան իւրոյ. ուր քարոզեալ նորա ըզփրկութիւն ի հաւատոց՝ սրանայ յօդս. և ի լերին Սումանակոթայ տպեալ զդրոշմ ոտիցն՝ անցանէ ի Դիղապատի: Եւ անտի ընդ օդս թռուցեալ գայ ի Մեղավանա՝ որ ի կղզին սելանայ: Բայց առ բարւոք հասկանալոյ իմոց վերծանողաց զսորհուրդ և յայտնութիւնս բուդհան աղանդոյ՝ ոչ առելորդ վարկանիմ մատուցանել նոցա զհամառօտութիւն քսան և չորից բուդհաց. որք զանազան ժամանակօք երևեցան աշխարհի. և թէ գովտամ ո՞վ ոք էր յայտմ կամ յայնմ վերածնութեան իւրում:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Քանի՞ է չորս Խուրբ. և Գովհամ:

Արդ՝ բուդեանք զժամանակս ի կապոնս բաժանեն, և յիւրաքանչիւր Կապոնի երևեցուցանեն զմի կամ աւելի բուդս: Յերէքոպոսոնէրորդ Վերոցնու�եան, որ Մարամանդուս կապոն, յայտնեցան ասէ բուդք չորք. յորոց վերջին էր Դիպանկարոն՝ առաջին քան և չորից. որ ծնաւ ի Ռամավանտինագար, անուն հօր նորա Սուդդէվա, և անուն մօրն՝ Սումդհադէվի: Սա եհաս ի ծայրագոյն բուդդուԹիւն յԱրաւելա. որ այժմ Բուդդղիա կոչի: Իսկ գովհամ յայնժամ, անդամ էր տան երևելի բրահմանին Ամարավատինագարայ: Ի հեպտոնէրորդ Վերոցնուբեան, սարկապոն. երկրորդ բուդ էր Կանդանոն, որ ծնաւ ի Ռամավանտինագար. ի հօրէ Սունանդայ ռաջա անուն, և ի մօրէ՝ Սուջատադէվի: Եւ էր գովհամ յայնժամ Վիջիտավի, աշխարհակալ արքայ Ջանդավատինագարայն Մաջհիմադէսայ: Ի պոնէրորդ Վերոցնուբեան, Մարամանդաջապոն կոչելոյ՝ երևեցան չորս բուդք: Երորդ Մանդալոն, որ ծնաւ յՕտարանագար, ի Մաջիմադէսա. անուն հօր նորա Ուտարա-ռաջա, և մօրն՝

Ուտարադէվի։ Իսկ գովտամ առ սովաւ՝ էր բրահմանն Սրուքի անուն ի գիւղն Սոիբրահմանի։ Զորորդ Սոմանն, որ ծնաւ ի Սակալանգարան, որդի Սոտասանայ և Սոիմադիվեայ։ Իսկ գովտամ առ նովաւ՝ Թագաւոր Նագաց։ Հինգերորդ Ռէվատն, ի Սթանավատինագար, Վիսուլայ արքայի և Վիսուլադեվեայ ծնունդ. առ որով գովտամ բրահման վիտայագէտ ի Ռամանտինագար։ Վեցերորդ՝ Սուբհիտն, որ ծնաւ ի Սոտամմանագար, ի ծնողաց՝ որք յանուն քաղաքին ճանաչէին։ Իսկ գովտամ յայնժամ Սուքատն անուն՝ բրահմանն ի Ռամավանտի։ Յեննէրորդ Վերաձնուրեան Վերապատն կոչեցելոյ՝ երևեցան բուդք երեք։ Եօթներորդ՝ Անոմադէսի, որ ծնաւ ի Զանտավատինագար՝ անուն հօր նորա Յասավուրաքա, և մօրն՝ Յասուդարատադէվի։ Իսկ գովտամ յայնժամ Թագաւոր էր Յեակհայից, այսինքն դիւաց։ Ութերորդ Պադում. որ ծնաւ ի Զանտավատինագար, որոյ ծնողք Ասամ մահարաքա, և Ասամադէվի։ Իսկ գովտամ յայնժամ, էր առիւծ Թագաւորն գազանաց։ Իններորդ Նարադ, որ ծնաւ ի Դամավանտինագար, անուն ծնողաց նորա Սուդէհօ մահարաք. և Անոպամադէվի։ Իսկ գովտամ Տաղաս ոմն յերկրին Հիմա-

վանտայ: ՅոՒԷրորդ ՎերոյնոՒԲեան՝ Պորթ-
ֆոլոն, յայտնեցաւ բուդ մի, տասներորդն
Բուդմաթարան. որ ծնաւն 'ի Հասավան-
տինագար. յԱնուրալ-ռաջ հօրէ, և 'ի
Սուլջատադէվի մօրէ: Իսկ գովտամ առ
սովաւ էր աստանդիկն Ջատիլօ անուն:
Յեօթնեերորդ ՎերոյնոՒԲեան՝ Մանդրոֆոլոն. յայտ-
նեցան երկու Բուդք: Մեռասանեերորդ
Սամէդոն, որ ծնաւ 'ի Ստասանագար՝ 'ի
ծնողաց յանուն քաղաքին կոչեցելոց: Իսկ
Գովտամ յայնժամ բնակիչ ոմն էր քաղաքին
այնորիկ՝ Ուտարօ անուն: Երկոտասանե-
րորդ Սուլջատա, որ ծնաւ 'ի Սմանգալանագար
անուն հօր նորա Ռգատու ռաջ, իսկ մօրն՝
Պուպպավատիդէվի: Առ որովք Գովտամ
Ջակավատի ռաջա ոմն էր. այսինքն աշ-
խարհակալ թագաւոր: 'Ի Վեցերորդ Վերոյն-
ոՒԲեան՝ Ռոթրոֆոլոն. յայտնեցան Բուդք ե-
ռեք: Յորոց երեքտասանեերորդ՝ Պիադասի
որ ծնաւ 'ի Ուտանագար, 'ի հօրէ Սագարա
անուն, և 'ի մօրէ՝ Սուտասանագէվի: Իսկ
Գովտամ առ սոքօք՝ բրամանն էր Կասապն
անուն 'ի գիւղն Սիրիվաթանագար: Ջորեք-
տասանեերորդ՝ Աթադասի, որ ծնաւ 'ի Սո-
նանագար, անուն հօր նորա Սագարա, և ա-
նուն մօր նորա՝ Ստասանադէվի: Իսկ Գով-
տամ բրահմանն էր յայնժամ Սոսիմօ անուն:

Հնգետասանեերորդ՝ Դամասդասի, որ ծնաւ 'ի Սուրանագար. անուն հօր նորա Սուրանա մահա-ռաքա, և անուն մօր նորա Սունանդադէվի: Իսկ Գովտամ՝ Սակկո, գլուխ Դեթայից: 'Ի հինգերորդ վերածնուրեան Մորաքոպոն. յայտնեցաւ բուդ մի վեշտասանեերորդն Սիդհատա. ծնեալ 'ի Վիսկարանագար, անուն ծնողաց նորա՝ Ոդենի մահարաջ. և Սուփասադէվի: Իսկ Գովտամ յայնժամ բրահմանն էր Մանգալն անուն: 'Ի չորրորդ վերածնուրեան՝ Մանդաքոպոն. երկու. յորոց եօթնեւտասանեերորդ՝ Տիսա ծնեալ 'ի Խեմանագար, 'ի հօրէ՝ Յանասանգա անուն, և 'ի մօրէ՝ Պադմադէվի: Գովտամ էր յանժամ Սուքատն արքայ Յասավատինագարայ: Ութեւտասանեերորդ Փուսան. որ ծնաւ 'ի Կասի, Ջայասենայ-ռաքայ և 'ի Սիմէյա-դեվեայ որդի: Իսկ գովտամ Վիջիտավի թագաւոր ոմն: Յերորդ վերածնուրեան՝ Մորաքոպոն անուանեալոյ յայտնեցաւ բուդ մի. իններեւտասանեերորդն Վիպասի. ծնեալ 'ի Բանդուվատիգար. 'ի ծնողաց յանուն քաղաքին ծանուցեալոց: Իսկ գովտամ էր յայնժամ Ատուղն արքայ: Վերջին վերածնուրեան Մանդաքոպոն կոչեցեալ երեւեցոյց զերկուս բուդս. յորոց քսանեերորդն Սիկհի, ծնեալ յԱրունավատինագար, անուն հօր նորա Արունա-

վատի-ռաքա, և անուն մօրն՝ Պարիվատի-դէվի: Իսկ գովտամ յայնժամ էր Արինդանս արքային Պարիբուտանագարայ: Քսան և միերորդ՝ Վեսաբօ. ծնեալ յԱնուպամանագար, ի Սուպալիթռաքը հօրէ և ի Յասավատիդէվեայ մօրէ: Իսկ Գովտամ յայնժամ արքային էր Սարապավատինագարայ Սադասան անուն:

Ա.դրեան Վերոնենոբէն կոչի Մանոբադրա-խոդն Ցոգից բուդաց: Քսանևերկուերորդ Կակուսանդօն, ծնեալ ի Խէմավատինագար, Ագգիտաթեայ բրահմանի. և Վիսակայ մօր որդի: Իսկ գովտամ էր նախասացեալ արքային Խէմարաջ: Քսանևերեքերորդ Կոնագամանօն, ծնեալ ի Սոբավատինագար. անուանք ծնողաց նորա Յանանդաթն բրահմանն և Ոտարա: Իսկ գովտամ էր Պաքատոռաքա. այսինքն (լեռնային արքայ) կողմանց Միթիլայ: Քսան և չորսերորդ Կասապոն. ծնեալ ի Բարանասինագարա, հայր նորա Բրահմադատ բրահմանն, և մայրն՝ Դանավատի: Իսկ գովտամ բրահմանն էր ի վաղուցս Ջոդիպալօն անուն: Եւ այսպէս մարմնոց ի մարմին հոլովելով սորա՝ ծնաւ ի վերջոյ Բուդ դարուս այսորիկ: Յետոյոյ երևելոց է Միտէյան. ի ինուլ գիթիւ արդեան Մահաբադակապոնի:

Արդ բուդեան խմանան հետևողք նորա զգերագոյն Էակն, որ զերծ յամենայն անկատարութեանց, և լցեալ ամենայն ծայրագոյն բարեօք՝ զուարճանայ յանձն իւր յերջանկութիւն արարածոց իւրոց: Գլխաւոր յատկութիւնք նորա են՝ ինքնեղութիւն, արարչութիւն, և յաւիտենականութիւն իւր: Ցանցանել ժամանակաց ի բազում աղանդս հերձաւ վարդապետութիւն բուդայ: Առաջին կոչէր Ռահուլա, յանուանէ աղանդապետին՝ որ որդի էր Սակիայ. բաժանեալ ի քառեակ կարգս: Որք կարգային զՊոՒրայսինքն աղօթքն յաղատութիւն հոգւոյն ի զգայական կրից: Ընդունէին զգոյութիւն ամենայն էակաց, և կրէին ի կրկնոցս իւրեանց՝ երիզս կապուց քսան և հինգ թուով: Եւ նշանակ յատկարար նոցա՝ Ռապալ-պոդմա. որ էր հիւս նունուֆարի յեռեալ ի ձև ուլանց պարանոցի: Երկրորդին աղանդապետ եկաց Կասիապն յազգէ բրահմանաց: Եւ ի վեց կարգս բաժանեաց զհետևողսն իւր, որ փաղանուանաբար կոչէին Ժողովմէծ: Սաքա կարգային զՊոՒրայն, այլ ի բարբառ ենչ խառնաձայն: Եւ կրէին ի կրկնոցի երիզս քսան և երեք թուով: Իսկ նշան յատկութեան նոցա՝ խեցի ի մեն ծովային: Ռապալ յազգէ Սուդրայից հաստեաց իւր զերորդ դպրոց,

բաժանեաց զիւրն յերիս դասակարգութիւնս, կարգաց ղոռոպրոյն յազատութիւն հոգւոյն ի զգայական կրից. այլ բարբառով Պելուէիոց. այսինքն մարդակերաց. կրեաց ի կրկնոց իւրում երիցս քսան և մի. և նշան յատկացոյց ինքեան զծաղկին Որդէիս: Դպրոց սորա կոչեցաւ "պատուեալ ի բազմաց:"

Զորորդին հիմնադիր եկաց Կատիայանայ յազգէ Վայշուաց. որ յերիս կարգս բաժանեաց զաշակերտս իւր, և կարգաց ղոռոպրոյն յազատութիւն հոգւոյն ի զգայական կրից՝ յաշխարհիկ բարքառ: Կրէր ի կրկնոց իւրում երիցս քսան և մի. և նշան յատկութեան դպրոցի ունէր զձև ինչ անուոյ: Կոչէին սոքա Դոռ Հոռոռնոբենէիս: Որով երևի, զի այլք աստանդական կեանս վարէին: Ի վերոյ գրելոց ասի երևի դարձեալ՝ զի քահանայութիւն առ բուդդեանս՝ ոչ էր ամիսոփեալ ի մանաւոր ինչ ցեղ որպէս բրահմանութիւն ի Ֆոդիկս, այլ յամենայն ազգաց և ի լեզուաց ընտրէին քահանայք:

Ի Վերոց գրեալ դպրոցաց ասի քաղել կարէ ուշադիր ընթերցողն, թէ երեք իցեն գլխաւոր սկզբունք բուդդայական աղանդոց: Որք են նախ՝ թէ Ռամկական մտաց բաւական է միայն հաւատալ ի գոյութիւն Աստուծոյ, ի կեանս հանդերձելոց, և ի նմա

զպսակն կամ զպատիժ ընդ գործոց իւրեանց, զորս յաստիս գործեցին :

2. ՄԻԶԻՆ աստիճանի իմացական և բարոյական էակաց, բաց յերից անտի առաջնոցն, աւանդին գիտել և զայս, թէ ամենայն նիւթ բաղադրեալ ապականելի է, թէ չիք յէս բնաւ կատարելութիւն, թէ ամենայն անկատարութիւն է ցաւ, և տգիտութիւն ի ցաւոց աստի, կամ լուծումն ի մարմնոյ՝ իցէ ծայրագոյն երջանկութիւն :

3. ԾԵՐԵԳՈՑՆ աստիճանի իմացական էակաց, բաց ի մասանց վերոյ գրեալ պատգամաց, աւանդին գիտել, " զի ի մարմնոյ կամ ի ստորին նիւթոյ անտի ցգերագոյն Հոգին, չիք՝ որ կայցէ ընդ ինքեան, կամ որ մշանջենաւորել կարիցէ, կամ բացարձակապէս դադարիլ. այլ ամենայն ինչ ունի զկախումն, կամ պատահական իմն միաւորութիւն կամ աղխաղխումն :

ԻՍԿ ըստ գործնական մասին մակացութեան, Ռամկաց աւանդի միայն կատարումն տասնեքին առաքինութեանց. որք են, 1. գնալ զճանապարհ ուղիղ, և ցուցանել ընկերին զայն : 2. Ակնածել մեծաւորաց, և խնամովն ուսուցանել զաշակերտս : 3. Սիրտ խօսիլ զճշմարիտն : 2. Սերժել ի ներքուստ զնախանձ, զատելութիւն, զբարկութիւն և զա-

մենայն չար ցանկութիւն, և արտաքուստ վարիլ մաքրութեամբ: 5. Հրաժարիլ յամենայն վատթար վարուց: 6. Համբերութեամբ տանիլ ամենայն նեղութեանց, զօրէն երկրի: 7. Արտաքին և ներքին պատառ առնել, այսինքն զկիրս մեռուցանել: 8. Ի բաց լքանել զհամակրութիւն սերի ընդ սերի, գործով, բանիւ. և մտօք: 9. Հրաժարիլ ի խաւարէն մոլորութեան, և զհետ երթալ լուսոյ ճշմարտութեան: 10. Ըստ պատշաճի կատարել զնաւակատիս տարեկանաց, զտօնս և զայլս որ ի կարգին: Միջնոց բաց ի վերագրելոցդ, աւանդի առաւելուլ բարոյականութեամբ, խորհրդով, հանճարով և իմաստութեամբ: Վերջնոց՝ բաց յերկոցուն միանգամայն, պատուիրի յանձին բերել և ըստ վեցեսին գերագոյն առաքինութիւնան:

ՅԱՏԿՈՒԹԻՒՆ ներքին վարդապետութեան այսր աղանդոյ են ութն թուով: Ապաստան լինիլ միայն ի բուդա: Դնել ի մտի, և ջանալ հասանել ի ծայրագոյն ասպիճան կատարելութեան. որով և միանալ ընդ Գերագոյն Էակին: Անկանիլ առաջի կռոցն բուդայ, և պաշտել զնա: Պատարագս հանել նմա հաճոյականս Ցիգերին զգայարանաց. որպիսի է լոյս, ծաղիկ, պտակ հիւսեալ ի ծաղկանց, խունկ, բուրմունք անուշից. ա-

մենայն տեսակ կերպլեաց. (հում, կամ եփուն,) հանդերձանք, հագուստք եւ: Հարկանել նուագարանս, երգել զերգս օրհնութեանց. գովաբանել զբուդ յանձն և 'ի վարդապետութիւնս նորա. 'ի սէր, և յողորմութիւն նորա. 'ի կատարելութիւնս և յստորոգութիւնս նորա՝ յօգուտ ամենայն շնչոց կենդանեաց: Ուղղղ սրտիւք խոստովան լինիլ զմեղս. խնդրել զթողութիւն յանցելոց, և ուխտել այլ ևս մի՛ գործել զայնպիսիս: Խնդալ 'ի բարիս ամենայն արարածոց. և խնդրել զաղատութիւն նոցա 'ի զգայական կրից, և զվերանալ 'ի ծայրագոյնն երանութիւն: Աղօթս առնել առ բուդ, որ տակաւին յաշխարհի իցէ, անդադար հոլովել զանիւն հաւատոց. չթողուլ զսա փութով, այլ յաւիտեան կալ 'ի սմին: Իսկ վերջին վախճան կամ ծայրագոյն երանութիւնն առաջնոցն համարի՝ զերծանիլ յանամնական մարմնոց և հոգեփոխիլ 'ի մարմին մարդկային: Երկրորդաց և Երորդաց՝ զերծանիլ 'ի զգայական կրից, և 'ի մարմնոց աղցալեաց. և միանալ ընդ գերագոյն Էակին. որպէս զի՝ օժանդակ լիցին և այլոց տառապելոց, որք տակաւին յստորինս դանդաչիցին:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Թագաւորութիւն Ովդիդայ, և յարձակումն Դարեհի ի Հնդիս:

ԱՄ ԻՆՆԵՐՈՐԴ էր Թագաւորութեան Բիմբասարայ ինքնակալին Մաղադայ, յորժամ Թագաւորեաց Ովդիդ մնացորդ Բեսովրեան հարստութեան մահրատայից՝ ի Գեբար Գուզարաթայ, և բազմօք խոշտանկէր զամենայն առուս արեան հօր իւրոյ: Մի ոմն յիշխանաց անտի խոյս տայ առ Քրէյդուն արքայ պարսից, և եդեալ առաջի նորա զպատճառս զրկանաց իւրոց՝ առնու ի նմանէ զօր բազում ընդ զօրավարութեամբ Սկիւղաքսայ Կարիանդրացւոյ՝ և մարտնչի ընդ Ովդիդայ բռնացելոյն՝ զսմս տասն անընդհատ: Յերեսաց անդադար սրածութեանց ժամանակիս, երկիրն Ցոդկաց ապականեալ քանդեցաւ, հրայրեաց աճիւնացան յոլովք քաղաքաց, և ի սուր մաշեցան բնակիչք նորա, մինչև հարկեցաւ բռնաւորն ի վերջոյ տալ փախստականին այնմիկ զմասն համօրէն տերութեան իւրոյ, և հարկս հարկանել Պարսից: Յորմէ Հնդկաստան ընդ լծով անկաւ նոցա. և պատրաստեաց զիւր մենագանձ հարստութիւն, հետ զհետէ յաղթականացն ի նոցանէ:

Սոճն այս Քրէյդուն արքայ Պարսից՝ է նոյնինքն Հիտասպ, կամ Վշտասպ նախարար Պարսից 'ի Մարաց կարգեալ. որ յետ մահուն Կիւրոսի յարձակեալ 'ի վերայ Լոհրասպայ հօրն իւրոյ՝ սպան զնա, և նստաւ յաթոռն Պարսից իբրև 521 ամաք ն. ք. Եւ կոչեցաւ Արտաշէս ուշեղ. թէպէտ ոմանք վրիպակաւ յերկայնաձեռն համարին զսա: Քան զի գրէ Եւսեբիոս յաղագս երկայնաձեռին Արտաշէսի, թէ "ոմանք զԵսթեր առ սովաւ ասեն. այլ ես չառնում յանձն. զի Եզրի գիրքն՝ որ առ սովաւ չյիշէ ինչ անդ:" Զոր և մերս հաստատէ Սամուէլ երէց անեցի հետևողն Եւսեբեայ, 'ի գրելն. "Արտաշէս ուշեղ ամս ԺԲ. և առ սովաւ Եսթեր:" Քանզի առնու սա 'ի կնութիւն զերկոսին դստերս Կիւրոսի զԱտոսսէ և զԱրիսթոնէ. ապա և զԵսթեր՝ զդուստր Հօրեղբօր մուրդքէի հրէի. և ըստ վկայելոյ սուրբ գրոց (եսթ. գլ. ա. 1:) "Կալաւ 'ի Հնդկաց աշխարհէն մինչև յԵթիոպիա հարիւր քսան և եօթն գաւառս:"

ՀՐԱՄԱՆ տայ Սկիւղաքսայ կազմել զտորմիղ նաւաց յեղերս ինդոսի, և շրջել զգետեզերքն մինչև յելս սահմանաց Սկիւթիոյ: Որոյ ի-ջեալ ընդ կիրճն Բաբէլմանդելոյ 'ի Ծով կարմիր, և զամիսս երեսուն նաւարկեալ՝ ե-

հաս յեգիպտաս։ Եւ անտի անցեալ ՚ի Շօշ, եցոյց Դարեհի կամ Քրէյդունի Պարսից՝ զօրագրութիւն իւր. յորմէ իրազեկ եղեալ նորա զմեծագանձ հարստութենէ աշխարհին՝ և զարգաւանդաղող երկրին պարարտութենէ՝ ինքնին դիմեաց ՚ի վերայ՝ և տիրեաց համօրէն նահանգացն Ինդոսի։

Իսկ արքայն Սեղանայ կղզւոյն և Կուռնատա, կամ Քռնաթէք նահանգին, ժամ պատեհ համարեալ զասպատակութիւն Պարսից, նժկահիցին լծոյ Ցազանդութեան իւրեանց, որոց ՚ի վերայ յարձակեալ Բեսորայ կամ Բիսվուսայ արքային Ինդրպուրայ կամ Դիլլեայ՝ զդիմի հարաւ նոցա. ուր ՚ի մարտին անկաւ որդի նորա, ժառանգն արքայութեան. և զօրացն յաղթահարեալ յապստամբաց անտի՝ ցիրուցան եղեն։ Իսկ սպարապետ համօրէն զօրաց նորա՝ որ պահպանէր զՀիւսիսակողմն աշխարհին յերեսաց օտար թշնամեաց, դարձուցեալ զդէն իւր ՚ի Դաքան՝ նուաճեաց զնա հանդերձ ապստամբ կղզեօք ՚ի Ցազանդութիւն արքայի իւրում։ Ազգ ինչ երաժշտական երգոց, որ տակաւին խստղէ զթուլամորթս արևելից՝ ՚ի Թելենգանացւոց Դաքանայ ասի ծագեալ, յիշատնութեան Պահրաջայից։

Զ.ՑՍ այսպէս կարգեալ, արժան համա-

ըիմ Հարևանցի Ծանօթիս տալ և զպարսիկ յաղթականաց, որով և ցուցանել, թէ նոքա բազմօք յառաջ քան զՔրէյդուն յարձակեցան յայս աշխարհ. և ընդ Հարկաւ կացուցին: Կէյումարս, ո՛չ Կիւրոս մայր ըստ յունաց. այլ որդի Յեսան-աճամայ թոռին Նոյի. սկզբնահայր Փիշդադեան Հարստութեան, մեռանի ի Բահլ: Հօշանկ ընդ դեւս մարտուցեալ՝ մեռանի. Թահմուրզ որդի նորա Դիւբանդ կոչեցեալ՝ յաջորդի յերեքօրորդւոյ իւրմէ ի Ջմշիդայ, որ զՊերսուպոլիսն շինեաց. կամ Թաղթի Ջմշիդ: Զոհակ արքայ Ասորեստանեայց սպան զնա. և ինքն սպանաւ ի Կաւանայ դարբնէ Ասպահանցւոյ. և Թագաւորեաց Քրէյդուն առաջին՝ ճիւ Փիշդադեան Հարստութեան: Սա զառաջինն հեծաւ ի փիղ: Զոր ո՛չ իւիք կարէր առնել, եթէ ո՛չ յաղթութեամբն ի վերայ Ցոգկաստանի: Սմա ծնան երեք որդիք, Սեղմ, Թուր, և Իրիջ. որոց և բաժանեաց զտէրութիւն իւր: Սեղմայ հասանի մասն արևմտեան, որ յետոյ կոչեցաւ Ռում: Թուրայ՝ երկիրն յայնկոյս Ոքսոնի, որ կոչի Թուրան, և մասն ճեռնաց աշխարհին: Իսկ Իրիջայ՝ Իրան: Ասորավիպ որդի Փոշանկայ Թագաւոր Թուրանայ սպանէ զՆուզար զորդի Պանուչարայ. և ունի զտէրութիւն Իրանայ, ցԹագաւորել Կէյզուբաթայ: Որով յայտնի

երևի. թէ Սկիւթք արշաւեցին և յաշխարհն Հնդկաց: Յաւուրս Կէյքաւուզայ կրկին յարձակեցան Սկիւթք, այլ Ռոստամ Դիւստան կուսակալ Բակտրիոյ զդէմ կալաւ արշաւանաց նոցա ցաւուրս Կէյխոսրովու, յորում խսպառ յաղթահարեալ՝ սատակի Ասրավիսպ, և Սամարղանդ ընդ Բուխարայ ընդ լծով անկանի պարսկական իշխանութեան մինչև ցսա ինքն ցՔերէյդուն երկրորդ՝ կամ Արտաշէսն անուանեալ ուշեղ: Եւ յետ նորա բազումք հորդան տուեալ այսր՝ յարիւն և յաճիւն դատեցան զբնակիչս նորա:

———000———

ԳԼՈՒԽ ՉՈՐՈՐԴ

Մահ Ռէմէսարայ, յաջորդել Աշպասասպայ և հրեշտակախօսութիւն նորա առ Գոլթամ ի մասին Իշխանացն Վէրջուոյ:

Բիմբասար արքայ ի վերստասաներորդ ամի թագաւորութեան իւրոյ ընկալաւ զվարդապետութիւն Գոլտամայ բուդայ, և կացեալ այլ ևս զամս յիսուն և եօթն՝ սպանաւ յորդւոյ իւրմէ յԱշատասատայ, որ թագաւորեաց յետ նորա զամս քսան և չորս: "Ի ժամանակին, յորում Բագաւա (այսինքն բուդ) բնակէր

'ի լերին Գիրքակաթայ առ երի Ռաքագա-
հանայ՝ Աքլատասատ արքայ Սաղոդայ 'ի
Վեդիհեան սերնդոց, խորհէր զբռամբ նու-
ռաճել զիշխանս Վաքիացւոց 'ի Լիչչովեան
հարստութենէ. որոց մայրաքաղաք էր Վաքի
կամ Վասաղի, այժմեան ասեմ* Ալլահասատ:
Ուստի առաքեալ առ Վասսակարան նախա-
բար իւր մեծ՝ ասէ ցնա. "ինձ կամք են
կորուսանել զվաքիացիս, զամուրսն միաբա-
նութեամբ 'ի միջի իւրեանց, և զՀզորսն պա-
տերազմական կրթութեամբք: Արի բարհ-
մա՛ն, ուրանօր Բագաւայն իցէ, անդր երթ.
ծունր դիր առաքի նորա, և մատո՛ նմա զնոր-
հուրդս զայս յինէն կողմանէ. և զոր ինչ ա-

* Ալլահասատ կրկին է 'ի Հնդկաստան. յորոց մին սահմանի 'ի հիւսիսոյ՝ Ասուրաւ, յարևելից Բհարաւ, 'ի հարաւոյ Որիսատ և Բհարաւ, իսկ յարևմտից Մարվայիս և Ագրայիս. և անկանի առ Բնարիս նահանգաւ. Դիրքուրդա գեռ ելանէ 'ի հարաւոյ արևելից նորա, և հոսի յարևելից ընդ յարևմուտս հարաւակողման նորա, և գանգէս յարևմտից դէպ յարևելս հիւսիսակողման նորա: Ունի և զՇուանա կամ Զանա գետ, զԳուամպտի, զկարաճիատա, զԹուսի, և զկանի: Գլխաւորք 'ի քաղաքաց նահանգիս են Ալլահասատ, Կալինգեր. Զաթիփուր, Զունար, Միրզապուր, Զանփուր, և Ղազիփուր: Տես գիրք Ա. երես 92. 'ի Բառն Բարանասի: Իսկ միւսն է, զոր կառոյց Ակբար Թագաւորն Մողոլաց 'ի խառնուրդս Զանայ գետոյ 'ի Գանգէս, ընդ 25. և 17. աստիճանօք հիւսիսային լայնութեան: Որոյ 'ի միջնաբերդին է սիւն կճեայ բարձր, Սանսկրիտ և Պարսկական արձանագրութեամբ, յորոց վերջինն պատմէ զանցս շինութեան միջնաբերդին յԱկբարայ:

սիցէ նա բան՝ բեր առիս, զի Թագաւորութիւն
ոչ խօսի զսուտ։" Եւ նոքա բարեհմանն նա-
խարար, և ուր Գիրքարութիւն էր լեառն ի
Ռաքիրաշան, անդր փուխեայ առ Բագաւան.
և մատուցանէ նմա ընդ մեծարանաց արքայի
տեառն իւրոյ և զպատգամն նորա։ "Տէր
Գովտամ. Աքատասատ արքայ Արաղադայ
ի վերդիհեան գարմէ, ունի ի մտի ընդ
բռամբ ածել զիշխանս Վաքիանցւոց և իսպառ
կորուսանել զնոսա։" Զայսու ժամանակաւ
ի Թիկանց կայր Բագաւայ երանելին Անան-
դօ, և հովահարէր զնա։ Առ որ դարձու-
ցեալ զբանն ասաց։ "Լուեալ իցես Անան-
դօ, զի Վաքիանք միշտ ի ժողով գումարին,
և մեծ բազմութիւն նոցա խորհին ի միա-
սին։" Ասէ ցնա Անանդօ, "այո տէր։"
Յորչափ միաբան գնան Վաքիանք, ասէ Գով-
տամ ցԱնանդօ, ոչ ոք կարէ ստանանել նոցա։
Հարցանէ ապա, "գիտիցես. զի Վաքիանք
նստին միաբանութեամբ և յառնեն միաբա-
նութեամբ։ Զի ոչ ընդունին զոր յառաջ
ոչ եղև, և ոչ մերժեն զոր ինչ յառաջն հաս-
տատեցաւ։ Զի յարգեն նոքա զիշխանս
իւրեանց, և Ցուազանդին պատուիրանաց նոցա։
Զի ոչ թոյլ տան իշխանաց բռնի շոպել ըզ-
կանայս և զդստերս իւրեանց։ Զի զառաջ-
նահաստատ պատարագս և պաշտամունս ան-

վիճար ունին։ զի * արդարութեամբ և իրաւամբ դատին։ որպէս զի ամենայն փախստեայք կրկին դարձցին ի բնակութիւնս իւրեանց, և խաղաղասէր կենօք վարեսցեն զկիրեանս իւրեանց։" Որոց մի առ մի զամէնն պատասխանեալ Անանդոյի։ դարձուցանէ Բագաւան զդէմս իւր առ Վասակարոն և ասէ։ "բրահմին։ յորժամ բնակէի ես ի Վասալի, ետուս նոցա զեօթին վերոյ գրեալ պատգամն յաւիտենականս։ և ցորչափ անսասան պահիցեն Վաքիացիք զնոսա, ոչ ոք կարէ ստանալ նոցա, այլ գնալով գնասցեն և զօրասցին յաւրարս իւրեանց։" Յայնժամ ասէ ցնա նախարարն Սաղադայ, որովհետև Վաքիացիք զօրանալով զօրանալոց են, չիք ինչ մեզ այսուհետև այլ յոյս, եթէ ոչ կամ պատարագաւ հաշտել զերեսս նոցա, և կամ բաղտի պատերազմին ակնունել։" Զայս ասացեալ

* Ամենաթեթև այսպէս զրէ յաղագս իրաւաբանութեան սոցա։ թէ "ի հնումն զայր մեղաւոր յանդիման կացուցեալ դատաւորին, ասէին "այս այս մահապարտ է, բարձ զսա։" Որ իբրև քննէր և տեսանէր թէ անպարտ է, արձակէր ի բաց։ իսկ թէ ոչ առանց վէճիս հատանելոյ ի վերայ առաքէր առ Աշխարհիկայս, կամ յոբենագէտս իւրեանց։ Նոքա ևս փուրչիչ արարեալ արձակէին եթէ անմեղ ոք էր, իսկ թէ ոչ առաքէին յատեան Սուտարաց։ Նոքա ևս ըստ առաջնոց եթէ անմեղ գտանէին զնա, Թողուին ազատ ի կամս իւր։ իսկ թէ ոչ հանէին յատեան Ամենակալաց, զոր կացուցանէին ուրեմն անձինք յուրեքեանց ցեղից ընտրեալք որք բնակէին ընդ նովին իշխանութեամբ։ Որ յետ զգուշութեամբ

դարձաւ և պատմեաց Արքայի իւրում, զոր ինչ միանգամ անցք եղեն ընդ Գովտամայ։ Տարակոյս կալաւ զնա, թէ զիարդ կարիցէ հաշտել զերեսս Վիշչավեանց փղոք կամ ձիովք։ Բայց նախարարն խորամանկ խօսեցաւ ընդ նմա այսպէս, " Արքայ յաւիտեան կա՛ց, ի վաղիւ անդր, յորժամ յանդիման լիցին աւագանին, և խորհրդականք արքայի, բան ի մէջ առ զՎիջիացւոց, և ես ընդ կեղծ ասացից յայնժամ թէ զի՞ կայ մեզ և ընդ նոսա. տեարք են կալուածոց, թող վայելեսցեն։ Յաւելից ապա առաքել և ընծայս նոցա. բայց դու ինդբակս զինի արձակեալ կա՛ք քեզ զայնոսիկ և զիս ինքն պատուհասեալ գանիւք փետեա՛ ի բաց զգիսակս հերաց իմոց, և արձակեա նախատանօք յերեսաց քոց։ Զայս ամենայն առ ի քէն ընկալեալ՝ դիմեցից ի Վասալի. և զի՝ նոքա քաջ գիտեն

վիրան քննելոյ զառաջիւաւ կացուցանէին նախարարին մեծի. և նա փոխարքային, և նա Արքայի. որ եթէ անմեղ տեսանէր, արձակէր. իսկ թէ օչ, մատնէր գրոց օրինաց։ Յորում հաստատեալ յանցանաց նորա զպատիժն գտեալ՝ մատուցանէին Արքայի. և նա ուղղութեամբ կշռելով զդատակնիքն ընդ յանցանաց՝ վճիռ հատանէր։ Արդ՝ խօսիցին այլք որպէս և կամին, տակաւին այս կարգ իրաւաբանութեան առ Նախնի Վիրիացիս, բազմօք անցանէ քան զարգեան պետութեանց զկարգ և կանոն։ Սնամեղն չունի արգել ազատութեան նաև յառաջին կարգէ իրաւաբարացն. ուր մեղապարտն անցանէ յատենից յատեան, թերևս արդարութեան ինչ մարթասցի հանդիպել։

թէ ես իցեմ նեցուկ ամրութեանն Աղա-
ղադայ, և ի պատճառս իւրեանց անարգեալ
դիմեմ առ ինքեանս՝ լուիցեն զսրոց ինչ և ա-
սացիս նոցա: Եւ յորժամ զմիաբանութիւն
նոցա Ցարիւք երկպառակեցից, յայնժամ
ազգ արարիս քեզ գալ և տիրել աշխարհին:
Հանոյ թուեցաւ բանն արքայի. և ջրքաւ
Վասակարօն ի Վասալի: Իրազեկ եղեալ Վա-
ջիացւոց զգալստենէն՝ կէսք խորհեցան չտալ
նմա անց ընդ գետն մեծ ընդ Յուռմայ: Կէսք
հակառակեալ ասեն, ի մեր սակս անարգե-
ցաւ այրն պատուական. վասնորոյ պարտէ
մեզ հիւրասէր լինիլ առ նա: Եւ այսպէս
առեալ զնա ի ներքս. հարցանեն թէ զինչ
պաշտօն էր քոյ ի Աղաղադա: Ասէ ցնոսա.
նախարար իրաւասաց: Զգոյն պաշտօն կալ-
ցես արդ ի միջի մերում: Եւ այսպէս ամ-
բարձեալ նորա ի նախապատիւ բարձ թշնա-
մեաց իւրոց՝ յաւուր միում կոչէ առինքն զմի
յաւագանւոյ նոցա. և խորհրդաբար բանսար-
կէ նմա. "Աշակք ձեր գործեն՞ զերկիր:"
պատասխանէ Աւագն՝ այո: Լծով եղանց՞:
Այո. և ահա մտանէ առ նա այլ իշխան Լիչ-
ջավի և հարցանէ ցնա թէ զինչ՞ խորհէր
բրահման ընդ քեզ. և նա պատմէ նմա:
Ոչ հաւատացեալ եթէ խօսք այսքան ինչին
բղխիցի ի բերանոյ բրահմանին՝ խոժոռեալ

յընկերէ իւրմէ. և մեկնի ի բաց: Յայլում պահու գաղտաբար մտեալ առ այլ ոմն յաւագաց՝ հարցանէ ցնա, "Որպիսի՞ կարէաւ ուտես դու զորիզ:" Ասէ ի Լիչավեանց հարցանէ ցընկեր իւր թէ զինչ՞ ասաց բրահմանն. և նա ասէ. "հարց ցիս, թէ որով կարէաւ ուտիցեմ զորիզ:" Անաւօտ իմն վարկուցեալ զբանն՝ մարտնչի ընդ ընկերին, թէ զիարդ՞ ծածկես յինէն զգաղտնիս նորա. և զայրացեալ հեռանայ ի նմանէ: Հարցանէ ցսա. "արդարև՞ մուրացիկ իցես դու. և ցնա երթէ կնամարդի՞ ոք. և ի հարցանել նոցա զպատճառսն. ասէր զի այս և այն ոք ի ձերոց՝ այդպէս պատմեաց ինձ:" Եւ ահա սովին միջոցաք զամս երիս անընդհատ աշխատ եղեալ՝ սերմանեաց ի նոսա զժանտախտն երկպառակութեան. և աղդ արար արքայի իւրում Աքատասատայ՝ գալ և տիրել աշխարհին: Հնչէ փող պատերազմին ի փողոցս վասաղեայ թէ ահա էանց արքայն Պաղադայ ընդ գետ. և Վաքիացւոցն պատասխանի տուեալ ասեն, "մեք աղքատք եմք և մուրացիկք, թո՛ղ սրոց կարողքն իցեն վարձեսցեն իւրեանց զօրականս ի պատերազմ:" Հնչէ միւսանգամ փողն, թէ ահա հաս ի քաղաք. և Վաքիացիքն երկպառակեալ՝ պատասխանեն: "Մեք անարիք և կանացիք. թո՛ղ քաջքն և արիք

ելցեն ընդդէմ ճակատուն: “Եւ այսպէս յորոց երբեմն ի միաբանութենէ սարսեալ զարհուրէր Աջատասատան, այժմ աներկիւղ մտեալ ի ներքս առաքիչս սփռեաց զքաղաքն երկպառակեալ: Թող հայրենաւոր ընթերցողք իմ, ի միտ առցեն զՀայաստան. և եթէ բարոյս քաղել յօրինակէս ախորժիցեն, յանձանց ի բաց մերժեսցեն զերկպառակութիւն՝ զծնող չարեաց, և զդրօշակէ միաբանական սիրոյ բուռն հարցեն անկեղծութեամբ:

Յուրբաթ ներորդ ամի թագաւորութեան Աջատասատայ մեռանի Գոլտամ, իբրև 543. ամաւք Ն. Ք. յորմէ և սկսանի Բոդիանպարն Գոլտամայ, որ ձգի ցաւուրս մեր: Իսկ Աջատասատայ երկարեալ ի թագաւորութեան իւրում այլ ևս զամս երկոտասան, սպանի Յովզաբադակոնէ որդւոյ իւրմէ, և յաջորդի ի նմանէ յազգին պայազատութիւն:

—ooo—

Գլուխ Հինգերորդ

Ովզաբադակոն, Կեսրոբրա Փիրուզբա, Ինարբակոն, Յոսուանագ:

Ովզաբադակոն կենախուզ արարեալ զԱջատասատան զՀայր իւր ի քսան երորդ ամի

թագաւորութեան նորա՝ փոխանորդէ նմա ի Պարսկաց զամս վեշտասան։

Զ. ԵՏՈՒ ժամանակաւ ի խնարհիլ թագաւորութեան յազգէ Պահլաւեանց, Կեսրուրա ի նոցին սերունդոց, ի դստերէ կողմանէ՝ ամբարձաւ յաթոռն Ինդրիբատայ, և կարգեաց զերկոտասան եղբարս իւր կուսակալս նահանգաց ընդ իշխանութեամբ իւրով։ Մինչ ցսա ինքն՝ թուի թէ Սելան կղզին չէր ի սպառ նուաճեալ. վասնորոյ զօրու ծանու երեալ ի վերայ՝ գրաւեաց զնա ի Ֆաղանդութիւն իւր։

Դ. ԵՒ ԶՆ նիկահէ դաշին Ֆաղանդութեան. և Կեսրուրա առաքէ ընծայս մեծագինս առ Արտաւան արքայ պարսից, և վարձեալ զօր ի թիկունս իւր՝ խաղայ անդանօր, և ի փորձ կոտորածի և արեան նուաճեալ զաշխարհն մեծ՝ դարձուցանէ զզօրն ի պարսկաստան. 461. ն. ք.

ՓՐԿՈՎՍ ի մի ձուլէ զԱրտաւան ընդ նախահաւուն իւրոյ Հիդասպայ առաջնոյ. քանզի գրէ. "թէ յետ զբռամբ ածելոյ Սպանդիարայ զամենայն զթշնամիս հօր իւրոյ, խաղայ գնայ ի Սագաստան, ի Ֆաղանդութիւն նուաճել զարքայ նոցա զապստամբ։ Ուր ի փչել իւրում զվերջին շունչ իւր. յաջոյ քաջին Ռոստամայ՝ աւանդէ ի ձեռս

նորա զորդի իւր զԲահման, ուսուցանել զարհեստս պատերազմի: Յամբառնալ սորա ի գահոյս պարսից բրդի ի նախանձ ընդդէմ Ռոստամայ. զոր և ճարակ սրոյ տուեալ տամբ հանդերձ, ունի զերկիր նորա ի վրէժ արեան հօր իւրոյ: Այս ամենայն անցք գերեցիկս համաձայնին անցից Արտաւանայ ըստ յունական պատմչաց. որպէս և Արտաշիրն Դրաստամատ՝ ընդ Արտաշիսի երկայնաձեռին:

ՓԻՐՈՒԶԲԱ, որ նա ինքն է Պուրուշ առաջին, յաջորդէ զԿեսրուբա: Սա քաջագէտ իմաստասիրականին մակացութեանց և մեհենական պատմութեանց՝ անցուցանէ զբովանդակ կեանս իւր ի դամարճակս գրագիտաց, անփոյթ եղեալ զՀոգոց աշխարհին և զպատերազմական կրթութեանց: Ծախէ զգանձ արքունի ի պաշտամունս սնոտի դրօշելոց, շինէ մեհեանս մեծամեծս ընդ համօրէն գաւառս իւրոյ տէրութեան: Եւ այնքան ապուշ և անուրուշ տղայանայ, մինչ յարձակել անդ Թաւթարաց յաշխարհն Պարսից, յաւուրս Կէյքաւուղայ, ոչ պատեհ կալաւ անձին դարձուցանել յիշխանութիւն իւր գոնեայ զեղերս Ինդոսի. զոր լքին նախնիք իւր ի ձեռս պարսից՝ յաղագս օգնականութեան նոցա ընդդէմ ապստամբութեանն Դաքանայ: Քանզի պատմի, թէ Փանքաբ

յաւուրց անտի Կէյոզուքաղայ ընդ Իշխանութեամբ կայր ինքնակալին Հնդկաստանի, բայց յետ այնորիկ Ռոստամ Դիսգան թագաւոր Սագաստանի, յաւուրս Կէյխոսրովու, զոր ոմանք ի մի ձուլեն ընդ Կիւրոսի, և այլք ընդ Արտաւանայ՝ յարձակեցաւ զօրու ծանու ի վերայ: Իշխան կողմանցն՝ յաղգականութենէ Պուրուշայ զահի հարեալ յերեսաց նորա խոյս տայ ի լերինս Թուրհատայ, իսկ Ռոստամ կալեալ զառաջս նորա հալածական տանի զնա ի լերինսն՝ որք զՊրիսսա * ընդ Բանկալայ աղևաղևեն: Եւ փոխանակ կացուցեալ նորա զՍուրաջ զայր հզօր և հանճարեղ, բայց և յաննշան տոհմէ՝ վերագառնայ աւարօք և յաղթութեամբք յաշխարհ իւր ի Սագաստան:

* Ի ընդարձակ իմն երկիր ընդ մէջ 16· և 23· աստիճանաց հիւսիսային լայնութեան, սահմանեալ յարևելից Ծոցովն Բանկալայ, յարևմտից Գնուաւանաւ, ի հարաւոյ Գոլգանդաւ, և ի հիւսիսոյ Բհարաւ և Բանկալաւ: Գլխաւորք ի գետոց նորա են Գոգավարի, Մահանդրի, Բիտունի, և Սահանդրիկա: Գաւառք, որք յարևմտից Բանկալայ լեռնային են, և քնակիչք նորա են խուժք իմն հնդկաց, Ո-ուխ կոչեցեալք, որք ի մերկ մերկ չրջին, միշտ ընդ իւրեանս կրելով զաղեղունս և նետս: Սոքա ի վերին երեսս հպատակ ասին գոլ Մահրատայից, այլ իրօք ազատամբք են, և հարկս ոչ հարկանեն նոցա: Գաւառք են ի նմա քաջամարտ: Քաջութիւն, Բարուս, Փաղշահնադար (Ռ-ՔՓՀՈՆ ՆԱԽՆԻՆ-ՑՏ) Բաթարք, Սրհոն, Դանմա, Քլսէր, Մաշկուրի, Բանդարբալսէր, Բասեթա, Գուլպրա, և Մալջիթիա: Տես և ՎԴ, Հատ, Նշխարհագր, հոր, Ստեփանոսի, 79—80:

Անհրաժեշտն սպանանէ զՀայր իւր, և թագաւորէ ընդ նմա ի Պաղատ. և զնա խուզեալ ի կենաց որդի նորա Սնդօ, յինքն գրաւէ զպայազատութիւն ազգին: Ամք թագաւորութեան երկոցուն սոցա, ութն: Քանզի և Նագադասակ յարեան հօրն ներկեալ զծիրանիս արքունական՝ սփածաւ զիւրեաւ. և անօրէնութեամբ վարեաց զտէրութիւն իւր զամս քսան և չորս: Յայնժամ զայրացեալ տմենայն աւագանւոյ և բազմութեան քաղաքին ընդ այսպիսի անօրէն գնացս Վիդիհեան հարստութեան, աշխարհաժողով հանդիսիւ ի բաց ընկեցին յաթոռոյ զՀայրասպանն Նագադասակ, և փոխանակ ամբարձին զմեծիմաստն Սուսանագ զնախարար նորա՝ յաթոռ Պաղատայ: Զորմէ այս ինչ աւանդի ի Թիկայի:

"Յետոյր միում խորհեցան Լիչչավիան իշխանք, թէ բազմաք փնտրէր բարգաւաճութեան Վասալեայ քաղաքի իւրեանց՝ չունիլ զինագարասօբինի թագաւորութեան, այսինքն զգլուխ գեղեցկութեաց քաղաքի, չասացից թէ՝ բոզաւագ: Առ որ կարգեցին զտիկին ոք քաջատոհմիկ վարել զայն պաշտօն: Մի յիշխանաց անտի ընդունելով զնա յապարանս իւր, պահէ զաւուրս եօթն և արձակէ ի բաց: Անդ յղացեալ նորա ծնանի ի ժամանակին

զղուակ արու, և զարհուրեալ յատենէ և յամենեցոյ, գնէ զնա ի սակաւի կապարաւ թաղանթելոյ. և տայ ի ձեռս նաժշին տանիլ ընկենուլ յաղբիւս: Յայնժամ սողայ անդանօր արքայ օձից, և գալարեալ զսակառեան՝ հովանի առնէ նմա կատարաւ իւրով: Իսկ ամբոխ խուժանին գրոհ տուեալ անդանօր, և տեսեալ զօձն գալար առ գալար պարապատեալ զմանկամբն՝ հծծեցին Ա՜ա՜, Ա՜ա՜. յորմէ խուսեալ փախեաւ օձն: Յայնժամ մատուցեալ մի յարանցն ի սակառին գտանէ մանուկ անուշակ խանձարրապատ ի միջի, և խնդացեալ յուրախութիւն մեծ՝ հանէ զնա առ մի ոմն յիշխանաց. (գուցէ առ Հայր Նորա.) որ անուն կարգացեալ նմա Սուսունագ ի հծծելոյ ամբոխին, խնամէ ի տան իւրում: Եւ այսպէս աճեցեալ նորա յարքունս Հասակի իւրոյ եղև այր մեծանուն յոյժ յոյժ. մինչև ընտրեցաւ թագաւոր, զկնի Հայրասպանին * Կագադասակայ թագաւորեալ զամս 18. 471. ամաք ն. ք.

* Պուրանք Տակչակ անուանեն. որ այնինքն է օձ, կամ վիշապ, և եբրայեցի գրիչք, ընդ որս և Մարչմեն ծնեալ և մնալ ի Սիրամիսուա քաղաքի, առ գետեզերք գանգէսի ի Բանկալա, ներշնուն լեզուաց աշխարհին, և վաղեմի Գրուածոց՝ համարի նոր ենն գրոհ խժիկ Սկիւթացւոց յարձակեալ ի հնդիկս առաջնորդութեամբ Սեֆենտագայ իշխանի իւրեանց։ Որ այնզի "Վիշապ ի վառն կրէին" ասէ, կոչեցան Տակչակք։ Կալան սոքա

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

Կալլոստէս, գործք Լուսաւորչանց. Լուսերաշ, Կեդրա, Դէլու և Պուրուշ:

ԿԱԼԼՈՍՈՎԿ որդի Սուսունակայ Թագաւորէ զամն քսան: Որոյ ի տասներորդ ամի Թագաւորութեան լրանայ առաջին հարիւրեակն Գողգոթայի Բուդայ, և գումարի երկրորդ ժողով հետեւողաց Նորա ի քաղաքն Վասալի. ընդդէմ քրմացն Վաջիացւոց, որք պնդէին. թէ ապուխտ մնոյ, երկու մատնաչափք, և՛ ի գեղոյն եղբայրութիւն, գործակալութիւնք (Իշխանաց) շինուկ կաթին, ըմպելիք, սաւան մահճաց, ոսկի և այլ տպեալ դրամք, վայելուչ էին քրմաց ի կիր արկանել: Յասս թերս խմացեալ զայս՝ հետի գնաց ի Վասալի, և տեսեալ զի քրմաց լի ջրով զանկանն եւ տեղեալ ի տեղւոջն պաշտաման՝ քարոզէին ռամկին արկանել ի նա զմի մի Կուռպանն, ՝ի

զՄազադա, յորոց զՄուսանանք գտանեմք ասէ յաթոռն Պատրիարքարան առ արշաւանաւք մեծին Աղէքսանդրի, իբրև "Թագաւոր Արէնէի," Բայց որպէս և կարգ պատմութեանն յայտառնէ, Մահանանդայ ժամանակքն ոչ համաձայն ընթանան արշաւանաց Աղէքսանդրի ի Հնդիկս, զի յամին 356 Ն. Ք. ծնաւ Աղէքսանդր, և յամին 332. սպանաւ վերջին Դանդայ ի Զանոթկայ և յաջորդեաց նմա Զանդրագուպտա մաւրիացի. իբրև 26 ամաւք յառաջքան զծնունդն Աղէքսանդրի:

դրամ ոսկի, արգել խստութեամբ. և ժողովեալ քուրմն բուզումն յԱւանտեայ, ի Պաթէայ, ի Մաղադայ և յայլ և այլ կողմանց. և զարքայ ինքնին արարեալ ամենակալ ժողովոյն հերքեցին զՀերձուած Վաքիացի քրմաց. և հաստատեցին զՀարազատութիւն գրոց Պիտակաց: Յառաջնում դարուն Բուդայ մի միայն էր հերձուած. այլ յերկրորդ դարուն աճեցաւ ցեօթնեւատասն հերձիս:

ԿԱԼԱՍՈՎԿԱՑ ծնան տասն որդիք. հասարակօրէն ինն Ղանդուք կոչեցեալ. վասնզի երէց ի նոցանէ ի խոնարհ մօրէ ծնանելով՝ ոչ համարէր հաւասար: Վասնորոյ և առաքեցաւ բնակիլ ի հեռաւոր գաւառ ինչ տէրութեան հօր իւրոյ: Ամենակալ Ուրահուվի հարեան քրմաց. զայս ինչ գրէ զՂանդաց, իբրեթէ յաւուրս միաբան իշխանութեան ինունց ի սոցանէ՝ այր ոմն գաւառական գունդ կազմեալ սրիկայից երլուզակաբար ասպատակ սիրէր ԶԵրկիրն բովանդակ, և զոր քաղաք կամ գիւղ աւար հարկանէր՝ բարձեալ ի շալակ բնակչաց՝ և վարէր յանապատ. ուր զաւարն ապահովեալ՝ զարսն ձեռնունայն ի բաց հանէր: Յաւուր միում բառնայ զաւարն ի շալակ սիգի ուրուք և սրտէի. որ քաջայանդուգն համարձակութեամբ եհարց ցնա. Տէր որով ԲՆՇՈՏ ՀԱՅՐՆԻՑԷՏ ՂՊԱՐԷՆ ՀԷՆԱՑ: Պատաս-

խանեն եղուզակք. Գերբ՝ դու. մեր ոչ զերբէր գործէմք և ոչ խաղնեն դարմանէմք. այլ էեսմք հուռչա հարուրեբ, որով էուպեալ մեզ ոսկի և արծաթ, և զնամբար պաշարաց պարարտանամք ցէմբ և ցերեռ. և յոմոգ Տարուոյ զուարճանամք հանապազ: Զոր լուեալ առն՝ Հաղորդեցաւ ընդ նոսա:

ԱՊԱ յարձակիլ գնդին 'ի վերայ քաղաքի ուրուք, որոյ պահք զգոյշք, և բնակիչք քաջազէնք, անկաւ եղուզակապետ նոցա, և ամենեքին թուխ զգեցեալ ողբային զկորուստն մեծ: Յայնժամ մատուցեալ առ նոսա բեռնակրին, որ Հաղորդեցաւն կենաց նոցա, "զի՞ լայք ասէ, նա մեռաւ, ես կացից փոխանակ յառաջնորդ և 'ի զօրավար ձեզ:" Հաւանեալ ամենեցուն կարգեցին զնա յեղուզակապետ 'ի վերայ իւրեանց, որ յայնմ հետէ զինքն Կանգու քարոզելով՝ զուղի նախնեացն գնաց, ասպատակ սփռելով 'ի տեղիս տեղիս. և յաւարի հարկանելով զերկիրն առ հասարակ: Ապա և զեղբարս իւր գործակից չարեաց տարեալ՝ նոքօք յաւէտ սաստկացուցանէր զաղէտս երկրին: Իբրև այսօրինակ գնալով գնաց նա և հզօրացաւ. ասէ ցիւրսն. "Զինչ այս կեանք. զոր մեքն վարեմք, անտոհմից և սարկաց միայն վայելուչ. ընդէր՞ ոչ ձեռս արկցուք 'ի միահեծան իշխանութիւն:" Ընդ որ 'ի հաւանիլ գնդին

յարձակեցաւ 'ի քաղաք մի գաւառին. և մղեաց զբնակիչս նորա 'ի ՖրանգուԹիւն իւր՝ յարձակեցաւ նորօք հանդերձ 'ի Պատալիպուտրա մայրաքաղաք ինքակալին Հնդկաստանի, և բռնացեալ 'ի վերայ իշխանուԹեանն՝ մեռաւ փոքու իմն զկնի: Յաջորդին սմա ինն ունք յեղբարց, մի զկնի միոյ նստելով ընդ ամենայն զամս քսան: Այսորիկ աղագաւ է, զի 'ի Մահավանսին գրի, ԹԵ Ղանդուք ինն էին Թուով: Ինն երորդն 'ի սոցանանէ կոչեցաւ Դանանանդա. որ 'ի պատճառս ընչաքաղց ագահուԹեան իւրոյ և անյագ կերդեքանացն՝ 'ի սակաւ միջոցի ժողովեալ ուՀին կ։էս դրամաց՝ ՝ 80,000,000, Թագեաց յատակն գանգեայ, և յաւել Հարկս 'ի վերայ մարԹոց, կաշեաց, խժից ծառոց, և նմանեաց, որով և յոգիս ապաստան արար զբնակիչս իւրոյ տերուԹեան. մինչև Զանոկիայ նախարարի բառնալ զնա 'ի կենաց, և ամբառնալ փոխանակ զՁանդրագուպտա 'ի Մաւրիան տանէ. 381. ն. ք.

ԱՅԳԵՐԱՒ Զանոկիայ յաղագս մեծեղեռն ջարեաց տիրասպանուԹեան իւրոյ, այնպան կոտորեաց զնիզՃ մտացն իւրոց, մինչ զամենայն աւուրս իւր Հեծուք անցուցանել: Գրեցաւ 'ի մէջ երևելի գիպաց ժամանակին, եկաց առարկայ խօսից ամենայն մարդկան, յաւելաւ

'ի վէպս ազգին, և ամբարձաւ 'ի քնարս ողբերգութեան քերթողաց: Որք այնոքն և ևս հրաշակերտ յօրինեսցեն զիւրեանց գիւտս՝ զերախան դիցն 'ի ներքս մուծին խորհուրդ 'ի մէջ առնուլ յերկինս Ինդեռայ, շուարիլ ընդ մեծութիւն յանցանաց բարհմանին, և զեղանակ քաւութեն ցուցանել: Զոր լուեալ ազգաւն մարգահսօս պատմեաց ասէն տիրասպանին, և նա զհետ չոգաւ փրկութեան իւրոյ:

ԱՑԼ 'ի Ղանոջ յետ մահուն Սուրաջայ զոր կարգեաց արին Ռոստամ, ամբարձաւ որդի նորա Բահրաջ. թագաւորեալ զամս 36: Շինեաց սա զքաղաքն Պրաշի կամ 'ի Պրայագ. 'ի խառնուրդս Ցումնայ և գանգէս գետոց զոր յետոյ ընդարձակեալ Ակպարայ ինքնակալին՝ անուն կարգաց Ակպարապատ * Կարի

* Ակպարապատ անկանի յԱնգլա Նահանգի, որ 'ի հիւսիսոյ սահմանակից է Դիլլեայ. և յարևելից Բաղդայ, երբեմն չչնազագոյն 'ի համօրէն աշխարհին: Ցամի տեառն 1566. Ակպար արքայն Մողալաց կառոյց 'ի նմա ապարանս արքունիս և զբերթ հոր, և յիւր անուն կոչեաց զնա: Յորմէ յեօթեւտասներորդ դարն՝ Թագաւորք Մողալաց նստէին 'ի նմին: Ուներ վաթսուն պանդոկս կարավանաց. ուրթհարիւր քաղանիս, և եօթն հարիւր մզկիթս, երկու մեծամեծ Համալսարանք: Ցամին 1647. Շահջհան արար զԴիլլի իւր աթոռանիստ, յետ չինելոյ նորա զմեծահռչակ Մաուիլաճ 'ի պատիւ Տիկնոջ իւրոյ առ երի Ակպարապատայ՝ Թաջ Մահալ անուանեալ: Ցամին 1803. 'ի մարտին ընդ Մահրատայից՝ առին զայն Անգղիացիք, որում տիրեն մինչև ցայսօր ժամանակի: Ընդ իւրև պարունակէ զչետագայ գա-

հետամուտ եղև երաժշտական արուեստի, և երգոց ներդաշնակաց. զորոց և յօրինեաց գրեանս մեծարեալս 'ի Հնդկաց ընդ երկար ժամանակս: Ղանոջ՝ յայսքան ժամանակաց հետէ մայրաքաղաք Հնդկաստանի առ գետեզերբն գանգէսի առ սովին հարստութեամբ պայծառացաւ հգօրագոյն պարսպօք և վայելուչ շինուածովք: Իսկ արքայ փոխեալ զինքն այնուհետև 'ի բռնաւոր խելացնոր, սպանի 'ի Կիդարայ բարհմանէ: Որ ամբարձեալ 'ի գահոյս Հնդկաց՝ անխափան վճարեաց Պարսից զսովորական հարկ զիւրոյ

ւառսդ: Ընդ, Խալամապատ, կամ Մաղուրա-բանդարբանդ, Նավար Թիճարա, Իլէջ, Բիվան, Հահփուռ. Ղանոջ, երբեմն մայրաքաղաք բրահմանական իշխանութեան: Կալվի, Գուալեռ, ընդ մէջ 26. և 18 աստիճանաց հիւսիսային լայնութեան. քաղաք կառուցեալ 'ի ներքոյ լերին բարձու. որ 'ի վերջին դարուն անուանի գտաւ 'ի քահանայապետական կոնդակս ազգի մերում 'ի պատճառս մեծանուն ԱՍՊԵՏԻ Հայկազունւոյ ՑԱԿՈԲԱՑ ԳԵՏՐՈՍԵԱՆ սպարապետելոյ ամենայն զօրաց ինքնագլուխ Դարջայի տեղւոյն, որ յազգէ Մահրատայից: Եւ հասարականամ բարեբարութեամբ իւրով առ ինքն ժողովելոյ 'ի տեղեաց տեղեաց զկորովիս 'ի պատանեաց Հայկազանց, և կարգելոյ գնոսա 'ի պէս պէս պաշտամունս զինուորական կրթութեան: Սոյն այս իշխան բարեպաշտն միայնակ անկեալ յտշխարէ անծանօթ շառաւիղեալ ուռնանայ այժմ մերձ երեսուն տարեաց Հայոց, որոց ամենեքին աստիճանաւորք և սիրելիք յաչս ծիրանածին արքային յերջանկութեան վայելեն զաւուրս իւրեանց:—Կոլէրլեսէք, Մինդսոր, և Նարվար 'ի հնումն գաւառաք Ակալարատատայ, այլ այժմ չգիտեմ ընդ իշխանութեամբ նորա՞ անկանիցին, թէ ընդ թագաւորութեամբն Գուալեռայ:

աշխարհի՝ և խաղաղաւէտ կենաց ապահովեաց զժողովուրդ իւր յերեսաց օտար թշնամեաց։

Իսկ Սինկոլ ոմն բնիկ Ղանջայ կուսակալ նահանգացն արևելից՝ ապստամբեցաւ ի նմանէ։ Զորմէ այս ինչ առասպել պատմի ի Պահավանսին, որպէս՝ թէ Առիւծոյ կին ածել իւր զդուստր արքային Վանգուայ (Բանէլաց) և ի նմանէ ծնանել երկուսորեակս ուստր մի Սիհաբաթու անուն անուն, և դուստր մի Սիհասիվալի։ Ապա կորեան այսմիկ զհայրն սպանանել, և պարգևի մասամբ ընդունել իւր զերկիրն Լալա, (Բհոր) զոր և բազմամարդել ազգի ազգի շինուած։ Վիջայանի որդւոյ նորա անառակ կեանս վարել ընդ երկուզակաց, և հօր նորա ընուլ զնոսա՝ ի նաւս և աքսորել ի ծով։ Հասանել նորա ի Սելան և Թագաւորել անդանօր։—Լու եղեալ Կիդարայ խաղաց զօրօք ի սահմանս Բանկալայ և Բհարայ, այլ Սինկոլ զդիմի հարեալ նմին՝ երբարձ զնա ի կենաց, և յափշտակեաց զբովանդակ տէրութիւն նորա։ Կառոյց սա զՀինաւուրց մայրաքաղաք Բանկալայ զԼուկնուտի ի խառնուածս Բուրնապուպեայ գետոյն ի Պահանդրի վտակ մեծին գանգէսի, որ ընթացեալ ընդ Պուբնա, և ընդ Ռաքանագար, զեղանի ի ծոցն Զաթիգամայ։ Շինեաց և յապառաժին առ երի նորա զանառիկ ամրոցն

Ղուր, և վայելչազարդ պայծառացոյց մեծամեծ բրգօք, երկնամբարձ աշտարակօք, քաջանկար դրօշածովք, և ձուլածոյ արձանօք: Որ եկաց մնաց մայրաքաղաք աշխարհին յերկու հազար ամաց հետէ, մինչև Թէմուր արքայ 'ի պատճառս անբարեխառնութեան օդոյն՝ ելիք գնա, և փոխադրեաց զարքունիս իւր 'ի Տանդա: Օր ըստ օրէ աճեցուցեալ սորա զթիւ զօրացն իւրոց, նժկահեաց արքային Պարսից, այսինքն է Դարեհին Նոթոնի, որ զոյգ ընդ Հօմայի մօր իւրոյ՝ թագաւորէր 'ի վերայ Պարսից, Սկիւթիոյ, և Բակտրիանացւոց աշխարհին, և զգեսպան հարկին նախատանօք արձակեաց: Վասնորոյ կազմեալ նորա զգունդ յիսուն հազարաց, տայ ցսպարապետն Քրէյդուն, որ իբրև հասանէ անդր՝ ելանէ Սինկոլ պատերազմաւ ընդ յառաջ նորա, և 'ի պարտութիւն մատնեալ հալածական առնէ զնա 'ի կիրճս լերանց:

Իսկ գունդն Պարսից, 'ի միոյ կողմանէ հրեշտակս առաքեցին առ արքայ գուժել նմա զելից իրացն անյաջողութիւն, և 'ի միւս կողմանէ ասպատակ սփռեալ 'ի սահմանս Սինկոլայ բազմաք աշխատ արարին զնա: Յայնժամ Արփասիա 'ի Դադիուներան գարմէ, փոխարքայ Սկիւթիոյ, որ նստէր 'ի Ղիշնի առերի Սինէացւոց աշխարհին, գունդ կազմեալ երեք

հարիւր հազար արանց սպառազինաց և քա-
ջամարտից եկն և զգիսի հարաւ Սինկոլայ, և
պաշարեաւ զՂանոջ անՁարին մահունս ա-
բար: Ուստի զանխուլ եղեաւ Սինկոլայ փախ-
տեայ անկաւ ի լերինսն Տիրհուատայ ի Բը-
հար. իսկ Արփասիա կալեաւ զքաղաքն՝ մաշէ
հրով և սրով: Տեսեաւ փախստականին թէ
այլ ևս չէր Ցարս զգլուխն զերծուցանելոյ՝ և
թէ՝ ժողովուրդք իւր տարապարտ կորնչէին,
վարէ զառաջեաւ զսուսերս և զդաղաղ. ցու-
ցանելով թէ մահ և կեանք իւր ի կամս էին
յաղթականին՝ գայ ի բանակ անդր: Իսկ զո-
բաւարին կարգեաւ զորդի նորա զՀրուհատա
յաթոռն Հնդկաց՝ վարէ ընդ իւր զՍինկոլ ի
Թաթարս. հօր կենաց չափ պահանջելով
զապագայ զՁգաջանդութիւն յորդւոյ նորա:
Հրուհատա յերիս բաժանէ այնուհետև զե-
կամուտ իւր. զմին առաքէ ի Պարս ի վճար
հարկին և ի պիտոյս հօր. զերկրորդն բաշ-
խէ բարեհմանաց և աղքատաց. և զերորդն
ծախէ յարքունիս: Վանորոյ և թիւ զօրացն
օր յաւուր նուազել, ուստի քաջալերեաւ իշ-
խանին Մալվայ ոտնհար եղև արքայի, և
ինքնին թագաւորեաց յիւրումն բաժնի:
Հրուհատա շինեաց զանառիկ դղեակն Հռով-
տասայ, ի Բհար և մեռաւ. ամք Սինկո-
լեանց ութսուն և մի:

Ի Հանգնարակուլ որդւոց Հրուհատայ ի վերայ ժառանգութեան աթոռոյն՝ իշխան ոմն Ռաջպուտ ազգաւ ի ցեղէ Կունցայ, յինքն յանկոյց զայն պատիւ Մահարաջա անուամբ։ Եւ միացուցեալ զԳուջրաթ Շէ սահման տէրութեան իւրոյ՝ շինեաց նաւերանոց մեծ, ուր կազմեալ զտորմիղ նաւաց՝ սփռեաց զվաճառս Ցիդկաց յաշխարհ ամենայն։ Կեդա քեռորդի նորա կարգեցաւ ի նմանէ յաջորդ աթոռոյն. և ժամ յաջող գտեալ զպատաղումն Սկիւթացւոց ընդ Պարս՝ շարժեաց զդէն իւր ի սահմանս Ինդոսի, զոր ընդ իւրև գրաւելով անաշխատ, փոխադրեաց զարքունիս իւր ի * Բերար։

Զ.ՑՍՍԻ ժամանակաւ բնակիչք լեռնակողմանցն Քաբոլայ և Ղանդահարայ, ոյք այժմ Աղուանք և Պատանք անուանին՝ գլուխ ամբարձեալ ընդդէմ Կեդարաջայ՝ վերստին տիրեցին սահմանացն Ինդոսի։ Մեռանի սա թագաւորեալ ամս երեսուն և մի։

* Նահանգ Հնդկաստանի. որ ունի ի հիւսիսոյ զՄարվա և զՍլասնապատ, յարևելից զՈրիսա, ի հարաւոյ զՀէյդարապատ, և յարևմտից զԴովլաթապատ և զԿանդէ։ Գլխաւորագոյն տեղիք նորա ընդ իշխանութեամբ ինքնագլուխ Ռաջպի նորա տարածին 550, Մշտնջեաց յարևելից յարևմուտս, և 200, Մշտնջեաց ի հիւսիսոյ ընդ հարաւ. որոյ մայրաքաղաքն է Ղազպուր։ Մնացեալ տեղիք ընդ իշխանութեամբ անկանէին Նիզամին Դաքանայ, և սկսեալ ի Ղազպուրայ մինչև ցՈրիսա անտառայինք են և կարի ցանցառակի բնակեալ ի մարդկանէ։

Յուսիրոնդ ըստ ոմանց սպարապետ Կեդրաքայ, և ըստ այլոց՝ ի յաղթականաց սնտի Աղուանից կամ Պատանաց՝ թագաւորեաց զամս վաթսուն անառակութեամբ և զեղխութեամբ: Յաւուրս սորա սով սաստիկ և մահտարաժամ կորուսանէ զանհամար մարդիկ: Զորդի սորա ի կենաց հանեալ Դեղուայ հօրեղբօր նորա, թագաւորէ ընդ նմա. շինէ զքաղաք մի առ իրի Ինդրպուրայ և յիւր անուն կոչէ զնա Դեղլի: Յիններորդ ամի թագաւորութեան սորա փուր, կամ փուրասա իշխան Կմաւօն լերին յարոյց պատերազմ ընդ Դեղլու, զՂանսոք եհան ի ձեռաց, և զնա ձերբակալ արարեալ՝ փակեաց արգել յանմատոյց դղեակն Հռովմասայ ի Բհար: Եւ ընդ արձակեալ զսահման իւրոյ տէրութեան՝ թագաւորեաց ի Ծովէ մինչև ի Ծով:

—ooo—

ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Զանոկիա, Նանդա Վէրմին և Զանդրոգոպա:

Զանոկին որդի էր բրահմարի թակկասիլացւոյ, կրթեալ յերիսին վիտայս, քաջագէտ հմայից, հանճարեղ յօրէնս քաղաքականս, և երկայնամիտ յարարս իւր: Որ յետ

մեռանելոյ հօր իւրոյ մեծապէս խնամ տանէր մօր իւրում զառամելոյ: Յաւուր միում եկեալ նորա ի տուն, տեսանէ զծնող իւր յարեան արտասուս, և ի հարցանելոյ նորա զպատճառն, ասէ մայր նորա: "Որդեակ իմ. ձիրք են քո կառավարել զԲՀամեա. մի գուն զործիցես զանձն քոյ յայն իշխանութիւն ամբառնալ. թագաւորք անկայունք են ի սէր, և յորժամ թագաւորեսցիս և դու որդեակ, մոռացին զերախտիս ծնողութեան իմոյ. և յայնժամ մինչ ի սպառ թշուառացայց, ահա այսորիկ աղաղաւ լամ ես:" "Մայր իմ, յո՞ մնան մարմնոյ կրիցեմ ես զձիրսդ:" Ասէ ցնա մայր նորա, "յատամն քո:" Զոր իսկոյն ի բաց կորզեալ ընկենու ի բաց: Եւ լինի Կոնդապատն, որ է՝ ատամնատ: Եւ ուխտէ զինքն սոսկ ի պահպանութիւն և ի մխիթարութիւն ծնողի իւրում: Ո՛վ թէ սորա ծնողասէր օրինակին միա դնէին մանկունք մերազանց. ո՛չ զատամունսն ի բաց թօթափելով, այլ զամբարիշտ խորհուրդս ատահակութեց իւրեանց: Զանոկիա ո՛չ միայն ժուատ ոք էր, այլ և ամենայն կերպարանօք իւրովք գոգ Երուանդ մեր դժնդակահայեաց, կամ իշխանն Անգեղջան: Ուստի և ի պուրանս Ցոգկաց անուանի Կաւտիլիա:

Դ. ԻՊԱՐ ԻՄՆ ԵՐԹԱՅ Ի ՊՈՒՍՀԱՐԱՅ ՔԱՂԱՔ

Դանանդայ, որոյ թողեալ զընչաքաղց ագահութիւն, կառուցեալ էր սրահ մեծ առ երի արքունական ապարանից իւրոց, և օր ըստ օրէ կերակրէր զբազմութիւն բրահմանաց. ուրանօր մտեալ Ղանոկիայ՝ բազմի գահերեց ի տեղւոջ աւագ բրահմանին: Դանանդայ փառօք մեծաւ մտեալ անդր և տեսեալ զնախատիպ թշուառութեան զբարձ նախագահ կալեալ՝ հրամայէ իւրոցն արտաքս վարել ըստնա: Ապիծանէ զարքայ, ասելով "թագաւորք են տմբարիշտք, խնայեսցէ երկիրս շրջապատեալ ջրիւք ովկիանոսօք զամենայն բարիս իւր ի Դանանանդայ:" Ընդ որ սրամտեալ արքայի անգիտարին բարկութեամբ, "Կալարուք ասէ, կալարուք ինձ զատրուկդ չուառական:" Իսկ նորա թօթափեալ զկրկնոց իւր մերկ ի մօրէ՝ սպրդի լռելեայն ի սենեակ ինչ սրահին մեծի, և խնդրակքն դառնան յետս ձեռնունայն: Յարուցեալ ըզգիշերայն, և հանդիպեալ ծառայից ոմանց արքայազնին Պուբհարեայ կամ Ցոդիկ Պարավատեայ՝ օգնականութեամբ նոցա յանդիման լինի տեառն նոցա. որում ապահովել խոստանալով զթագաւորութիւնն, եղբ յապարանիցն գտանէ արքունեաց Պուբհարեաւ հանդերձ և փախչի յերկիրն Վինջայ: Որանօր՝ փողերանոց գաղանի բացեալ, և զոս-

կի գրասն իւր մի յուժն բաժինս հասանեալ, բազմապատկեաց յուժն կոտոր, 80,000,000, կամ հազարանաց, զորս թաւալցեալ ընդ երկրաւ, եւ ի ինքիր և այլում թագաւորսին, զոր եգիտ ի Զանգրասան։ Զանգի մեր նորա թագաւորին Պաւրիճաքոլոյ * ի մեռանիլ արքայի առն իւրոյ ի պատերազմին՝ զոր յաղոյն մի ի գաւառականն իշխանաց անուանի՝ եւ առ եգբարս իւր, Ծպանեալ ի կերպասրանս սոսկականի, թերեւս անփոյթ ոգոհիցէ զմանուկն յաղագս իւրոյ։ Ի Ծնանիլ մինս Ղազս կարգաց զանուն նորա, և բարուրեալ եդ առ գրան կաղապի ուրուք, և ասէ ցուր Զանգ անուն, յաղագս նիշ մանեկանն կրեալոյ ի ճակատուն՝ եկն եկաց առ ընթեր և պահպանել զմս։ Դէպ ի բարդ ինն տարեալ զմանուկն առ տարաւ զիս ի առն իւր, և մանուցանէր իբրեւ զմի յորդւոց իւրոց։ Ի քանզի եգիտ

* Ցաւուրս կենդանութեան Բաւղայ։ ամենեքն ի Սակէիսն վարդապետութենէ մինեալ ի Թլուսաւորութենանց անուն։ զոր ի վերոյ ասէր պատերազմ Ա. Լիգոնացոյց աղգացի։ թերս հասուն ի լեռնն Հիմայոս։ և գոմն անդ զտեղի գտանոցագիզ և լաստաքուր լերբ բազմաձեալ անուանուք Բ. և այլ Ծառայ։ ուր լինէին քաղաք ի գլուխ քաղաքացոյ Ցնոնագարէին։ և ամբարուցին յոյժ յոյժ։ Եւ քանզի լինուածք քաղաքին հրեհացուցանէին զկեղմնուրն ի ժ. պարանոցի սիրամարգ հաւաս։ և գի նկս Ի Պարսք թագաւորք քաղաքութեանք հրգեկին լերբ. վասն որոյ Սակէիսքն և սիրանդք հոգոյ գնամարի հարան ընդ հանդերձ զանազանգիրոյս։ Պարսս անուանեալոյս թեանցս։

գնա պաշտպանեալ Ի ցլոն Զանգոյ, անուն կոչեաց նմա Զանգրագուան։

Յայսմիսկ մինուճար եղև խաղ Ի մէջ մանկանց խաղնարածաց, յորում թագաւոր կարգեցաւ Զանգրագուան, և գնեաց զանուն յանցաւոր գաւառաց * բան ամենայնի յար և նման Կիւրասին Հերագաստաի։ Զանուկիա գիպաւ իմն Հանգիպեալ խաղաց այսպիկ, գնեաց զանուն Ի նախարարդէն։ Կոխեաց գկապանացաւ նորա յուսն ասուի մեծագին։ գիսոն ասար և արքայանին Պաբհարայ։ Եւ նոքա սուտեր Ի ձեռս սարա, և հրամայեաց գնալ բերել բազմանն Ի պարանոցն ընկերի իւրում, առանց խզանելոյ կամ գկապն լուծանելոյ։ Ի գաւառնալ նորա ձեռնունայն լեալ, ասայ զասելն Զանգրագուանի նոքին պատգամաւ, և ասրա հատեալ զգլուխ ընկերի իւրում, բերել գչուսանն Զանուկիայ ոչ խզեալ և ոչ Ի կապէն արձակեալ։ Այնժամ հանեալ Զանուկիայ բազթաբաստ գրամանն վարձ, զոր Ի թիկանն նորա, որ սկսանի նոցն ժամանն յարձակիլ Ի վերայ շինից և աւանաց, մինչև յասն յարուցանել զժողովուրդն Ի պարտաթիւն իւր։ Յանդգնեալ սորա գկոզիւք շինի ուրուք, ան-

* Կարի Հատուածն ոսկի գրեն Հերոդոտոս յոգոպս Կիւրասին Պարսից։ զորոյ վասն երկարագասուն լինելոյ բանիցն զանց առարկի լեալ ասասնոյ։

սանէ զկին յօրինել կարկանդակս և տալ մանկան խրատ՝ որ առեալ ուտէր զմէջն, անուր շաւրքանակի թ ոգեալ զերգերսս նորա։ "Արդարև Զանդրագասանի նման է։" ասէ ցնա մայրն։ իսկ մանկանն կրկնեալ անդրէն հարցանէ։ "Որպէ՞ս։" "Այնպէս։ զի դու զերգերսն թ ոգեալ, զմէջն ուտես կարկանդակիդ։ և Զանդրագասան գասհմանագլուխ։ զանց արարեալ ի մէջն մեռեաց աշխարհս, հաստատեալ անդ զերբ ամէս։ բայց յամենայն կոչմանց ի վերայ յարուցեալ ժողովրդեան յապականութիւն եդին զգերս նորա։"—Դար ի նորոյ գանդ կազմեալ այնուհետև՝ և ի միոյ ծայրէ սկսեալ ըստ խրատսն՝ ելհաս մինչև ի Պատաղիպուտրա, ուր սատակեալ զԼանանանդա նստաւ ի տեղի նորա՝ ասն քսան և ութ, 381, ն։ ֆ։

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ։

Զանդրոփոսպա և Մանդրոփոսպա քսա Վիլանի։

ՅՈՒՈՒՐՑ անուն Ար Վիլիսի Քանսի, որ ի մերձաւորութիւնն Ցիշմանն և ելի գարթուցեալ՝ նոխնացոյց զՁանդրոփոսպա ըստ Մանդրոփոսպի յանկան պատմագանից, սարսռայնութիւն մեծ յարեաւ առ ամենայն հեղի-

նակս նորոց։ Ալ իբրեւ վերծանէիս Ի ծանօթաս-
քանելոյ իւրաւոր Ի վերայ * Մատեանս՝ ասեալ՝
« Ամենեցուն իմն չիք սակ։ ծանօթս ասեալ սա-
սանոյ գնայուսի ենիւ Զանգրաքոնոպոյ Ը Սանգ-
բոնոպոսի։ Քանզի յայսոսիկ ինչիր և եթէ գաս-
նեսցի մեզ նշանարանս հաւատարիմ պատմու-
թիւնս Հնոց կայ։ Հարկ Ի վերայ կայ մեզ
վերածել զմիջոց թագաւորաց նոցա Ի պատ-
շաճաւոր իմն կապար ժամանակի։ առաջ՝ իմա-
նալս զգաշուսի ենս և աշխարքս գնուսի ենս
պէտք են մեզ։ իբրեւ այնպէս՝ յանհաւատալիս
գաստեցան այնք յաւէտ Ի շատափոյթս սաս-
գաւսի ենիւ և Ի կարի իմն մեզար գրաւածոց։
Որ Աբրիլ մ Ը տնս եգիտ գասարիմն գնանաս-
նայուսի իւն Զանգրաքոնոպոյ ընդ Սանգրոնոպոսի-
սոյ յանհասոյդ սկզբանց, որ զԱրիմաքոֆոս
քերթուսածն Սամոսէվայ ուրուսն՝ Ի թագ-
գաւրուսիւն Զանգրայ՝ առնու փոխանակ
Զանգրաքոնոպոյ։ » « Ջ. Ինի Նորա Հաստարա-

* Զերբս յայսոսիկ վերպարկս պատմութեան յինքն բերել յա-
ռաջարան Ա. Իլսանի։ Ա. Մատեան։ զոր Մաշանասն անուն գրէ
քարտքին։ յորմէ Զանգրաքոնոպոս Դագէցաս յանխուսն սրինն
թագաւորաց Նորա՝ Համարել երբեմն Ա. յոր Սոֆրէն պոռնկիլ ընդ
թագաւորս մեր Նորա։ և երբեմն կին Սոֆրէի սեղեկանալ ընդ
որքայրի Նոր Նորա։ Բ. Ջ. Ինի։ որք ելին ապա ինչ խաւ ժա-
գաւսի Հնգկաց։ և ուրեմն թագաւորաց հարաստեցին գաստաւթիւն
իւրեանց Ի մերձաստանեանս ինչ հիւսիսոյին Հնգկաստանի։ Հան-
միսել Ցոյնս։ Քանզի և Քրիշնա ընդ Ինի պատերազմիցաւ։
ապա պարտ էր և գնա իրաւունսն ինչ յԱրգիքսանդր։ կամ փոքր

պետն Վ_իլիսոդ բացում ինչ գրէ յաղագս Զանգրեփոռպոյ։ և հաւանեցուցանել քանայ թէ Մոգրաքոռմշոռայ երկու իցեն մասունք, յորոց մին կոչէ թագաւորութիւն Զանգրեփոռպոյ, և զմիւսն՝ հաշտութիւն նորա ընդ Ռակշասայ, որ նախարարն էր գրան հօր իւրոյ։ Վերջին մասն վարկածոյս առաւել ևս հաւատարիմ ձևանայր, եթէ գտանէաք թէ ուր և՝ առաջինն։ Արդար է Վ_իլիսոդ յաւելն, թէ նոյն անդք արձանագրեալ կան ի Վ_իշնուպուրանի, ի Բագաւատայն, և ի Վ_բիհարի-կարիայի։ բայց ազալի յարել իւրում թէ նաև ի Կանոգակին, վասն զի այս գործ գրագրական օրինաց խօսի, և չունի մասն ընդ Զանգրեփոռպոյ կամ ընդ Դանգայ միանգամայն։ Ծնունդ Դանգայ և Զանգրեփոռպոյ, որպէս և մահ Դանգէանց՝ ոչ յիշատակին ի քերթողականին Մուգրաքոռակշասայ, յորմէ քաղել խոստանայ Վ_իլիսոդ զիւրն գրաւ-

մի գնի։ Գ։ Զի գնե թէ բան Դիոգոռոսի Սիկիլացւոյ Զանգրեփոռպոյ ժամանակակից էր Ռազքանդրի։ որ մեռաւ իբրև 26։ ամաւք յառաջ քան զծնունդն նորա։ Պարա էր գնել թէ կամ ոչ կարելիք նշանացուցանել զանուանս պատմչաց Յունաց ընդ անցեալն Հնդկաստանի։ և կամ թէ կարելի էր բովանդակ հաստատութեան գտանն կրել զնախորդին։ որպէս Փարատանն յԵգիպտոս։ և որպէսն անկմամբ պահել զանձն և գժամանակ իւրաքանչիւր թագաւորաց այնր հաստատութեան։ Փանգի և Ռասվկ ի նշանն՝ անուանի Երրորդ Զանգրեփոռպոյ։ որպէս տեսցի ստորև։

թիւն, այլ սասկ ի վրիհամ-կամ ասն, և յայլ և այլ թարգմանութիւնս նորա։ Գործք արքային Ա. Իկամ պատերազ, որ Զանգրա ճա-նաչի, թէ պէտ ան շուայլաբանութիւնք իմն ի-ցեն երիտասարդական քաջաբարութիւն անց Սանդրոխոսոյն Բանաց՝ ըստ իմիք Համանձայնին գործոց Զանդրոփոսոյ կամ Զանդրայ ի մահան Դանդայ. թէ պէտ ան կատարածն ոգբալի բացմնք տարառաջն։ Այդ թ պէտ զայս եամ անմիաբանութիւնս կարծեաց՝ սկսանիմ տալ ի վիշնուպրանել, ի բազամամ ասց, ի Ա. Իրիհամ-կամ ասց, և յայլոց՝ զհարազատ հանգամանս ամբառնալոյ Զանդրոփոսոյ ի գահոյս Պարսկամ ասրայ։" Հարատութիւն Սայառնակեան թագաւորաց ի Սիսառնակայ՝ իշխեր ի Արազազ Բհար աշխարհի. որում մայրաքաղաք էր Պատազիպատրա։ Ա. Իրքին ի ասցանել կոչէր Դանդա կամ Սահա-պազ-մանանդա, ծնեալ ի կնոջէ Սուգրայ, ուստի և ըստ օրինաց աշխարհին համարեալ սուգրա, որ է սարուկ կամ յանուագ սահմ։ Էր սա իշխան կորովի, այլ ժանտ և սգահ, որով յարոյց ի գլուխ իւր զատերութիւն Բրահմանաց։ Ծնան սմա որդիք ութն, որք հանմանունաբար ընդ ինքեան՝ կոչեցան Դանդուք։ Ծնաւ սմա և յանագդի կնոջէ Սոբաղոյ զաւակ ինեերրոյ՝ Զանդրոփոսոյս

անուն: Զորմէ ի Պարանոս չէր յիշատակութիւն ինչ, սակայն յԸնդհանուրս ընկալեալ է զոլ Պոռիս անուն նորա, իբրև հայրանունական նորա ըստ Վիշնուպարան գրոց: Ոստի պարզ երևի, թէ Զանդրագուպտ սերեալ իցէ ի տանէ Նանդեանց, թէ և ուղղակի ոչ անուանիցի նա որդի Նանդայ: Յորմէ և իցէ, սակաւին եղեալ նորա գործի հզօր ատելութեան բրահմանաց, կենսախուզ եղև Նանդեանց, և նստաւ յաթոռ նոցա: Որում զօրավիգն եղև իշխան կողմանցն Հիւսիսոյ, այնու դաշանամբ՝ զի կալուածք ինչ երկրի, թողցի նմա յաճուրդ իւրոց սահմանաց: Իբրև մեռաւ իշխանն, և ոչ բան ոմանք եղեն ուխտին՝ որդի նորա զօրաժողով եղեալ յամենայն կողմանց, որպէս և Յունաց, զոր արքայութիւն խնդրեմ հաստատել Յոյնս, յարձակեցաւ ի Պաղատա, այլ ազմուկ շփոթի անկեալ ի զօրս նորա՝ զմիմեանսիւ Հարան, և Պաղայակեցուս դարձաւ ամենայն ուստի եկեալն էր: Զանդրագուպտ թագաւորեաց զամս 24.* և եմեալ զամենն որդւոյ իւրում:"

"Արդ Զանդրագուպտ և Անդրոխոտոս թէ պէտ և մի և նոյն անուանք իցեն, սակայն և յա-

* Ի վերնան Էջմիածնորդ գլխոյ եղաք ժամանակ թագաւորաց Զանդրագուպտոյ զամս 28. ասա դնի ամն 24. ոչ այն է ուզիղ ոչ այս, զի ըստ Մահաբանակայ նա ամն երեսուն և ութ»

բաբերութիւն նոցա առ միմեանս կարի հպարտ իմն տեսանի։ Ընթերցումս յիշատակեալ ի Վիքիորդայ և յԱկեղեղեղոյ ունի զնա Անդրոպոս, որ է միւս իմն ձև անուանակոչութեան նորա։ Պլուտարքայ Անդրոպոս գրէ, զի Յոյնք սովորաբար ի բաց ընկենուին զսկզբնատառն Ս։ Ի քերթուածս զԱնդրոպոսն սակ ի Զանդրա տեսանելոյ գրեալ, ընդ որում փոխանակ Զանդրոման անուն։ Եւ ըստ այնմ առ Դիոգորասի Սիկիլացւոյ զանուն Գանդարիդեան թագաւորին, որ զզորութիւն զմանկեղանկացոցն սատանեցուցանէր, զսատանելոյ Դեանդրոպոս գրեալ։ Իսկ Ագրամին առ Աբիմելեքի Աւանտիսի՝ սակ ազատաղանն է առաքնոյն։"—"Ծնունդ էր սա Բոգոնոոյ ի սոփրէն, և ըստ Դիոգորասի՝ ժամանակէր Աղէքսանդրի։" Կարի ընդարձակ վիճան զիւր յառաջաբան, այլ ոչ ինչ յաւելու ի լոյս պատմութեան, քան զոր թարգմանաբար հաւաքեցի առաջնոր։

Զանդրոփոնոս ըստ Հնդիկ Հեղինեանոյ։

ԲՈԳՈՒԱՆ յերկրատասանեղորդ սկանդայի, ունի զամենի օրինակ զայս, "Որդին Արահանդայ Ծնեալ ի կնոջէ Սուգրայ, ամենազօր իշխան Արահատամս սպառելոց է զազգ

Կշեթրայից: Եւ յայնմհետէ թագաւորք Սուգրայք տիրեսցեն երկրի՝ զրկեալքն յամենայն բարեպաշտութենէ: Սա հաւաքեսցէ զաշխարհ ընդ միով հովանոցաւ. ոչ ոք իցէ, որ հակառակ կայցէ նմա. զի իբրև զնոր Բաբգավա իշխեսցէ երկրի: Որդիք ուրեմն ծնցին նմա՝ Սոմելիա, և այլք. որք թագաւորեսցեն զամս հարիւր. Բրահմանի ուրուք յարուցեալ կորուսցէ զՆանդուս, և փոխանակ նոցա Մուրբեանց թագաւորեսցեն ի կալի յուգի:"

'Ի ՎԷՐՆՈՒ պուրանի գրի այսպէս: "Մոկանդրէ վերջին եղեցի ի տասանցն Սէյունաբեանց, և ամք նոցա հարիւր վաթսուն և երկու: Որդի ծնցի Սահանանդայ ի կնոջէ Սուգրայ Սահապատմա անուն նորա. կեղեքիչ և կործանիչ Կշեթրայից իբրև զնոր Պուրուսուռամ: Եւ յանմհետէ թագաւորք սուգրայից նստցին: Նա զաշխարհ ընդ միով հովանոցաւ գրաւեսցէ: Ուրեմն որդիք ծնցին նմա՝ Սումալիա, և այլք. որք միահաղոյն թագաւորեսցեն ամս հարիւր, մինչև Կաւտալիա բրահմանն կործանեսցէ զնոսա: Ապա Մուրբեանք կալցեն զաշխարհ, և Չանդրագուպտա բարձրացցի յիշխանութիւն ձեռամբ Կաւտալիայ: Մուրբա կոչեցաւ սա ասէ մեկնիչն յայն սակս՝ զի անուն կնոջ Նանդայ մօր իւրոյ Մուրբա էր:

ԸՍՏ ՎԻՐՀԱԹ-ԿԱԹԱՑ։ «Իբրև հասաք ասէ Վարուքի՝ ի բանակ անդր, գտաք զամենեսին ի թուխս համակեալ, զի մեռեալ էր Նանդա։ Իսկ Ինդրադատ քաջագէտն աղաղարուեթեան ասաց ցնոսա. «Չէ պարտ ձեզ վհատիլ՝ ի դիպուածոյս. քանզի կարող եմ փոխադրել զկենդանական զօրութիւն իմ՝ ի մեռելոտի դին արքայի։ Արա՛ Վարուքի. և խնդրեա՛ շնորհս ի նմանէ. բայց դու Վիարի՝ պահեա՛ զմարմին իմ, մինչև դարձցի առ նա կենդանութիւն իմ։ Իբրև ամենեքին համաձայն գտան՝ եմուտ ընկեր մեր՝ ի դին Նանդայ։ Որոյ վերակենցաղումն՝ ի մարմին՝ արար հասարակաց ցնծութիւն։ Նախարարն Սակատաղա միայն՝ կասկած կալաւ զայսր նորընծայնակ նորա՝ ի մեռելոց յարութենէն. և որովհետև ժառանգն արքայութեան տակաւին տղայ իմն էր հասակաւ, ջանադիր եղև զի մի փոփոխութիւն նոր տեղի կալցէ իւրոյին բաղդի։ Ուստի քարոզեալ զնա՝ ի թագաւոր՝ գոնն գործէր վաւերացուցանել զկերաւունս նորա։ Վասնորոյ վաղվաղակի հրաման եհան որոնել՝ ի մէջ գիշոցն անկելոց՝ և հրով այրել զնոսա։ Եկեալ խնդրակաց գտին զլքեալ մարմինն Ինդրադատայ և այրեցին զայն ըստ հրամանին. ուստի և ընկերակից մեր պարտաւորեցաւ մշանջենապէս ու-

նիլ զտեղին՝ զոր վայրկենական և եթէ հա-
մարէր ի սկզբանն : Ուստի և յարաժամա-
ռանձնացեալ լայր ընդ մեզ, և աւաղէր զփո-
փոխումն անդառնալի . որ զգերագոյն փառս
բրահմանական աստուածազարմուեցեն՝ փո-
խեաց ի ցածարիւն վիճակ Սուդրայական
հարստութեան : Վիարի առեալ զդրամն
վասն վարժապետի մերոյ յուղի անկաւ . և
Ինդրադատ , զոր այսուհետև արժանէ կոչել
Ցօգանանադա , ըստ խրատուն Վիարեայ
մտախոհ լինէր թէ զիարդ կորուսցէ զՍակա-
տալա զնախարար իւր մեծ . որ իրազգած լեալ
դիւթութեամբ մարմնափոխիկ արքային՝ կամէր
ամբառնալ զՀանդրագուպտա յաթոռն Նան-
դայ : Ուստի կացոյց զիս իւր նախարար հա-
ւատարիմ ամենայն գործոց : Այլ զայսու ժա-
մանակաւ փոփոխութիւն մեծ կալաւ զվիճակ
Սակատալայ , որով և ի յետին չուառութիւն
իջոյց զինքն և զիւրսն : Վասն զի՝ ապաժոյժ
յայրումն դիակին Նանդայ՝ յշտապ և ի շփոթ
տագնապին այրեալ էր կենդանւոյն զԲրահ-
ման մի . ուստի և ընկեցիկ եղեալ ի վիրապ
ինչ անդնդային՝ որդւովքն իւրովք : Անօթ
ինչ աղանձեալ ընդոց և սրուակ մի ջրոյ հա-
զիւ բաւական միումն և եթէ՝ կախէին օր ըստ
օրէ ի վիրապ անդր : Վասնորոյ խորհուրդ
ի մէջ առեալ հօրն խրատ տայր որդւոց ընտ-

րել ի միջոյ իւրեանց թէ ո՞ր կեցցէ կարողն
ի՞նչ խնդրել զվրէժ արհամարհանացն, և
յընտրելն նմա միայնոյ թողլով զկերպակուրն՝
ծամել զանձինս ի մահ: Այլ նոքա վրէժխնդիր
զնա ինքն ծանեան զհայր իւրեանց. ուստի մի
առ մի սովամահ եղեալ՝ թողին նմա զպա-
տառն արտասուաց: Իսկ Յոգանանդա շը-
ուայտեալ, որպէս հաստարակ իմն է ամենայն
մահկանացուաց՝ իւրովն յաջողութեամբ՝ փո-
խեցաւ գլխովին ի բռնաւոր ոմն: Ուստի և
վիճակ կացութեան իմոյ կարի տաղտկացաւ
ինձ: Զի պարաւանդեաց զիս ընդ հաճոյիւք
բռնաւորին, և պատասխանատու արար յան-
ցանացն՝ զորս ես ինքնին արհամարհէի:
Վասնորոյ խնդրեցի մասնակից ոք ճարել ինձ.
և աղաչեցի զՅոգանանդա արձակել ի գբոյ
տառապանաց զբանդարկեանն Մոխոպոլ և
կարգել վերստին ի բարձուն պաշտաման իւ-
րոյ: Ոչ շատ ինչ էանց. զի բարկացաւ ի
վերայ իմ արքայ, և կամէր մահու դատա-
պարտել զիս: Մոխոպոլ ժամ դիպահոլ
գտեալ զիս յինքն յանկուցանելոյ՝ ազգ արար
ինձ զգալոցն, և փակեաց ծածկեաց զիս յա-
պարանսն իւր: Մինչ այս մինչ այն և որդի
արքայի Հերաֆոպոպ ցնդեալ խելագարե-
ցաւ. ուր Յոգանանդա ելաց դառնապէս զնմն
կարծեցեալ կորուստ: Որով կրկին յերես

եղեալ արքայի. և զորդին ի հարուածոցն հանեալ՝ լուայ եղուկ աղեստալից, որ մղեաց զիս թողուլ զամենայն զկենցաղոյս և մեկնիլ յանտառացն առանձնութիւն: Յանկարծ հրաժարումս յաշխարհէ՝ կարծիս եւ իմոց ընտանեաց զինէն մահուանէ, որպէս թէ ի ծածուկ սպանեալ լիցեմ. վասնորոյ Ուպակոսա կին իմ կենդանւոյն այրեցաւ ընդ իս, և մայր իմ բեկեալ սրտիւ եղ ի խորոյկ դագաղաց: Այլ ես այնինչ շարունակ պահէի զնգնութիւն մարմնոյս՝ մտախոհ ի վերայ վաղանցուկ փառաց աշխարհի. և զվերնոց յարաղուարշ երանութեանց՝ պատահեցայ բրահմանի՝ որ գայր յԱյովգիայ. և հրաւիրեցի զնա գիշերել ի մենաւոր խղի իմում: Սա պատմեաց ինձ զմահ Յոգանանդայ օրինակ զայս: "Ոպոպոլա երկնելով հանապազ ի սրտի իւրում զքէն վրիժուն՝ տեսանէ զբրահման ոմն փանաքի տեսլեամբ, զի յարմատոց ի բաց կորզէր ի դաշտի զփուշ: Հարց ցնա թէ վասն այր ի՞ լցէ աշխատութիւնդ: Զանուէ՛ն պատասխանեաց նմին "խլեմ զբոյսն, որ խոցեաց զոտս իմ:" Զայրն պատկան եդիտ իւրոց խորհրդոց. զոր և մեծամեծ խոստմամբ հրաւիրեաց գալ և ի գահի նստիլ ի մեծահանդէս տօնին Ոլոգոյ որ ի հանդերձեալ լուսոյ ծննդեանն կատարելոց էր: Ընկալաւ

Զանուէլա և գնաց ի տունն՝ ակնկալեալ մեծարանաց. այլ Յօգանանդա նախագոյն զՍուխարդու ընտրելով յայն պաշտօն՝ անարգութեամբ արտաքս վարեաց զնա, որոյ ցասուցեալ՝ սպառնացաւ առաջի բազմականին զկործանումն արքայի՝ յետ եօթն աւուրց: Ղանդա հրամայէ արտաքս վարել զնա յարքունեաց իւրոց, և Սուպպալա ընդունի զնա ի տուն իւր. և առաւել քան զառաւելն բորբոքեցուցանէ զբարկութիւն նորա ընդդէմ արքայի: Դիւթ ճարտար էր Զանուէլա, և յաւուրն եօթներորդի հմայեաց զնա ի մահ: Յայնժամ Սուպպալա կորուսեալ և՝ զժառանգն Էրբաբուպպա, յարոյց զՁանդրբաբուպպա զհարազատին Ղանդայ որդի՝ յաթոռ հարց իւրոց. և ինքն եկաց նախարար նմա: Իսկ Սուպպալա մեկնեցաւ յանապատի առանձնութիւն:

ՊՈՒՐԱՆԴՈՒ ՀՆԴԿԱՑ. "Ի սկզբան կալի յուգի Ղանդուէ Թագաւորեցին, յորս երևելի հանդիսացաւ քաջութեամբ Սերվերանէդի, որ տիրեաց ամենայն երկրի. զի ունէր զօրս պատրաստականս ինն քրօր և միհարիւր. որ առնէ իննսուն միլիոն և հարիւր մի: Որոյ Սպէրանոսա և այլք ի նախարարաց դրանն մեծապէս համբաւէին յաշխարհ ամենայն: Յորոց հռչակաւորագոյն ճանաչէր Սուէղսա բրահմանն. հմուտ քաղաքական օրինաց և

կարգաց, ներհուն և վեցեսին յատկութեանցն իշխանաց: Մեծ էր նորա բարեպաշտութիւն և անխարդախ պարզութիւն սրտին. ուստի և մեծապէս փառաւորեալ ի Լանդոյ: Իսկ արքայի էին կանայք երկու. յորոց երէց էր Ռոնանդա, իսկ կրսերն էր յազգէ Սուդբայից և սիրեցեալ յաչս նորա ի սակս չքնաղ կերպարանաց իւրոց և քաղցրամտութեան բարոյից: Եւ անուն նորա Մոբա: Յաւուր միում արքայ ի ինքնոյս տիկնաց իւրոց մատակարարեաց զպարտիս հիւրասիրութեան իւրոյ առ աստանդական ոմն աստուածազգեաց. և լուացեալ զոտս նորա՝ սրսկեաց զքուրն ի վերայ տիկնաց իւրոց: Շիթք ինն անձրևեցան ի ճակատ երիցագունին. և շիթ մի միայն՝ ի ճակատ Մոբայ: Մոբա ծնաւ ուստր մի ամենապատշաճ կազմուածովք և կատարելութեամբք. իսկ Ռոնանդա վիժեաց զհատուած ինչ մսոյ անկերպարան և անկազմ, զոր առեալ Ռաքշասայ՝ տրոհեաց յինն եակ կոտորակս. և լցեալ յլստոման ձիթոյ՝ պահպանէր զգուշութեամբ: Եւ ահա սակաւ առ սակաւ հոգևորեալ կոտորակաց մսոյն՝ փոխակերպեցան յինն եակ անուշակ տղայս, որք սնուցեալք՝ ի Ռաքշասայ՝ կոչեցան յանուն հօր իւրեանց՝ Լանդոյ: Զայսու ժամանակաւ ծերացեալ արքայի՝ տայ ինունց զկառավարութիւն աշխարհին, և

զՄՈՒԲԻՈ կարգեալ ի սպարապետութիւն ամենայն զօրաց՝ մեկուսանայ յառանձնութիւն։ Ունէր ՄՈՒԲԻՈ որդիս Հարիւր. յորս ամենուագոյն ճանաչէր վարուքն Զանդրագուպոյ. և ամենեքին վերն Ղանդէանոյն երևէին արդեամբ։ Որոյ վասն նախանձեալ զնախանձ չար կորստեան նոցա՝ հրաւիրեցեն զՄՈՒԲԻՈ որդւովք իւրովք ի սենեակ ինչ առանձին, և չարաչար կոտորեցին զնոսա։ Ի նմին կիսի՝ Արքայն Ինճոլոյ առաքէ առ Ղանդուս արձան առիւծոյ ձուլեալ ի մոմոյ և եդեալ ի վանդակի, սովին պատգամս։ «Եթէ իցէ ոք ի տերութեան ձերում, որ արձակիցէ զնալ ամենայն այսորիկ՝ առանց զվաղակն բանալոյ կամ քեկանելոյ՝ զնա ծանեայց արանց քաջ։» Բնութամտութիւն Ղանդէանոյ ոչ երբէք իշխէր հասու լինիլ գաղտնութեանն, բայց Զանդրագուպոյ, այն ինչ դեռ չև էր հասեալ ի նա սուրն անողորմ, յառաջ մատուցեալ ասէ ցընոսա։ «Եթէ խնայիջիք ի կեանս իմ. թողից զառիւծդ ի բաց։» Ընդ որ հաւանեալ նոցա տան նմա զկեանս իւր. և նորա առեալ երկաթի հրաշեկ մերձեցոյց յարձանն մոմնձոյլ և ահա իսկոյն հալեցաւ և ծորեցաւ արտաքս՝ առանց վնաս ինչ առնելոյ վանդակին։ Իբրև այսօրինակ քարւոքեցան առ սակաւիկ մի առուրք Զանդրագուպոյ. յաւուր միում տեսանէ

գբրահման ոք այնքան բարկասիրտ, որ յարմատոց խլէր ի բաց զբոյսն կոսոս վասն խոցելոյ տերևոցն զոտս իւր: Հնուպ մատչի առնա, և ընկալեալ զայրն ընդ իւրով պաշտպանութեամբ՝ մեծարանս դնէ նմա: Անուն բրամանին էր Վիշնու-գուպտա, և էր քաջագէտ քաղաքական կրթութեանց՝ զոր ուսոյց Ռոսոս, (այսինքն Զրուան:) Իսկ հայր նորա Չանակա գոլով ուսուցիչ օրինաց. և՝ որդին կոչեցաւ Չանակիա: Եւ եղև իբրև եմուտ սա յամենայն խորհուրդս Չանդրագուպտայ՝ խոստացաւ նմա զիմաստն Ղանդէսոց: Քաղցն մեղ զնա յաւուր միում մոռանել ի դահլիճն արքունի, և բազմիլ յառաջնում բարձուն: Բայց Ղանդուն տեսեալ զայր ապիկար ի նախագահ բարձուն բազմեալ՝ քամեցան յանձինս իւրեանց, և հրամայեցին ընդ քարշ վարել զնա արտաքս ի պալատէն: Յայնժամ Չանակիա, կուրացեալ բարկութեամբ իւրով՝ եկաց ի մէջ հրապարակին, և արձակեալ զիւռունք հերացն ի գագաթան, աղաղակեաց և ասաց. "մինչ չև կործանեցից զամբարտաւան և զանգիտագոյն տուն Ղանդէսոց՝ որք ոչ գիտացին զյարգ իմ, ոչ կապեցից վերստին զսոյն:" Զայս ասացեալ մեկնեցաւ անտի. և Ղանդէսոգ, յորոց բարձեալ էր բաղտ և յաջողութիւն, ոչ ինչ գրեցին զհաշտութենէ նորա:

Իսկ Զանդրաֆուպսա, որ յայնմ հետէ կասկած և ոչ մի կրէր զանձին Ֆեսասուէ, երեսոյ գքաղաքն և զհետ չոգաւ Զանուէին, որ վասն տգիտութեան կերպարանացն՝ կոչէր և՝ Կաֆէա. որով առաւել քան զառաւելն հրդեհեաց զարտմոութիւն բարկութեան առնն: Որ ի միոյ կողմանէ գբարեկամ իւր Ինդրաբերմա Ծպտեցուցեալ իբրև զկղզպանէա առաքեաց ի հրեշտակ երեսաց իւրոց՝ պատրել զԼուէշասա և զայլս. և ի միւսոյ կողմանէ գրգռեաց զայրն սէգ և զհզօր Պարվաքենդրա խաղալ գնալ անհամար զօրօք Մէջայ ընդդէմ Ղասամապուրա. խոստացեալ նմա մինչև ցկէս թագաւորութեան այնորիկ: Իսկ Նանդէանի ապահով ի քաջաքաջ նահատակութիւնս Լուէշասայ պատրաստեցան զդիմի հարկանել թշնամւոյ իւրեանց, որ թէպէտև անպատմելի սրտերութեամբ պատերազմեցաւ, սակայն չկարաց ազդել ինչ ամենի և վայրագ զօրացն. ուստի և Ֆարիւք իմն խոյս տուեալ ի Մաբէանց անտի՝ մեկնեցաւ ի բաց: Եւ Նանդէանի Ծախեցան իբրև յարդս ի Ֆոց բորբոքեալ բարկութեանն Զանուէիայ, զոր և ևս հրդեհեալ զայրացուցանէին զօրք Պարվաքենդրայ: Իբրև Լուէշասայ զօրութիւնք բեկան, գանձք սպառեցան, և ակնկալութիւնքն յամենայն ուստերք հատան, խորհեցաւ լուելեայն փա-

խաչեսանել զարքայն Ծերբ զՍերբերոսեդգմի, Հանգերձ այնարբեալ Ի քաղաքացեացն՝ զոր տակաւին սիրէին զանուն Աստուծոյ։ Եւ ապա լրանել զդարպասն Թշնամեաց՝ Ի վայելս Աստուածոյ։ Արար սա գ-խ-թ-ա-թ-ե-ա-ք Եւ զապ-ջիկն մանչաւորեալ՝ Ի կարծանաւոր արքայացաւ-յաղթ ակամբն։ այլ Կաւոսոպոն մարկապարանաց արար նմա գնեանգն։ Եւ մանաւանդ զայն առ Պորքոսեան, եղև առիթ մանչաւ նորա։ Ապա արա փա-թ-ա-նակի արձակեալ առ որդի նորան Մաշյոսեան՝ Ծանոյց նմա գնանանակցաւն իւր Ի մանչ անդր հար նորա, յորմէ գաւնի հարեալ արքայարկին հրիւք գբանակն՝ Եւ փախուստ։ Իսկ Կաւոսոպոն թէ ոչ ետես պիտաւ գնեան. ապէր գ-պրով քաղաքին կարէր առնալ, այլ լուեալ թէ բա-գաւորն Ի կոչմանականացն Աստուծոյ տակաւէին անդ անար՝ երկեաւ մանել Ի նա։ Յայնմ ամ Մաշյոսոյ Ժամ գ-իպա-հար առեալ իւր զ-յապա-գաւորն նորա՝ եմուտ Ի Ֆարս Ը Պահաւէրմ՝ Եւ ճարտարութեամբ զ-արձ-խ ապզ-ի ապզ-խ՝ կարաւանել նաբաբ զԱստուածոյ Ի մանաւ անդ քաղա-քին այլ Կաւոսոպոն նախարարն կոյր իրացն որոգայ-թ-ելոյ՝ Ի գ-ելբեւ Հան գամենացն։ Ապա Հա-մարեալ սկսաւ զմ-ոյրգեանս գեզբայրն Պորքոսեա-ասարաց յամել առ տակաւիկ մի գչուն՝ մեծամեծ երգմամբ Հաւատարմութեամբ նմա։ թէ Մաշյոսոյ առ Ի նեռեգ գաշնաւորացն Աստուծոյ-

[illegible]

[illegible]

[illegible]

ԴԻՈՆԻՍԻՈՍ Ամիդացի. "Խնոցան (Ազէք անունը) ի Փիւգիայ, թէ յայնմիկոյս Թագուն անկանէր ըստ նաւարան անուանեալն Էրկիտասան առուոյն Նանուապուր հաս. զոյոյ զՀերուսուրագոյն Էրկիրոյքն քիրէր Գանգէս։ Յայնմիկոյս գիւղն բնակիչքն Տոպղանս և Գանգոպիդանս. որոց անուան էր թագաւորի նոցա՝ Գանգրոմաս։ Որ ունէր զդուս ոչխարոց քսան հազար. Հերուսոյս Էրկիրքիւր հազար. կարս պատերազմական՝ Էրկու հազար, և փիղս չորս հազար։ Արքայն ոչ կարէր հաստատել բանիցս ոչխարիկ, վասն որոյ առուոյնքս կոչեաց առնիցքն չՓանս, և ի հայոց ի նմանէ եղեալ ասի ոչխարիկ ի իցկ։ Իսկ նորա պատասխանեալ նոցա ասէ. այդպէս այդ այդպէս է. քանզի որդի թագաւորս Գանգրոմիսի յանուանեալ. և յանուշան առնէին՝ սահմանի ուրուք հոմերաւորի որդի։ Զանազի հայր նորա այր գուսան գիւզապատչան՝ զքառասուն ի սէր իւր զթագաւորն, որ ապան զարքայ զայր իւր, և ապա հոմերուց ասեալ զթագաւորուն։"

ՍՏՐԱՆ. "Ի խառնուածն գանազի և վիրս ոչ գիւղոյ (Ծանկի.) անկանի քաղաքն Գանգրեանս, որ է մեծագոյնքս Գաղատացոյ, ծագումն գներ ի վերոյ ասեալն։ Թագաւորս նոցա բուց յանուանեալ Ծենդիւան իւրոյ և քաղաքին՝

անուանեալ կոչէր և՝ Անդրոմաքա. առ որ Մոֆոբէնէն առաքեցաւ։—Պատմէ Մոֆոբէնէս թէ՝ ի բանտակին Անդրոմաքայ եղեալ գօրս 400,000։ Ալէքսիոս Նէֆոսոր, եղեալ զերկիրն յայնկոյս Ինդոսի՝ ի ձեռս Անդրոմաքայ, և ընկալեալ փիղս, և խնամութեամբ դաշն սիրոյ հաստատեալ՝ դարձաւ։"

ԱՅՈՒԴՆՏՈՍ ԿՈՒՐՏԻՈՍ։ "Փեդեղաս ապդ արար նմա թէ մեռանիս առուրբք՝ ի գեղոյն Ճանապարհ անկանիր զահագին անապատառն ցրգանգէս, մեծագոյն՝ ի վտակս ամենայն Հնդկաստանեայց։ Յայնկոյս գեղոյն բնակէին Պորհոսիէն, և Գանգարիդէ։ Թագաւոր նոցա կոչէր Ադգրամէն. որ կարէր հանել՝ ի գաշտ քսան հազար հեծեալս երկերիւր հազար հետեւակս, երկու հազար կառս, և զերիս հազար փիղս։ Այլ զի անհաւատալիք իմն թուեցան արքային բանքս, մատոյց զիրսն առաջի Պովրէայ, որ հաստատեաց զամենայն։ Էր յաւել եւ՝ թէ արքայն նոցա էր ոչ միայն յանուագ, այլ և՝ ի խայտառակ ծնողաց։ Զի սափրիչ էր հայր նորա, որ՝ ի սէր յանկուցեալ զամիկինն՝ հանաւ՝ ի ձեռն նորա յերես արքայի առն նորա։ Էր ապա նենգութեամբ կոչեալ զնա՝ հաւաքեաց՝ ի բառն իւր զորդիս նորա, որպէս թէ գայրկութեամբ մնուցանել, և անխնայաբար կոտորեաց զամենե-

սին։ Յետ որոյ ծնաւ զորդին իւր, որ թագաւորէ այժմ, բազմաց արժանի հօրն ցաւաթեան՝ քան իւրոյ ինքեան բարձրաթեան, զի քաջաբի ժանտ է նա, և արհամարհ յաչս իւրոց հպատակաց։"

ԱՐԻՈՆ։ "Մոգիսթենէս պատմէ մեզ լինիլ իւր յարքունիս Սանդրոկոսոյ։ Պայրաքաջաք Հնդկաստանի է Պալէմբոթրա՝ առ երկերօք Պրասոյ, ուրանօր երկոքին մեծամեծ գետոտայքն Էրբոնաւոտոս և Գանգէս խառնին։ Առաջինն ի սոցանէ ստորին գասի միայն քան զԻնդոս և զԳանգէս։"

ՊԼՈՒՏՈՐԳ։ "Թագաւորք Գանգարիդեանց և Պրասէանց սպասէին պատահել նմա անդ, (յարին գանգէսի) ուխտաւոր հազար հեծելազօրօք, երկերիւր հազար հետեւակօք, ուխտ հազար պատերազմական կառօք, և վեց հազար գազանօք։ Եւ այս թիւ զօրաց ոչ ըստ չափ անցեալ ինչ գրի։ Զանազի Մեդրոկոսոս, որ ոչ յետ բազում ժամանակաց թագաւորեաց՝ ետ ի պարգև Սելեւկոսի փիղս 500, և յաճեալ վեց հարիւր հազար զօրօք՝ Հ ամենայն Հնդկաստան՝ զամենեսին նուաճեաց։"

ՅՈՒՍՏԻՆ։ "Յետ բաժանման մանկագունիսեան իշխանութեան, Սելեւկոս մնեաց զբազում ճանապարհս յարևելս։ Առ իւր նախ զԲաբելոն և աճեցուցեալ զզօրս իւր, յաղթեաց Բակտ-

բիոց, ապա յարձակեցաւ Ի Հնդիկս, որոց բնակիչքն, որպէս թէ խորտակել կամեցեալ զանուրն Ի պարանոցաց՝ յետ մահուանն Ա-զէքսանդրի սատակեցին զկուսակալս կար-գեալս Ի նմանէ։ Սոնդրոխոտոս անն էր հայր ազատութեանս այսորիկ՝ որ վաղվաղակի յետ զաթոան ժառանգելոյ՝ փոխեաց զազատու-թիւնն Ի վերջին սարկութիւն։ Էր սա յատ-բին ծնողաց, այլ յաքսորութեամբ գիցն՝ զոր-սա պաշտէր, եհաս այնմ իշխանութեան։ Սա առ Ի մահ գաստապարտեալ Ա զէքսանդրէ, զերծաւ փախստականաբ։ և խնդրեալ զճանա-պարհացն՝ ընթացաւ։ ուր մատեաւ առ նա ա-ռիւծ, լիզէր զքրտունս նորա։ և փաղաք-շէրով գնովաւ զարթուցանէր Ի քնոյ։ Սո-վին զելից իրացն գուշակեալ զյաքսորուած՝ յարոյց գունդ մի հուզկահարաց, և Ի թի-կունս իւր ընկալեալ զգօրութիւնս Ցոգկաց՝ հաստատեաց զնոր հարստութիւն։ Ապա իբրև զմնաւ ածէր սա շէ բռամբ նուաճել զմարդ-պանս Ա զէքսանդրի, փիլ իմն սոսկալի թար-եկեալ առանց ուրուք վարելոյ՝ և հլու ընդ-առելութեամբ ընկալաւ զնա Ի քամակ իւր։ որով զօրավարեալ նորա այրընտիր քաջաց՝ յինքն յանկոյց զՀնդկաստան։ Ի ժամանա-կին՝ յորում Սելևկոս հիմն դնէր հանդերձեալ մեծութեան իւրոյ։ Ընդ որում դաշն եդեալ՝

դառնայ զդէմ ունիլ Անդիոքենէայ արշաւանացն։"

Զ ԱՄԵՆԱՑՆ տարաձայնութիւնս հեղինակաց ի մի փնջեալ աստանօր՝ թողում բանասէր Ընթերցողին նկատել զգուշութեամբ և տեսանել. զի գրիչք պատմութեանս ոչ ուրեք գտանելով զակնն պարզ. յորմէ առնուլ կարէին զումսն ականակիսի՝ պղտորեցին ըզգրուածս իւրեանց ինքնաՀպար աղճատանօք. և զանցս բովանդակ Հարստութեանն յանձն Հանդրգոուապայ միայնոյ դիզեալ բարդեցին։ Զոր օրինակ. Վիլսոնի զկալսոոքս շփոթել Ը Ն՝անդայ, որում և զաւակ ինեներորդ պարգևել զՀանդրգոուապա։ "Պարզ երևի ասէ. թէ Հանդրգոուապա սերեալ իցէ ի տանէ Ն՝անդէանց. թէ և ուղղակի ոչ անուանիցի նա որդի Ն՝անդայ։" Որով թէ զինչ իմացուցանել կամի, ոչ ի միտ առնում։ Բագավաթի ոչ ինչ յիշէ զծագմանէն՝ Հանդրգոուապայ. և մեկնիչ Վիշնուպուրանի մեծապէս սղալէ ի դնել իւրում զԼ՝ուրբա անուն կնոջն Ն՝անդայ։ Վրիհաթկաթա անտեղեակ իրական անցիցն Ն՝անդայ Վէրջնոյ և Հանդրգոուապայ դիւթութեամբ յարուցանէ զՅոգանանդա. և անաւօտ առասպելոք խճողէ զպատմութիւն աւուրց նորա։ Իսկ պուրանք նոյնպէս շփոթելով զկալսոոքս Ը Ն՝անդայ Վէրջնոյ՝ ծնուցանեն նմա ժառանգս

ինն Ալանդրոս կոչեցեալ՝ ի զանգուածոյ մասն վիժելոյ ի Ռոնանդոյ կնոջէ նորա։ Որ ըստ իմիք նմանի նորօրինակ եղանակի ծննդեանն Բինդուսարայ։ և Ռաչլաս ընդ Զանոէիս շփոթի։ Ցան նոքա և՝ Զանդրագուպայ Հարիւրաւոր թիւ եղբարց, որով և շփոթեն զնա ՇԷ Դէրմասովկայ որդւոյ Բինդուսարայ։ Ուր և առասպելեալ Ցարիմացութեամբ փրկութիւն Զանդրագուպայ՝ զազատութիւն Դանանդիագոսայ յայտ առնէ յեղբայրակոտոր սրոյն Ասովկայ։ Այս ամենայն Հաւաքմունք առաւել ևս հաստատեն զիմն դրութիւն։ Թէ յանուն Զանդրագուպայ ծանուցեալ իցէ բոլոր Մաուրեան Հարստութիւն։ Ուստի և վանող կուսակալացն յԱղէքսանդրէ, և քաջ ախոյեան Սելևկոսի լեալ իցէ, ոչ նոյն ինքն Զանդրագուպա Ասոջէն, այլ Ասովկ կամ Դէրմասովկ երորդն անուանեալ Զանդրագուպա, Ռանդրոկոպա ըստ յունաց, կամ Ռէսարդուպդ ըստ պարսից։ Ընդ որում և նոյնանան ժամանակք Սելևկոսի և Մագիսթինեայ։

—000—

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

Մահ Զանդրագոռ-պապայ. Թագաւորութիւն Բինդուսարայ. Փոր Եբէբորդ և Աբշանդն Աղեքսանդրի:

Յետ մահուան Զանդրագոռ-պապայ թագաւորեաց որդի նորաւն Բինդուսար. որ ըստ Պուրանաց Ամիտրաքա՝ ամս 28: Նոր օրինակ իմն պատմի յաղագս ծննդեանն սորա. ըստ որում գրի. թէ Զանուէյայ կամելով կրթել զաղիս Զանդրագոռ-պապայ յընդունելութիւն մահաբեր դեղոյ՝ խառնէր ի ճաշ նորա զթոյն մահացու. յամենայնի զգուշանալով՝ զի մի ոք հուպ մատիցէ ի ճաշ արքայի: Յաւուր միում իբրև նա զնացի պատրաստէր, և արգելոյր դիպաւ անձամբ տանել առ արքայ, ի ձեռն սպասաւորաց առաքէր ի ներքս՝ պատաղեալ ինքնին ի գբաղումն այլ և այլ գործոց: Բայց իբրև յանկարծ զմտաւ ած զվտանգն ահագին, գուն գործեալ աճապարեաց յապարանսն արքայի, մինչչև ուրուք մեռալ էր զձեռն ի ճաշ անդր: Եւ զինչ. յապշութիւն խոր կրթեցաւ նա, յորժամ ետես զտիկնաց Տիկինն, որոյ այլևս աւուրք եօթն խնդրէին ծնանելոյ՝ մեռեալ զառաջին պատառն ի բերան

իւր։ Պատեհի ոչ ժամանեալ արգելլոյ զնա ի մահաբեր ճաշակէն՝ ձգէ իսկոյն զսուր իւր և հատեալ զգլուխն՝ բանայ զորովայն նորա, և հանեալ զտղայն զեռեղէ զգուշութեամբ ի նորաբաց արգանդ այծոյ. կշիռ պահել ի բնական ջերմութեան զնորա կենսական ոգիս։ Եւ այսպէս զաւուրս եօթն անդադար յայծուց յայծս փոխադրելով զնա՝ յաւուր եօթներորդի հանէ զնա կենդանի, որպէս ի բնական արգանդէ. և անուն կարգացեալ նմա Բինդուսար խոյաղէպ, ի խայտէն զոր արիւն այծուցն դրոշմեաց ի նա՝ յանձն առնէ պաշտպանութեան դայեկաց մնուցանել խնամով և զգուշութեամբ։ Որ ինչ միանգամայն պատմաբանք Հնդկաց առանդեն զԻնդրդատայ չարադիւթէ մտանելոյ ի մարմին Ղանդայ վերջնոյ՝ և զնա ի կեանս վերակենցաղելոյ յաղմուկ և ի խռովութիւն աշխարհի, զնոյն Մրկնիչն Մահավանսեայ յիշատակէ մտանել ի մարմին Ղանդրագուպտայ բայց յայտնութեամբ Պրոհիպօ-այսինքն դրան բրահմանին՝ Բինդուսար սուսերաւ հատ ըզգլուխ աներեսին՝ և զմարմին հօր իւրոյ թաղեալ ի գերեզման հարց իւրեանց՝ խաղաղաւէտ կենօք թագաւորեաց ի Պատալի պուտրայ մինչև ցՄալվա,* անվրդով մա-

* Է նահանգ Հնդկաստանի յարեւմտից Գուջրաթայ. յարեւ-

հեծան ամենայն ՀանկուդԻպայ, և անհա-
կառակելի տէր Կալինգայից կամ Ծոցոցն Հնդ-
կաստանի: Ի վերջաստան կանանց անտի սո-
բա ծնան սմա մերձ հարիւր որդիք: Որոց
յամենայնի զօրաւորագոյն գտեալ Ասովկայ՝
առաքեցաւ ի Մալվա՝ մարզպան համօրէն
արևմտեան սահմանաց:

Ի ՀՆԳԵՏՍԱՆՆԵՐՈՐԴԻ ամի թագաւորու-
թեան Բինդուսարայ, պայազատեաց գաւա-
ռակողմանցն Ինդոսի Փուր, կամ Պուրուշ Երկ-
րորդ, և ընդ իւրև գրաւեալ զազգս եօթն
զանազանեալս լեզուօք և կրօնիւք՝ տարածեաց
զգաւազան իշխանութեան իւրոյ ի գետեզե-
բացն Ինդոսի, մինչև ի Հուստինափուռ. ե-
զեալ միահեծան տէր ամենայն լեռնական
խժիցն Ցոգկայինն կովկասու: Աբիսարէս

մէջ Անլահատատայ և Որիսայ. ի հիւսիսոյ Անմերայ. և ի հա-
րաւոյ կանդիլայ, 250. մղոն երկայնութեամբ, և 150 մղոն
լայնութիւն: Է մի յընդարձակագաւառ, բարձրաւանդակ և պէս-
պիսադիրք նահանգաց ալեարդին. ի հարաւոյ արևելից ունելով
զերինն կուրթվանայ 170. մղոնօք: Բաժանեալ ի մէջ Ռաջայիցն
Պունանդ անուանեալ Մահրատայից: Գլխաւոր մայրաքաղաքք
են Նորա Ուջեն կամ զանի Թուջարա կառուցեալ իբրև 400. ամաք
ն. Ք. առ ամն գետոյն Սիպերայ, որ խառնի ի Ջամայ. և Ին-
դօռ, իբրև 28. մղոնօք հեռի յՈ. ջենայ ի հարաւոյ յարևելից
Նորա: Գաւառք են ի նմա մեծասանք, Ուջեն, Ճենդրի, Սա-
բէնկիսուռ, Հարաքաղ Անլամիրփուռ. բահլ կակրոն, Գաւարէ,
Գոբրիբրանդ, Մանդսոր, Հադիէ, և Մանդուպատ, ուստի ելանեն
ազգի ազգի նուրբ կերպասիք, կաւիք, և լեզակ առատ:

փոքրիկ ոմն Թագաւոր իշխէր լեռնագաւառացն քաշմիրայ : Եւ Տակսիլէս կամ Տակշակ՝ միջագետացն Ինդոսի կամ Սընդայ * և Հիդասպեայ կամ Վիլլոսայ, որպէս և այլք յայլ և այլ տեղիս : Իսկ Աղեքսանդր յետ տասնամեան պատերազմին ընդ Դարեհի Նոթոնի արքայի Պարսից, և Բեսոսի սպանման ի վրէժ ձեռնիրկութեան նորա առ արքայն պարսից, դէմ եդեալ ամենայն զօրօք իւրովք՝ խաղաց յայն սահման ասիական աշխարհի, որ յեզերաց Ալիանի Ծովոյն տարածէր ցեղերաս Ռքսոն գետոյ : Եւ յինքն պարուսակէր զնսխինին Հիւրկանիա, զաշխարհն Արեաց, և զԲակտրիա, որք միահաղոյն առեալք՝ կոչէին Սկիւթիա : Մուտ ի Սարականդա, (Սամարղանդ,) որ յայնժամ քաղաք ականաւոր ի հմտարին Քաբուլստան, և առ յապոյն շահաստան հաւասար իւրումն

* Սինդ ի հնումն անկանէր ընդ իշխանութեամբ Մուլթանայ, տարածեալ յերկուստեք Ինդոս գետոյ, ընդ մէջ 24. և 27°. Հ. Լ. Է երկիր դաշտային ոռոգեալ հինգվտակեանն Ինդոսիւ, որ ամ ըստ ամէ յորդեալ արտաքս ըստ Նեղոսի, պարարտացուցանէ և բարեբեր առնէ զնա։ Նպա զհետ գայ վայրենական վայրաց նորա անապատ խռպան և անջրդի, շրջապատեալ ապառաժուտ և աբեւակեզ լերանբ։ Երեքհարիւր մղոն յերկայնութեամբ տարածի, և հարիւր վաթսուն ի լայնութիւն։ Բնակիչք նորա ՃՄԵՏ մասին Մահմետականք են Սունիի աղանդով։ Մայրաքաղաք նորա է Հէյդարապատ։ Իսկ բերք նորա ամենայն տեսակ արմտեաց, օրիզ, իւղ, ալիսալա, մորթ, կուշ, աղբորակ, Ինդ-

Մակեդոնիոյ։ Ուր նստաւ ի Ֆաղանգութիւն նուաճել իւր զբմբոստս յամրին. և զԵփեստիոն և զՊերդիկաս յղեաց անտուստ ընդ կիսոյ զօրացն խաղալ մինչ յինդոս, Ինդ, և պատրաստել նաւականի, զի և՝ յայնկոյս զզօրսն անցուցանիցէ։ Եւ ինքնին զկնի նոցա, և Կրատերայ պատուէր տուեալ զի զկնի եկեսցէ փաղանգաւն, անաշխատ վանեաց զառաջեաւ զնիզակեալս ընդ դէմ իւր՝ մինչ ի քաղաքն Նիսա, հզօր պարսպեալ։ Ընդ որում մարտ եղեալ՝ տիրեաց. թէև նեռիւ խոցեցաւ ի բնակչաց նորա։ Եւ խաղ սպանդարամեռոնի կատարեաց անդ զաւուրս երկոտասան։ Յարձակիցաւ անտի ի Պազագս, և զհզօր քաղաքն պաշարեալ զԱղէսովփեայ գժիսյի որ յետ առն Աշականայ թագաւորէր։ Զաւուրս ինն երկարեցաւ պաշարումն, և Աղեքսանդր խոցեցաւ նեռիւ ի զիստ

բուկ. լեղակ. երիվարք և ուղտք։ Յետ Աղեքսանդրի մեծի ոչ ինչ արժանի յիշատակաց պատմի զամանէ մինչև յՄահմուդ մեծն Ղազնավի։ Ի 1739. սահմանք յարև մուտս Ինդուսի լցան ի ձեռս Նադիրայ բռնաւորին Պարսից. այլ սպանիլ Նորա յիւրոցն աղաւ կային իշխանք Նորա ի Լծոյ Պարսից, և ի վերին երեսս հպատակ խոստանային զանձինս ինքնակալին Դիլբեայ։ Ի 1786. յարեցան յարքային քաջալայ՝ որ զՏաճիալի եղերարքն իւրովք կարգեաց մարզպանս աշխարհին։ Որք միաբանեալ համախորհուրդ կառավարեն զայն մինչ ցայսօր ժամանակի որդիք հարց ժառանգելով։ Բաին սոքա զհզօր դրեան Ամիրկօնա երեսուն մղոնաք յարևելս Ինդոսի. և անդր ժողովեցին զգանձս իւրեանց։

իւր, բայց ի վերջոյ տիրեալ նմին՝ կարգէ վերատին զթագուհին յիշխանութիւն իւր. և ինքն ընդ ապառաժ կապանս անցեալ Հիմալեան լերանց՝ որք բաժանեն զՍիդկաստան մինչև ի Կոմորեանն հրուանդան, բանակ հար ի Պարապոմիսա: Զորս քաղաք ի ձեռն Պոլիսպերքոնի կալաւ, և զԱւորնին վիմաբերթ անակնկալ յաջողութեամբ գրաւեալ՝ զոհս դիցն մատուցանէր գոհութեամբ: Ապա խաղացեալ վեշտասանօրեայ ճանապարհաւ՝ եհաս յափն Ինդոսի, ուրանօր պատրաստի գտեալ զկարևորս անցի զօրացն՝ զուարճացաւ յանձն իւր: Ատ Ոմիէս պատարագս առաքեալ Աղէքսանդրի ի ձեռն եղբօր իւրոյ, ի վաղիւ ինքնին յանդիման լինի նմա ամենայն զօրօք: "Գամ ասէ, ամենայն զինուորութիւն իմով տալ զոսպա քեզ. քո եմ ես, և ամենայն թագաւորութիւն իմ. ոչինչ է քեզ ահագին բայց միայն հաւատարժութիւն՝ որ միայն վասն փառաց մարտնչիսգ:" Աչ խաղաղութեան տուեալ նմա Աղէքսանդրի հարցանէ. "Զօրացի՞ են պէտք քեզ, թէ մշակաց:" Ասէ. "զօրաց. քանզի Աբիսար և Պուրուշ յայնկոյս Հիդասպեայ նեղեն զիս պատերազմաւ:" Սա թագ կապեալ կոչեցաւ Տակսիլէս, որ բազմաց ի թագաւորաց երկրին էր անուն, սերելոցն ասեմ ի Տակշակեան տա-

նէն: Ի վաղիւ անդր և հրեշտակք յԱբի-
սարայ զամենայն երկիրն անաշխատ արարին
ընդ իշխանութեամբ նորա: Եւ Պովղոսի
պատգամ առաքեալ զի անձնատուր լիցի,
խրոխտ զգարձն ընկալաւ: "Եկից ասէ, զէն
ի ձեռին պատահել քեզ:" Յայնժամ կացոյց
Աղէքսանդր զՑակսիղէս ի վերայ փղաց, և
խաղաց գնաց յերգը գետոյն Հիդասպայ, որոյ
ի միւսոյ կողմանէ բանակ հարեալ Պովղոսի,
զառաքեաւ բանակին փիղս հուժկուս ճակա-
տեցուցանէր. զկնի նոցա՝ զկառս պատերազ-
մական. ապա զերիս բիւրս հետեւակաց, և
զհեծեալսն ի վերջոյ քան զամենայն: Իսկ
ինքն հեծեալ ի փիղ իմն սոսկալիթխար և
յաղթանդամ, նոր ոմն գոգցես երևէր սաւուղ
բարձրահասակ և ահաւոր ի համօրէն բա-
նակին: Իսկ վասն անձրևային գոլոյ եղանա-
կին՝ գետն յորդեալ ծովանայր առաջի նոցա,
և թշնամին հզօրագոյն յանդիման երևեալ
յաղարտ հանէր գրեթէ զամենայն ճարս խոր-
հրդոց նորա: Որմնեալ Աղէքանդրի զկղզի
մի գետ անդ՝ քառասուն սասպարիզօք հեռի
ի բանակէն՝ զգիշեր ամպրոպային դիպահոլ
ընտրէ, առնու զընտիր ընտիրս ի կորովի պա-
տանեկաց, անցանէ առ այն, և ի վաղիւ անդր
անցեալ յարևելեան կողմն գետոյն, հալա-
ծական վարէ զառաքեաւ զառաջնապահակս

զօրացն Հնդկաց: Պովրոս անկասկած կայր ցայն վայր, ընդդէմ Կրատերայ միայն ակն կառուցեալ. քանզի պատուիրեալ էր նմա Աղէքսանդրի դղրդիւն մեծ առնել ի բանակին, և կարծեցուցանել զՊովրոս թէ ընդ գետն անցանել ջանայր: Իբրև ազդ եղև Պովրեայ Աղէքսանանդրի ընդ գետն անցանել, զօրահատոյց եղև, և զմի յորդւոց իւրոց առաքեաց պատահել նմա: Այլ որդին ի ճակատուն անկաւ, և զօրաց բազումք մեռան, բազումք գերեցան, և բազմագոյնք եւ՝ փախեան: Գոյժ մահու որդւոյն կարի ի խոր խոցեաց զսիրտ Պովրեայ. բեկան և զօրք նորա, որք յառաջոյ զԿրատեր տեսանէին խիզախել յանցրս գետոյն, և ի թիկանց զԱղէքսանդր յարձակել ի վերայ հզօր զօրութեամբ: Այլ արին անվեհեր և ոչ ի միոյ ի ձախողակ պատահարացն վհատեալ՝ ընդ յառաջ ելանէ քաջին, ճակատ կարգէ ընդդէմ նորա սքանչելի զգօնութեամբ, և զգիմի հարկանէ նմին աստուածազանց կորովութեամբ: Այլ զի ոչ զօրք զօրացն հաւասարէին, և ոչ փիղք յունական այրուձիոյն՝ փախեան զօրք նորա. իսկ ինքն որպէս արդարև զօրավար, ոչ ըստ նոթանի նախափախուստ խուսեցաւ ի բաց՝ այլ ցվերջին ամենայն զօրաց իւրոց ճգնեցաւ ի վերայ մարտին, մինչև վէր յուսն ընկալեալ՝

դարձոյց զգլուխ փղին։ Զոր ի պայծառ նշանացն ծանուցեալ Աղէքսանդրի անձկացաւ փրկել զնա. վասնորոյ և աղաչաւորս մի զկնի միոյ առաքեալ, հրաւիրեաց գալ անկասկած առնկքն։ Ճշմարիտ արիութիւնն ի վտանգին հրաշանայ. յանդիման եղև Պովրոս Աղէքսանդրի, ոչ իբրև ընկճեալ ոք, կամ գերի, այլ իբրև զգոռ պատերազմող։ Խօսեցաւ առնա յաղթողն տիեզերաց, "Որդեա՞ էլայոյ ղէնչ Պովրէ՝։ Եւ նա ասէ. Որդեա թագաւոր։ Հաճեցաւ Աղէքսանդր ՇԷ վսեմութիւն խորհրդոց նոցա, որ ի թշուառութեանն յաւէտ իմն պայծառանայր։ Եւ դարձոյց նմա ոչ միայն զթագաւորութիւնն թագաւորաբար կորուսեալ՝ այլ և՝ զգաւառս բազում յիւրոց յաղթութեանց։ Շինեաց զքաղաքն Նէէֆ ի բանակետղ յաղթութեան իւրոյ, առաւել ի պաշտպանութիւն անցի գետոյն։ Եւ զԲոկեփաղա, ուր ցլագլուխն իւր մեռաւ երիվար։

———ooo———

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ.

Խորհուրդ յաւուրս արշաւելոյ Դնելոյ ցԻրանգէս.
Օրացոյն Բաղոչ. Նէարխոսն յԱվէլիանոս
և էր ի Խորելոն դարձ։

ՎԱՂԱՎԱՂԱՅՈՏ ի պատերազմ, և բարեբաղդ ի յաղթութեան՝ Աղէքսանդր, յանձն առնէ

Պովրեայ զմիջագետս Հիդասպեայ (Ջելոմայ) և Ակենեսեայ, (Խուռնաբայ,) զաշխարհ բազմամարդ, որ պարունակէր յայնժամ քաղաքս յիսուն և վեց. և հաշտութիւն ընդ նա արարեալ և ընդ Տակսիղէս օրերիմ նորա, անց ընդ Իդրայովտ կամ (Ուռվէ) գետ: Ուր լուաւ թէ ազգ ինչ հզօր Կոթայ կոչեցեալ, (որ թուի ցեղ իմն գոլ սկիւթացւոց.) մարդք ի մրցմունս պատերազմաց՝ գան զփորձ զօրութեան իւրեանց կշռիւ բերել ընդ մակեդովնական ահաւորութեանն: Ուստի դիմեաց ի վերայ նոցա. զվեշտասան հազար ի նոցանէ կոտորեաց սրով. զեօթանասուն հազար գերեաց, և զմնացորդսն ի փախուստ առաքեալ՝ տիրեաց ամենայն սահմանաց նոցա: Խաղաց ապա ի վերայ Ռվսիդրակաց, որ ի * մուլթան և ընդ պարիսպն անցեալ ի հրապարակ քաղաքին՝ շարժեաց ի վերայ իւր զբազմամարդ ամբոխ նորա, այլ թիկունս կառուցեալ նորա ի ծառ հաստարմատ, և սուր ի ձեռին մե-

* Դահանդ Հնդկաստանի ընդ մէջ 28. և 31. աստիճանաց Հիւսիսային Լայնութեան, ի հիւսիսոյ սահմանակից է Լահոռայ, յարևելից Դիլլեայ, ի հարաւոյ Սինդայ, և յարևմտից Պարսկաստանի և Ղանդահարայ: Բերքք նորա են բամբակ ազնիւ, շաքար, Ոփիոն, գիտոց, և ծծումբ: Էր և անուն քաղաքի շրջ մլոնօք յարևելս հարաւոյ Խունաբ գետոյ: Շրջապատեալ հզօր և բարձրաբերձ պարսպօք, և զարդարեալ բրգօք և աշտարակօք համաչափ տարակայութեամբ անշրջպետելով յիրերաց: Ուստի

նամարտեցաւ ընդ նոսա, մինչև հասին Թիկ-
նապահ զօրք նորա առաջնորդեալք անդր ի
Պաղեստեայ և ի Լեմնեոսք: Ուր Թէպէտև
նեռատահար եղև ի Տիդիէ, այլ զվիրաւորիչն
անդէն սատակեալ՝ տիրեաց քաղաքին, և
մնաց անդ զաւուրս եօթն վասն վիրին ողջա-
նալոյ. որոց մարզպան կարգեալ զՓիլիպոս
և պատանդս առեալ անցանէ անտի ընդ Հիւ-
փասիս կամ Ամանդ գետս, (որ է այժմեան սահ-
մանն Սիկ Թագաւորութեան և Բրիտանացւոց
ինքնակալութեանն ի Հնդկաստան:) Ուր
ազգ լինի նմա զգանգիսեան ինքնակալութիւն
Պատալիպուտրայ՝ յորում իշխէր Բինդուսար
որպէս Թէ կարող իցէ հանել ի ճակատ
պատերազմի վեց հարիւր հազարս հետևա-
կաց, երեսուն հազարս հեծելոց, լինն հազարս
փղաց, այլովք հանդերձ: Ցետ տեսանելոյ
նորա զմեծամեծ գետոցս աշխարհի զնեղոս,
զտիգրիս, զեփրատ և զինդոս՝ իբրև լուաւ Թէ
գանգէս զամենեքումբք անցանէր՝ յղացաւ ի

զմիմնաբերթն ի բարձրաւանդակի. ուր են գերեզմանք Թագաւորաց: Ամիսս կառավարի ի ձեռն նաւաբի ուրուք, որ ընդ ամենակուրեամբ կայ Թագաւորին Բղուանից: Կայ ի քաղաքի այսմիկ ազգ մինչ Հնդկաց, ի Ռբինեկոյ համարեալ կամայս, զորս երեք Բղէքսանդր առ ամն Մալլեայ. Գաւառք են նորա՝ Մուլթան, Բաղէր, Դեպալփուռ, Սյուսան, և Մոզպատ: Ջերուազոծք են բնակիչք սորա բերեալ, կուսի սպիտակ, խոզ ընտիր, կերպասիք ազգի ազգիք. և Ճամուկք:

միտս իւր տիրել և՝ այնմ մասին: Այլ զօրք նորա որք յամ քայլափոխս արշաւանացն յոչ ինչ առաւել փուլթային քան նոր ի նորոյ ընծայել զանձինս պատարագ հաճոյից նորուն ծիւրեալք զարդիս ի բազմամեան աշխատութեանց և յոգոյն անբարեխառնութենէ՝ միաբան շէգեմ կացին կամաց նորա: Ուստի հարկեցաւ զՀիփասիս գետ դնել կետ յաղթութեանցն՝ և դառնալ յետս: Բայց որովհետև կամք էին նորա բարձրացուցանել զփառս պարծանաց իւրոց նորանոր յաջողութիւնք՝ ընդամենեան նաւարկուէք ընկերացաց Նէարխոսի յափն Ովկիանու. և թոզեալ անդ զգունտ մի զօրաց ի պաշտպանութիւն նաւատորմղին՝ հրաման ետ Նէարխոսի քերել զեզերօք գուլբաթայ և Բիլուջաստանի ցծոցն Պարսից: Եւ ինքն ընդ Կրմանիա և շէ Պարս ճանապարհ արարեալ՝ գնաց ի բաբելոն. ուր մեռաւ 323. ամօք ն. փ. Պատմի թէ կարգեաց Աղէքսանդր զերիա ի մեծամեծ նախարարացն իւրոց, զՊտղոմէոս որդի Ղագոսի, զԱրիստաբուլոն և զՆէարխոն գրել զամենայն անցս ճանապարհորդութեանէ իւրոյ, զգիրս աշխարհաց, զգետս, զծովս, զլերինս, զծէս և զկրօն ժողովրդոց այլազգեաց հանդերձ: Գիրք իմն ի Հայումս տեսեալ է իմ ի մանկութեան յէջմիածին՝ անուանեալ Պատմութիւն Աղէքսանդրի. այլ տխուր,

զի յայսմ ձեռնարկութեան չգտի զայն, և ոչ մատեան մի ի նախնեաց, յորմէ նպաստ ինչ առնուլ մարթ էր ինձ: Զիարդ և իցէ սոքա զպարծանս քաջագործութեանցն մշանջենաւորեցին ցիսնարհումն Յունաստանի. որպէս խոստովանի Արիան, առեալ զնոսա յառաջնորդ ինքեան ի գրել իւրում զպատմութիւն յարձակմանցն Աղէքսանդրի: Որով և առասպելեալն Հնդկաստան, համարեալ ի նախնեաց երաշխեալ երկիր Կիկղոպսաց կամ Հրբբուղս համատարած բորբոքեալ՝ անբնակ ի մարդկանէ՝ զառաջինն ծանուցաւ աշխարհի բազմամարդ և մեծահարուստ մասն Ասիոյ. որ թէև ապերջանիկ ի պատճառս անբարեխառնութեան օդոյն, և երջանկացուցանէր զքաղաքս բազումս իւրովք զարմանագիւտ վաճառօք: Անգարդ՝ ի մասին մերկամարմին բնակչացն, սակայն բերհեզիս նրբաթելս և զառնաւուխտ դիպակիս առատօրէն անկանէր ի զարդ շքեղութեան Տիւրացի Տիկնաց և ի խեռնեշանս մոլորելոցն Իսրայելի. զորս և՝ նախատէ Եսայեաս: Նաև զբարս և զբնութիւն բնակչաց, զօրէնս և զպաշտամունս նոցա. զորս անարժան վարկուցեալ տեղւոյն՝ վճարեցից յերորդ մասին ճանապարհորդութեան իմում, առընթեր Ցուութեցն դնելով և զակամատես ստուգութիւն իմոց հետազօտութեանց:

—ooo—

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԻՆ

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ

ԳԻՐՔ ԵՐՈՐԴ.

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Թագաւորութիւն Լսովվայ և Փոխարքայութիւն Դիւանանպիտպաէայ :

Ի Մեռանիլ Բինդուսարայ կամ Ամիտրաջայ, անկաւ աղմուկ շփոթի յորդիս նորա. որք էին թուով հարիւր ծնեալք ի վերջասան մարց: Յորոց Ասովկ՝ որ ի կենդանութեանն հօր իւրոյ կարգեալ կուսակալ Մալվայ՝ առաքեալ էր անդանօր՝ վասն կասկած սպանութեան զնմանէ կրելոյ հօրն, սերեցաւ ի գերդաստան մեծ, և ծնաւ զՄահինդս և զԱնղամիթա այլովք ուստերօք և դստերօք հանդերձ: Այլ ի մեռանիլ հօր իւրում ընկալեալ զՏերեան Ազգեցութիւն ի նախարարէ դրան արքայի, աճապարեաց երկն ի Պատալիպուտրա. և թաղեալ զհայրն իւր՝ ձերն արկ մեծամեծ պատերազմաք և արեան ճապաղեաք ջրեն-

ջել ի միջոյ զբազմութիւն եղբարց իւրոց, և տիրել ամենայն Ճամբուդիպայ: Ամք վեց անցին ի մահուանէ Բինդուսարայ, և ամք երկերիւր տասն և ութ ի մահուանէն Բուդայ, մինչ կարաց սա հանդիսացուցանել զոր թագադրութեան իւրոյ իբրև 313 ամօք ն. ք: Եւ հաստատութիւն գերակայութեան նորա քարոզեցաւ գոգջիր նոր իմն սքանչելեօք մղոն առ մղոն յաշխարհ ամենայն: Զառաջութիւն թագաւորութեան սորուն հռչակել կամեցեալ Մահանամայ՝ ստեղծանէ այծեմանց և կնճիռ վայրենեաց՝ ինքնաբերաբար դիմել ի խահանոց անդր, և զի բուդեանք զանասուն ոչ զենուն ի կերակուր, մեռանիլ անդ ըստ կամաց: Թուութակաց բերել ամբարելնմա անբաւութիւն որիզոյ, և մեղուաց գալ գործել նմա զմեղր: Նա և դայլայլիկ հաւուց երամովքն խոյանալ և նուագել ի լուր նորա զքաջերուքն երգոցն երաժշտականաց: Ցաւուրս սր թուի պայծառանալ երկրագործուքն և արուեստից ի Հնդկաստան: Զի ջուր ի լճոյն Անոթամթայ բերեալ ըմպէին թագաւորն և ժողովուրդք իւր: Եւ ի լեռնէն Հիմավանտայ՝ գրոհեցին ածին ի քաղաք անդր Մ֊ուրլ֊ ատամանց վասն հազարաւորաց: Փոխադրեցին անդանօր և զպատուական արմատս բժշկութեան, զՄ֊ուլ֊ն և զՀ֊ուրլ֊ն

և ՀԱՄՔ պտուղ ամենահամ, բնաղանցօրէն գե-
ղեցիկ ի տեսիլ և ի ճաշակ միանգամայն :

ԱՊՍ. Եհան զկրսերագոյն յեղբարց իւրոց,
զապրեալն ի բնաջինջ կոտորածէն՝ փոխարքայ Եմարևլից : Քանզի ի դառնալն Յուրբե-
նայ և ի կոտորել զժառանգս ամիռոյն՝ կին
Սամանոյի եղբօր իւրոյ յղի գոլով յայնժամ,
ելանէ Ղ արևմտեան դուռն քաղաքին և պա-
տահի Նիգրոդոյի Դևթայի. որ յանուանէ
կոչելով զնա՝ տայ նմա զտեղի բնակութեան
ի գիւղ ուրեք Զանդալաց կամ անտոհմակա-
նաց : Եւ յաւուր այնմիկ ծնանի նա զորդին,
և անուանէ զնա Նիգրոդ ի պատիւ պաշտ-
պանի իւրոյ : Իսկ իշխան Զանդալաց գտեալ
զտիկինն յայնմ վիճակի՝ սպասս տանի նմա զամ
եօթն անընդհատ : Յաւուր միում տեսեալ
Սահա-Վարունեայ Թերոյի զղայն ծնեալ
ամենայն կատարելութեամբ պատշաճելով
սրբութեան Աբրահոմի, չօգքաւ առ մայրն և
հաւանութեամբ նորուն ձեռնադրեաց զնա ի
քահանայ : Որ յիսկ և իսկ ի խուզել հերացն
ընկալաւ զաստուածէ հոգւոյն ի կրից զգա-
յականաց : Եւ մտեալ ի քաղաքն պատահե-
ցաւ արքայի, որ այնքան սերտացաւ ի բարե-
կամութեան նորա, մինչ ասիցես թէ՝ վաղու
արդեօք մտերմացեալ էր ընդ նմա : Յաւելու
պատմել աստանօր թէ ի նախկին ծննդեան

երեք եղբարք մեղրավաճառք մատակարարեալ զմեղր Պաչի բուդայ ուրումն յոլացան ի միտս իւրեանց զանազան կարծիս բաղալի: Ուստի և յայսմ վերածնութեանն ի նոցանէ եղև Աստվի: Որոն նիգրոդոս, և միւսն Տիսոս կամ դևանանպիտիոս, այսինքն Ս. Աստուածածնի Տէր: Վասնորոյ կոչեալ արքայի յազգարանն իւր նստուցանէ զնա ի գահն արքունական և բացեալ սեղան առաջի նոր հարցանէ զվարդապետութեանն և զկրօնից բուդայ: Իսկ ի բանալ նոր զբերանն ասկի՝ ասկերէն ինն վարդապետուն՝ զուարճանայ արքայ և խոստանայ նմա զկերակուր ութն ոգւոց առօրին: "Տէր, ասէ ցնա Նիգրոդոս. զայդ կերակուր մատուցից ես երիցուն, որ ձերոնադրեաց զիս:" Յաւել արքայ ութն ևս. նա մատոյց զայն իւրոց ուսուցչաց: Այլևս ութն, և նա մատոյց քահանայից, մինչև ցչորիցս ութն՝ զոր ընկալաւ ի մնունդ իւր: Եւ այսպէս օր ըստ օրէ սիրելի եղով յաչս արքայի դարձոյց զնա յազանդն բուդայ և ի շնորհն պահելոյ զամենայն պատուիրանադրեալսն առ ի նմանէ:

Հարթ և հաւքն Աստվկայ բրահմանապարիշտք գալով՝ կերակրէին օրըստօրէ ոգիս վաթսուն հաղար բրահմանաց: Իսկ Աստվկայ դարձեալ յազանդն բուդայ՝ հաղածեաց յերեսաց իւրոց զամենայն բրահմանս և փոխա-

նակ կարգեաց նոցա վանական Հաղարս բուդեանց, զորս և կերակրէր զամենեսին յուսով հասանելոյ հանդերձեալ երանութեան: Լուեալ սորա թէ վարդապետութիւն բուդայ պարունակէր քարոզս ուխտսուն և չորս հաղար, "շինեցից ասէ տաճարս առ մի մի ի նոցանէ:"— Լուեալ սորա թէ Արակալոն արքայ Նագաց *, որոյ տարերք ձգէին ցկապոն մի ժամանակի, տեսեալ էր աչօք իւրովք զգովտամ, առաքեալ շղթայ ոսկեղէն կապեաց և ածն ի քաղաք տէրութեան իւրոյ. Հարց ցնա վասն անձին նորա, և արքայն Նագաց նոր սքանչելեօք ի վեր երևեցոյց նմա զպատկեր բուդայ, որ ունէր զերեսուն ձիրս անձնական գեղեցկութեան՝ փայլէր ուխտսուն ձգողութիւն կատարելութեան մարմնոյն, և շրջապատէր փառօք և բոցով հրոյ սրբութեան իւրոյ: Վասնորոյ կարգեաց Ասովկ տօն եօթնօրէիցն, որ կոչէր Տօն Տէռո-Բէռան: Զի զաւուրս եօթն երևեցաւ նմա պատկերն բուդայ: Ի պատճառս նախկին եղեռնագործութեան եղբայրասպան անգթութեան իւրոյ՝ Ասովկ կոչեցաւ արքայ, այլ յետոյ ի պատճառս մեծամեծ բարեգործութեանց և ողորմածութեց իւրոյ՝ Դարմասովկ ճանաչէր: Սա գոգջիր նոր իմն

* Երկիր Նագաց անկանի յԱչամ՝ կոչի և մայրաքաղաքն Թերարայ Նագփուռ, յաղագս գոլոյ նորա ի վերայ Նագ գետոյ:

«քանչելիօք այլ տրաք ամենայն տանայրաց, որ յովհիմանապան շնորհաց իսպ. և զամենեսին զարդարեաց զարքայութիւնս և մեծամեծ պարգևօք: Այլ զի տրաքին բարեբարութիւնք զներքին իմիջի մասին մաքրել ոչ կարեն, այլ ընդ Հակառակն յանգարտուանուէ առաջնորդեն զնարքն կայցեալ տրա ի ժառանգի ուրեք քահանայից. ասէ, «Տեսարք. զի՞ օք առատաձաշիս ծաներքաք ի Հաւատացեալս երանարար ստատածութեանն:» Որում պատասխանեաց զրգին Մանկաբանի թէ «և՝ ի մարմնի կենդանութեանն փրկարար տեառն՝ չեկաց օք առատագոյն քան զքեզ:» Յաւել արքայ Հարցանել, «թէ մարդի ինչ՞ իցէ տան եղբայրասիրանի որդիս եաս եմ. ընտանի գոլ Հաւատոց բուդայ:» Յայնժամ թարգման նախատացեալ տեսանելով զանծանաչ կատարելութիւնս Սահինդս որդւոյ նորա, և զԱնդամիթայ դասերն՝ ասէ. «Իշխան աշխարհի. որ օք առատաձաշիս լինի ի Հաւատս ազանչելոյն՝ բարերար միայն է անուն նորա: Իսկ օր նուիրէ զորդի և զդուստր իւր ի սրբութիւն օրհնեաց նորա, ոչ միայն բարերարք, այլ բարեկամ և ընտանի անուանի:» Յայնժամ մատայց նա զուստր և զդուստր իւր ի քահանայութիւն, որում ի վաղուց հետէ անձկային հատանել: Վասնորոյ և յաւուր յայնմիկ եղ

բայը և քայը ի միասին քահանայացան հաւատոց բուդայ, և առաքեցան ի Լանքա բազմութեամբ միանձանց և միանձնուհեաց՝ քարոզել անդ զհաւատն հօր իւրեանց: Դարմատսվկ թագաւորեաց ամն երեսուն և եօթն: Սահավանսի մեռեալ ի հրաշս կրօնից իւրոց, ոչ ինչ այլ յիշատակէ զվերջնոց Դարմատսվկայ. կամ զյաջորդաց նորա: Այլ ինձ հաւանական ի՛մն երևի, թէ յետ վեցամեան անիշխանութեան ութուոյն՝ հանդիպելոյ թերևս ի սակս հակառակութեանն ծագելոյ ի ժառանգս նորա, բռնացեալ գեանանպիտաստեայ փոխարքայի նորա՝ կալեալ իցէ զերասանակ տէրութեանն, և ի Ցոնեայ ըստ ֆրեշտայ՝ հալածեալ ի կղզին Սէլան: Քանզի գրէ նա թէ Եակշա որդի Պուրուշայ երկրորդի, տակաւին սանդի գոլով՝ թէ և ի մեռանիլ հօր իւրում թագաւոր քարոզեցաւ. սակայն աւագանւոյ դրանն կաշառակուր եղեալ յեցան ի Սիսարքունդ, կամ ի Զանդրագուպտա արքայն Պրասիքայ. և զմահերեծան տէրութիւն Պուրուշայ ՇԷ ձեռամբ գրաւեցին օտարոտի բռնաւորին. մինչև հարկեցաւ արքայն իւրեանց զանուն ևեթ կրել թագաւորի. և հեծուիթ ՇԷ իքանել ի գերեզման: Իսկ յոնա որդի նորա պատանի քաջակորով և անձնեայ, պայազատեալ զիգրիկ կալուածս իշխանութե

հօր իւրոյ՝ բարեհամբաւոյր վարուք իւրովք շա-
հեցաւ զսիրտս մեծամեծաց աշխարհին, մա-
նաւանդ զորոց հարստահարեալքն էին ի Սի-
սարքունդայ: Եւ դաշնադիր եղև ընդ նոսա
դարձուցանել յառաջին բարձ իշխանութեցն՝
եթէ օգնական լիցին ինքեան ընդդէմ բըռ-
նացելոյն այնորիկ: Եւ այսպէս զօրացեալ և
պրկեալ զթիկունս իւր, տակաւին զանգիտէր
յայտնի զդիմի հարկանել Ասովկայ մինչև
ցթագաւորել Պիտդասայ, որ գժտութեամբ
բրահմանաց շարժեաց ի վերայ իւր զզօրուն
Ցոնայ. և ի պատերազմի անդ ձերբակալ ե-
ղեալ՝ ՝ի ոմանց եդաւ ի բանդի, և ՝ի ոմանց
հալածեցաւ ի Սելան: Յորում վախճան առ
թագաւորութիւն Մաղադա, որ ընդ զա-
նազան հարստութեամբ տևեաց ամս 2000.
լուսաւորագոյն լեալ իմաստութեամբ և հան-
ճարով, և մեղմագոյն կառավարութեամբ քան
զբազումս ի թագաւորաց այլ և այլ տեղեաց:
Յորս Ղանդրագուպտա և յաջորդք իւր՝ անցին
զամենեքումբք քաջութեամբ՝ և հանճարով միան-
գամայն: Որք իշխեցեալ ծովեզերեայ սահ-
մանացն Բանկալայ և Որիսայ՝ կերտեցին իւ-
րեանց զբաղմութիւնս նաւաց. և սկսան տա-
բածել անտուստ զծովածիին առևտուր յամ
կղզիս աշխարհին և անդր քան զսվկիան:
Բացին արքունական պողոտայս ի Պատալի-

պուտրայ մինչև 'ի * Լահոռ, և մինչև 'ի Բե-
ռուչ առ երկ կղզւոյն Բումբայեայ վարսագեղ
ծառովքՀովանաւոր: Զօրավիգն եղեն գի-
տութիւնանց ամենայն մասամբ, և Հրամայեցին
յեղուլ զնոսա 'ի բարբառս ազգաց ազգացն
Ցիդկայ, դիւրիմաց Հասարակաց գործելով՝
զորս բարհմանք անձանց ևեթ պահէին
գաղտնիս: Եւ մեծապէս քան եդեալ պայծա-
ռացուցին զլեզուն սանսկրիտ: Զարդարեցին
զՀնդկաստան շինութեամբ անհամար տա-
ճարաց 'ի տեղիս տեղիս, պեղելով աւազանս
ջուրց, և առ երկ կառուցանելով հիւրանոցս
և հիւանդանոցս մարդկան և անասնոց առ-
հասարակ:

* Հասարակօրէն կոչեցեալ Փանջաբ. սահմանի յարևմտից՝ Ղանդահարաւ, 'ի հիւսիսոյ՝ քիշմիրաւ, յարևելից՝ Սրինագարաւ և Դիլլեաւ, և 'ի հարաւոյ՝ Մուլթանաւ. Երկայնութիւն նորա 320. մղոն. Ա. Ա. Եւ լայնութիւն նորա 200. Հ. Հ. Է և անուն մայրաքաղաքի նորա կառուցելոյ 'ի վերայ Ռավի գետոյն, որ եղև Նիստ առաջին յաղթականացն Մահմետականաց, և ապա Հմայսն թագաւորի Հօրն Ակպարայ, որ այնքան ընդարձակեաց և շքեղացոյց զնա, մինչ յատակս հանել պարսից. "Ա.ոպուՀան ՀԷ-ՊՅՈՐԷԻ, ԷՆԷ ԼԱՀՈՌ ՕՂԻՅԷ." Գաւառք են նորա Դուաբ-Լահոռ, Դուաբ-Բիսարընդար, Դուաբ-Հաբթի. Դուաբ-Ճաճ-նա, Դուաբ-Սինկլահկեր, Եկաբա-Հոսէ-Բլուքի-Դայէն. և Քոհիական-գուրէ.

———000———

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Յաջորդաբար Աղեքսանդրի մեծի · յարձակումն Սելևկոսի ի Հնդիկս, և Պլեսպանուբեան Մագիս-բեենայ ի Պողիբորբա :

Յետ մահուանն Աղեքսանդրի ի բազմաժուէն մասունս հերձաւ Մակեդոնական տիեզերակալութիւն : Վերինն Ասիա, Դրանգանիա և Բակտրիա, սահմանակիցք Ցուկաց աշխարհի՝ որպէս և գաւառքն Ինդոսի վիճակեցան Կուսակալաց, որք կային անդ յԱղեքսանդրէ : Այլ Սելևկոս երկոտասան ամօք զինի մահուանն Աղեքսանդրի՝ տիրեաց յԵփրատայ մինչև ցինդոս :

Իսկ Յոյնքն, զորս գաղթեցոյց Աղեքսանդր ի վերնագաւառն Ասիայ, և գժկամակութիւն էին անդանօր ի պատճառս օգոյն վատառողջութեան՝ անձեռնհաս դառնալոյ ի հայրենիս իւրեանց, ցորչափ կենդանի էր նա, վաղվաղակի յետ մահուն զինուորեալ բիւրս երկուս հեռեւակաց՝ և զերիս հազարս հեծելոց՝ կազմեցան ի չու ինքնահրաման, ընդ զօրավարութեամբ Փիլոնի ուրումն յունացւոյ : Պերդիկասայ իրազեկ եղեալ այսր ամենայնի՝ առաքէ զՊիլոն ի Ցաղանդութիւն նուաճել զապստամբսն : Այլ Պիլոնի կաշառակուր

արարեալ զգաղթականն՝ կամեր նորոյ իշխանութեան հիմն դնել անդանօր ի ձեռս նոցա։ Զոր իմացեալ Պերդիկեայ՝ նոր հրաման Մակեդոնացւոցն առաքէ սրով սուսերի մաշել զամենայն այր ապստամբ։ Որում տիրասէր մտօք Ֆիլադանադեալ նոցա՝ ի դերև հանին զկորհուրդս Պեթոնի, և մղեցեն զնա դառնալ առ Պերդիկաս ի գլուխ զօրուն Մակեդոնացւոց։

Իսկ Սելևկոսի դաշնադիր եղեալ Ճ Պաղոմեայ, Կասանդրի, և Լուսիմաքեայ. իբրև ետես զզօրութիւն Անտիգոնոսի հերձեալ՝ ժամ պատեհ վարկուցեալ իւր զբեկումն նախանձորդին՝ խորհեցաւ և յայնկոյս Ինդոսի տարածել զբազուկ իշխանութեան իւրոյ։ Ուստի զօրաժողով եղեալ յամենայն կողմանց արշաւեաց ի Հնդիկս՝ այլ յեղակարծումն պահու ի վերայ հասեալ նորա Դարմասովկայ, Սիվակա-Սենա կամ Ասոկա-վրթհանա, (զոր յունաց պատմիչքն Սանդրոկոտոս անուանեն,) պարտաւորեաց ոչ միայն լքանել զարշաւանսն և դառնալ ի բաբելոնն առ ի զգէմ ունիլ յարձակմանցն Անտիգոնեայ՝ այլ և զմի ի դաստերացն հարենացուցանել արքային Հնդկաց. և Մագիսթենեաւ հանդերձ՝ առաքել ի Պաղիբոթրա։

Իսկ Մագիսթենէս զհետ ընթացեալ

բանակի արքային Ցոդկաց՝ գնաց եհաս ի Պատալիպատրա, (Փոռնա.) և կացեալ անդանօր զամս բազումս, գուցէ ի շնորհս երեսաց Դատերն Սելևկոսի, գրեաց զլի ծանութիւնս աշխարհին: Բայց աւաղ. զի քաղել կամելով նորա զզարմանս իւրոց քաղաքացեաց՝ ինքնաՀայր կեղծեօք առաւել քան իրաց ստուգութեամբ ստուարացոյց զիւր մատեան լսածոյ առատպելօք: Քանզի գրէ տեսանել իւր անդ արս լայնականքս և երկայնաձեռս, որ ի ննջել իւրեանց ասէ զմի յականջացն յօրինէին յանկողինս, և զմիւսն ի վերմակ: Զայլոց միականիս գրեաց զօրէն Կիկղոպպաց: Երաղեաց ականատես լեալ մարդկան երկայնասրունից, (նման Լապլանդեան հովուաց:) Այլոց ընդարձակաբերանս գոլ և լայնաշրթունս: Ետես անդ և նոր իմն տեսակ մարդոյ ամենևին անբերան և անունչ, որք արտաքոյ հասարակաց կարգի զկրնկունս յառաջն կոյս դարձեալ ունէին: Ցիշէ զԹզուկս, և Ջաղբէվայրեա. գուցէ զմարդակապիկն Օրանգոտանգ կոչեցեալ: Եւ ըզմրջիւնս մեծամեծս ըստ քանակաց շանց փորել անդանօր զհանքս ոսկւոյ: Պատմէ զանբաւութիւն զօրաց, որք ընդ յառաջ երթին իւր յափն գանգէսի՝ և զարքայէն Ցոդկաց թէ՝ միայն թիկնապահ զօրքն կացուցանէին զթիւ

չորեք Հարիւր Հազարաց։ Ստորագրէ և ըզ-
դիրս քաղաքին Գողգոթայ. որում տայ
երկայնութիւն տասն մղոնաց, և լայնութիւն՝
երկուց, շրջապատելոց չորեքկուսի բարձրա-
բերձ զարսաւոք. հենգ Հարիւր հրաշակերտ
աշտարակաւք, և վաթսուն երկաթակուռ
դարբասաւք։ Իսկ զոր միանգամ զՀնդկաց
յիշատակէ նա՝ զնոյն և զարդիս տեսանեմք ի
նոսա։ Զոր օրինակ. 1 Նիհարուն մարմնոց
նոցա։ 2 Սեաւ նոցա բանքարաւք միայն։ 3
Բաժանումն նոցա ի ցեղս ցեղս. և որդւոց
զարտաւոր գոլ միայն զարհեստ հարցն ուսա-
նելոյ։ 4 Կանուխ ամուսնութիւն նոցա,
յեօթներորդ ամն հասակի իւրեանց։ Հա-
զորդիլ ցեղի ընդ ցեղի ամուսնութեամբ։ 5
Արանց գինեաց արկանել յականքս, օգս կի-
սաներկա՝ յոտս, և քօղ զգլխով իւրեանց։ 6
Միայն երևելեալս ի նոցանէ կրել զՀովանոց։
7 Սուտերք կրկին բռնեալոք. և աղերդունքն
զբոս ստիւքն քարշէին։ 8 Կարգ փղրսաւէ,
նոյն զոր և այժմ տեսանեմք ի Սելան և ի
Փեկու։ 9. Ըստայնանկութիւն բամբակի ի
բեհեզ նրբաթել և սպիտակափայլ։ 11. Փայ-
տեայ տունք յեղերս մեծամեծ գետոց, որք
ի յորդիլ ջուրց լուղային ի տեղւոջէ ի տեղի։
12 Տալա կամ Տալ ծառ։ 13 Բանեան ծառ,
Հանդիսարան Անասեաց և Թերաքեաց։ Այլ

զառաւել կարևորօքն զանց առնէ, թէ զինչ պատճառ յամելոյ իւրոյ այնքան ամ ի Հընդիկս, և թէ զինչ վախճան հրեշտակախօսութեան իւրոյ:

—ooo—

ԳԼՈՒԽ ԵՐՈՐԴ

Յաջորդ Սելևկոսի. Լուսոպատմութիւն Յունաց ի Բաբիլոն, յԱրշակ Ռեծն Պարթև:

ՊԱՏՄԵՑԻ ի վերոյ, թէ յետ երկոտասան ամի մահուանն Աղէքսանդրի, Թագաւորեաց Սելևկոս յերփրատայ մինչև ցինդոս: Եւ մեծամեծ պայծառութիւն յաղթութեց երկարեաց ի նմին՝ զամս երեսուն և երկու: Եւ ընդ իւր տարաւ ի գերեզման զամենայն փառս յաջորդաց իւրոց. քանզի Անտիոքոս Սոտերն անուանեալ որ յետ նորա ելից զաթոռն Ասորեստանեայց ինն և տասան ամօք. որոյ ի մեռասան ամին ապստամբեցան Պարթևք ընդ Արշակաւ առաջնով՝ գտաւ այր թոյլ և անարի, ուստի և զբազումս ի Հիւսանդեալ գաւառացն ապստամբեցոյց: Յետ նորա Անտիոքոս Թէոսն անուանեալ՝ յորոյ ձեռաց եհան զԲակտրիա Թէոդոտ առաջին, կարգեաւն ի Սելևկոսէ կուսակալ ամենայն բակտրիանա-

կան նահանգաց։ Քանզի նժգահեալ լծոյ Ասորեստանեայց՝ ինքնագլուխ թագ կապեալ թագաւորեաց անդանօր 280 ամաք. ն. ք. Եւ Թէոն պորտոյ ևերթ պարապելով՝ անփոյթ եղև զնմանէ։ Յետ նորա փոխանորդեաց Թէոդոտոս Բ որդի նորա. այլ աւուրք իշխանութեանն նորա կարճագոյն գտան, վասն զի ի վերայ յարուցեալ Եւթիդիմեայ՝ մերժեաց զնա յաթոռոյ, և ինքնին թագաւորեաց ընդ նմա. 256 ամաք ն. ք. Յետ նորա Սելևկոս Կազիկենացի ամս 20. որ եկ պատերազմաւ նուաճել զՊարթևս, և ձերբակալ լեալ յԱրշակայ յերկրորդէ՝ որ կոչէր և՝ Տրդատ՝ ըստ մերոցս՝ Արտաշէս, գերեցաւ և եդաւ ի բանդ։ Յետ նորա Սելևկոս Սիւրենոս ամս երիս։ Զայսու ժամանակաւ թագաւորեալ Ասորեստանի Անտիոքոս մեծն՝ որ Թէոն անուանէր, խաղաց նախ յաշխարհն Սարաց, զոր հանեալ էին ի նմանէ Պարթևք, և ապա ի Վրկանս, ուր զՍերբինդիս քաղաք պաշարեալ կալաւ բռնութեամբ, և բազում ճակատս անօգուտ մղեալ՝ խոնարհեցաւ յաղերս հաշտութեան։ Որով դաշնաւորեցաւ ընդ Արշակայ ունիլ զՊարթևս, և նիզակակից լինիլ ինքեան ի նուաճումն ապստամբ գաւառացն։ Դարձուցեալ ապա զգէնս իւր ի վերայ Եւթիդիմեայ՝ բազում ճակատս մարտից

բաղխեաց ընդ նմա։ Այլ ոչ ինչ կարաց ազդել զզօրին ի սակս ամենապահեստ զգուշութեանն նորա։ Թէպէտև զարմանալի քաջութիւնս երևեցոյց Անտիոքոս յանձն իւր, և ի միում ի ճակատուցն անկաւ երիվար նորա, և ինքն ՝Ի բերանն խոցեալ՝ կորոյս զկիս ատամանցն՝ սակայն իբրև ոչ ևս խորհէր զպարտելոյ զԵւթիդիմոս, եկին հրեշտակք ի նմանէ, և ասեն ցնա։ "Տարապարտ մրցիս ընդ Եւթիդիմեայ, որ ոչ երբէք Տիրանդեցաւ քեզ. և ընդէր ի նմանէ զվրէժ ապստամբութեան այլոց խնդրիցես։ Բակարիացիք ի վաղուց հետէ ընկեցին յանձանց զլուծ Ասորեստանեայց. իսկ նա արդար պատերազմաւ էառ զաշխարհս ի ձեռաց որդւոցն ապստամբութեան։ Նայի և Սկիւթք խորհին առպատակել զաշխարհս, տեսանելով զերկանքանչիւրսս ի մէնջ տկարացեալս անդադար պատերազմաւ։ Արդ եթէ ոչ դադարեսցուք հասեալ բարբարոսքն ի վերայ՝ հանցեն զաշխարհս ի ձեռաց, և ոչ ումեք ի մէնջ եղեցի։" Հաճոյ թուեցաւ բանս առաջի Անտիոքեայ. վասնորոյ և Եւթիդիմոս զորդի իւր զԴիմետր առաքէ առնս կռուել դաշն ի միջի։ Որում վասն բարեհնչան երեսացն որ Գեղեցիկն անուանէր, և վասն բանիցն վայելչութեան՝ տայ զգուստս իւր ի կնութիւն, կոչեալ զնա Հայր թագաւոր։ Առեալ ապա զա-

մենայն զփիղս Եւթիդիմեայ խաղայ ի Հնդիկս ընդ Հինդուքուշ, և ընդ Սոփոգանեայ մարտուցեալ արքայի նոցա, կորզէ ի ձեռաց և զփիղս նորա, որք միահամառ ընդ Եւթիդիմեայն կացուցին զթիւ հարիւր և յիսնից: Եւ դարձ արարեալ անցանէ ընդ Ինդոս գետ յԱրաքուսիա, ի Դրանգանիա, և ի Կրմանս, հասանէ ի Բաբելոնն: Ուր մեռանի թագաւորեալ ամս երեսուն և երկու: Բայց թէ ով ոք այս Սոփոգանէս լեալ իցէ, չունիմ հաւաստել, զի անուն անծանօթ է Պուրանաց:

Ի՝սկ Եւթիդիմոս յետ դարձի նորա, խաղացեալ զօրօք յաշխարհն Արեաց՝ արար անդ մեծամեծ յաղթութիւնս, և զազգս բազումս ՀԷ իւրև նուաճեալ՝ ճակատ դարձոյց ի Հնդկաստան, և զքաղաքս բազումս առ Ինդոսիս ի հարկի կացոյց: Իբրև 240 ն. ք. Ագաթոկղէս հիմն դնէ մեծի և նոր թագաւորութեան յարևելս Քաբուլաստանի. և իբրև հինգ ամաւք զկնի այնր՝ մեռանի Եւթիդիմոս և յաջորդէ նմին որդի նորա Դիմատր գեղեցիկն վերաձայնեալ: Որոյ ի հինգերորդ ամի թագաւորութեանն զօրաժողով եղեալ ի վերայ Եւկրատիդէս հանէ ի ձեռաց զԲակտրիա, և նա խոյս տուեալ յԱրաքուսիա իշխէ այնր բաժնի միայն: Պրիապատ որդի Արշակայ երկրորդի պայազատեալ զհայր իւր՝ մեռանի

յետ 15. ամաց և թողու զաթոռն անդրանկին իւրում Քրիստոսայ առաքնոյ: Որ առաւել քան զորդիս ընտրեալ զեղբայր զՄիհրդատ՝ ժառանգեցուցանէ նմա զաթոռն: Սա անդր քան զԱղէքսանդր աշխարհակալեաց և զԴիմետր Նիկատոր գերի վարեաց ի Պարթևս: Մեռանի Ագաթոկղէս թագաւորեալ Արեւելից Քաբալայ ամս 20. և յաջորդէ Պանթալէոն որդի նորա: Իսկ Եւկրատիդեայ ոխակալութեամբ երով զԴիմետրի գեղեցկի, յարձակի զօրօք յԱրաքուսիա, և ընկեցիկ արարեալ զնա յաթոռոյն՝ տիրէ աշխարհին. և ի ձեռաց հանէ Պանթելէոնի զամենայն Ցոդիկ կալուածս նորա: Զոր ի տասներորդ ամին կենդանուզ արարեալ Հեղիոկղեայ որդւոյ նորա՝ թագաւորէ զնա ի Բակտրիա: առ որով զօրացեալ Միհրդատայ, ի Արշակայ մեծի զբռամբ նուաճէ իւր զԴրանգանիա, և բառնայ զանուն յունական իշխանութեան ի Բակտրիոյ: Սա նա է, որ սպան զԱնտիոքոս Սիդէացի. և պակեաց զեղբայր իւր զՎաղարշակ թագաւոր Հայոց՝ իբրև հարիւր քսան ամօք ն. ք.

—000—

ԳԼՈՒԽ ՉՈՐՈՐԴ

Ծրագուն Էֆենդիուլոյ · Թոգաւորել Կալէանէուանդոյ և Փախուսաց Դիմեցքրի և Գէսանէայ ի Հայս :

ԱՐՀԱՄԱՐՀՈՒԹԻՒՆ, զոր կրեցին բրահմանք յաւուրս Դարմասովկայ արքային Մաղադայ, որ դարձեալ յաղանդն բուդայ՝ մերժեաց զվամթսուն հազարսն ի նոցանէ ի հանապազորդեան սեղանոյ իւրմէ, և յարոյց նաև հալածանս ի վերայ համօրէն աղանդակցաց նոցա՝ ոչ հեշտ ինչ էր զանց առնել: Վասնորոյ ժողովեալ նոցա ի Ղանոջ քաղաք, ուր ընդ աղօտ կայծէր տակաւին մնացորդ իմն մեծաջահ իշխանութեան դենակցաց իւրեանց, զարմացին ի նորոյ զազգ իմն պատերազմականաց Ակինիկուլա, թ Հրեղէնս կարդացեալ: Ի ձեռն որոց մարտ եղեալ Ը անհաւատիցն բուդեանց, յաւեր և յեղծութիւն եղին զբովանդակ իշխանութիւն Մաղադայ, և ինքեանք զօրէն պապականաց ի խաւարին դարսն Եւրոպայ՝ բռնացան ի վերայ խղճի մտաց և հաւատոց ժողովրդեանն: Յաղագս ծագման սոցա Շաստրայք այսպէս գրեն. “Տգիտութիւն անհաւատութիւն կալեալ գրաւէր զերեսս ամբոխի. սրբութիւնք օրինաց կոխան ոտից լինէին. և չէր ուրեք տեղի ապաւինի մարդկան յերեսաց անագորոյն ճիւաղաց: Վայ յշտապ

տարակուսի ընդունեալ Վեշնուփիթ բայ՝ հաստատեաց ի մահ վերուին յարքունական զարդ Կշեթ բայից։ Ընտրեաց իւր զտեղի բնակութեան ի գլուխ Աքու երկրին, ուր եկաց հանդերձ գիւղաքաղաքն, որք տարան զգրաւոնքն իւրեանց ի Ծովն Պոնտեայ։ և տեսին անդանօր զհայրն տարաբաղձեալ բարձեալ ի վերայ անձնդպային վիշտսն, օրինակին յաւիտենականութեան, լուսաւոր զարդարեալ ի վերայ ջրոցն անդաստան։ Որ զատուիրեաց նոցա դառնալ ի լեռան Աքու, և զարձեալ անդ զարդ քաջաց ի զատերազմի։ Վասնորոյ առեալ նոցա զԳրմնա, զՄուշդրու, և զՎիշնու, հանդերձ խմբով ատուուածոցն ատորայնոց՝ սրբեցին զանն կրակի ջրոցն գանգեայ, և իւրաքանչիւր ոք ի գիշն արարեալ իւր զբագին մի՝ ընկէց ի նա։ Ի ջրոյ բաղնեաց անտի ծագեցան ջրերքին մեծ նահանգեանք Ամիկուլաց, Պրուսարա, Կոհանա, Աղանկա, և Պուբիհարա։ Դեւթայք գնէին զհանդէսն զարմանահրաշ. յորժամ նորածին ազգ զատերազմաշաղն առաքեցան ի մարա ընդդէմ անհաւատից, և ի սատանաթիւ աշխարհի։ Զի որքան և շիթք արեան հեղուին՝ այնքան և շատ դեւք վերարուսանէին ի շիթից անտի։ մինչև պարտաւորեցան ի վերջս ջրոք ի դերադիցն Ամիկուլաց՝ լափել զարիւն հեղեալ ի թշնամեաց,

և յորովայն իւրեանց թաղել զանբաւուն վերածնուեց նոցա։" Ի սոցանէ զօրաւորագոյն Հանդիսացաւ ցեղն Պրամարեան, որ տարածեաց զիշխանութիւն իւր ցՆերբուդեան գետ, որ յինքեան գրաւէր զարևմտեան և զմիջինն Հնդկաստան։ Յորուստ և Ը Հարաւ Հարստեալ զոէրութիւն՝ կալաւ և զԴաքան, և ի ձեռս բերեալ իւր զՀամաստուածեան տաճար կռոցն Իլորայ, կոփեալ ի միապաղաղ վիմանոյլ ժայռէ, և հռչակեալ Ը Համարէն Ցոդկաստան իբրև զարմանք բուդայական մեծարարութեանց՝ յաւել ի դրօշեալս նոցա և զճոխութիւն չնոց իւրոց, հալածական արարեալ զբուդութիւն յերեսաց յամենայն երկրի ի կղզին Տաբռոբանեայ։

Ի ՕԿ Արիդշէր, (որ այնինքն է Արշակ մեծ ըստ Յունաց Արտասուրէս, զոր ոմանք ընդ Արտաշրի Սատրապայ շփոթեն,) իբրև վանեաց զՄակեդոնացիս և հիմն եդ պարթևական կամ երկրորդ պարսկական իշխանութեան՝ ծանուցեալ ի դիւանաց թէ հինգք հարկս հարկանէին նախորդաց իւրոց՝ հրեշտակ արձակեաց առ Յունս վճարել և՝ ինքեան զայն։ Թագաւորն Ցոդկաց՝ որ յառաջագոյն իսկ առեալ էր զհամբաւ քաջութեանն Արշակայ՝ զարհուրեալ յերեսաց բարկութեան նորա, առաքէ առ նա երամակ մի փղաց հանդերձ

պատարագօք ոսկւոյ և արծաթոյ. և զդաշն խաղաղուն խնամեցեալ Ենամ՝ երկարէ զկեանս իւր մեծապանծ շքեղուն՝ ըստ Դովայ՝ զամս ինն ամս, և մեռանի 'ի Ղանոջ:

ԱՅՆՈՒՀԵՏԵՒ բարձաւ իշխանութիւն 'ի տանէն Պուրուշայ. և իւրաքանչիւր իշխան և պետ գաւառաց հաստատեաց իւր զնոր իմն հարստութիւն: Զնդաւ այր կորովի թագաւորեաց 'ի Դիլլի. Սոկուան առաջին 'ի Ամաւն. Կալիանքունդ 'ի Ղանոջ, և այլք յայլ և այլ տեղիս: Սոյն այս Կալիանքունդ, որ ոչ ուրեք 'ի Պուրանս յիշատակեալ գտանի, ըստ Քրէշտայ եղև այր ժանտ և դառնացող. վնայ և բազումք յերևելի նախարարաց առ ապահովելոյ զանձինս 'ի չարաչար բռնութենէ նորուն՝ թողին զտուն և զբնտացուածս իւրեանց, և խոյս տուն ասա և անդ:— Թերևս յաւուրս սորա. բայց ինձ հաւանական ևս երևի թէ յաւուրս որդւոյ սորուն Դինաքսպայ՝ Դիմեար և Գիտանէ իշխանք Ճդկաց հարածեալք յաշխարհէ իւրեանց մոգապուրծ անկան 'ի Հայս առ Վաղարշակ արքայ. որ ետ նոցա զգաւառն Ցաբօնոյ. ուր շինեալ նոցա զքաղաք առ սահմանօք Հաշտենից՝ կոչեցին Վիշապ. և եկեալ յԱշտիշատ կանգնեցին անդ զկուռս Ճդկաց: Յետ Ճդկատասան տմաց սպան զնս արքայն Վաղարշակ, և ետ իշխանութիւն նոցա երից

որդւոց նոցա Կուառսայ, Մեղտեայ և Հոռեն-
նայ: Յետ ժամանակաց ելին սոքա ի լեառն
Քարքեայ, և գտեալ զտեղին բարեբաղդ և
գեղեցիկ՝ շինեցին անդ Դաստակերտ. և
կանգնեցին զերկուս կուռսն, զմին յանուն
Գիսանէ, և զմիւսն յանուն Դիմետրէ: Քան-
զի այսպէս գրէ Զենոբ աշակերտ Լուսաւոր-
չին, "Զարմանալի էր տեսիլ նոցա (պաշտօ-
նէիցն Գիսանեայ և Դեմետրեայ դից.) քան-
զի սեաւք էին, գիսաւորք, և զաղբատեաք.
զի ցեղով Հնդիկք էին, զի և կռոցն պատճառ,
որ յայսմ վայրի էր շինեալ, այսէ: Դիմետր
և Գիսանէ իշխանք էին Հնդկաց, և եղբարք.
և զդաւ իմն գործեալ էր նոցա Դինաքսեայ
արքային իւրեանց. զոր իրազեկ եղեալ՝ ա-
ռաքէ զոր զՀետ նոցա, կամ սպանանել կամ
յերկրէն հալածական առնել: Իսկ նոցա լու-
եալք մազապուր անկան առ Թագաւորն Վա-
զարշակ, և նա ետ նոցա զդաւառն Ցարօնոյ
իշխանուհւոյ. զոր ինքեանք շինեցին. կոչելով
զանուն նորա Վիշապ: Որք եկին յԱշտիշատ
և կանգնեցին զկուռսն զայնոսիկ յանուն կռոցն
զորս ի Հնդիկս պաշտէին: Եւ յետ Ցոգետա-
սան ամաց սպան Թագաւորն զերկոսին եղ-
բարսն, ոչ գիտեմ վասն էր՝. և ետ զիշխա-
նութիւն նոցա Կուառսայ, Մեղտեայ, և Հո-
ռենայ: Կուառս շինեաց զաւանն Կուառսայ՝

յանուն իւր, Մեղտէ՝ Մեղտի, իսկ Հոռեան շինեաց իւր աւան ի գաւառին Պալունեաց, և կոչեաց զանուն նորա՝ Հոռեանս: Եւ յետ ժամանակի խորհուրդ ի մէջ առեալ երիցն՝ ելին ի լեառն Քարքեայ, և գտին զայն տեղի բարեբաղդ և գեղեցիկ . . . և շինեցին անդ Դաստակերտ և կանգնեցին զերկուս կուռս, զմին յանուն Գիսանէ, և զմին յանուն Դիմետրեայ: Եւ ետուն նոցա ի սպասաւորուէ զազգն իւրեանց: Գիսանէ, զի գիսաւոր էր. վեկ և պաշտօնեայք նոր զգէս էին Թողեալք. զոր Հրամայեաց իշխանն կտրել:"

Ինձ չէն կամք զամենայն յունացուցանել, Թէպէտ տգիտագոյն իսկ իցեմ բուն երկրին Հանգամանաց: Դիմետր սոսկ յունական անուն է. բայց հարկ է ի միտ առնուլ Թէ ուր՞, կամ յումմէ՞ ի մէջ բերեալ: Զենոբ Ասորի զանուանս Հնդկաց. որպէս ինձ Թուի, կամ Թարգմանութեամբ ի մէջ բերէ. և կամ աղաւաղանօք: Քանզի գրէ. "Գիսանէ՝ զի գիսաւոր էր: Որով զՀայ անուն տայ Հնդկին: Զինչ՞ զարմանք Թէ բնական անուն նորա լեալ իցէ Գանէսա. յոր և զփղագլուխն կարդան նոքա չաստուած խնամատուԹեան և զԹերարի հարստուԹեան: Իսկ Դիմետրդ անուն յունական Թարգմանութիւն իմն Թուի ինձ Հնդիկ անուանակոչուԹեան Զնկունաթ.

որ զերկիրն, կամ զաէր երկրին յայտ առնէ։ Գրի ի պատմութեան Աղէքսանդրի, թէ Հնդիկք կոչէին զնա որդի Դիայ և Արամազդայ։ Այլ ոչ Դիա երբէք լուաւ ի Հնդիկս՝ և ոչ Արամազդ։ Յայտ է. զի կոչեցին զնա որդի այնց բնիկ կռոց իւրեանց, որք ըստ իմիք նմանէին Դիայ և Արամազդայ։ Զինչ՞ զարմանք. թէ և՛ ը Հնդիկ Ցիչմանն՝ անուն նորա լեալ իցէ Դէ՛ Դեր, զի որ ի սանսկրիտն Պուրա և Զանդրա, նոյն ի դիւցազանուն թեան բակտրիանացւոց Մեհրու և Մոհու լսի։ Եւ ը այսմ դրուն ես զհիւրան ի Հայաստան համարիմ Հնդուս ի Տակշակեան Տանէ. որք և գքաղաքն շինեալ ի Տարօն Վէշապ անուանեցին յանուն Ազգի իւրեանց. զի Տաչշէ՝ Վէշապ թարգմանի։ Երկորդ՝ զի կանգնեցին յԱշտիշատ ըզկուռս յանուն կռոցն զորս ի Հնդիկս պաշտէին։ Ապա որդիք նոցա յետ նոցա կանգնեցին կուռս ի դաստակերտի իւրեանց յանուն Գիսանեայ և Դեմետրի հարց իւրեանց. որ կրօն իմն էր Սկիւթացւոց։ Այլ դու թող զանուանըս նոցա. հայեաց միայն ի տեսիլ կերպարանացն՝ զի աչաւք էին, գիտաւորք, և զպրաբերք. և ահա առ ժամայն ծանիցես զնոսա ի քեզ կուսին ամենայն հակառակութեանց։

Իսկ որք մնացին յաշխարհի անդ իւրեանց, նեղեալք ի չարաչար խոշտանգանաց բռնաւո-

րին՝ դիմացին առ Սահագունգա Թագաւոր Կմաւնայ, յորդին Սակուանայ առաջնոյ, և առեալ զօրս ի նմանէ՝ յարեան պատերազմաւ ի վերայ արքայի իւրեանց, որ մագապուր ի կոտորածէն զերծեալ՝ մեռանի յանծանօթս. Թագաւորեալ ամս 58: Եւ զորդի նորա ձերբակալ արարեալ զԴինաքսպալ՝ եդին ի բանդի:

Սեռեռ Դնդառ արքայ Ինդրպուրայ, և Թագաւորեաց որդի նորա Սինդհուջ:

Հուշանթ, որ մարզպանն էր Դաքանայ ժամ պատեհ գտեալ իւր զկսուվութիւն Ղանոջայ՝ խորհրդով նիզակակցացն Թագ կապեալ Թագաւորէ: Սա զԲնարիս, որ մայր իմաստուն էր Հնդկաց՝ ի հիմանէ նորոգեաց. ազատութեամբ ճոխացոյց զտաճարս կռոց որ անդ, և զօրացեալ օրըստօրէ՝ Թիկունս դարձոյց Արքային Կմաւնայ, որ ձեռն տուեալ էր իւր հասանել այնմ իշխանութեան: Վասնորոյ զօրաժողով լեալ Սահագնգայ կալաւ զՂանոջ, զՀուիշամ կալեալ կուրացոյց, և զբանդարկեալն Դինաքսպալ վերստին հան յիշխանութիւն:

Ռնդջպալ վեցերորդ ի Դնդառայ Թագաւորեաց յԻնդրփրաստ, յաղթեաց բազում քաղաքաց, և զարքային Ղանոջայ երկաթի կապանօք գերի տարեալ ի քաղաք իւր, եդ

վարել առաջի կառաց։ Որով առաւել քան զառաւելն բարձրամտեալ՝ Հրամայեաց զինքն աստուած քարոզել գեր ի վերոյ մահկանացու բնութեանն։

Զ. ԵՑՍ լուեալ Սոկուանայ երկրորդի Թուին Սոկուանայ առաջնոյ արքային Կմաւոնայ՝ հատընտիր արար ի զօրաց իւրոց արս չորս հարիւր թուով, և յեղակարծուստ յարձակեալ ի վերայ Ինդրփրաստայ՝ սպան զՊաքպալ յետ քառասուն և երկու ամաց թագաւորութեանն և կալաւ զաթոռ նորա։

———ooo———

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Յաջորդել Լ. Գաքոռեղեայ և Հերմոյեայ ի Թաքարբա. Խաբէուրնեն Ֆիրաստայ Պարնեի, յարքայութիւն Մաքայ և Թոշարայ, հալածուն նորա անպուսպ ի Վէրբոնայ արքայէն Մալվայ։

Իբրեւ հարիւր երեսուն ամաք ն. ք. Ագաթոկղէս յաջորդեցաւ հինդ-յունական թագաւորութեան Ինդոսի. որոյ ոչ ամք կենացն յիշատակին, և ոչ արարք քաջութեան։ Յետ նորա Հերմոյիաս, յորոյ յաւուրս իշխանութեան՝ յարեան թոշարք, ազգ ինչ սկիւթացւոց ի վերայ Քբաստայ՝ մինչ արշա-

ւէրն յԱսորիս, և 'ի պատերազմին սպանին զնա. քանզի դրժեալ էր նորա ուխտին իւրոյ ընդ նոսա որ ձեռն օգնականութեան տուեալ նմա ընդդէմ Անտիոքոսի Սիդեացւոյ՝ և 'ի սակաց արծաթոյն՝ զորս խոստացեալ էր նոցա Ջրաատ՝ 'ի դերև եղեալ: Ապա զօրացեալ նՁ և ևս՝ յարձակեցան 'ի Բակտրիա, և կալան զայն ժառանգութեամբ յիւրեանս յորդւոց յորդիս պայազատեալ:

ՑԱՐՁԱԿԵՑԱՆ Սակք 'ի Դրանգանիա. և կալան զայն: Սոքա այն ցեղ էին սկիւթացւոց, որոց զերկիրն յապականութիւն եդ Աղէքսանդր, և Ցովքսիարտայ արքայէ նոցա Հրաւիրեալ 'ի ճաշ՝ առ զՀռոքսանէ զդուստր նորա՝ օրիորդ չքնաղագեղ և զուարճաքան՝ 'ի կնութիւն իւր. յորոյ յութնամեայ յղութեանն մեռանի Աղէքսանդր. և Հռոքսանէ յետ նորա ծնանելով արու՝ կոչէ զնա Աղէքսանդր. և բարձակից առնէ Արիդեայ հօրեղբօր նորուն՝ որ լոկ անուամբ թագաւորէր: Սոքա ունելով զԴրանգանիա, և սակաւ առ սակաւ զօրանալով՝ հիմն եդին մեծի ինքնակալութեան Սակաց, և զՀերմայսեան իշխանութիւն բարձին 'ի գաւառացն ինդոսի ընդ Կադափեաւ արքայիւ իւրեանց: Յետ նորա պայազատեաց զազգն Աղէս, և նորանոր յաղթութեամբք իւրով ընդարձակեաց

զբաղուկ իշխանուն իւրոյ՝ յոյժ յոյժ. թագաւորեալ ամս եւ թանասուն և չորս. ցամն 90. Ն. Ք. Յետ նորա որդի նորին Ազիլէս. որոյ յերեսներորդ ամի թագաւորութեան՝ նոյս տաւ յանթոռն Արտվայ Ալիկրամ այր հզօր և բարեբարոյ: Ուրեն թագաւորք յիշատակին սովին անուամբ. վայ և դժուարի որոշել թէ ի նոցանէ քաջացաւ ի Ցոդկաստան, և վանեաց անտի զի հնամիս հայրենեաց իւրոց: Ուր ուրեք յիշատակի Ալիկրամ, անդ գայ և Սալիվահուն ճիւաղ ոմն անագորոյն. որ կենախուզ լինի նմա: Բայց այնպէս ի Ալիկրամայ թագաւորէն Ուջենայ սկսանի նոր թուական ի Ցոդիկս, վասն որոյ և ես զգլխաւորսն ի գործոց նմա վերընծայելով որ որդին էր Գովինդայ՝ դասակարգեմ յայս գլուխ: Ծնաւ սա ի Պրումարեան սերնդոց, զոր Համուռոտեալ այլոց՝ կոչեցին Պովար կամ Պար:

ՅԱՂԸԱԳՈ ծագման սր Նորօրինակ իմն պատմի ի Սինկասէն-Բիէ գիրս Ցոդկաց: "Ինդեռ միահեծան տէր երկնից՝ իրախուեն առնէր ասէ Դևթայիցն ամենեցուն. ուր ի պարել յաւերժահարսանց դրախտի նորա, Գանդհարվա որդի նորա ցանկացաւ հարճի հօրն. ուստի և՝ անէծս ընկալաւ ի նմանէ:" Ի փունՔէան ֆոխէոցէ որդէ՝ ֆէշոյ ֆէրոպարան, և՝ ի գէղէրի ֆէրհոյրի մարդոյ. ֆենլհ ոյրէոցի խորիպ, և էլոյէ

չերկինս վերոսին : Անկանի Գանդհարվա ի * Գուրջրաթ , շէ մէջ Սաբհարամատի և Սահի գետոց : Ուր էր անտառ մեծ , և բնակէր անդ Տամրալիպտա Ռիշի . զորոյ զդուստր ի կնութիւն առնոյր Արքայն Տամրասենա , և ծնանէր ի նմանէ ուստերս վեց , և զդուստր մի : Էին արքայի և երկու մանկունք Դևասարմա, և Հավիսարմա կոչեցեալ . որոց գործ էր ըուանալ զՀանդերձս արքայի ի գետ անդր : Յաւուր միում պատահեալ Գանդհարվայ Դևասարմայ միայնակ , ասէ ցնա . Գնա՛, ասա՛ ցարքայն թո , թալ ինչ զգրաբար էր ի կնութիւնքեանց . ապա ՝ի՛ ապաշաւէսցէ՝ : Իբրև լուաւ արքայ՝ ոչ հաւատաց բանին . վասն ի վաղիւ անդր առաքեաց զՀավիսարմա , որ զնոյն բան լուեալ միանգամ և երկիցս՝ մատոյց Արքայի : Գնաց անդր ինքնին և լուաւ զնոյն ձայն , և ժողով

* Էր մի ՝ի մեծամեծ Նահանգաց հարաւային հնդկաստանի , ե-բեւ քաղաքաւոր քան զոմն երկայնութեամբ և հարիւր և վաթսուն լայնութեամբ . ընդ մէջ 21 և 24 աստիճանաց Հ . Լ . Բ. բնակ-տեան մասն նորա է լեռնային և խիտ աւ խիտ անտառաւոր . ուր բնակի ցեղ իմն հնդկաց վայրագ և խուժադուժ ընդ առանձին ռաջային իւրով . որք կամ միաբանին ասպատակ սփռել ընդ երկիրն , և կամ երկպառակին ՝ի պատերազմ ընդ իրեարս . Բայց մեծագոյն և պատուականագոյն մասն նորա՝ ան՝անի ընդ տեր-ութեամբ Մահրատայից . Որոց մայրաքաղաք է Գուրջրաթ , որ կոչի և Հաֆոպոպ . Գաւառք են նորա՝ Գուրջրաթ . Փաթենապատ Սրունէ , Բերվոր , Իսլամնագար , Ճամպաներ , Սանկան , Սուրաթ , Բռոչնագր , և Ղադոթ .

արարեալ խմաստնոց՝ վճռեաց անդ նախ զով և զուսան գիտել ձայնին, և իբրև խմացաւ թէ որդի էր Ինդեռայ՝ ասէ ցնա. «Եթէ արդարև՞ իցես դու որդի Հզօրին երկնից՝ պարապեա զքաղաք իմ և զապարանս պղնձի պարապօք։» Զոր կատարեաց Գանդ Հարիա զամ ի գիշերի միում, և ընկալաւ զդուստր արքայի ի կնութիւն իւր։ Զոքանչին պահ կացեալ ի գիշերի միում, իբրև տեսանէ զնա մերկանալ յիշային խորհրդոյն առեալ զայն ընկենու ի հուր։ Ցայնժամ կացեալ նորա յանդիման Արքայի՝ ասէ. Ես յոռհէպա փուէալ ի հղոց իմոց՝ վերանամ յերկինս, իսոյց դու պիտերեր, զոր ծնայ ի հարճէ պալապան փոյ. և զորդէպէն եմ զոր ծնանէլոց է ինչ դուսարդ փո, ինչէսոցէս ալ էրամ և իարուց ենոմ-հոցէս, զի նա էղիցի մեծ, և անուն փոխուրեան նորա էցցէ յաւիտեան։ Զայս ասացել վերացաւ։

Իսկ զարքայ թէպէտև ապաշաւ կալաւ ընդ կորուսան անգիւտ, սակայն և լսելով թէ թոռն որ ծնանելոց էր նմա այր զորութեան արևանայր էի, հրամայեաց ընդ ծնանելն՝ կենդանւոյն թաղել զնա. զոր լուեալ դստերն ջղաւ զիւրովին, զի մի՛ տեսցէ զաղէտն անտանելի։ Ընդ որ կարի՛ի խոր խոցեալ Արքայի գթացաւ ի վերայ մանկանն և զոյգ ՇԷ Բերթերեայ առաքեաց յուսումն գրոց։ Իբրև զարգացան նոքա, տեսեալ արքայի զկատա-

ընելուն Վիկրամայ՝ հրաւիրէ զնա յարքայութիւն Պալվայի. այլ նա հեզուշ իմն հրաժարեալ յայնմանէ՝ տայ զպատիւ երիցագունին իւրում. և ինքն ըստ նովաւ զօրավարեալ՝ գնան ի Պալվա, և ըստ իշխանս բռնացեալս մարտուցեալ՝ միապետեն զաշխարհն: Բերեթ ըի կանայս ուներլվերկուս զԻնիքսիթա և զԲեկղի, հանապազօր ի ինքնայս լինէր ընդ նոսա զանց արարեալ զկնամոց աշխարհին: Յաւուր միում յանդիմանեաց զնա Վիկրամ, մի՛ այնքան կանանց զհետ լինիլ. այլ և՝ զպիտոյից պետութեանն հոգ կանուլ: Ընդ որ խոժոռեալ դշխոյիցն՝ դրդեցին զարքայ ընդ դէմ եղբօր իւրոյ, հալածել զնա յՅեմ անտի:"

"Դէպ եղև բրահմանի ուրուք գտանել զծաղկին համասփիւռ, (անմահական համարեալ ի Հնդիկս.) և նուիրել Արքայի: Որում փոխարինեալ զկաղուած իմն երկրի, տայ ըզծաղկին Ինիքսիթայ դժխոյի իւրում, զոր սիրէրն յոյժ, և նա ետ զայն ցախոռապետ արքայի ցՀոմանի իւր: Ախոռապետն տանի զայն առ այլ ոմն Հոմանի իւր, և մատուցանէ նմա: Որ ընկալեալ և ասէ ի միտս իւր, "Դէպն եպուն ենչ էարձօրեայ ծամանակ զէարիս գործելոյ. և ես էարալար ղեղօ ապաէհանէդի զայն. զէնչ օգուսա ուսպէլ և ի ղեղ անմահանալ:" Զայս ասացեալ առ տարաւ զայն վերստին առ արքայ. և Ինիք-

սիթայ չարիքն ի յայտ եկեալ՝ ընկէց զինքն ի վանդակապատէ պալատանն՝ և չարաչար սատակեցաւ :"

"Իսկ Թագաւորն կասկածոտ փորձել կամելով և զհաւատարմութիւն Բեկղեայ՝ Թաթաւէ զՀանդերձ իւր յարիւն նոխազաց յորսս էրէց, և առաքէ առ նա գուժիւ այսուիկ թէ "Մէ՞ռ աբէայ մարդասպանեալ ընդ քեզ անեմք :" Զայն տեսեալ Բեկղեայ մեռանի ընդ լուն, և արքայ փոշիմանեալ յիւրոց խելագարուէց՝ հրաժարի յաշխարհէ և մեկուսանայ յանապատ տեղիս :"

"Ապ. գան ի քաղաք անդր հսկայք ուրուականք, և գազանք անհուելի կերպարանօք Սորիտալաւ արքայիւ իւրեանց Հանդերձ՝ և գիշատեն զբնակիչս քաղաքին : Որոց կարի ի նեղ անկեալ՝ դաշն դնեն տալ նմա առ օրին զմարդ մի ի կերակուր, որ յառաւօտուց մինչև ցերեկոյ նատեալ յաթոռն Բերթրեայ դատիցէ զժողովուրդ իւր ամենայն արտօնութեամբ Թագաւորի, և յերեկոյն կերակուր լեցի գազանացն :"

Իսկ Վիկրամ որ չոգաւ ի Գուլքրաթ, և եմուտ ի Ծառայութիւն վաճառականի ուրուք, յետ ժամանակաց բարձեալ բերէր զվաճառս տեառն իւրոյ ի Սալվա : Ագաւ կարաւանն օթիւ միով հեռի ի քաղաքէն Ուջենայ : Սա

նախածանօթ վայրացն գոլով՝ եւ ի գնին երկրին, և նշմարեաց յաւին գետոյն զդի ինն մեռելոյ ամենազարդ հարստութիւն ը պաճուճեալ: Լուղաց ի ջուր անդր, և կալեալ զդին մերկացոյց զնա յամենայն զարդուց. յոսս գտեալ ակն բաղտի Փէրուզա, մակագրեալ "Ռոնոզէն պոցէ կամապարծ պէրու-ԲԷՆ." առնու և կապէ զայն ի բազպան իւր: Գայ ընդ առաւօտն ի քաղաք անդր և իջանէ ի տան բրոի, որոյ հերթ էր որդւոյ թագ կապել զօրն, և ընդ երեկս կերակուր գաղանաց մատչիլ: Յաղմըկիլ տանն կոծով և ագով ընդ ապտրաղտ այն վիճակ՝ ինքնին յանձնառնու զթագն հատանութեամբ ժողովրդեան, ի կշիռ բաղտի եդեալ զմահ՝ կամ զպարծանս յաղթութեան: Եւ ցնդեալ ի բաց զուրուական զարհոյրն, որք ոչ ինչ առաւել թուին լեալ քան զանագորոյն մարդազոհս կռոցն գարշելեաց՝ թագաւորէ յիսուն և վեց ամաք ն. ք.

Թոդեենէարդ զևրթենուն բրահմանական կեղծեաց՝ էր սա արդարև այր հռչակաւոր և մեծագործ. որում ոչ ոք գտաւ նմանող յիրաւունս և յարդարութիւն ը համարէն Ցոդկաստան: Սա վասն առաւելագոյն փութոյ կառավարութեան իւրոյ աշխարհի, և ապահովելոյ զերջանկութիւն ժողովրդոց՝ ծպտեցաւ ի կերպարանս սոսկականի. և շրջեցաւ ընդ

մեծ մասն արևելեան աշխարհաց : Զեւ՝ ևս ժամանեալ սր յալեոյթ յիսնից՝ արձանացոյց զինքն մարտադիր հզօր ի մրցմունս ճակատուց . ուրանօր անթերի յաջողուելք և շրջահայեաց խոհականութիւն՝ կրթեցին զայրն անպարտելի ի զէն համակործան պատերազմի : Որով նախ յստակեաց մաքրեաց նա զիւրոյ տերուն զկռովարարն որեար . յարձակեցաւ ապա ի վերայ Ինդրպուրայ , և զՊարտացեանն սատակեալ զԱկուան երկրորդ՝ տիրեաց բովանդակ երկրին . որով առաւել ևս զօրացեալ՝ խաղաց զօրու ծանու ի սահմանս Ինդոսի , և անՇարին պատերազմաւ խորտակեալ զզօրութիւն Սակացն բռնացելոց անդ անօր՝ թագաւորեաց երջանիկ բարօրութեամբ ծագաց ի ծագս Ցիդկաց : Այլ յաւէտ սիրելի ինձ հզօրին ժուժկալութիւն ի ծայրագոյն փառս անդ միահեծան տերութեան . որ փոխանակ ակամակալ ալթառոց , և փեսրալից անկողնոց՝ ենքէր ասեն գետնախշտի ի հասարակ նստայի . զորակ ջրոյ լոկ ունելով առ ընթեր մնարիցն : Բայց ի վերայ այսր ամի՝ խրախոյս բառնայր գիտութեան ամ մասամբ: Երանի՛ ազգին . որում իշխեցին թագաւորք իմաստունք , կամ իշխանք իմաստասէրք :— Պնդիդք յամ կողմանց աշխարհին հրաւիրեալք յարքունիս նորա՝ քաղէին հանապազօր

'ի նմանէ շնորհս առատաբաշխս պարգևաց։ Զորեքտասանք 'ի մեծամեծ խմասանոց ժամանակին կացուցանէին զդամարձակ արքունեաց նը։ յորս մեծապէս փայլեր քերթողն Կալիդաս անուն։ Իսկ արդարուն և իրաւունք այնքան հաւասարակշիռ բաշխեցան 'ի նմանէ՝ մինչ քերթողացն այսպէս երգել գնմանէ։

Ոչ խանդումանդ վէմն յերկաթ,
Եւ ոչ իշխէ սաթ առ յարդ։
Անակնարկու 'ի նմանէ՝
Զբգել գաղտնի զիւր ըզկարթ։

'Ի հիմանէ նորոգեաց զքաղաքն Ուջէն։ և 'ի նմին կանգնեաց զարձան Սահակաղեայ գիցուհւոյ՝ զի զթոյլ և զպղերգ ունակութիւն ժողովրդեանն յարուցէ 'ի քերմեռանդութիւն կրօնի։ մինչ ինքն երկրպագանէր հոգւով միոյն և յաւիտենականին Աստուծոյ։

'Ի սորա յիսուն և վեց ամի թագաւորութեանն Տէր մեր Յիսուս Քրիստոս 'ի Բեթղեհեմ Հրէաստանի։ Եւ արդարև մի յաստուածքարող և մարգարէ ապատում հաւաստեացայս, զի 'ի գալ Բնդին մարմնով՝ թագաւորք արդարք հովուեալ ծագաց 'ի ծագս աշխարհի՝ զգայլս ընդ գառինս ճարակեցուցեն։

———ooo———

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

Սելիվահուն. Մահ Վէրջոյ. Մեծաբանել Ալլելանայ Ղանդաբգօպալայ և Վաքրանգայ Պանդրանի առ՝ ի Էրուսալէմ հաւարելոց Թշնամւոյն:

ԶԵՑՍՈՒ ժամանակաւ ապստամբեցան իշխանք Դաքանայ. որոց գլուխ էր ամենեցուն Սալիվահուն կամ Սալեահան՝ այր ժանտ և անագորոյն: Ծնաւ սա յԱյովդիա, (ոչ յիշատակեալն ստէպ յառաջին գիրսդ, այլ ի քաղաք ինչ մականուն Ասպա՝ ի Պապէրպէնէ.) և մնաւ ի տան բրտի ուրուք Ը գաստիարակութ Ամիսեշանայ գիւղի. և գտաւ այր սէգ և ամպարտաւան յոյժ յոյժ: Սա զԴաքան ապստամբեցուցեալ գլխովին՝ առիթ ետ Վիկրամադիտեայ զօրաժողով լինիլ՝ ի վերայ, ուր յաղթական գտեալ անօրինին երբարձ զայրն պատուական՝ ի կենաց պատուականաց. և ինքն և ևս ամպարշտեալ ընդդէմ մարդկան և աստուածոց՝ կործանեաց զամենայն տաճարս Հնդկաց, եղծ զծէս օրինաց նոցա, և ապականեաց զամ կարգ և կանոնս նոցա: Յարոյց ապա և Հալածանս սաստիկս՝ ի վերայ որոց ոչն խոստովանէին զՍամանէան դաւանութիւն. որոյ զհետ զակատէր ինքն անՓարին մոլեգնութ: Առ՝ ի պատճառս

անօրէնութիւն նորա երկինք զլացան զանձրև և եղև երաշտ և սով սաստիկ ընդ աշխարհս համատարած։ Եհաս աղաղակ մարդկանն առ Սիվ. և նա մատուցեալ առ Ամի-Պարավարամ, էանին Գերագոյն, խնդրեաց ի նմանէ անձրև հրեղէն։ Ամիսեշան յերազի զգացեալ զգալուստ հրահոսան հեղեղացն՝ ազգ արար Սալիվահունայ, և նա հրամայեաց իւրոցն կամ ի կաւակերտ տունս բնակել. և կամ ի լեռն և ի գետս. Սիվ եբաց զակն ի ճակատուն և ջաղբեաց հեղեղ հրեղէն ի վերայ բնակչաց երկրի. այլ արք Սալիվահունայ զերծան։ Սիվ առաքեաց միւս անգամ անձրև տղմայ, և հեղձամղձուկ արար զորս միանգամ ապաստանեալ էին ի կաւակերտ տունս իւրեանց։ Իսկ Սալիվահուն և զօրք իւր ելեալ ի գետոց գնացին ազատ։ Ապա խորհեցաւ Սիվ ի միտս իւր, և ի խորհելոյն ծնաւ զՈլա-Զօլան երկրին Լաղացւոց. զՆանդա-Գոպալա-Ցադիար՝ զազգ խաշնարածաց, և և զԱՀրանգա-Պանդիան՝ զազգն ձկնորսաց։ Ապա երից թագաւորաց միացուցեալ զզօրութիւնս իւրեանց, և երդմամբ լուսացեալ զինքեանս ի խառնուրդ երից գետոցն ի Գանջամերամ, որ կոչի Թէրս-մուէգոլ, պայման եդին ի միջի սատակել զՍալիվահուն։ Գնացին ի Կասի և գտեալ անդ զանձն Թաղեալս

յերկրի, դարձան ի Կանչի-Նագարա, ֆ ի Գանջավերամ, և յանդիման եղեն Կաչի-Ալ ըա Կամաքի-Ոայրայ յաղգէ ոստայնանկաց. սրբեցին զանտառն որ անդ ի ծառոց. այլ Դուրկա ընդդէմ եկաց նոցա և սպառնացաւ կենդանւոյն զոհել զնոսա վն համարձակելոյ նոցա ի սահման տէրութեան իւրոյ: Կամաքի խոստացաւ հազար ուղն հարիւր այր ի զոհ և զմանկիրդ Լոպուսաֆուհի Պոպէրպէի տալ նմա, եթէ օգնեսցէ կանգնիլ ազգին ի պատերազմ, և հաստատել անդանօր զմիապետութիւն իւր: Ընդ որ հաճեցեալ արիւնախանձ դիցուհւոյն՝ ետ նմա զձեռն հաւանութեան շինել անդ քաղաք և հաստատել զթագաւորութիւն իւր:—Ապա՝ ժողովեցան երեքին թագաւորք ի միասին ամենայն զօրօք իւրեանց, և գրոհ տուեալ դիմեցին ի վերայ հասարակաց թշնամւոյն. որ ապաստան անկեալ ի Թրիչնապոլի եղ յարձանին բարձրութի. և անառիկ զվայրն վարկուցեալ՝ որքացաւ անդ: Միաբանեալ թագաւորք հրեշտակախօս եղեն առ նա ի ձեռն Կաչի-վիրանայ թողուլ զԹրիչնապոլի, ուրանալ զաղանդն Մոմանէան և լուացեալ ի Կավարի՝ դառնալ ի Ցոդու, մեկնիլ ի Բոջառայապուր և վարել անդ զմանանաւոր իշխանութիւն իւր: Արհամարհանօք ընկալաւ նա զպատգամն միաբանելոցն և անար-

դուշ մերժեաց զգեսպանն ի բաց: Իսկ նորա դարձ արարեալ զգրգռեաց զնն ի պատերազմ անխնայ: Որոց շարժեալ զզօրս իւրեանց ծածկեցին զդաշտն Համածաւալ. ուր կիսոց ճակատ առ ճակատ կռուեալ, և կիսոցն ընդ ստորերկրեայ ճանապարհ զանխնալ ի քաղաքն յարձակեալ՝ սրակոտոր արարին զՍալիվահունն զօրքն հանդերձ: Արկին Թուական ըստանի ի դիպուածոց յայսմանէ. Թուականն Վիկրամայ՝ որով վարին Հինդք. և Թուական Սալիվահունայ՝ որով վարին Դաքանցիք:

———ooo———

ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Քրիստոնէութիւն ի Հնդիկս:

Յետ քան և ութ ամի համբարձման Տեառն յերկինս՝ Թովմաս վերջին ի հաւատացեալսն յարուսթեանն նորա՝ եղև առաջին աւետարանիչ արքայութեանն ի հեռաւոր ծագս աշխարհին Ցոգկայ: Սկսեալ ի Պարսից և ի Բակտրոնէ քարոզեաց մինչև ի Դաքան. և անդ ի լեառն Մոնթ՝ եօթն մղոնօք հեռի ի Մադրասայ հաստատեալ զաթոռն առաքելական՝ ձեռնադրեաց զբազումս յաշակերտաց իւրոց և սիռեաց զնն քարոզս աւետարանին ընդ ամ Ցոգկաստան:

թէպէտև չէք առ ձեռն յիշատակուն սրբա-
զան վասնակոց նոր՝ սակայն չէք և՝ տարակոյս
տարածելոյ նորա զՀաւատս երկնաւոր վար-
դապետին զ ամ ոլորտս վերնակի իւրում: Զի
Ի ժողովն Նիկիոյ՝ որ գումարեցաւ յերորդ
դարուն՝ էր և՝ երգն Ցոգկաց: Եւ յամին
հանդերձելոյ՝ Փրումէնթոս ձեռնադրեցաւ
յԱթանասայ Հայրապետ Հնդկաց: Ի մէջն
վեցերորդ դարուն եկն դարձեալ այլ ոմն
Թովմաս կրօնաւոր, ծպտեալ Ի կերպարանս
վաճառականի, (զոր ոմանք համարին զոլ Հայ
ազգաւ.) և զբազումս Ի նոցանէ դարձոյց Ի
հաւատն Քրիստի: Իսկ յաւուրս Յուստինիանոսի
կայսերը յորժամ Հալածանքն յարեան զգէմ
Արևելեան Եկեղեցւոյ վասն ոչ ընդունելոյ
նորա զժողովն Քաղկեդոնի՝ նախ զՆեբոէս
Հայկազունի առաքեաց սպարապետ, և ապա
զՔելիսարիոս բռնութեամբ ածել զնա յայն
դաւանութիւն: Վասն որոյ ժողովեալ Դե-
սկորոսի Ասորւոց Հայրապետի զբազմութիւն
յազգէ իւրմէ, և զեօթնեսին յաշակերտացն
ձեռնադրեալ յերիցունս՝ միախումբ չոր արա-
բին Ի ծովեզերս Արաբիոյ, և նաւարկեալ
անտի՝ եկին հասին Ի Քօչին՝ առ ծովեզե-
բօքն Մալաբարայ: Ուր շինեալ եկեղեցիս
բազմացան յոյժ, և կան մինչև ցայսօր ժա-
մանակի:—Հայր Ստեփանոս Աշխարհագիր

գրէ զսոցանէ. թէ "Ի ժամանակս Թագաւորութեան յունաց անՁարիւնս նեղեալ Ի չարչարանաց և Ի տառապանաց, որովք նեղէին զնոսա յոյնք, սակս Քաղկեդոնի ժողովոյն, հատուած մի Ի նոցանէ գնացին փախստական յաշխարհէն իւրեանց. և ճանապարհորդելով ՇՁ ոմանք Ի զանազան աշխարհս, զկնի հասին Ի Գոչին:" Հատ. Դ. 104: Եւ եթէ ճշմարիտ իցէ գիւտ արձանին և գրութիւն. զոր յիշատակէ անդ 261. և 262. թէ Օլոփէն Ի Թագչինայ ՅՁ յասորւոց, էած Ի չին զօրէնս Քրիստոնէից յամի փրկչին 636. Որեմն խոստովանելի է, թէ Ասորիք Ի հալածանս անդ իւրեանց՝ առաւել լուսափայլեցին զՀաւատ երկնաւոր վարդապետին՝ քան եթէ մնացեալ էին խաղաղութեամբ անդործ յՏի իւրեանց: Ապա եկին Ի Բաբելոնէ Յովհաննէս և Դանիէլ նեստորականք. և յետ նոցա այլք՝ մինչև 1652. ուր Գրիգոր եպս Երուսաղէմի շրջեալ քարոզութիւն ՇՁ Տն Եթիոպիա մինչ Ի Սուխա, եկին անտուստ Ի Քոչին. և հաստատեաց զամենեսին Ի դաւանութիւն Հայոց և Ասորւոց: Սա գրեաց առ Սարգսիանն Հայոց Սերուժէն, որ նստէր Ի Տիգրանակերտ. և նա առաքեաց Ի Հնդիկս զեպս մի Ասորի երկու քորեպսօք. որոց եկեալ Ի Քոչին հովուեցին զեկեղեցին զամն ՅԳ. տասան:

Ապա եկին լատին քարոզիչք և զբաղումն մը-
լորեցուցին յաղանդ պապապաշտուն իւրեանց։
Յամի Տեառն 1744 Հանդիպեցաւ նոցա առաջ-
նորդ նոր Ց.ուղայ տէր Գէորգ եղբայր, այլ ան-
տեղեակ լեզուի նոցա ոչ ինչ կարաց առնել, վասն
զնոցա և յամին 1748 առաքեաց առ նոսա զԱհա-
բոն վարդապետ զայրն բանիբուն։ Եկն ընդ-
այն աւուրս և՝ եղբայր մի ասորի, այլ քանզի այր
արբեցող էր՝ ոչ ընկալաւ զնա ազգն։ Վերս-
տին գրեցին ի Տիգրանակերտ առ ազգն իւ-
րեանց, և նոքա առաքեցին առ նոսա եղբայր մի
Շուքրոլլա անուն երկու քորեպսօք։ Յամին
1750 եղև հերձուած ի միջի նոցա, ոմանք
յարեցան ի կողմն Արքեպսի իւրեանց՝ և ո-
ի կողմն Ահարոն վարդապետի, որք այնպէս
հոմանեցին զնոսա՝ մինչև մեռաւ Ահարոն։ Իսկ
հետագայ առաջնորդաց նոր Ց.ուղայ անհո-
գացեալ փոխանորդել նմին զայլ հովիւ ի վերՀ
հօտին հալեցան ամենեքին և զանգոցան յե-
կեղեցին Ասորոց։

Աճլ առաւել քան զնոսա մեծ արարին վա-
ճառականք ազգի մերոյ զՀաւատն Քրիստի ի
Ցոլկաստան, որք բազմօք յառաջ քան զգա-
լուստ Եւրոպացւոց՝ շինեցին եկեղեցիս գրեա
թէ յամ վաճառաշահ քաղաքս Ցոլկայ, և
բարձր արարին զպաշտօն փառաց Ամենակա-
լին ի մէջ ամենայն հեթանոսաց։

ՑԵՏ նոցա զեղան Փորթուգալք, և կրօնաւորք նոցա՝ ոչ Սպանէացւոցն Ի Մեքսիկոն, Ի ձախ բաղձին զնաչ և յաջ իւրեանց զսուսերբ բանի ածել զնոսա Ի հաւատս իւրեանց: Ջօրացան յետ նոցա Դանիք, Գաղղիացիք և Անգղիացիք, և զբազումս թէ Ի հաւատացելոց և թէ յանհաւատից՝ որսացան և սրսան Ի կողմն իւրեանց՝ առանց խտրանաց:

ՀԱՏՈՒԱԾ ինչ ազգիս իբրև երեսուն տանց Ի վաղեմի ժամանակաց հետէ բնակեալ Ի Քաբոլ՝ զամ հոգևորական պիտոյս իւր Շնորհէր յառաջնորդէ նոր Ջուղայ՝ մինչև ցԿարապետ եղեալ: Ապա օտարոտի և տգէտ եղեալսաց փոխանորդեալ յամենոր տեղւոյն, է՝ որ անգիտութիւն և է՝ որ անհոգութիւն զանց արարին առաքելական նոր մատակարարս ուծային շնորհաց: Եւ անխնամ ժողովրդեանն զամն յոլովս անկընունք պահելով զմանկունսն՝ և անհաղորդ թաղելով զմեռեալս իւրեանց՝ տակաւին ամբողջ պահեցին զհաւատ զհարց իւրեանց, ցամ Տեառն 1838: Ցորում յարշաւել զօրաց Անգղիացւոց Ի Քաբոլ՝ յամբառնալ զՇահ-Սուջա յամենոր իւր՝ պատահեալ քահանայի բանակին և հրաւիրեալ յեկեղեցին՝ մատուցեալ էին զառաջեաւ չափուհաս մանկունս աւելի քան քսան թուով, մկրտել զնոսա: Գուցէ և դարձան իսկ Ի կրօնս նոցա: Զամանչի-

ցին՞ արդեօք այսպիսի հավիւք, որք զանձինս և եմի արածեն. անտիպեմ եղեալ զՀօտիցն:

—ooo—

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

Տիղոգչանդ, Ռուֆա, Ռեֆիլանդ, Վէսոդա, Ռամբամ Ղոր, Ուռնորդ, Ղալա, Ինդրա, և Ինդրաբիհիպայ:

ՑԱՒՈՒՐՍ խռովութեան և բազմիշխանութեան ցին յերեսաց ապստամբութեան Դաքանայ՝ ուստի զամենն Ուրջենայ Տիղոգչանդ ոմն: Այլ Բուկա ի տանէն Վիկրամայ փութով զօրացեալ յինքն կորզէ զերասանակ տէրութեան: Սա աղաչանօք իմն կոչեցեալ ի Ցունաց Պավրոս՝ զՀամբաւի հարկանէր գրել մերձ վեց հարիւր ռաքայից ի Համար հարկատուաց. և առաքեաց առեն զԵսպանս առ Օգոստոս կայսր Հռովմայ, տուեալ նոցա թուղթ յանտան գրով: Քրեշտաս զկնի Տիղոգչանդայ ասէ նոսին Բիկմչանդայ որդւոյ նորա յամենն Ղանոջայ. որոյ յաւուրս զօրացեալ Վիսոդեւայ ուրումն տիրէ արևելեան սահմանաց, և դարձուցեալ զգէնս իւր ի Ղանոջ ունի իւր և զայն: Ի սի աւուրս ասէ եկն Բահրամ Ղուր արքայ պարսից ի Հնդիկս՝ ծպտեալ ի սոս-

կարան ոք։ Եվ նոքա պատահեալ նման փղոց ի շարաշարութեան անիծելոցն կատարելութեանք հնազանդի ի նոցանէ։ Եւ քարշեալ զանձինն ոմանք, շերտ դնակաւ գազանին։ Հաւաքակ քարշեն նոցա կոչի գնա յերեւս աղքատի. ուր Գիդիկ գնացանն որ ասեալ ինչ յառաջ եղեալ էր յատեանն Պարսից, նամակաւ գնա. և ապրատնի աղքատի խրատ։ Իսկ նա մեծամայել շքով ընկալեալ գնա՝ ասայ զդուռաց խուր ի կնեռ թիւն նման, և արձակի փառաւք յերկիրն խուր ի Պարս։ Հաւատակաւ իմն թուի ինձ. վասնզի յարձակիլ Թաթարաց առ սովաւ յերկիրն Խորասանայ և ի կռուել նահատակն յանկարծ անհրեւոյթ գնաց Բահրամ, և մինչ զարհուրեալ աւագանեանցն զհաշտութիւն խօսել կամիին ընդ թշնամւոյն վերատին երևեցաւ ի գլուխ այրելոյն զօրաց։ Յետ 18. ամի թագաւորութեանն վերատին անհրեւութացաւ յորսին գոյն, յորմէ և զանուն ընկալաւ։ Զմինչ՝ զարմանք թէ ի Հնդիկս անցեալ՝ յորացաւ ի մեղկութեան։

Ռեթորք, որք հասատեցին զմիապետութիւն Խրեանց ի Զանոզ, հանեն զզարմ Խրեանց ցԲաուշ. յերկրորդ որդին Ռատայ։ Ի միւս շառաւիղէ այսր ցեղի Կոչվանա անուն կոչեցեալ՝ ծագեցաւ Դալա ռաքա, հռչակեալն յոյժ ի պատմութիւնս Դալայ և Դամիանդեայ։ Սե-

բունդք սորա անընդհատ իշխանութիւն կալան զամրոցն Նէվարայ, մինչև Սկինդա երհան ի ձեռաց նոցա: Ի սոցանէ ծագեալ ասին և Թագաւորք Զէյփուռայ, և ամենայն երևելի նախարարունք Հիւսիսային Հնդկաստանի:

Նոր իմն ցեղ հզօրացաւ ի Պատալիպուտրայ առ սովին ժամանակաւ՝ Անդրա կոչեցեալ, և Զարձակեաց զփառս իշխանութիւն իւրոյ յոյժ յոյժ. մինչև ի Հռովմ անգամ հասուցանել համբաւոց. որք բաւեցին երեսուն Թագաւորօք: Ի սոցանէ Պլումա այր անՓարին պատերազմող տարածեաց զարհաւիրս յաղթութիւն իւրոյ ի վր համօրէն արևելեան հացս մինչև ցսահմանս Զինաց: Համբաւ առն առ նոս այնքան մեծարի՝ մինչ կոչել նոցա զՀն յանուն սորուն՝ Պլումիէնքօֆ: Բայց աւանդ մնոտիապաշտութեանն. որ ի ծայրագոյն փառս իշխանութիւն դրդեաց զնա հեղձուլ զինքն ի գանգէս՝ յամի Տեառն 648: Յետ նորա պայազատեցին զՀն Անդրաբհիտայք, ՝ի ծառայք Անդրայից. որ է ասել թէ իւրաքանչիւր իշխանք հաստատեցին զնոր և զառանձնակ պետութիւնս և անկախս վարեցին զնոսին:

Զ. ՑՅՍՈՒ ժամանակաւ և նոր իմն հարստութիւն Կունվայից կալաւ զգաւառսն գանգէսի՝ չորս թագաւորօք: Վերջին ի սոցանէ ըսպանաւ ի Սիպրուկայ նախարարէ իւրմէ. և

գնա յետ քառասուն ամի սպան Սուդրուկ, որ հաւատալ զԱնդրաքուԹիկեան հարստուն՝ մեծացաւ յոյժ. մինչև անուանիլ Սահակունվա, և տէր երից Կաղինգայից: Որ եԹէ չիցէ չափազանցուԹիւն՝ ցուցանէ զնա տիրել 'ի Ծոցոյն Թլինգանայ ցԱրագան, և անտուստ ցըծովն մեծ արևելից՝ ցԲանկալա: 'Ի սորա ուԹ և տասնեւերորդ ամին՝ եղբայր սորա ժառանգէ զսԹ ոուն ցեօԹն հանանուն պորտս:

———000———

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

Ռոմդէվ, Պոպոբէլոնդ, Մալդէռ, ԴէվԹենկ. և բեկռուն բագաւորուԹեան ՀՆդկոց:

'Ի ՆՈՒԱԶԻԼ անդ ԹագաւորուԹեն Ղանոջայ՝ մնաց ժառանգ արքունեաց մանուկ սանդի. որ սակս քրԹ մեջիւն անկեալ 'ի նախարարս՝ յարոյց զառանին պատերազմ. և պատառեաց զվիպետուԹիւնն 'ի բազմածուէն մասունս: Վասնորոյ խորհուրդ արարեալ աւագանւոյ բարձին իսպառ զցեղն վիսասայ, և զերասանակ կառավարուԹեն յանձնարարին Ռամդեվայ սպարապետի նորա, որ էր յազգէ Սահրատայից: Սա այր քաջ 'ի զէն և 'ի խոհականուԹիւն՝ ՀԷ իւրև նուաճեաց փուԹով

զիշխանս ապստամբեալս 'ի տեղիս տեղիս, մաքրեաց և՝ զերկիր Մարվարայ 'ի կուչվեան բռնակալութենէ և բնակեցոյց անդ փոխանակ նոցա զռահատաս զիւր սեպհական ժողովուրդ: Խաղաց 'ի Բանկալա և յաւարի եհար զԼուկնուտի մայրաքաղաք նորա, և ընդ Հիմալեան լերինսն անցեալ՝ տարածեաց զբազուկ իշխանութեան իւրոյ անդր քան զՔաշմիր: Զիշխանս լերանց 'ի հարկի կացոյց, և վերհ ամենեցուն հանդիսացաւ՝ որոց յառաջ քան զինքն իշխեցին 'ի Հնդկաստան: Զհարկ տշխարհին անթերի վճարեաց Նուշիրվանայ Արդարոյ արքայի Պարսից, և զգանձս յաղթահարեալ իշխանաց առատօրէն բաշխեաց 'ի պարգևս իւրոց քաջ զօրականաց: Եւ թէպէտ 'ի վերջոյ զընթացս հասարակաց կատարեաց՝ այլ դիւցազնական գործքնորա շահեցան նմա անուն անմահ 'ի մէջ ամենայն զկնեաց նորա: Անկաւ երկպառակութիւն յորդիս նորա յաղագս ժառանգութեան Աթոռոյն, և ժամ պատեհ ետ Պուտաքչանդայ յառնել ամ զօրօք 'ի վերտանն արքայի, բնաջինջ առնել զամ արու 'ի նոցանէ, և ինքնին թագաւորել փոխանակ: Վասն այսր դժնդակ ապիրատութեան և անագորոյն անգթութեան նորա, բազումք յերևելի նախարարաց թիկունս դարձուցին նմա: Բայց նա սուտ դաշամբ և սնոտի խոստ-

մանիք զամենեսին հաւատքով առ Քրիստոս Է որ մահու ապրմանէ, Է որ յարգասոյս իւշաստ. գէ. և Է որ ի քանդ և ի կոպանս մտանէ: Որով և զմեռոյդսն զարհուրելոյս գիտելոյ համայ ակամայ ի Փրաքանդուելիսն անանկն նուաստէ: Եւ ամբարհաւատնեալ և եւ քառանայ զհոգի յարքայէն Պարսից և զդեսպանս իւրսովք, ելեալայ կամ Ներշիրվանայ Ազգարայ ամենայ յեռ ազգանէ: Վասնորոյ և մարդպանն Մակրանայ, զի ի չորեց գահերէց նախարարաց Ներշիրվանայ եղեալ պատերազմաւ ի Հնդիկս ի պարուելիսն վանեաց զբռնացեալն Պարսաց, և կրկնապատկեալ զհոգի և զդասանդս ինն դարձաւ յաշխարհս իւր ի Պարս:—Սեռաւ Պարսաց յամի 533:

Վ. ԵՐԱԶԵՐԱՆ յեռ մահու ազգաւն Ազգիսուր ի սերնդոց Վիսայ կալաւ զաթոռն Սալվայի, և արդար արդար յաղթուելիք իւրովք ի իւրև նուաստեանց զԴաքան, զԳուլքան, և զՄեն Սահրատայից: Գրեաց սա առ Վիրսանակ արքայ Ղանոջայ առաքել առ ինքն քրիստոնեա ուսեալն ի կարգադրելիսն կրօնից երկրին որ բաղմաց աղաւաղեալ էր յայնժամ: Եւ նա առաքէ քրիստոնեա հինգ. յորոց սերնեալ ասին արդի քուրմք նոցա. իսկ Կայուշաքէն, ասորին ասորիճանի քրիստոնեայ, սերնեալ ասին ի Ծառայից անտի նոցին: Թագաւոր-

բեաց սա ամս վեշտասան. առ որով Խոսրով Փարվեզ, կամ Պերոզ արքայ Պարսից:

ԱՂԵ. պայազատեաց զՅոդկաստանեայս Մալ դև յանունն տոհմէ՝ ամս քառասուն: Այնուհետև հերձաւ Թագաւորուն Յոդկաց մինչ'ի սպառ. և այր իւրաքանչիւր եկեր զհաց իւր 'ի ծաղ նիզակի իւրում: Դրսինկ կուսակալ Բանկալայ յարուցեալ 'ի վերայ Ինդրպուրայ կալաւ զայն: Դևսինկ արքայ Սուալիկայ յարուցեալ սպան զԴինդառսինկ 'ի տանէն Դրսինկայ՝ և նստաւ փոխանակ նորա: Իսկ ըստ վիշնուպուրան գրոց՝ "Ադգ Կշեթրայից խսպառ բարձաւ 'ի միջոյ. և այր զարամբ եղեալ 'ի բրահմանաց ցպլնդուս՝ հաստեցին զնորանոր պետուն 'ի Մաղադայ, 'ի Պրագ, 'ի Մաթուրա, 'ի Կանտիփուռ, 'ի Ղանոջ, և 'ի Յանուգնգա: Գոպտայք 'ի Սուդրայից կալան զՄաղադա. Դուարկշտայք՝ զԿալինգա: Գոլոսք՝ զմիւս մասն Կալինգայ. Մոնթոնայք զՆիմիշա, զՆիշհուդա և զԿլուտուիա. որք են սահմանք արևելից Բնարիսայ և Բանկալայ: Սունդրիք կամ խաշնարածք՝ զՍուրաթ, զՄէվար և զերկիրն առ Ներբուդաւ: Իսկ Մլիչիք՝ զՓանջաբ." որով և շաւիղ Ճարձակ բացին արշաւանաց Իսլամայ. Ճ որում բաղդատեալ Աղէքսանդրեանն՝ գտանի նախամարտութիւն և եթ մեծի իրիք ճակատու:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ

Ուանոյ։ Մէվարայ։

Աւ բազմիշխանութեան Ցոգկայ արեգակնօրէն փայլէր թագաւորութիւն Մէվարայ, որ ըստ արժանահաւատ գրուածոց Ցոգկայ ծագեցաւ ի սերնդոց անտի Լուհայ որդւոյ Բիմայ՝ որդւոյ Կալեայ՝ որդւոյ Ուդրայ՝ որդւոյ Ռամայ դիւցազին ռամայան քերթուածոց։ Որք նախ մտին ի Սուրաթ, և արարին զԲալաքհիփուռ ի ծոցն Կամբեայ՝ աթոռանիստ տէրութեան։ Յամին 524 յարձակեցաւ ի կողմանց Սնդայ անթիւ բազմութեամբ զօրաց, և ի հուր և ի սուր դատեաց զոչ սոցա։ Միայն դժխոյն Պուսվուտի զերծաւ ի կոտորածէն թաքուցեալ յանձաւսն Մալեայ, ուր և ծնաւ զորդի իւր Գովհա, որոյ հասեալ յարբունս կատարելութեան իւրոյ՝ յառն առ զԵդուր, և հաստատեաց անդ զիշխանութիւն իւր։ Յորմէ որդիք ի հարց իջանելով՝ զարմին մինչ ցայսօր իշխանք Մէվարայ կամ Ուդիտիայ նախագահ եամ Ցոգկաց։ Արքայն Ուդիտիփուռայ համարի սուրաք կամ արև Ցոգկաց, «քաջայայտ է, ասէ Տաղ պատմագան ռաջպուտաց, զի ռաջքն Ուդիփուռայ գահերէց գք են յիշխանս Ցոգկաց, վասն՝ թագաւորք նոցա ի սոցանէ լինդունին

զտալուկ և տառոտոկն արքունական՝ խոնարհ ի Ծունր իջանելով առաջի նոցա : Տալուկն է նշան կարմիր դրոշմեալ ի ճակատս նորապսակ թագաւորաց : Զանուն զամայ ունին , և սերունդ իւրեանց ի Նուշիրվանայ Արդարոյ պնդեն : Քանզի դուստր նորա ծնեալ ի դըստերէ կայսերը Մօրկայ կին եղեալ ժառանգի արքայութեան Ուդիտեայ՝ ծնաւ զարևն Ֆոդկաց , զհայր հարիւր թագաւորաց , և զանվրդով ժառանգ փառաց ռամայ՝ նահապետի արևային հարստութեան : ”

ՓԱՅԼԷՐ խմաստուէ Պիլպի բրահման . զոբոյ զբարոյական և զքաղաքական գրուածոցն լուր առեալ Նուշիրվանայ՝ առաքէ զՊերոզ իւր բժիշկ որքանեօք և Ֆաբ՝ գտանել զայն և յեղուլ ի լեզու պարսից : Զոր ի ձեռս բերեալ Պերոզի՝ մատոյց ի հանապազորդեան զբօսանս արքայի և աւագանւոյ նորա : Լուել նաև թէ խմաստունք նոցա ցուցանել կամելով թէ զօրութիւն թագաւորաց ի կարս հպատակաց կայանայր՝ Ֆարեալ էին զձիարձակարանին խաղ՝ փոխագրեաց և՝ զայն ի Պարս :

ՈՒԹ թագաւորք յետ Գովհայ նստան յաթոռն Ուդիտիփուռայ , յորոց վերջինն սպանաւ յորդւոց իւրոց յոբսս էրէոց : Սանդի նորա Բաբա անուն բերաւ յամրոցն Բհանդերայ և ինաւ ի մէջ հովուաց : Իբրև լուաւ թէ

ազգակից է ժառանգաց արքայուն Ձիտորայ վառեցաւ ամպարտաւանութիւնքն, և զերծեալ յանձնէ զաքեմ և զանմեղուն հովուական կենաց, և գունտ կազմեալ սրիկայից՝ ջրքաւ ի Ձիտոր: Ուրանօր ընկալեալ սիրով ի շնորհս ընտանեացն՝ մեծանայր օր ըստ օրէ. վանորոյ գժտմեալ աւագանւոյ դրանն՝ ընդ ակամբ հայեին ի նա: Զայնու ժամանակաւ յարձակմունք մահմետականաց ըստ Սամանեան հարստութեամբ՝ զօրացուցին զկողմն Բաբայ, և հանին զնա յընդհանուր սպարապետութիւն հին: Քանզի յետ տիրելոյ Օմարայ զՊարս, և շինելոյ զԲասրա քաղաք առ Տիգրիսաւ ըստ մէջ Խոռնայ և Մուհամրայ, համբարանոց վանմառաց Ցոգկայ՝ առաքեաց զԱպլայաս ոստիկան իւր զօրու ծանու ի Ցոգիկս. որ սպանաւ ի մեծի պատերազմին Արօրայ: Օսման, յաջորդ զօշաքաղութեան նորա և ութոռոյ՝ լրտեսեաց զերկիրն առ Ինդոսիս. և Ալի ընդ իւրև նուաճեաց զՍինդ: Առ Վալիդաւ դղրդեցան սահմանք հիւսիսային Ցոգկաստանի, Ցաղու-բհադի հալածական գնաց ըստ Ինդոս յանապատ անկոխ. Սանուկ-ռայ քաջ Ձօրան արքայն Աչմերայ սպանաւ սրով. և ստանդին մատաղ նորա նեռատհար զրաւեցաւ. իսկ ռաջայք Սուրաթայ անկան ի փառաց իւրեանց: Այս ամ էջրիք եկին հասին յոս մեր, ասեն

Ցոգիկք, 'ի ձեռն դիւի ուրուք, մոգի, կամ մլիչաց։ Յետ երից ամաց Մահումմադ Բէն զասիմ սպարապետ Վալիդայ՝ յարձակեցաւ ան-համար զօրօք յԾս Ցոգկաց, զՄինդ առաքիւր կոխեաց, անց 'ի Գուրջաթ, զԴահր սպան, և խաղաց խրախուսանօք 'ի սահմանս Ձիտոռայ՝ 'ի բևեռական աստղն յուսոյ հմտօրէն Ցոգկաստանեայց։ Որում քաջութեամբ զգիմի հարեալ Բաբայ՝ հալածական տարաւ ցՂիզնի։ Եւ բռնացեալ գտեալ զՍալէմ 'ի Կամբէ՝ յերկիր հայրենեաց իւրոց, 'ի պարտութիւն մատնեաց զնա, և զդուստր նորա, առ 'ի կնութիւն իւր։ Դարձ արարեալ նորա-պսակ յաղթականիս աւարօք և գերեօքն իսլամաց՝ այնքան մեծարեցաւ յաչս նախարարացն՝ որք յառաջ ընդ ակամբ հայէին 'ի նա, մինչ ընկեցիկ առնել նոցա զարքայ, և զսա կացուցանել փոխանակ։ Յորժամ Ալմանսուր վերստին էառ զՄինդ, և եդ զանուն իւր 'ի վերայ մայրաքաղաքի նորա՝ Բաբա լքեալ զերջանիկ թագաւորութիւն իւր և զկրօն, չոքաւ գնաց 'ի Խորասան, գուցէ ըստ սադրելոյ կնոջն, և առ անդ կանայս քաղուսն յիսլամաց անտի՝ ածուն ծննդովք։ Յետ նոր ոչ ինչ արժանի յիշատակաց գործ պատմի յաջորդս նորա՝ մինչև ցՅօսման հսկայն մեծ Արևորդեաց, որ համաշխարհական համախումբ նի-

զակակցութիւնք եամ Ցոդկաց՝ ոչ սակաւ քան ի քան ճակատս մարտուցեալ զԱրայմունայ որդւոյ Հարուն ալ ռաշիդայ՝ ցրուեաց զզօրս նորա։ Այլ լուագոյն ևս հասանէ ինձ ճառել զայսցանէ յերկրորդ հատոր գրոցս. յորում ի գիշերային խաւարէն առասպելաց՝ նոր արշալուսէ գոգջիր առաւօտ հաւատարիմ պատմութեան։

Վ Ե Ր Ջ

ՅԱՆԿ ՍՏՈՐԱԳՐՈՂԱՑ ԿԱԼԿԱԹԱՑ

Պօղոս Եպիսկոպոս Գրիգորեան Նուիրեալ Սրբոյ Էջմիածնի 1
Տէր Դաւիթ Մկրտչեան Ա.ւագերէց Հայոց Կալկաթայ 1
Եպիսկոպոս Յոհաննէս Եպիսկոպոս և Եպիսկոպոս 20
Անդրէաս Տէր Եղիազարեան 1
Անտոն Յ Անտոն 1
Անանէլ Զանիլսամ Անանէա 1
Գասպար Մելքոնամ Գասպար 3
Գէորգ Անանեան 1
Գրիգոր Եպիսկոպոս 2
Զաքարիա Մ Մանուկ 1
Էմին Յ Էմին 1
Կ և Ի Գրիգոր Սէր 1
Մարտիրոս Ս Յովհան 1
Մինաս Գ Յովսէփ 1
Մխիթարեան Յ Էմին 1
Մկրտիչ Ս. Յովհան 2
Յ Գրիգոր , և Ս Գ Ղազարոս 1
Յովհաննան Էլմազ 2
Յովհաննէս Աղաբէգ 1
Յովհաննէս Անվրու 1
Յովհաննէս Մ Մանուկ 2
Յովհաննէս Ս Յարութեան 1
Յովհան Մուրատ 1
Յովսէփ Աղաբէգ 2
Էր- վսան Պարանոյն՝ Եռոյ Մանուկեան , և 1
Թարգիսոյ Ի Անդրէասեան 1
Յովսէփ Մանուկ , Նազարեթ 1
Յովսէփ Յ Քամարեան 1
Պետրոս Յ Սարգիս 2
Սիմեան Սարգիսեան 1
Սարգիս Մ Վարդան 1
Փիլիպպոս Ն Գէորգ 1
Քարապետ Քրիստոս 1

ԻԲՈՒՄԲԱՑԻ

	Օրէ
Մարիս Մահի Ցանէէ	1
Ցանէէ Աչտահար	1
Անէա Աչտահար	1
Ցարտեղէն Ցարչտահան	1
Գրէիր Մ Ցանէէեան	1

———ooo———